

ԷԶՄԻԱԾԻՆ



Է-Ը
2006



ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԱՄՍԱԳԻՐ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԵԱՆ
ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅ ՍՐԲՈՅ ԷԶՄԻԱԾՆԻ

ՅՈՒՆԻԱ - Օգոստոս

2006

ՀՐԱՄԱՆԱԻ

S. S. ԳԱՐԵԳՆԻ ԵՐԿՐՈՐԴԻ

ՎԵՐԱՓԱՌ ԵՒ ՍՐԲԱԶՆԱԳՈՅՆ

ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՄԱՂԱՆՔ՝ ՎԵՐԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԾՆՆԴՅԱՆ ՏԱՐԵՂԱՐԶԻ ԱՌԻԹՈՎ

Օգոստոսի 21-ին Ն.Ա.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսի ծննդյան 55-ամյա տարեդարձի կապակցությամբ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում կատարվեց Հայրապետական մաղթանք: Արարողությանը ներկա էին Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու թեմակալ առաջնորդներ, բարձրաստիճան եկեղեցականներ, Հայաստանի և Սփյուռքի բոլոր թեմերից ժամանած և վանաբնակ միաբաններ, Մայր Աթոռի պաշտոնեությունը և բարեպաշտ հավատացյալներ:

Հանդիսավոր թափոռի ուղեկցությամբ, Մայր Տաճարի զանգերի ղողանջների ներքո, Նորին Սրբությունը Վեհաբանից ուղղվեց դեպի տաճար, ուր Միածնաէջ Մայր Տաճարի Իջման Ս. Սեղանի առջև կատարվեց Հայրապետական մաղթանքի կարգը:

Մինչ արարողությունը Հայոց Եկեղեցու ողջ հոգևոր դասի և Մայր Աթոռի պաշտոնեության անունից Վեհափառ Հայրապետին շնորհավորանքի ու բարեմաղթանքի խոսք ուղղեց Մայր Աթոռի միաբան Տ. Ներսես արքեպիսկոպոս Պողոսյանը: Գերաշնորհ Սրբազան հայրն անդրադարձավ Վեհափառ Հոր գործունեությանը՝ ընդգծելով Նորին Սրբության մեծագույն ավանդը հոգևոր դասի երիտասարդ սերնդի պատրաստման, ինչպես նաև ժողովրդի քրիստոնեական դաստիարակության գործում: «Վեհափառ Տե՛ր, այսօր Ձեր ծննդյան տարեդարձն է, և մենք բոլորս հավաքվել ենք այս սուրբ խորանի՝ աստվածային տեսլան այս փառավոր կենտրոնի առջև՝ աստվածային սիրո էջքի վայրում: Եվ այստեղ, որպես 132-րդ Հայրապետի, Ձեր շուրջը հավաքված ասում ենք. «Քահանայք Քո զգեցցին զարդարութիւն եւ սուրբք Քո ցնծալով ցնծասցեն»: Այս հոգևորականները՝ քահանաները, և այս ժողովուրդը՝ զգեցած արդարության սուրբ խորհուրդը, հավաքվել են, որպեսզի Դուք նմանվեք այն քահանայապետին, որ Մելքիսեդեկ կոչվեց, և աղոթում են առ Բարձրյալն Աստված, որ շարունակեք ցուպը ձեռքին առաջնորդել մեր ժողովրդին», - ասաց Սրբազան Հայրն իր խոսքում՝ շնորհագարդ Հայրապետին մաղթելով արգասավոր գահակալության երկար քաջառողջ տարիներ, անսպառ ուժ և կորով՝ ի բարօրություն հավատավոր հայ ժողովրդի և ի պայծառություն Հայաստանյայց Սուրբ Եկեղեցու:

Հոգեպարար աղոթքի վերջում Վեհափառ Հայրապետն իր գոհունակությունը հայտնեց, որ կյանքի 55-րդ տարեդարձին շրջապատված է տեսնում իրեն հոգևոր դասով, Մայր Աթոռի պաշտոնեությամբ և հավատացյալ բարեպաշտ ժողովրդի բազմությամբ, և իր գնահատանքն ուղղեց նրանց՝ իրենց անձնվեր ծառայությամբ ու աշխատանքով և աղոթական կյանքով Հայաստանյայց Եկեղեցու առաջընթացին ու բարգավաճմանը նպաստելու համար: Նորին Սրբությունն իր խոսքում նաև մաղթեց. «Մենք, Իջման Սուրբ Սեղանի առջև կանգնած, աղոթք ենք բարձրացնում առ Աստված՝ մաղթելով, որ Տերը խաղաղության, առաջընթացի և բարօրության մեջ պահի հայրենի մեր երկիրը և աշխարհասփյուռ ազգս հայոց, որպեսզի աստվածփառաբա-

նությանը ապրեն իրենց կյանքի օրերը և ապրեն աղոթքով՝ ստեղծագործելով, կերտելով ու բարեկարգելով ինչպես հայրենական մեր կյանքը, այնպես էլ իրենց անձնական կյանքը»:

Արարողությունից հետո Վեհափառ Հայրապետը, իր օրհնությունը բաշխելով հավատավոր ժողովրդին, թափոռի ուղեկցությամբ վերադարձավ Վեհարան, ուր ընդունեց Մայր Աթոռի միաբանությանը:

*ՄԱՅՐ ԱԹՈՐ Ս. ԷԶՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ*

Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ ՀԱՆՁՆ- ՎԵՑ ՌԴ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ՇՔԱՆՇԱՆ

Օգոստոսի 21-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Աշխարհի Ժողովուրդների հոգևոր միասնության միջազգային ակադեմիայի նախագահ Գեորգի Տրապեզնիկովին:

Հանդիպման ընթացքում պրն Տրապեզնիկովը Նորին Սրբությանը հանձնեց «Հայրենյաց հպարտություն» ռուսական բարեգործական հիմնադրամի կողմից Վեհափառ Հայրապետին շնորհված ՌԴ հասարակական բարձրագույն պարգև՝ «Ռուսաստանի հպարտություն» ոսկե շքանշանը: Ամենայն Հայոց Կաթողիկոսին շքանշանը տրվել է ի գնահատություն աշխարհի ժողովուրդների հոգևոր միավորման գործում ունեցած ավանդի, հայ և ռուս ժողովուրդների միջև բարեկամության ամրապնդման, ինչպես նաև խաղաղարարական գործունեության համար:

Հանդիպմանը ներկա էին Մայր Աթոռի հրատարակչական բաժնի տնօրեն Տ. Եզնիկ արքեպիսկոպոս Պետրոսյանը և Արարատյան Հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ Տ. Նավասարդ արքեպիսկոպոս Կճոյանը:

*ՄԱՅՐ ԱԹՐՈՒ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ*

ԿՐՈՆԱԿԱՆ ԱՌԱՋՆՈՐԴՆԵՐԻ ԳԱԳԱԹԱԺՈՂՈՎ ՄՈՍԿՎԱՅՈՒՄ

Սույն թվականի հուլիսի 3-ին Ամենայն Հայոց Կաթողիկոս Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Վեհափառ Հայրապետի գլխավորած պատվիրակությունը մեկնեց Մոսկվա՝ մասնակցելու Ռուս Ուղղափառ Եկեղեցու և ԱՊՀ երկրների Միջկրոնական խորհրդի կողմից կազմակերպված Հոգևոր Առաջնորդների գագաթաժողովին: Հայրապետական պատվիրակության կազմում էին՝ Հունաստանի հայոց թեմի առաջնորդ Գերաշնորհ Տ. Ոսկան արքեպս. Գալփաքյանը, Արցախի թեմի առաջնորդ Գերաշնորհ Տ. Պարզև արքեպս. Մարտիրոսյանը, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Միջեկեղեցական հարաբերությունների պատասխանատու Գերաշնորհ Տ. Եզնիկ արքեպս. Պետրոսյանը, Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամ տիար Ռաֆայել Պապայանը: Հայրապետական պատվիրակության հետ Մոսկվայում էր նաև Գերաշնորհ Տ. Վիգեն եպս. Այքազյանը, ով գագաթաժողովին մասնակցեց որպես ԱՄՆ Եկեղեցիների Ազգային Խորհրդի նախագահ:

Հուլիսի 3-ին Մոսկվայի «Պրեզիդենտ-օտելի» հյուրանոցում տեղի ունեցավ գագաթաժողովի բացումը: Ժողովին իրենց մասնակցությունն էին բերում ավելի քան հարյուր կրոնական առաջնորդներ 49 երկրներից:

Ժողովը բացվեց Համայն Ռուսիո և Մոսկվայի Պատրիարք Ալեքսի Երկրորդի խոսքով, որում Ռուսաց Եկեղեցու գահակալը ի մասնավորի ասաց. «Մենք այսօր շատ ենք լսում եղբայրասպան հակամարտությունների, ահաբեկչական սպառնալիքների, անհանդուրժողականության և այլատյացության, բարոյականության աստիճանական անկման աճի և բնապահպանական ճգնաժամերի մասին: Մենք ողջունում ենք տարբեր երկրների իշխանությունների ջանքերը՝ ուղղված այս բոլոր խնդիրների լուծմանը: Մակայն կարելի՞ է արդյոք այդ խնդիրները լուծել միայն օրենքի կիրառությամբ ու զինվորական և ոստիկանական միջոցներով:

Պատմությունն ու այսօրվա իրականությունը ցույց են տալիս, որ ժողովուրդների կյանքում առանց հոգևոր և բարոյական արժեքների, առանց իրենց կրոնների ավանդույթների խորը իմացության չի կարելի արդյունավետ դիմակայել երկպառակություններին, բռնություններին, արատներին, ծայրահեղականությանն ու ահաբեկչությանը: Անձի և հասարակական բարոյականության հետ է կապված տնտեսությունը և բնապահպանությունը, առողջապահությունն ու մարդկային կյանքի այլ բնագավառները: Այդ բնագավառներում չի կարելի հասնել հաջողության՝ առանց մարդ անհատի կատարելության, առանց բարյացակամ սրտի: Մակայն մարդկանց դեպի բարոյականության տանել կարելի է միայն ազատության ճանապարհով, քանզի մարդը պետք է գիտակցորեն կատարի բարոյական օրենքը և քաղաքացիական պարտքը: Այդ իսկ պատճառով այժմեական խնդիրները լուծելու համար կարևոր են մարդկանց խաղաղության, արդարության և բարության կոչ անող կրոնական առաջնորդների ձայները :

Տարբեր կրոնների ընդհանրությունը վերաբերում է ոչ թե դավանաբանության ոլորտին, այլ բարոյականության, հաճախ նաև հասարակական իրադարձություններին գնահատական տալուն: Համոզված եմ, որ մենք կարող ենք ձևավորել ընդհանուր հայացք շատ հարցերի վերաբերյալ:

Այնուհետև համաժողովի մասնակիցներին ողջույնի խոսքով դիմեց ՌԴ նախագահ Վլադիմիր Պուտինը: Բարձր գնահատելով այս գագաթաժողովը, նա իր մտա-

հոգությունը հայտնեց աշխարհին պարտադրվող քաղաքակրթական հակամարտության համար (քրիստոնյա և մուսուլման) և այդ իսկ պատճառով կարևորեց կրոնական առաջնորդների ընդհանուր համաձայնության գալը: ՄԱԿ-ի գլխավոր քարտուղար Քոֆի Անանի ուղերձը աշխարհի կրոնական առաջնորդներին ընթերցեց Մոսկվայի պատրիարքության Միջեկեղեցական հարաբերությունների բաժնի պատասխանատու, Սմոլենսկի և Կալինինգրադի մետրոպոլիտ Կիրիլը: Ժողովի աշխատանքները տևեցին մինչև հուլիսի 5-ը: Ժողովականների քննարկման նյութն էր մեր օրերում համայն մարդկությանը հուզող կարևոր հարցերը, այդ թվում՝ ահաբեկչության, բռնության, կրթության և բարոյական դաստիարակության, ընտանիքի ապահովման, կյանքի արժեքների, հասարակության մեջ կրոնի դերի և ուրիշ այլ խնդիրներ:

Համաժողովի նախավերջին օրը, հուլիսի 4-ին, ելույթ ունեցավ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գաբելին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը.

«Ձերդ Սրբություններ և Սրբազնություններ, հարգելի հոգևոր և կրոնական առաջնորդներ, Միջկրոնական խաղաղարական համաժողովի մասնակիցներ,

Մենք բոլորս այստեղ հավաքվել ենք միասին՝ առաջնորդված եղբայրական սիրտով և արդի աշխարհում տեղի ունեցող իրադարձությունների հանդեպ ընդհանուր մտահոգությամբ: Սոցիալ-տնտեսական խնդիրները՝ գործազրկությունը, աղքատությունը, հարկադրված արտագաղթն այսօր խառնվել են աշխարհականացման գործընթացին՝ վտանգելով հասարակության կյանքում հոգևոր արժեքները: Մենք այսօր էլ շարունակում ենք վկաներ լինել այնպիսի արժեքների ոսնահարման, ինչպիսիք են մարդու իրավունքները, նրա արժանապատվությունը, սոցիալական արդարությունը, ժողովուրդների և ազգերի բարեկամությունը: Մենք պետք է մեր ուժերը ուղղենք մարդու իրավունքների պաշտպանությանն ու նրա ազատ կամքի դրսևորմանն իբրև Աստծո հատուկ շնորհի՝ տրված Իր ստեղծած արարածին:

Մենք չենք կարող արհամարհել այն իրողությունը, որ ահաբեկչությունն այժմ ձեռք է բերում նոր երանգներ՝ ներխուժելով նաև մշակույթի ոլորտ: Վերջին ամիսներին մենք վկաները դարձանք մարդկանց կրոնական զգացմունքների վիրավորման, ինչն էլ անհանդուրժելի է և վտանգավոր երևույթ: Ահաբեկչության և ազգային կրոնական անհանդուրժողականության դեմ պայքարում անհրաժեշտ է ձեռնարկել քայլեր, որոնք կկանխեն հոգևոր մշակութային վանդալիզմի դեպքերը, որոնք արդյունք են ազգային ատելության:

Մենք պետք է խոստովանենք, որ մինչև մեր կողմից չեն դատապարտվի բոլոր պատմական չարագործությունները մարդկանց ու ազգերի նկատմամբ, ավերածություններն ու ցեղասպանությունները, մենք կշարունակենք մնալ դրանց կրկնության վտանգի առջև, ինչի վկաներն էլ մենք հաճախ դառնում ենք և այսօր:

Մենք կոչված ենք համախմբել մեր ուժերը, որ տնտեսական, քաղաքական, մշակութային և գիտատեխնիկական առաջընթացը չծառայի գաղափարական բռնության տարածման ծավալմանը, օտարաշայացությանը, ահաբեկչության և սպառազինության մրցավազքին: Մենք չենք կարող անտարբեր նայել ոչ աստվածահաճո փորձերին՝ կոռնավորմանը, էվտանազիայի կիրառմանը, և ընդհանրապես հասարակության անբարոյականացմանը: Մեր առջև խնդիր է դրված ուժերը ուղղել մարդկանց սրտերում և հասարակական կյանքում աստվածաճանաչողության, հավատքի, սիրտ և հոգևոր արժեքների հաստատմանը, առանց որոնց ոչ մի հասարակություն չի կարող պայքարել և բնականոն զարգանալ արժանապատիվ և երջանիկ կյանքով ապրելու համար:

Հռչակելով մեր ժողովուրդների նպատակները՝ մենք բոլորս պետք է հաստատենք, որ դրանք ձգտում են ուղիներ գտնելու նրանց առջև ծառացած խնդիրների հաղթահարմանը, ուղիներ, որոնք տանում են եղբայրությամբ և համաձայնությամբ ընդհանուր խաղաղ կյանքի ապահովմանը: Եվ այդ նպատակով հավատքի մարդիկ պետք է անսասան մնան իրենց վեհ գաղափարների նվիրվածությանը, որպեսզի մարդկությունը զարգանա հումանիտար այնպիսի չափանիշներով, ինչպիսիք են արդարությունը, փոխադարձ հարգանքը, ազնվությունը՝ արժեքներ, որոնք ընկած են հասարակական կյանքի հիմքում: Եվ թող Աստծու Հովանավոր Աջը լինի բոլոր ազգերի վրա, և Տերը թող օրհնի մարդկային բոլոր ուժերը խաղաղության հաստատման և մարդկանց բարօրության համար այժմ և միշտ և հավիտյանս հավիտենից: Ամեն»:

Հուլիսի 5-ին տեղի ունեցավ համաժողովի եզրափակիչ նիստը, որում ընդունվեց այս գաղաթաժողովի ուղերձը, ուր ներկայացված էր միջկրոնական երկխոսության և համագործակցության հիմնական կետերը:

Ուղերձում ի մասնավորի ասվում է. «Մենք՝ մասնակիցներս կրոնական ղեկավարների համաշխարհային հավաքի՝ 49 երկրների քրիստոնեական, մահմեդական, հուդդայական, բուդդիստական ու հինդուսական համայնքների առաջնորդներ և ներկայացուցիչներ, Մոսկվայում հավաքվել ենք Մեծ Ութնյակի գաղաթաժողովի նախօրեին:

Մանրամասնորեն քննելով այն հարցերը, որոնք վերաբերվում են նաև Ութնյակի հանդիպմանը, մենք դիմում ենք երկրների ղեկավարներին, մեր կրոնական համայնքների և բարի կամքի տեր բոլոր մարդկանց:

Մենք գտնում ենք, որ մարդն իր բնույթով հոգևորի մղումն ունի: Պատմության սկզբից ի վեր կրոնը հանգուցային նշանակություն ունի մտքի, մշակույթի, բարոյականության ու հասարակական կեցության ձևավորման գործում: Ժամանակակից հասարակության մեջ կրոնի աճող դերի պայմաններում մենք ցանկանում ենք, որ կրոնը շարունակի ծառայել խաղաղության ամրապնդմանը աշխարհում և քաղաքակրթությունների միջև երկխոսությանը և ոչ թե որպես միջոց ծառայի հակամարտությունների և երկպառակության համար: Կրոնը մեծ ներուժ ունի՝ համախմբելու տարբեր ժողովուրդների և մշակույթների, չնայած հասարակական փխրունությանը, որը հատկապես առկա է այսօրվա բազմաձևության համատեքստում:

Մարդկային կյանքը Բարձրյալի պարզևն է: Մեր սրբազան պարտքն է պահպանել այդ պարզևն, որը պետք է լինի թե՛ կրոնական առաջնորդների և թե՛ քաղաքական ղեկավարների մտահոգությունը:

Մշակութային երկխոսությունը և գործակցությունը չպետք է սոսկ կարգախոսներ լինեն: Մեզ հարկավոր է կառուցել այնպիսի աշխարհակարգ, որում ժողովրդավարությունը կարողանա համատեղել տարբեր շահերը և ապահովի մարդկանց մասնակցությունը ազգային և համընդհանուր բնույթի որոշումների ընդունմանը՝ հարգելով զգացմունքները և բարոյական համակարգերը ազգային ու կրոնական տարբեր ավանդույթներ ունեցող մարդկանց: Միջազգային վիճելի հարցերում համակողմանի և արդար որոշումների ընդունմանը պետք է հասնել խաղաղ միջոցներով:

Մենք մերժում ենք երկակի չափանիշները միջազգային հարաբերություններում: Աշխարհը պետք է լինի բազմաբևեռ և բազմակացությամբ՝ բավարարելով բոլոր մարդկանց և ժողովուրդներին և ոչ թե ենթարկվի անկենսունակ և պարզունակացված գաղափարական համակարգերի:

Մարդը Արարչի յուրահատուկ ստեղծածն է, որի կեցությունը ձգվում է դեպ հավիտենություն: Մարդը չպետք է դառնա ո՛չ ապրանք, ո՛չ քաղաքական մանիպուլյացիաների օբյեկտ և ոչ էլ մեքենայի դետալ արտադրության և սպառման մեջ:

Այս պատճառով առաջին հերթին անհրաժեշտ է մշտապես հավաստել Բարձրագույն արժեքը մարդկային կյանքի՝ հղացումից մինչև վերջին շունչը և կյանքի վախճանը: Ըստ այդմ, ընտանիքն էլ այսօր աջակցության կարիք ունի, որովհետև ընտանիքն է այն միջավայրը, ուր մարդը ձևավորվում է որպես բանական և բարոյական անհատականություն: Մենք կոչ ենք անում ուժեղացնել ջանքերը ընտանիքի աջակցության, հատկապես ընտանիքի դաստիարակության առաքելությանը: Ասվում է, որ այս նպատակով հարկավոր է կիրառել և օգտագործել միջազգային իրավունքի և տարբեր պետությունների փորձը՝ ունենալով նաև զանգվածային լրատվամիջոցների աջակցությունը: Նույն այս հարցի հետ է կապվում և կանանց ու երեխաների հանդեպ մտահոգությունը, ինչպես նաև մտահոգությունը ծերերի, հաշմանդամների և ընդհանրապես որոշակի սահմանափակ հնարավորություններ ունեցող մարդկանց հանդեպ: Մարդկանց պաշտպանելը բռնությունից և շահագործումից պետք է լինի պետության, հասարակության և կրոնական համայնքների ընդհանուր մտահոգությունը:

Մարդը Բարձրագույն ստեղծվածն է Բարձրյալի, որի համար մարդու իրավունքները և դրանց պաշտպանությունը պետք է լինի գլխավոր մտահոգություններից մեկը: Միաժամանակ փորձը ցույց է տալիս, որ առանց հոգևոր նախասկզբի բոլոր ջանքերը ձախողման են դատապարտված նաև մարդու իրավունքների պաշտպանության բնագավառում, ուստի կրոնական առաջնորդները գտնում են, որ այդ իրավունքների պաշտպանությունը պետք է խաբսխված լինի որոշակի հոգևոր-բարոյական գաղափարների վրա:

Կրոնական առաջնորդների այս ուղերձում այնուհետև դատապարտվում են ծայրահեղականությունը և ահաբեկչությունը: Կրոնական գործիչները պետք է իրենց պարտքը համարեն հակազդելը քաղաքական, ազգային և կրոնական հողի վրա կատարվող բռնություններին: Մեր ժամանակներին ուղղված գլխավոր մարտահրավերներից մեկն է կրոնի օգտագործումը անհանդուրժողականություն սերմանելու և մարդկանց դեմ ոտնձգություն կատարելու համար: Այդ երևույթի դեմ կարելի է պայքարել ընդհանուր կրթվածության հասնելով և բարոյական դաստիարակությամբ, ուստի Ուղերձում կարևորվում է հատկապես դպրոցի և կրթության դերը, որոնք, ավանդական կրոնների ավանդույթներին հավատարիմ, պետք է սիրո և խաղաղության կոչեն մարդկանց:

Ուղերձում այնուհետև կոչ է արվում վերջ տալ կրոնական զգացմունքների վիրավորմանը, ինչպես նաև կրոնական ստեղծագործությունների, անվանումների և խորհրդանշանների հանդեպ վիրավորական մոտեցմանը: Նա, ով ձեռք է բարձրացնում սրբությունների վրա, պետք է իմանա, որ դրանով վիրավորում է մարդկանց զգացմունքները և սեպ խրոմ նրանց մեջ:

Ուղերձում ասվում է, որ կրոնական գործիչների առաքելությունն է՝ վերականգնել և հաստատել բարոյական հաստատուն արժեքները մարդկանց գիտակցությունում, քանի որ այդ արժեքները տրված են Բարձրյալի կողմից և դրանք հիմնականում նույնն են բոլոր կրոնների համար:

Այս Ուղերձով կրոնական առաջնորդները հայտարարում են, որ իրենք գիտակցում են իրենց պատասխանատվությունը հասարակության բարոյական վիճակի համար և, կրելով այդ պատասխանատվությունը, ցանկանում են գործակցել պետությունների հետ բարոյական տարբեր հիմնախնդիրների լուծման գործում:

Մարդկային կյանքը սերտորեն կապված է տնտեսության հետ, որը կյանքի մյուս ոլորտների նման հարկավոր է խարսխել արդարության վրա: Գործարար կյանքը և տնտեսությունը պետք է որոշակի սոցիալական պատասխանատվություն կրեն և համապատասխանեն բարոյական չափանիշներին: Միայն եկամուտներին և տնտեսական նվաճումներին հանգեցվող կյանքը դառնում է դատարկ և ամայի, որի համար Ուղերձում կոչ է արվում, որ գործարար կյանքը հաշվետու լինի քաղաքացիական հասարակությանը, ներառյալ կրոնական համայնքներին:

Ուղերձում այնուհետև անդրադարձ է կատարվում Երկիր մոլորակի բնապահպանական վիճակին: Երկրների ղեկավարներին և արդյունաբերողներին կոչ է արվում՝ գիտակցել իրենց պատասխանատվությունը երկրի բնական պաշարների պահպանության գործում: Այդ պաշարները Արարչի կողմից պարզևված են ողջ մարդկությանը և պետք է օգտագործվեն ի շահ ողջ մարդկության բարիքի համար: Բնական ռեսուրսների հավասարաչափ և արդարացի օգտագործումը կնպաստի Երկիր մոլորակի տարբեր կողմերում առկա աղքատության և սովի վերացմանը, որոնցից տառապում են միլիոնավոր մարդիկ: Աղքատությունը և սոցիալական անպաշտպանվածությունը հանգեցնում են զանգվածային արտագաղթի և ժողովրդագրական այլ տեղաշարժերի, որոնք էլ իրենց հերթին ծնում են նոր հիմնախնդիրներ թե՛ աղքատ և թե՛ հարուստ երկրներում: Սոցիալական բևեռացումը հղի է համաշխարհային ապակայունացմամբ, որը սպառնում է ողջ աշխարհին:

Կրոնական գործիչների համար առանձնակի մտահոգության առարկա պետք է լինեն նաև տարբեր հիվանդությունները, համաճարակները և հատկապես ՁԻԱՀ-ը, թմրամոլությունը և զանգվածային բնաջնջման զենքերի տարածումը: Որևէ երկիր, նույնիսկ ամենահարուստն ու հզորը, միայնակ չի կարող պայքարել այս սպառնալիքների դեմ, ուստի անհրաժեշտ են միասնական և փոխկապակցված գործողություններ:

Պատմական փորձի վկայակոչմամբ՝ անթույլատրելի է համարվում կրոնական համայնքների գործունեությունը հանուն քաղաքական շահերի:

Ուղերձը եզրափակվում է հավատացյալներին ուղղված խոսքով: Կրոնական առաջնորդները հավատացյալներին կոչ են անում՝ հարգել և ընդունել միմյանց, անկախ կրոնական և ազգային պատկանելությունից՝ համատեղ ջանքերով ստեղծելու լավագույն ապագա համամարդկային ընտանիքի համար, պահպանելով խաղաղությունը՝ տրված Բարձրյալի կողմից:

Համաժողովի վերջում մետրոպոլիտ Կիրիլը շնորհակալություն հայտնեց այս գագաթաժողովի մասնակիցներին և կազմակերպիչներին:

ԷԴՈՒԱՐԴ ՍԱՐԿԱՎԱԳ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՈՒԹՅՈՒՆ

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի կոնդակով հուլիս-օգոստոս ամիսներին

«Ս. Սահակ – Ս. Մեսրոպ» շքանշանով պարգևատրվել է.

Զարեհ Տեմիրճյան (ԱՄՆ հայոց Արևելյան թեմ)

«Ս. Ներսես Շնորհալի» շքանշանով պարգևատրվել են.

Եղիազար Ուգունյան (Բուլղարիայի հայոց թեմ)

Մանուկ-Բիեր Ղազարյան (Արևմտյան Եվրոպայի Հայրապետական պատվիրակություն)

Կարապետ Սայապալյան (Արևմտյան Եվրոպայի Հայրապետական պատվիրակություն)

Արտաքին Հակոբյան (Արևմտյան Եվրոպայի Հայրապետական պատվիրակություն)

Կարապետ-Ալպեր Խազինեճյան (Արևմտյան Եվրոպայի Հայրապետական պատվիրակություն)

Դավիթ Պանտիկյան (Արևմտյան Եվրոպայի Հայրապետական պատվիրակություն)

Ռոպեր Տեր-Մերկերյան (Արևմտյան Եվրոպայի Հայրապետական պատվիրակություն)

Ադրինե Գաբրիելյան (Արևմտյան Եվրոպայի Հայրապետական պատվիրակություն)

Մարի Մինասյան (Արևմտյան Եվրոպայի Հայրապետական պատվիրակություն)

Ռեն-Թագուհի Սյուլաչյան (Արևմտյան Եվրոպայի Հայրապետական պատվիրակություն)

Լուսիեղլ Պողոսյան (ԱՄՆ հայոց Արևմտյան թեմ)

Սիմոն Աճիլաչողլի (ԱՄՆ հայոց Արևմտյան թեմ)

Միհրան սարկավազ Հովիլամազյան (ԱՄՆ հայոց Արևելյան թեմ)

Օրհնության զիր է տրվել.

Յուրի Վարդանյան (ԱՄՆ հայոց Արևմտյան թեմ)

Ֆիլիպ Արփիարյան (ԱՄՆ հայոց Արևելյան թեմ)

Միլվա Բոյաջյան (ԱՄՆ հայոց Արևելյան թեմ)

Անն Տատյան (ԱՄՆ հայոց Արևելյան թեմ)

Հակոբ սարկավազ Հովսեփյան (ԱՄՆ հայոց Արևելյան թեմ)

Տարեցների միությանը (ԱՄՆ հայոց Արևմտյան թեմ)

Սուրբ Գևորգ եկեղեցու համայնքին (Արգենտինայի հայոց թեմ)

«Զորյան հիմնարկին» (Կանադայի հայոց թեմ)

Համագգայինի «Արշակ և Սոֆի Գալստյան Վարժարան» (Ավստրալիայի հայոց թեմ)

ԱՄՆ հայոց Արևմտյան թեմի Իրանահայ միությանը

ԱՄՆ հայոց Արևմտյան թեմի Պոլսահայ միությանը

Սուրբ Երրորդություն եկեղեցու համայնքին (ԱՄՆ հայոց Արևելյան թեմ)

Ռոտ Այլենտի հայկական երգչախմբին (ԱՄՆ հայոց Արևելյան թեմ)

**Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ
ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՀԱՆՐԻՍԱՊԵՏՈՒԹՅԱՄԲ ԿԱՏԱՐՎԵՑ
ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ՄԱՂԹԱՆՔ**

Հուլիսի 23-ին Մայր Աթոռ Ս. Էջմիածնում, հընթացս Ս. Պատարագի, Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսի հանդիսապետությամբ կատարվեց միասնական աղոթքի կարգ՝ հանուն Մերձավոր Արևելքում խաղաղության վերահաստատման:

Արարողությունից առաջ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Միջեկեղեցական հարաբերությունների պատասխանատու Տ. Եզնիկ արքեպիսկոպոս Պետրոսյանը, դիմելով ներկաներին, նշեց. «Բոլոր մարդիկ Աստծո զավակներն են, և ամեն անգամ, երբ մեկի կյանքը վտանգվում է, և կամ մեկը հրաժեշտ է տալիս կյանքին, մենք Աստծուց հոգու հանգստություն ենք խնդրում նրա համար՝ անկախ նրանից, թե ի՞նչ կրոնական կամ ազգային պատկանելություն ունի: Այսօր առավել ևս կարիք ունենք Աստծուն աղոթելու՝ խնդրելով խաղաղություն հաստատել Միջին Արևելքում, որտեղ ամեն օր պայթում են ռումբեր, որտեղ ամեն օր զոհվում են Աստծո զավակները: Մեզ համար առավել կենսական է խաղաղության հաստատումը, որովհետև հակամարտող երկու կողմերում էլ մենք ունենք հսկայական թվով հայություն, որոնք տասնյակ և հարյուրավոր տարիներ շարունակ բնակվում են այնտեղ»:

Արարողությանը մասնակցում էին Մայր Աթոռի միաբաններ, բազմաթիվ հավատացյալներ:

*ՄԱՅՐ ԱԹՐՈՒ Ս. ԷԶՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ*

**Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐԲ ԵՎ Ա-
ՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԽՈՍՔԸ
ՍԻԼՎԱ ԿԱՊՈՒՏԻԿՅԱՆԻ ՀՈՒՂԱՐԿԱՎՈՐՈՒԹՅԱՆ
ԺԱՄԱՆԱԿ**

(29 օգոստոսի 2006 թ.)

Սիրելի բարեպաշտ ժողովուրդ,

Այսօր կորստի ցավն ու տխրությունը մեր սրտում՝ հրաժեշտ ենք տալիս հանրա-
ճանաչ բանաստեղծուհի և հրապարակախոս, մեր ժողովրդի և մեր Սուրբ Եկեղեցու
արժանավոր գավակ Սիլվա Կապուտիկյանին: Ուղեկցում ենք նրան դեպի հայ մեծե-
րի Պանթեոն, դեպի հավերժական կյանքի ճանապարհ, դեպի վերջին հանգրվանը՝
Աստծո ողորմած հայացքի ներքո:

Աստված օրհնեց հոգեւույս մեծանուն բանաստեղծուհուն՝ երկար կյանք պարգե-
լով ու բեղուն գրիչ, որը նա սիրով ու նվիրումով ծառայեցրեց իր Հայրենիքին ու ժո-
ղովրդին: Բոլորիս մանկուց է ծանոթ Սիլվա Կապուտիկյանի անունը, որը ամեն հայ
մանուկի հոգում նույնանում է հայոց լեզուն իրեն հանձնող պատգամի հետ: Պատ-
գամ, արդարև, նրա ստեղծագործությունը և ապրած կյանքը կրում են այդ կնիքը:
Հայրենիքը սիրելու, ազգը սիրելու պատգամը, մեր նախնայաց հույսերի ու իղձերի տե-
րը լինելու պատգամը, դեպի գալիքը, դեպի հավերժությունը հավատով նայելու
պատգամը: Սիլվա Կապուտիկյանի գրական ժառանգությունը տասնամյակներ ար-
դեն կարդում, գնահատում ու սիրում են Հայաստանում և Սփյուռքում: Իբրև տաղան-
դավոր հայ գրող՝ նրան ճանաչում են օտարազգի արվեստագետները: Մեր գրակա-
նության ու մշակույթի հարուստ ու կարևոր մի դարաշրջան է ներկայացնում Սիլվա
Կապուտիկյանը իր սերնդակից բազմաթիվ մշակութային գործիչների հետ, ովքեր
բարդ ժամանակում տրոփում պահեցին մեր գրականության ու մշակույթի զարկե-
րակը, ապրեցին ու ստեղծագործեցին հայության վերածննդի, Հայաստանի ազա-
տության, մեր ժողովրդի միասնական, լուսավոր գալիքի հավատով:

Երջանիկ էր Սիլվա Կապուտիկյանը, որ իր հոգու բոլոր ուժերը ներդրեց մեր ան-
կախ պետականության վերահաստատման սուրբ նպատակին, տեսավ Հայաստանի
ու Արցախի ազատ կյանքը և անձնվեր ծառայեց մեր հասարակական կյանքի բարե-
նորոգման ու ամրապնդման նվիրական գործին: Ստեղծագործական ծանրակշիռ
վաստակով, ծառայասիրության օրինակով, գնահատված ու մեծարված՝ մեծագնիվ
դուստրը մեր ժողովրդի այսօր հանգրվանում է հայոց մեծերի կողքին, նրանց հետ
միասին միշտ արթուն հոգով հսկելու հայոց կյանքը, նրանց հետ հավերժ ներկայու-
թյամբ իր հոգու շնորհալի զանձերը, սերն ու նվիրումը բերելու հայ կյանքին:

Մեծանուն բանաստեղծուհու հիշատակը միշտ պայծառ ապրելու է նաև իր եկե-
ղեցասիրությամբ, եկեղեցական կյանքում իր մշտական ներկայությամբ, քանզի Սիլ-
վա Կապուտիկյանը այն մտավորականներից էր, ովքեր միշտ որդիական սիրով

կապված եղան Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին, եղան կողքին երջանկահիշատակ Վազգեն Ա Հայրապետի: Հանուն Գերագույն Հոգևոր Խորհրդի և Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի միաբանության Մեր խորին ցավակցությունն ենք բերում Արա Շիրազին և հանգուցյալի բոլոր մերձավորներին: Աղոթում ենք, որ Բարձրյալն Աստված երանավետ Իր բարձունքներում լույսերի ու խաղաղության մեջ ընդունի հոգին իր աղախնի և Սուրբ Հոգու շնորհով մխիթարություն պարգևի նրա վշտացյալ հարազատներին:

Խունկ, աղոթք և օրհնություն բանաստեղծուհի Սիլվա Կապուտիկյանի պայծառ հիշատակին:

«Վասն հանգուցեալ հոգւոյն աղաչեցոյք զՓրկիչն մեր Քրիստոս, զի զսա ընդ արդարսն դասեցէ եւ զմեզ կեցուցէ շնորհիւ ողորմութեան Իւրոյ: Ամէն»:

«Ս. ՍԱՀԱԿ - Ս. ՄԵՍՐՈՊ» ՇՔԱՆՇԱՆ ԹՈՄ ՍԱՄՈՒԵԼՅԱՆԻՆ

Օգոստոսի 30-ին Մայր Աթոռ Ս. Էջմիածնում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսը «Ս. Սահակ - Ս. Մեսրոպ» շքանշան հանձնեց տիար Թոմ Սամուելյանին՝ բարձր գնահատելով նրա ազգագույն ու եկեղեցաշեն արդյունաշատ վաստակը:

Շքանշանի հանձնման հանդիսությունը բացվեց Արմավիրի թեմի առաջնորդ Գերաշնորհ Տ. Սիոն եպիսկոպոս Աղամյանի խոսքով: Սրբազան Հայրը անդրադարձավ մեծարյալի կյանքի ստեղծագործական ուղուն և բեղուն գործունեությանը:

ԱՄՆ քաղաքացուն նման բարձր պատվի արժանացնելու համար Վեհափառ Հայրապետին իր շնորհակալությունն ուղղեց նաև Հայաստանում ԱՄՆ արտակարգ և լիազոր դեսպան Ջոն Էվանսը, որ բարձր գնահատեց Թոմ Սամուելյանին՝ նշելով, որ նա այն մարդն է, որում իմացության և գործնական կյանքի աշխարհները միավորվում են:

Թոմ Սամուելյանի արժանիքները բարձր գնահատեց նաև պատմաբան Ռաֆայել Համբարձումյանը՝ իր խոսքում ընդգծելով. «Մեր գրականությունը, մշակույթը և գիտությունը զարգացել և առաջընթաց են արձանագրել ճիշտ նման մարդկանցով: Թոմ Սամուելյանը մեր մշակույթի պայծառագույն ներկայացուցիչներից է»: Այնուհետև Համբարձումյանը շնորհակալություն հայտնեց Նորին Սրբությանը՝ մշակույթի ու գիտության գործիչների նկատմամբ մշտապես ցուցաբերվող ուշադրության և գնահատության համար:

Ապա «Էջ Միածինն ի Հօրե» շարականի երգեցողության ներքո ներս բերվեց Հայրապետական Սրբատառ Կոնդակը և ընթերցվեց Արմավիրի թեմի առաջնորդ Գերաշնորհ Տ. Սիոն եպիսկոպոս Աղամյանի կողմից:

Կոնդակում բարձր է գնահատվում մեծարյալի ազգագույն բազմաբեղուն գործունեությունը, ով տասնամյակներ շարունակ պատրաստակամ ոգով ծառայություն է մատուցել ԱՄՆ Արևելյան թեմի եկեղեցիներում, հայոց լեզու և գրականություն դասավանդել Ֆիլադելֆիայի, Նյու Յորքի և Բոստոնի ազգային կրթօջախներում և աշխուժորեն մասնակցել ու արդյունավոր նպաստ բերել ամերիկահայ կյանքի առաջընթացին:

«...Հայրենի մեր երկրի զորացմանն ու առաջընթացին Ձեր կարողությունները ներդնելու պատրաստակամությունը և մեր ժողովրդի զավակների ազգային և եկեղեցական կյանքը միշտ շեն ու պայծառ տեսնելու ազնիվ մղումը առաջնորդեց Ձեզ Հայրենիք, որտեղ Տիրոջ օրհնության ներքո շարունակում եք հարստացնել ազգագույն և եկեղեցաշեն Ձեր վաստակը: Ուրախությամբ է համակվում Հայրապետիս հոգին, որ ազգային մեր արժեքների ու ավանդների հանդեպ Ձեր հավատարմությունը մարմնավորվում է Ձեր բարի իրագործումներում՝ ի սպաս Քրիստոսասեր մեր ժողովրդի, Հայրենի երկրի և Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու:

Գնահատանքով ենք անդրադառնում նաև Ձեր գիտական, գրական-ստեղծագործական վաստակին: Շնորհիվ տարիների Ձեր բարեջան աշխատանքի՝ ընթերցողի սեղանի վրա են Ձեր հեղինակած մենագրությունները, բառարանները, դասագրքերը, թարգմանական աշխատությունները, որոնք իրավամբ բերել են Ձեզ մտավորականի բարի համբավ ու ճանաչում: Ձեր թարգմանությունների միջոցով օտարներ և անգլիախոս հայորդիներ հնարավորություն ունեն ծանոթանալու այնպիսի կոթողային աշխատությունների, ինչպիսիք են Գրիգոր Նարեկացու «Մատեան Ռդբերգութեանը», Եզնիկ Կողբացու «Եղծ Աղանդոցը» և այլ գործեր», - մասնավորաբար ասվում է Հայրապետական կոնդակում:

Կոնդակի ընթերցումից հետո Նորին Սրբությունը տիար Սամուելյանի կուրծքը զարդարեց «Ս. Սահակ - Ս. Մեսրոպ» շքանշանով:

Շքանշանի հանձնումից հետո տիար Սամուելյանը իր խորին երախտագիտությունը հայտնեց Վեհափառ Հայրապետին՝ իրեն նման բարձր պատվի արժանացնելու համար:

Հանդիսությունը փակվեց Ամենայն Հայոց Հայրապետի օրհնության խոսքով: Վերհիշելով երջանկահիշատակ Վազգեն Ա-ի խոսքերը՝ «Աստված փնտրելու ճանապարհին ես գտա Սուրբ Էջմիածինը և իմ Հայրենիքը», Նորին Սրբությունը ասաց. *«Աստված փնտրելը մեր ժողովրդի կենսակերպն է եղել: Մեր ծնողք, իրենց զավակաց ձեռքը բռնած, նրանց մշտապես առաջնորդել են եկեղեցի, որպեսզի մանուկ հասակից իրենց երեխան սովորի քայլել Աստծո ճանապարհով, Աստված փնտրել և Աստծո ողորմած շնորհով գտնել Աստծուն, որովհետև ըմբռնել ու հաղորդ են դարձել այն մեծ խորհրդին, որ հայի ինքնության, գոյության, լինելիության երաշխիքն Աստծո հետ լինելու մեջ է կայանում»:*

Վեհափառ Հայրապետը նշեց, որ նույնը եղավ նաև Թոմ Սամուելյանի պարագային, ով աստվածորոնողության ճանապարհին դարձավ իր ժողովրդի երախտավոր զավակներից մեկը: Նորին Սրբությունը վերստին բարձր գնահատեց մեծարյալի՝ հայ ժողովրդի և Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու հանդեպ արդյունաշատ գործունեության միջոցով ցուցաբերվող նվիրումը, սերն ու հավատարմությունը:

Հանդիսության ընթացքում ելույթ ունեցավ «Հովեր» երգչախումբը՝ խմբավարությամբ Սոնա Հովհաննեսյանի:

ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷԶՄԻԱԾԻՆ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ՔԱՐՈՉԽՈՍԱԿԱՆ

Տ. ԻՍԱՀԱԿ ԱՔԵՂԱ ՊՈՂՈՍՅԱՆԻ ՔԱՐՈՁԸ՝ ԽՈՍՎԱԾ Ս. ԷԶՄԻԱԾՆԻ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ ՄԱՏՈՒՑՎԱԾ Ս. ՊԱՏԱՐԱԳԻՆ

(2 հուլիսի 2006 թ.)

«Այն ժամանակ օրենսգետներից և փարիսեցիներից ոմանք Նրան պատասխան տվեցին ու ասացին. «Վարդապե՛տ, Քեզնից մի նշան ենք կամենում տեսնել»:

(Մատթ. ԺԲ 38)

Սիրելի՛ հավատացյալներ,

Տակավին 4-րդ կիրակին է Սուրբ Հոգու աստվածային գալուստից հետո, երբ Տիրոջ առաքյալների դասերը լցվեցին բազմապատիկ պարզկներով, որպեսզի շնորհների մեջ հարատևելով կարողանան մխիթարությամբ դիմագրավել կյանքի տարադեպ պատահարներն ու տրտմությունները՝ առաջնորդելու համար դեպի հավիտենական կյանքի բարի և ուղիղ նավահանգիստը, ինչպես որ նկատում է սաղմոսագրուն. «Քո բարի Հոգին ինձ պիտի առաջնորդի դեպի արդար երկիր» (Սաղմ. ԺԽԲ 10): Եվ օրվա ավետարանական ընթերցվածն էլ մեզ է ներկայացնում մեր Տեր Հիսուս Քրիստոսի քարոզության այն դրվագը, երբ օրենսգետներից և փարիսեցիներից ոմանք Տիրոջից նշան են ուզում. «Վարդապե՛տ, Քեզնից մի նշան ենք կամենում տեսնել» (Մատթ. ԺԲ 38): Կարծեք թե մինչ այդ Քրիստոս չէր հրաշագործել, և օրենսգետներն ու փարիսեցիները պատեհությունը չէին ունեցել տեսնելու կամ լսելու այդ հրաշքների մասին: Այս պատճառով է, որ Մատթեոսի Ավետարանի հենց հաջորդող գլխում ասվում է, թե՝ «Շատ մարգարեներ ու արդարներ ցանկացան տեսնել, ինչ որ դուք եք տեսնում, բայց չտեսան, և լսել, ինչ դուք եք լսում, բայց չլսեցին» (ԺԳ 17): Այնինչ Քրիստոսի կյանքն արդեն իսկ գործ էր և այդ գործն արդեն իսկ պերճախոս վկայություն Նրա Աստվածության: Եվ այդ գործերից ամենապերճախոսը մարդ էակի համար հենց հրաշագործություններն էին՝ անվերջանալի հարատև ու մշտախոս: Տիրոջ մեկ խոսքն իսկ բավական էր, որպեսզի ժամանակավորը դառնար մշտատև և հարատևը՝ անցողիկ: Եվ սա այն պատճառով, որ Քրիստոս Իր խաղաղության ձեռքն ու աստվածային տուրքը մարդկանց էր բերել դեռևս ավելի առաջ, քան կատեղծվեց մարդը: Բայց այժմ մարդը, որ երկրի բոլոր կենդանի արարածներից ամենաբարձրն է ու ամենակատարյալը, նշան էր ուզում և նշան էր ուզում Արարչից, Նրանից, Ում բարկությունն անգամ իր մեջ ներկայանում է սիրո տեսքով:

Մարդն իր ողջ կյանքում ունեցել է Տիրոջից նշան ունենալու իր ակնկալությունը: Բայց այդ ակնկալությունն արդարացված է եղել գեթ այն դեպքում, երբ եղել է արդարամիտ, ուղղամիտ, դատողությամբ, թելադրված ճշմարտության և հավատքի

փնտրտություն, և ոչ մոլար ճանաչողությամբ, ինքնահնար ու խառնափնթոր մտածումներով, դատելով ըստ մարմնի (*հմմտ. Հովհ. Ը 15-19*): Որն է գործ օրինական և խոհական կարող է համարվել, երբ սկզբում իսկ բովանդակում է իր ազնիվ նպատակը: Բայց այս դեպքում օրենսգետներն ու փարիսեցիներն այլ բան չէին փնտրում, քան Հիսուսի կատարած հրաշքների չեզոքացումը, Նրա վարդապետության սխալ լինելը ցույց տալը, քանի որ կարծում էին, թե Քրիստոս իրենց դեմ է դուրս եկել, որով ուղղակի թե ոչ, բայց դուրս էին գալիս այն իշխանության դեմ, ում մեկ խոսքն արդեն անշարժ է պահում ողջ տիեզերքի հաստատությունը:

-Վարդապե՛տ, Քեզնից մի նշան ենք կամենում տեսնել:

Մինչ այդ էլ Քրիստոս բազում հրաշքներ էր գործել, որոնցից յուրաքանչյուրը բավարար կլիներ յուրաքանչյուր մի նշան փնտրողի, Իր սքանչելիքով, գործությամբ և օրինակով, բայց քանի որ մարդկանց միտքը մանկուց կեթ չարի ծառայության մեջ է (*հմմտ. Մենդ Ը 21*), և շարունակաբար պակասում է գեթ մանանեխի հատիկի չափ հավատքը (*հմմտ. Մատթ. ԺԷ 19*), մարդկությունը դատապարտված է: Որովհետև ինչպիսին որ մարդկության սիրտն է, այդպիսին է և Աստված:

Առաջին հայացքից նշան ունենալու այս կարծեք թե արդար պահանջը թվում է, թե արդարացիորեն պատճառաբանված է: Գրեթե մի ամբողջ ազգ նշան է ուզում տեսնել, բայց այնպիսին, որ ոչ ոք չի կատարել, և որ առավել ցավալի է, ոչ թե նրա համար, որպեսզի հավաստիանա, այլ նրա համար, որ խորապես հավատացած է, թե Քրիստոս չի անի: Հետևապես, նշան ունենալու, հրաշք տեսնելու այս խնդրանք-պահանջն ավելի քմահաճույք էր, առավել ամբաստանություն, կամ, որ ավելի ստույգ է՝ ամբաստանություն հետապնդող արարք. զի անգամ Տիրոջ հրաշափառ հարությունից հետո շատեր չհավատացին, որովհետև չցանկացան հավատալ:

«Ազգ չար եւ շնացող, խնդրէ, եւ նշան մի՛ տայցի նմա», - այս է Քրիստոսի պատասխանն ու հետևությունը, քանզի նրանք, ովքեր նշան էին փնտրում, հարկ էր, որ ժամանակին անդրադառնային, որպեսզի ստահող ու չարափառ վարդապետությունների մեջ չընկնեին, ինչպես մեզանում այսօր ոմանք, և չջանային լռեցնել նորաքանչ նշանների գործությունների համբավը:

Միքելի՛ հայորդիներ, աշխարհի արարումից մինչ այսօր Քրիստոս մեկ պատվեր, մեկ ակնկալություն ունի. հավատք առ Աստված: Քանզի այնտեղ, ուր չէր զգացվում հավատքի պատրաստություն, Քրիստոս չէր հրաշագործում ի ցույց՝ շեշտելու համար Իր փրկչական հանգամանքը: Որովհետև հավատքը մտքի, զգացմանց և կամքի ներդաշնակության մեջ է, աստվածային բարձրագույն ճշմարտությունների որոնման, ինչն արդեն իսկ հրաշք է, և այդ հրաշքի բարձրագույն աստիճանն է մեռելների հարությունը, որի անխափան ակնկալությունն ունեն բոլոր քրիստոնյանները:

Յուրաքանչյուր օր մենք ամենքս ականատեսներն ենք հրաշքի: Այն մեր կյանքի մեջ իրականանում է զոհաբերումով, նեղություններով ու չարչարանքներով և հատկապես աղոթքով, բայց ոչ նշանով, որովհետև յուրաքանչյուր հավատացյալ Քրիստոսի Եկեղեցու մեջ հանձնառություն ունի: Այդ հանձնառությունն իրականանում է

բարեկարգ կենցաղավարությամբ, հոգեկան ուժականությամբ և նվիրումով, հոգևոր արժեքներով:

Այսօր էլ մենք եկել ենք միասնական աղոթք առաքելու առ Աստված, և ոգեշնչող ու գոտևորող է, որ այդ աղոթքը երկինք է բարձրանում հավաքական հանձնառությամբ և ոչ թե նշանների փնտրտուքներով: Քանի որ Եկեղեցու կյանքի մեջ յուրաքանչյուր հանդիպում մի նոր հրավեր է, աղբյուր ներշնչումի և գիտության, հայացք դեպի քրիստոնեության ճշմարիտ որթատունկը՝ անտարբեր չմնալու մեր հոգևոր-բարոյական և ազգային անանց արժեքներին, հասկանալ տալու, թե ու՛ր է և ո՛րն է իրական արժեքը, ճշմարիտ քրիստոնյան, հարատևն ու մնայունը: Եվ այսօրվա խորհուրդն ու պատգամն է զոհաբերումն ու պատգամումը այնպիսի ուխտով ու նվիրումով, որով մեր հավատքի գորագլուխ Հիսուս Քրիստոս իր ձեռքերը տարածեց խաչի վրա:

Այսօր էլ շատեր իրենց կյանքի ու կենսակերպի թելադրանքով փորձում են ժխտել այն առաքելությունը, որը կոչված է Աստծո ժողովրդին անսասան պահելու և, որ ցավալին է, ո՛չ թե հաղթահարելու համար անձկությունն ու անորոշությունը, այլ նրա համար, որ նշա՛ն են կամենում տեսնել, հրա՛շք: Բայց մի՞թե հրաշք չէ հավաքական աղոթքի ամեն մի յուրահատուկ դրսևորում, յուրաքանչյուր հաստատված եկեղեցի՝ Աստծո տաճար, մի՞թե հրաշք չէ մեր կյանքի դժվարությունները միասնաբար հաղթահարելն ու ընդհանուր նպատակ ունենալը այսքան ժամանակ անց, մի՞թե հրաշք չէ մեր հավատարմությունն ու զորակցումը Մայր Եկեղեցուն, որովհետև մե՛կ Աստված կա, մե՛կ ուխտ և մե՛կ ճանապարհ, և այդ ճանապարհը դեպի երկինք հայ քրիստոնյայի համար անցնում է Հայ Եկեղեցու միջով, ա՛յն եկեղեցու, որի քաղցրաքաղցր դողանջներն Աստծո ամեն օր հիրավի ազդարարում են յուրաքանչյուր օրվա սկիզբն ու ավարտը: Այդ լուռ դողանջների մեջ այսօր էլ լսելի է Աստծո ձայնը իր ժողովրդին, մանկան լացը քաղցր քնից առաջ, մայրական գորովագութ օրորը և մանավանդ հրեշտակաբարբառ «Ահա փեսան գալիս է, Նրան դիմավորելու՛ ելեք»-ը (Մատթ. ԻԵ 6): Եվ չտա Աստված, որ մենք էլ, ելնելով մեր քմահաճույքից, հալածանքից կամ տկարություններից, երկբա հայացքներ հառենք դեպի Բարին Աստված, այլ, ընդունելով հոգևոր նորոգության հրավերը, պատրաստ և բարձրագլուխ, ուրախությամբ բարբառենք՝

Շնորհք, սէր և խաղաղութիւն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի ընդ ամենեւեանս. ամէն:

**Տ. ԱՐՇԱԿ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԽԱՉԱՏՐՅԱՆԻ ՔԱՐՈԶԸ՝
ԽՈՍՎԱԾ Ս. ԷԶՄԻԱԾՆԻ ՄԱՅՐ ՍԱՃԱՐՈՒՄ
ՄԱՏՈՒՑՎԱԾ Ս. ՊԱՏԱՐԱԳԻՆ**

(9 հուլիսի 2006 թ.)

Սիրելի հավատացյալ քույրեր և եղբայրներ,

Այսօր Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի նվիրական կամարների ներքո հոգևոր և աշխարհական քույրերով և եղբայրներով համախմբվել ենք՝ աղոթակցելու միմյանց Սուրբ Պատարագի Սրբազան արարողության ընթացքին և նաև ապրելու հիշատակներով այս Սուրբ տաճարի, այս Սուրբ հաստատության, պայծառության տեսիլքով ապրած նվիրյալների՝ Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսի և տեր և տիկին Ալեք և Մարի Մանուկյանների: Անձեր, ովքեր իրենց կյանքը մատաղ արեցին մեր ժողովրդին, մեր Եկեղեցուն, տենչալով մեր Եկեղեցու և մեր ազգի երջանկությունը, պայծառությունը և բարօրությունը: Ավելի դիպուկ խոսք ես չեմ կարող գտնել բնորոշելու համար իրենց անձերը, քան այն, ինչ որ ընտրեց հենց ինք՝ Գարեգին Ա Ամենայն Հայոց կաթողիկոս:

1996 թ.: Սգում էր համայն հայությունը. մեծ բարեգործների շառավղից կյանքին հրաժեշտ էր տվել Ալեք Մանուկյանը, և այս առիթով Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից ժամանած պատվիրակությունը՝ երջանկահիշատակ Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսի գլխավորությամբ, մեկնեց իր մխիթարությունը, իր աղոթքները, իր սփոփանքը բերելու Մանուկյան ողջ ընտանիքին և հավատավոր բարեպաշտ զավակներին: Եվ այս առիթով, կարծես թե մարգարեանալով, նաև իր իսկ մահվան մասին Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսը հետևյալ բնորոշումը կատարեց. «Ո՛վ ազնվագարմ Ալեք Մանուկյան, քո այս մահվան օրը մեր մտածումները ուղղվում են ոչ թե քո մահվանը, այլ քո կյանքին»:

Իրապես, երկու նվիրյալ զավակներ Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու, երկու նվիրյալներ այսօր իրենց հիշատակով մեզ ոչ թե մղում են խորհրդածելու, ոչ թե մղում են խորհելու իրենց մահվան մասին, այլ ավելի՝ իրենց կյանքի մասին: Խորհել են տալիս, որ մարդու կյանքը չի չափվում միայն այն ժամանակահատվածով, որչափ ինքը ապրել է այս երկրի վրա, այլ չափվում է այն գործով, ինչ որ ինքը կատարեց իր երկրի համար, իր ժողովրդի համար և, առհասարակ, մարդկության համար:

Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոս. Հինգ տարիներ եղան երջանկահիշատակ Հայրապետի գահակալության տարիները, հինգ տարիներ, սակայն բազում ճանապարհներ, բազում արձանագրած հաջողություններ եկեղեցականների պատրաստության մարզում, եկեղեցաշինության մեջ, հինգ տարիներ, սակայն շոշափելի հաջողություններ հրատարակչական մարզում, և կարծես հանգուցյալ Հայրապետը մեղրահոս մի խոսք եղավ և մի նշխար եղավ, որ բաշխվեց մշտապես իր ժողովրդին, և այս հինգ տարիների ընթացքին իրապես ժամանակով չչափվող մի գործունեություն ծավալեց և այդ իր գործը գնահատանքը եղավ նաև իր անձի: Տիար Ալեք Մանուկյան: Դժվար է խոսել մի անձի մասին, ով իր բազմաբեղուն գործունեությամբ նվաճել է ոչ

միայն Հայաստանը, այլև Սփյուռքի ընդարձակ տարածքը: Մի դիպուկ արտահայտությամբ Հայ Բարեգործական Ընդհանուր Միությունը կառավարությունն էր հռչակված ընդհանուր Սփյուռքի, և երկար տարիներ Ալեք Մանուկյանը եղավ այդ կառավարության վարչապետը, եղավ այդ կառավարության ղեկավարը՝ շարունակելով ավանդները իր վաստակաշատ երախտավոր նախնիների: Նրա հիշատակները սփռված են ոչ միայն Սփյուռքում, այլև առատորեն Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում: Առաջին փողոցներից մեկը, որ վերակոչվեց Երրորդ Հանրապետության տարիներին, եղավ Ալեք Մանուկյանի անվան փողոցը: Ալեք Մանուկյանի անվամբ և օրինակով սերունդներ պիտի դաստիարակվեն: Ազգային հերոսներից առաջինը եղավ տիար Ալեք Մանուկյանը:

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի տարածքում խոսում են իր արարումները, քարերը և գործերն են աղաղակում, կլինի գանձատունը՝ 1982 թվականին հիմնադրված և կառուցված երջանկահիշատակ Վազգեն Վեհափառի գահակալության շրջանին, կլինի Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Մայր Տաճարը, որտեղ որ Մանուկյան գերդաստանի՝ Ալեք և Մարի Մանուկյան գերդաստանի հարուստ ավանդները շարունակեցին իրենց ժառանգներ, և շարունակեցին նաև գործը, նվիրական գործը Գալուստ Գյուլպենկյանի, որ դրանից առաջ հովանավորել էր նորոգությունը Էջմիածնի Մայր Տաճարի:

Ահա նվիրական այս հիշատակներով է, որ ապրում ենք մենք այսօր, մշտապես մեր հոգիներում, մեր մտքերում կրելով երջանկահիշատակ մեր Հայրապետի՝ Գարեգին Ա Ամենայն Հայոց Հայրապետի ոգին, իր հիշատակները, հոգելույս Ալեք և Մարի Մանուկյանների լույս հիշատակը: Այսօր մենք համախմբվել ենք այստեղ Ամենայն Հայոց Գարեգին Բ Վեհափառ Հայրապետի բարձր հովանու ներքո, Նորին Սրբության տնօրինությամբ կատարելու հոգեհանգստյան արարողությունը այս գույգ նվիրյալների՝ Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսի և տեր և տիկին Ալեք և Մարի Մանուկյանների լույս հիշատակները վերստին վերարծարծելու մեր հոգիներում և հոգեհանգստյան պաշտոն մատուցելու ի հանգիստ իրենց հոգիներին: Այս առիթով ողջունում ենք իրենց հիշատակները մեզ հետ վերապրելու եկած իրենց հարազատներին՝ Սարգսյան ընտանիքին, հանձին Եսթեր Սարգսյանի և իրենց մերձավորների, Մանուկյան գերդաստանի՝ հանձին տիկին Լուիզ Միմոն Մանուկյանի և իր ընտանիքի անդամների ու մերձավորների, ողջունելու նրանց Վեհափառ Հայրապետի անունով և հայցելու Տիրոջ մխիթարությունը մեզ հետ նաև իրենց, որպեսզի ապրենք, ապրենք այս նվիրյալների հիշատակներով, մեր հոգիներում և մեր մտքերում կրենք իրենց լույս հիշատակը, աշխատենք, ջանանք կյանքի կոչել այն տեսիլները, ինչ որ չհասցրին անել իրենք իրենց երկրավոր կյանքի ընթացքին:

Թող Աստված օրհնի իրենց լույս հիշատակը և մեզ գորացնի նրանց հիշատակներով: Այժմ և հավիտյանս հավիտենից. Ամեն:

**Տ. ՆԵՐՍԵՍ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՊՈԶԱՊԱԼՅԱՆԻ
ՔԱՐՈԶԸ՝ ԽՈՍՎԱԾ Ս. ԷԶՄԻԱԾՆԻ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ
ՊԱՅԾԱՌԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՈՆԻՆ ՄԱՏՈՒՑՎԱԾ
Ս. ՊԱՏԱՐԱԳԻՆ**

(23 հուլիսի 2006 թ.)

*«Քրիստոս Աստուած մեր, շնորհեա մեզ ընդ
Պետրոսի եւ որդւոցն Ձեբեդեայ արժանաւորի
Քում արքայութեան երկնից»:*

(Շարական)

«Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. ամէն»:

Սրբազան շարականագիրը, անդրադառնալով Քրիստոսի պայծառակերպութեան հրաշալի հիշատակին, ասում է. «Քրիստոս Աստուած մեր, շնորհիւ մեզ Պետրոսի եւ Ձեբեդեոսի որդիների նման արժանանալ երկնքի արքայութեանը»:

Վարդավառի տոնը մեր նախնիք տոնել են դեռևս 4-5 հազար տարիներ առաջ: Հավաքվել են Իննականյան շրջանը Աշտիշատի եւ այնտեղ նոր տարին են տոնախմբել, Նավասարդի տոնը, որ սկզբում տոնախմբել է հայ ժողովուրդը օգոստոսի 11-ին, եւ սակայն մեր հավատո հայրը՝ Սուրբ Գրիգոր Լուսավորիչը, քրիստոնեությունը Հայաստանում պետական կրոն հաստատելուց հետո անդրադառնում է, որ ժողովուրդը տակավին շարունակում է տոնախմբությունը հեթանոսական զանազան տոների, եւ հատկապես Վարդավառի, կարգում է Պայծառակերպության, Այլակերպության տոնը, որը սկսվում է տոնախմբվել Նավասարդի 1-ին: Սակայն 551 թ. Մովսես Բ Եղիվարդեցի Կաթողիկոսի կողմից Տոնացույցի խմբագրումից հետո Վարդավառի տոնը կապվում է Ձատկի հետ, եւ այն այսօր մենք տոնում ենք Ձատկից 14 կիրակի, այսինքն՝ նաև Հոգեգալստից 7 կիրակի հետո:

Հին օրերը մեր նախնյաց՝ հեթանոսական պաշտամունքների շրջանը, ահավասիկ այսպիսով քրիստոնեական զգեստ զգեցավ եւ Վարդավառը դարձավ Պայծառակերպության՝ Քրիստոսի Այլակերպության տոնը: Ի՞նչ է քրիստոնեական իմաստը Վարդավառի՝ Պայծառակերպության տոնի: Ինչպես գրում են Ավետարանիչները, Պետրոս, Հակովբոս եւ Հովհաննես առաքյալներին իր հետ առնելով մեր Տերը՝ Հիսուս, բարձրացավ Թաբոր լեռան գագաթը, ուր, երբ աշակերտները տարվել էին խոսակցությամբ, հանկարծ Քրիստոսի դեմքը արեգակի նման պայծառացավ, եւ զգեստները սկսեցին փայլել սպիտակ ու պայծառ լույսի պես:

Ապշահար՝ «պշուցյալ» բառն է գործածում ավետարանիչը՝ որպես բարձրագույն ձևը առաքյալների ապշանքի: Նրանք հանկարծ խոնարհվում են, ծունկի են գալիս գետնին, եւ Պետրոսը, երբ աչքը հազիվ բարձրացնում է վախի, սարսափի եւ այդ աստվածային տեսիլքի առջև, զարմացած տեսնում է, որ Հիսուսի աջ կողմում Մով-

սեսն է կանգնած, իսկ ձախ կողմում՝ Եղիա մարգարեն, և մրմնջալով Հիսուսին ասում է. «Տե՛ր, լավ է մեզ համար այստեղ մնալը: Եկեք երեք վրաններ՝ երեք տաղավարներ պատրաստենք, մեկը Քեզ, երկրորդը՝ Մովսեսի, և երրորդը՝ Եղիայի համար: Այդ ժամանակ լուսավոր մի ամպ է գալիս, և ամպից հնչող ձայնը ասում է. «Մա՛ է Իմ Որդին սիրելի, Նրան լսեցեք, Որին հաճեցա»:

Տեսնում եք, թե ինչպես Հիսուսի աստվածային փառքը հայտնվեց աշակերտներին և աշակերտների միջոցով՝ ամբողջ մարդկությանը: Մարդիկ չէին ճանաչում, թե Հիսուսը մինչ այդ ո՞վ էր, կարծում էին՝ աստղծագործ Հովսեփի որդին է, բայց սխալվում էին, որովհետև Նրա ծննդյան գեղեցիկ խոհուրդի մեջ պահված է աստվածային ներկայությունը և Աստծո էջքն էր երկնքից երկիր Սուրբ Կույս Մարիամից ծնվելով, մարդեղանալով և այդպիսով երկինքը երկիր իջեցնելով:

Ի՞նչ էր նպատակը Աստվածորդու ծննդյան և աշխարհի մեջ նրա 33 տարիների կյանքի, եթե ոչ աստվածայինի բացումը, ներկայացումը, արտահայտությունը, որով և մարդկության առջև աստվածայինի բացահայտումը: Մենք երեք աշակերտների միջոցով այսօր տոնում ենք Պայծառակերպության տոնը, և Պայծառակերպության տոնի միջոցով անդրադառնում ենք, թե ինչպես երկնքում արքայություն գոյություն ունի, և ինչպես այնտեղ այնքան գեղեցիկ է ու պայծառ աստվածային ներկայությունը, և նրանք, ովքեր փոխադրվում են դեպի երկինք, դեպի դրախտ:

Մեր մաղթանքը այն է, որ աշխարհի վրա բնակվող ժողովուրդները ճանաչեն աստվածայինի ճշմարտությունը, անդրադառնան, որ իրենցից ամեն մեկը աշխարհ է եկել հատուկ մի նպատակի համար՝ խաղաղություն և զոհողություն, ծառայություն բերելու համար մարդկությանը: Մինչդեռ տեսնում ենք, թե աշխարհը ինչպես տարօրինակ կերպով հակառակ ուղղությամբ է ընթանում: Մեր եղբայրները և քույրերը, մարդկությունը աշխարհի անկյուններում ինչպիսի պատերազմական ծանր վիճակներից են անցնում, ինչպիսի ցավ և տառապանք են կրում: Մարդիկ, դժբախտաբար, չեն անդրադառնում, որ կյանքը ժամանակային առումով սահմանափակ մի իրականություն է, աստվածայինը պետք է ճանաչենք մեր կյանքի ընթացքին, որպեսզի խաղաղություն, եղբայրություն, սեր և համերաշխություն կարողանանք աշխարհի վրա հաստատել: Որքան ցավալի է Լիբանանում այժմ տիրող պատերազմական ծանր վիճակը:

Միքելիներ, պիտի աղոթենք անպայման, որ Աստված աշխարհին խաղաղություն տա, հատկապես աղոթենք Լիբանանի հայության համար, Կիլիկյան Աթոռի հաստատության համար, մեր ժողովրդի զավակների համար, որոնք աստանդական՝ դեպի արևելք և կամ դեպի արևմուտք դիմելու շփոթահար վիճակի մեջ են: Մեր աղոթքները լսելով՝ թող Աստված խաղաղություն պարգևի Լիբանանի հայությանը և ընդհանրապես Լիբանանի ողջ ժողովրդին, որպեսզի անդրադառնան և գիտակցեն աստվածային պայծառ ներկայությունը մեր կյանքում և ընթանան ըստ Աստուծո գծած ուղու՝ սիրով, ողորմությամբ, ծառայությամբ և իրար հանդեպ խաղաղության գիտակցությամբ:

Թող պայծառացյալ Քրիստոսը այսօր մեր տների մեջ ևս հայտնվի, Իր ներկայությունը ցույց տա: Մեր ծանր օրերին, մեր դժվարին օրերին հեշտ լուծումներ գտնի և պարգևի, մեր թշվառներին օգնության հասնի, մեր կարոտյալներին օգնի, որպեսզի լուսեղեն Իր ճամփով կարողանանք գտնել ճշմարտության, արդարության, խոնարհության, սիրո ճանապարհը, և այդպիսով՝ հայրենասիրաբար ապրելով կարողանանք երջանկություն բերել Հայաստան աշխարհին:

Թող պայծառակերպյալ Հիսուսի դեմքը այսօր ևս մեզ բոլորիս վրա փայլի, պայծառացնի մեր հոգիները, այժմ և հավիտյանս հավիտենից: Ամեն:

Տ. ՆԱՐԵԿ ԱԲԵՂԱ ԱՎԱԳՅԱՆԻ ՔԱՐՈՋԸ՝ ԽՈՍՎԱԾ Ս. ԷԶՄԻԱԾՆԻ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ

(6 օգոստոսի 2006 թ.)

*«Եւ տեսեալ Յիսուս զհաւատս նոցա, ասէ
ցանդամալոյծն, Որդեակ. թողեալ լիցին քեզ
մեղք քո»:*

*«Եվ Հիսուս, տեսնելով նրանց հավատը,
անդամալոյծին ասաց. Որդյա՛կ, քո մեղքերը
քեզ ներված են»:*

(Մարկոս Բ 5)

«Յանուն Հօր եւ Որդոյ եւ Հոգւոյն Սրբոյ. ամէն»:

Միրելի հավատացյալ քույրեր և եղբայրներ,

Մարկոսի Ավետարանից մեջբերված սույն տողերը մեզ առիթ ու հնարավորություն են ընձեռում լրջորեն մտածելու Քրիստոսի հանդեպ ունեցած մեր հավատքի մասին, քանի որ քրիստոնեական ճանապարհն սկսվում է հենց հավատքով:

Հավատքով ոչ միայն սկզբնավորվում է հոգևոր կյանքը, այլև հավատքով են պայմանավորված հոգևոր կյանքի ողջ ընթացքը, նրա վերելքն ու զարգացումը: Հավատքը գաղափարական համոզմունք կամ Աստծո գոյության փաստի սոսկ ընդունումը չէ, այլ մարդուն տրված ամենապատվական կարողությունն ու պարզև՝ իր Արարչի հետ հաղորդակցություն հաստատելու համար, որի ապացույցը տեսնում ենք Սուրբ Գրքի մեջ:

Նախ մեզ պետք է, որ հավատանք Քրիստոսին, ինչպես Հովհաննես Ավետարանիչն է ասում. «Աստծու ուզած գործը ա՛յս է. որ հավատաք Նրան, ում Նա ուղարկեց» (Հովհ. Զ 29):

Հետևաբար մեզ պատվիրված է, որ հավատք ունենանք, ինչպես Մարկոսի Ավետարանում ենք կարդում. «Եթե Աստծու հանդեպ հավատ ունենաք, ճշմարիտ եմ ասում ձեզ, ով որ այս լերանն ասի՝ ել և ծովն ընկի՛ր, և իր սրտում չկասկածի, այլ հավատա... կկատարվի» (Մարկ. ԺԱ 23):

Հավատքով լինում է արդարություն, ինչպես Պողոս առաքյալն է ասում. «...Աստծու արդարությունը ի Հիսուս Քրիստոս եղած հավատի միջոցով է...» (Հռոմ. Գ 22):

Հավատքով լինում է փրկություն. «Ով հավատա և մկրտվի, պիտի փրկվի, և ով չհավատա, պիտի դատապարտվի», - գրում է Մարկոս Ավետարանիչը (Մարկ. ԺԶ 16):

Հավատքով լինում է հոգևոր լույսը - «Ես որպես լույս եկա աշխարհի, որպեսզի ամեն ոք, որ Ինձ հավատում է, խավարում չմնա» (Հովհ. ԺԳ 46):

Հավատքով լինում է հավիտենական կյանք. «...քանի որ Աստված այնքան սիրեց աշխարհը, որ մինչև իսկ Իր միածին Որդուն տվեց, որպեսզի ով Նրան հավատում է, հավիտենական կյանքն ընդունի», - կարդում ենք Հովհաննու Ավետարանի մեջ (Հովհ. Գ 16):

Քրիստոսի հանդեպ ունեցած հավատքի շնորհիվ էր, որ կույրի աչքերը բացվեցին (Մարկ. Ժ 51-52), Հիսուսին մոտեցած մարդու նույն հավատքի զորությամբ իր

հիվանդ որդին բժշկվեց (Մարկ. Թ 23-25), ժողովրդապետի դուստրը Քրիստոսի հանդեպ ունեցած նույն հավատքով հարություն առավ (Ղուկ. Թ 50), նույն հավատքով բժշկվեց տեռատես կինը (Ղուկ. Թ. 48), Քրիստոսի բարեկամ Մարթայի հավատքի շնորհիվ էր, որ մեր Տերը հարություն տվեց նրա եղբորը՝ չորսօրյա մեռած Ղազարոսին (Հովհ. ԺԱ 32): Պետրոսն իր հավատքի համար վեմ անվանվեց (Մատթ. ԺԶ 18) և նույն հավատքի շնորհիվ կարողացավ քայլել ծովի վրայով, սակայն երբ երկմտեց, սկսեց ընկղմվել ջրերի մեջ (Հովհ. ԺԴ 28 - 31):

Հավատքով լինում է մեղքերի թողություն, ինչպես նշված է Գործք Առաքելոցում. «Բոլոր մարգարեները Նրա մասին վկայում են, որ բոլոր Նրան հավատացողները Նրա անունով մեղքերի թողություն կստանան» (Գործք Ժ 43):

Ահա թե ինչու այսօրվա Ավետարանական հատվածի մեջ երբ քիչ առաջ ընթերցվեց այս Սուրբ Խորանից, մեր Տեր և Փրկիչ Հիսուս Քրիստոս, տեսնելով անդամալուծի և նրան բերողների հավատքը, ասաց. «Որո՞ղյա՛կ, քո մեղքերը քեզ ներված են» (Մարկ. Բ 5), քանի որ գիտեր, թե ինչպես և ինչու է անդամալուծության ախտը հասել նրան, այսինքն՝ որպես նրա գործած մեղքերի պատիժ, հետևաբար, կամենալով վերացնել հիվանդության սկզբնապատճառը, Քրիստոս շրջվում և անդամալուծին ասում է. «Որո՞ղյա՛կ, քո մեղքերը քեզ ներված են» (Մարկ. Բ 5):

Բժշկվեց անդամալուծը, քանի որ Քրիստոս ներեց նրա մեղքերը: Բժշկվեց անդամալուծը, քանի որ հավատաց Քրիստոսին:

Սակայն ի՞նչ է հավատքն իր այս խորունկ ու անպարփակելի իմաստի մեջ:

Հավատքը մեր մտքի արտադրությունը չէ, տրամաբանության տևողությունն ու արգասիքը չէ, կյանքի փորձառական տվյալներից քաղված եզրակացություն չէ, զգացական ներթափանցում կամ մտքի թռիչք չէ, այլ Աստծուց տրված շնորհ, բնական տրամադրություն, որ ունենք մեր մեջ, ոչ թե բնագոյրեն և անգիտակից ձևով, այլ գիտակցորեն և ազատ կամքով նույն Աստծուն ճանաչելու և հետևելու համար, ուստի հավատալ իր կրոնական իմաստի մեջ՝ նշանակում է վստահել այն բոլոր հայտնություններին, որոնք տրված են Աստծուց, և որոնք ըմբռնում ենք իբրև բացարձակ և անժխտելի ճշմարտություն: Այս իմաստով հավատքը կյանք է, քրիստոնյայի պարագային՝ մարդու ապրելու միակ ձևը:

Միբեղիներ, երբ հիշենք առաջին դարերի քրիստոնյաններին, ովքեր վասն հավատքի հանձն առան մահը, ապա առանց վարանելու և ամենայն իրավամբ կարող ենք ասել, որ հավատքը մարդու մեջ սպանեց կասկածն ու վախը և դարձավ աղբյուր արիության, հույսի, հաղթանակի և անմահության: Մարդկության կյանքում այլևս մահն իր սպանիչ և ահագնագոր ուժի մեջ խորտակված է, մահվան վախը, որ կապարի ծանրությամբ ճնշում էր մարդկանց գիտակցության վրա և փշի պես ծակծակում էր նրանց սրտերը, փարատված է նրանց հոգիներից, ովքեր Քրիստոսի հավատքը խառնել են իրենց արյունին, մաշկին և կյանքին:

Հայ ժողովուրդն էլ իր կյանքի բոլոր տեսակի վայրիվերումների հուսալքիչ վայրկյաններին, տառապանքի և ավերածության ամենից դժիւն պայմանների տակ միշտ կենդանի պահեց Քրիստոսի հանդեպ ունեցած իր հավատքը, որով էլ կշռույթ և սնունդ տվեց իր կյանքին:

Սակայն ամեն անգամ, երբ սասանվեց հայի հավատքը, աշխարհի փոթորիկների մահասարսուռ սլաքները Հայաստանի վրա ուղղվեցին կամ Հայաստանով անցան: Եկան, հավաքվեցին և ուզեցին Գողգոթան գերեզմանի վերածել և Հայոց լեռնե-

րի ժայռերը որպես գերեզմանաքար դնել հայոց պատմության վրա: Բայց նույն այդ թշնամիներն անկարող եղան և հեռացան, երբ տեսան հայի անսասան հավատքը:

Թշնամիները ցրվեցին մեր հավատքի անսասանությունից, բայց... Հանհետացան: Կարծեք վերստին սկսել են հավաքվել և մեր մահը նյութել հյուծումի ու ինքնամաշումի չարիքով: Տեսանելի և անտեսանելի ուժերը, դրսից թե ներսից, կարող են փուշ և փոշի ցանել մեր կյանքի մեջ, երբ մեզ դույզն-ինչ չափով թերահավատ տեսնեն:

Միբելիներ, այսօր՝ աշխարհի այս խառնակ, մեքենայացված, մակերեսայնացած կյանքի պայմաններում, որքան առավել կարիքն ունի մեր ժողովուրդը հավատքի վերակենդանությանն ու վերաշրջագայությանը:

Աշխարհի արևներից ու անձրևներից, ստվերներից ու փոշիներից պատճառված գունաթափումը պետք է որ հակաշրջվի և վերադառնա իր վառ սկզբնատիպ ինքնության պայծառությանը: Այդ ինքնությունը Քրիստոսի հավատքով նոր շող և նոր երանգ պետք է հագնի և առավել ճառագայթարձակ լուսափայլությամբ ջերմություն և երջանկություն ցանի մեր կյանքի և գործերի մեջ:

Միբելի հավատացյալներ, երբեք չմոռանանք, որ ժամանակավոր տազնապները, հյուծումի երկարատև տարիները, երբեմն բարեկեցության, փարթամության, ճոխակեցության, նույնիսկ շռայլության պայմանները տանում են «ի փորձություն»՝ անշուշտ մոռացության ստվեր ձգելով մեր հավատքի վրա, բայց երկհազարամյա հեռավորությունից այսօր մեզ նույն և անփոփոխ պատգամն է փոխանցում Ավետարանը՝ անդամալուծի բժշկության պատմության միջոցով:

Մարմնով անդամալուծ այդ մարդն այսօրվա կյանքում մեր մեղքերով անդամալուծ հոգին է խորհրդանշում: Անդամալուծը զրկված էր մարմնի որոշ անդամներից, մենք էլ զրկված ենք հոգու որոշ առաքիություններից, զրկված էր քայլելու կարողությունից, մենք էլ զրկված ենք դեպի Աստված գնալու ունակությունից: Անդամալուծը, սակայն, անհույս չէր, այլ հավատում էր: Մենք էլ անհույս չլինենք, այլ հավատք ու սեր ունենանք Աստծո հանդեպ: Անդամալուծի մերձավորները չսպասեցին Քրիստոսի գալուն, այլ, արհամարհելով բոլոր դժվարություններն ու փակուղիները, իրենք եկան՝ հիվանդին հանձնելու Հիսուսի խնամքին: Մենք ևս, արհամարհելով ներկա դարի աշխարհայնապաշտ մթնոլորտը, մեր հոգիները հանձնենք Աստծո խնամքին, չե՞ որ Քրիստոս այստեղ է, այս Սուրբ Եկեղեցում, և Իր սրբաբար գործությունն է փոխանցում բոլոր նրանց, ովքեր ի սրտե աղոթում են իրենց և իրենց մերձավորների անդամալուծ հոգիների համար. և ով հավատում է, լսում է Տիրոջ բարի ձայնը. «Որոյակ, քո մեղքերը քեզ ներված են, վեր կաց..., գնա քո տուն» (Մարկ. Բ 11):

«Շնորհք, սէր եւ խաղաղութիւն եղիցին ընդ ձեզ եւ ընդ ամենեսեանս. ամէն»:

**Տ. ԵԶՆԻԿ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՊԵՏՐՈՍՅԱՆԻ ՔԱՐՈԶԸ՝
ԽՈՍՎԱԾ Ս. ԷԶՄԻԱԾՆԻ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ
Ս. ԱՍՏՎԱԾԱԾՆԻ ՎԵՐԱՓՈԽՄԱՆ ՏՈՆԻՆ
ՄԱՏՈՒՑՎԱԾ Ս. ՊԱՏԱՐԱԳԻՆ**

(13 օգոստոսի 2006 թ.)

Սիրելի հավատացյալ ժողովուրդ,

Այսօր Եկեղեցին, մենք բոլորս միասին տոնում ենք Ս. Աստվածածնի Վերափոխման տոնը: Հայ եկեղեցական օրացույցի մեջ բազմաթիվ տոներ կան, սակայն դրանցից հինգը կոչվում են Տաղավար տոներ, որովհետև համարվում են ամենամեծ տոները: Եվ ահա այդ հինգ Տաղավար տոներից չորրորդը նվիրված է Ս. Աստվածածնին, Աստվածածնի Վերափոխմանը: Մեր եկեղեցական օրացույցի մեջ կան նաև բազմաթիվ այլ տոներ, որոնք նվիրված են Ս. Աստվածածնին, ինչպես, օրինակ, Տիրամոր հղության, ծննդյան, տաճար ընծայման, Ավետման, գոտիի գյուտի և այլն: Սակայն այսօրվա տոնն է, որ համարվում է ամենամեծը և գագաթնակետը Աստվածածնի տոների:

Այսօր, երբ Ամենասրբուհի Կույսը վերափոխվեց, իր Որդու տնօրինությամբ այս աշխարհից փոխադրվեց դեպի արքայություն, ինչպես որ ասվում է այսօրվա շարականոմ: Մեր բոլոր եկեղեցական աղոթքների մեջ Աստվածածինը հանդես է գալիս որպես բարեխոս: Աղոթելիս, բնական է, որ մեր բոլոր աղոթքները ուղղված են Աստծուն՝ Հայր Աստծուն և Նրա Որդուն՝ Հիսուս Քրիստոսին: Սակայն մեր բոլոր աղոթքների մեջ հիշվում է Աստվածածինը ոչ թե նրա համար, որ մենք աղոթում ենք Տիրամորը, պարզապես մենք խնդրում ենք, որ նա միջնորդի մեր կարիքների համար, մեր խնդրանքները փոխանցի իր Որդուն կամ Հայր Աստծուն: Այսպիսով, Աստվածածինը մեր կյանքում հանդես է գալիս որպես մեր ամենամեծ բարեխոսողը: Երբ նայում ենք առօրյա մարդկային կյանքին, տեսնում ենք, որ բարեխոսությունը միշտ չէ, որ ընդունվում է, որովհետև շատ հաճախ ղեկավար մարդիկ, շատ հաճախ ընտանիքի ավագները՝ հայրերը, նեղվում են, թե ինչու է այս կամ այն անձնավորությունը բարեխոսում իրենցից մեկի մասին, որին իրենք շատ լավ գիտեն, որին իրենք սիրում են և որը կարող էր ուղղակիորեն իր խնդրանքը ներկայացնել: Տեսնում ենք, սակայն, որ Աստվածածնի պարագային այսպես չէ, որ և՛ Քրիստոս, և՛ Հայր Աստված սիրով լսում են Տիրամոր և մեր բոլոր աղոթքները, որոնք ուղղված են Աստվածածնի միջոցով, հասնում են Նրանց: Ամեն անգամ, երբ շոգ է լինում, բայց մենք չենք շոգում, նշանակում է՝ Աստվածածինը մեզ հետ է: Ամեն անգամ, երբ ցուրտ է, բայց մենք չենք մրսում, նշանակում է՝ Աստվածածինը մեզ հետ է: Եվ այս բարեխոսության կարիքը ունի ամեն մի հավատացյալ, անկախ նրանից, թե նա հայ հավատացյալ է, թե օտար ազգի պատկանող: Ամեն մեկը, որ հավատում է Աստվածածնի միջնորդության գոյությանը, ցանկանում է, որ Աստվածածինը իր հետ լինի՝ իր հոգում, իր սրտում, որ իրեն հովանի լինի նրա օրհնությունը, և մեր աղոթքները հասնեն այնտեղ, ուր որ առաքվում է:

Այսօր, սիրելի հավատացյալներ, մենք դժվարին օրեր ենք ապրում, այսօր մենք ականատես ենք շաբաթներ շարունակվող այն ոմբակոծություններին, ականատես ենք

այն մարդկային ողբերգություններին, որով ապրում է Միջին Արևելքը, և մեր բոլորիս պարտականությունն է՝ մի անգամ ևս խնդրել Ս. Կույս Աստվածածնին իր վերափոխման օրը իր միջնորդությունը, բարեխոսությունը հասցնի Աստծուն, որպեսզի խաղաղությունը վերահաստատվի այն բոլոր տարածքներում, որտեղ ինքը քայլել է ժամանակին, այն տարածքներում, որտեղ ինքը ծնել է իր Միածին Որդուն՝ Աստուծո Որդուն, այն տարածքներում, որտեղ ինքը ականատես է եղել, թե ինչպես իր Որդին Իր փրկչական առաքելությունն է կատարում, և թե ինչպես խաչին է հանվում, և սակայն նորից հարություն է առնում:

Ուսանելի է Քրիստոսի և Իր մոր հարաբերությունը: Երբ մի անգամ միասին գտնվում էին հարսանիքի Կանա քաղաքում, խնջույքի ընթացքում գինին սպառվում է: Աստվածածինը նայում է իր Որդուն: Քրիստոս դեռ չէր սկսել հրաշագործությունները, Քրիստոս դեռ չէր սկսել ավետել աշխարհին, որ ինքն է Աստծո Որդին, սակայն Աստվածածինը գիտեր այդ մասին, որովհետև նա Ավետումն էր ստացել Գաբրիել հրեշտակապետից և նայում է իր Որդուն, աչքերով խնդրում Նրան օգնել այդ մարդկանց: Քրիստոս նրան պատասխանում է. «Կին, դու ինչու ես խառնվում իմ գործերին»: Սակայն անդրադառնում է, որ այդ կինը իր մայրն է, որ նա լինելու է ամբողջ աշխարհի մարդկության մայրը, որ Տիրամայրը լինելու է այն անձնավորությունը, որը բարեխոսելու է բոլորի համար Իրեն: Քրիստոս կարծեք անդրադառնում է այս հանգամանքին և անմիջապես պատվիրում, որպեսզի տակառները նորից ջուր լցնեն, և այդ ջուրը Ինքը փոխարկում է գինու:

Ահա այս մտածումներով է, սիրելի հավատացյալներ, որ ես խնդրեցի ձեզ մեկ անգամ ևս մեր աղոթքները առաքենք Աստվածածնի միջոցով, որպեսզի Տերը խաղաղություն հաստատի Միջին Արևելքում:

Աստվածածնի վերափոխման տոնի հետ Հայաստանյայց Առաքելական Եկեղեցին կապել է նաև խաղողօրհնության արարողությունը, որի ժամանակ մենք խնդրում ենք Աստվածածնին, որպեսզի Ամենասրբուհի Կույսը օրհնի մեր դաշտերի բերքի բարիքը: Քիչ հետո Մայր Աթոռի բակում, բաց խորանի վրա, մենք կկատարենք խաղողօրհնեքը: Այս տարի Աստված ձմռանը մեզ առատ ձյուն տվեց և շատ ջուր տվեց, սակայն երբ ամառը դեռ չէր եկել, շատ արև տվեց և այդ արևը չորացրեց մեր դաշտերի և մեր լեռների խոտը, և երաշտ սկսվեց: Մենք տեսնում ենք, թե ինչպես Հայաստանի այս կամ այն անկյունում կրակը ոչնչացնում է արտեր և այգիներ: Ուրեմն այսօր, սիրելի հավատացյալներ, երբ մենք պիտի կատարենք խաղողի օրհնության կարգը, մի անգամ ևս խնդրենք Աստվածածնին՝ մեր բոլորի մորը, որպեսզի ինքը մի անգամ ևս բարեխոսի, որ Աստծո բարյացակամ աչքը անպակաս լինի մեր երկրի վրայից, և մեր ժողովուրդը, մեր գյուղացիները, որոնք իրենց ճակատի քրտինքով, իրենց ձեռքերով մշակել են դաշտերը, կարողանան օգտվել այդ բարիքներից, որովհետև այդ բարիքների օրհնությունն է, որ մենք այսօր պիտի կատարենք: Այդ մտածումներով, սիրելի հավատացյալներ, եկեք աղոթենք, շարունակենք մեր Սուրբ Պատարագը:

Շնորհ Տեսնո մերոյ Յիսուսի Քրիստոսի եղիցի ընդ ձեզ, ընդ ամենեսեանս, ամէն:

**Տ. ՊԱՐՈՒՅՐ ՔԱՀԱՆԱ ԱՎԵՏԻՍՅԱՆԻ ՔԱՐՈԶԸ՝
ԽՈՍՎԱԾ Ս. ԷԶՄԻԱԾՆԻ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ
ՄԱՏՈՒՑՎԱԾ Ս. ՊԱՏԱՐԱԳԻՆ**

(14 օգոստոսի 2006 թ.)

*«Որ զմահ ոչ գիտե, երկնչի ի մահուանե,
իսկ որ գիտե զմահ, ոչ երկնչի ի նմանե»:*

*«Նա, ով չի ճանաչում մահը, վախենում է
մահից, իսկ նա, ով ճանաչում է մահը, չի երկրն-
չում նրանից»:*

ԵՂԻՇԵ

«Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. Ամէն»:

Սիրելի հավատացյալներ,

Եղիշե մեծ վարդապետի այս խոսքերը արձանագրված են ոսկեգրքույկ իր պատմության մեջ: Այսօր, երբ բոլորս խմբվել ենք Տիրոջ այս տան մեջ՝ Միաձնաէջ այս տաճարում, վերստին մեր աղոթքն ենք մատուցում առ Աստված նաև օրվա առիթով, որ մեր հայրերի իմաստուն տնօրինությամբ սահմանված է մեռելոց հիշատակության օր: Այսօր մենք մեր սրտի, մեր աղոթքների և մեր մտածումների մեջ հայցում ենք Աստծուն, որպեսզի գթա մեր բոլոր հանգուցյալներին և նրանց արժանացնի երկնային ողորմության: Եվ օրվա պատշաճությունը նկատի ունենալով, սիրելի հավատացյալներ, հիշյալ խոսքերն ընտրեցի իբրև մեր այսօրվա խորհրդածության նյութ, որովհետև բոլորս համակված ենք այս գաղափարով և այս պահին մեր մտքերը մեր ի Տեր հանգյալ մերձավորների ու սիրեցյալների հոգիների հետ են:

Ի՞նչ ենք հասկանում այս խոսքերից, ի՞նչ են նշանակում «չճանաչել մահը» և «ճանաչել մահը», և առհասարակ ի՞նչ է մահը քրիստոնյաներիս համար, և ի՞նչ է մեր վերաբերմունքը մահվան այդ երևույթի նկատմամբ:

Գիտենք, որ հին ժամանակներում մարդու համար մահը մեծագույն չարիքն էր և մեծագույն պատիժը: Մահն իշխում էր բոլոր կենդանի արարածների և մանավանդ մարդկային էակների վրա: Այն մի տեսակ ահագոյ և սահմոկեցուցիչ երևույթ էր, որ ապրում էր մարդ արարածն իր երկրային կյանքում: Բոլոր մարդիկ անխտիր՝ անկախ հասարակության մեջ իրենց դիրքից, աստիճանից և պատկանելությունից, երկնչում ու վախենում էին մահվանից, որովհետև նրանք իրենց ամբողջ կյանքը պարփակում էին երկրայինի մեջ, և նրանց համար ֆիզիկական կյանքի վախճանն այլևս իրենց կյանքի լիակատար վախճանն էր ընկալվում:

Սակայն, սիրելի հավատացյալներ, գիտենք, թե ինչպես հիմնիվեր փոխվեցին կյանքի ու մահվան մասին պատկերացումները Քրիստոսի աշխարհ գալով: Աստծո

Միաձին Որդու խաչելությամբ, թաղմամբ ու հարությամբ փշրվեցին ոչ միայն մահվան կապանքները, այլև նրա մասին մարդու վերաբերմունքը: Գիտենք, որ մահն այլևս գոյություն չունի Քրիստոսի հարությամբ, որովհետև նրանով է, որ մենք կյանք ստացանք, նրանով է, որ մենք հոգևոր փրկության շնորհին արժանացանք: Չկա մահ քրիստոնյաներիս համար, ինչպես դարեր առաջ Տիրոջ մարգարեն էր աղաղակում. «Որտե՞ղ է քո հաղթանակը, մահ, որտե՞ղ է քո խայթոցը, դժո՛խք» (Օվսեե ԺԳ 14):

Ի տարբերություն կյանքի ու մահվան մասին հին, հեթանոսական հավատալիքների՝ կյանքը քրիստոնյաներիս համար Աստծո պարգևն է: Ամեն ինչ մեր կյանքում կրում է Աստվածային շնորհ լինելու կնիքը սկսյալ մեր ծննդյան օրից: Միաժամանակ գիտակցում ենք, որ երկրավոր կյանքն անվերջանալի չէ, այն ունի սահման: Այն, ինչ ունի սկիզբ, ունի և վերջ: Մարդու համար երկրավոր կյանքի սկիզբը ծնունդն է, իսկ վերջը՝ մահը: Սակայն գիտենք, որ մահը չէ ճշմարիտ քրիստոնյայի կյանքի վախճանը: Մահը՝ այս զգայականը, այս սգավորը, այս անցավորը վերջակետը չէ մեր կյանքի, այլ հավատում ենք, որ մեր երկրավոր կյանքի վախճանը սկիզբն է հավիտենական կյանքի: Սրանով է, որ մենք՝ քրիստոնյաներս, հաղթանակած ենք համարում մահը, սրանով է, որ Քրիստոս մեզ պատվիրեց, թե Իրեն հավատացողներն անմահ են, հավիտենական կյանքի ժառանգորդներ:

Այսուհանդերձ, մեղքին ու գայթակղությանը դյուրաբար անձնատուր եղող մարդկային մեր բնությունը տակավին Քրիստոսի ժամանակներից շուրջ երկու հազար տարիներ հետո էլ խռովվում է, տագնապում, երբ մեր ընտանիքներում, մեր հարազատների մեջ մահվան դեպք է տեղի ունենում: Հարազատի կորստյան վիշտը կրծում է մեր հոգին: Ափսոսանքի զգացումով սգում ենք, որովհետև կորցրել ենք մեր սիրելիին, մեր բարեկամին, ով որ մեզ խնամել էր, ով որ մեզ սիրել էր, ով իր ներկայությամբ բարություն ու կենսախնդություն էր շաղ տվել մեր շուրջը: Սա մարդկային, բնական զգացում է: Սակայն երբեմն տեսնում ենք, թե մարդիկ մահվան, մանավանդ վաղաժամ ողբերգական մահվան դեպքերում ինչ հոգեվիճակի մեջ են ընկնում, ինչպես են տրտմում նրանց սրտերը: Նրանք այլևս չեն պատկերացնում իրենց կյանքն առանց իրենց վախճանված սիրելիի. տեղի է տալիս հույսը հոռետեսության և ամեն ինչի նկատմամբ անհավատության: Թվում է, թե խավարում է սգավորի կյանքն այս արևի տակ:

Սա հակառակ է մեր քրիստոնեական հավատին: Մարդկայնորեն կարող ենք ցավ ապրել ու տրտմել, բայց երբեք չպետք է վշտի մեջ հուսահատվել, որքան էլ այն ծանր լինի: Հակառակ դեպքում՝ կնամանվենք այն հեթանոսներին, ովքեր մահը համարում էին կյանքի վախճան: Մինչդեռ քրիստոնյաներս քաջ գիտենք, որ երկրավորով չի ավարտվում կյանքը, քանզի հոգին անմահ է: Ի վերջո, այս կյանքին հրաժեշտ տալով՝ մենք մուտք ենք գործում մեկ այլ կյանք, որն էլ հենց մեր Տեր Հիսուս Քրիստոսի պարգևած հավիտենական կյանքն է երկնքի արքայության մեջ:

Արդ, սիրելի հավատացյալներ, մեր ողբը և կոծը փոխակերպենք աղոթքի և աղաչանքի առ Աստված, որպեսզի մեր Երկնավոր Հայրը ների մեր ննջեցյալների բո-

լոր մեղքերը և նրանց դասի արդարների շարքը: Այս է ճշմարիտ քրիստոնեական կեցվածքը: Աստվածասեր մարդու համար երբեք խորթ չէ ննջեցյալների հոգիների փրկության համար աղոթելը, որովհետև դրանով միայն կարող ենք մեր լավագույն նվերը մատուցել մեր սիրելիին: Հիշենք Տիրոջ խոստումը. «Ինչ էլ Իմ անունով Հորիցս խնդրեք, կտա ձեզ» (Հմմտ. Հովհաննես ԺԵ 16):

Միբելի հավատացյալ քույրեր և եղբայրներ, հորդորս ու պատգամս է, որ աղոթեք ամենայն ժամ ոչ միայն ապրողների կենաց արևշատության, հաջողության, այլ նաև հույսով ի Քրիստոս ննջած հոգիների փրկության համար: Թող Աստված ունկնդիր լինի մեր հայցին և մեր սրտերում ու հոգիներում զորացնի հարության հավատը:

Շնորհք, սէր եւ խաղաղութիւն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի եղիցին ընդ ձեզ, ընդ ամենեսեան, ամէն:

ԿՐՈՆԱ-ԵԿԵՂԵՑԱԿԱՆ

ԺԻՆ ԴՈՐԻՎԱԼ

Էկս-Մարսել / Համալսարան - Գիտական Հետազոտությունների Ազգային
Կենտրոն (Ֆրանսիա) - Ֆրանսիայի Համալսարանային Ինստիտուտ

ԱՍՏՎԱԾԱՇՆՉԻ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀՈՒՆԱՐԵՆԻ. ԻՆՉՊԵՊ ԵՎ ԻՆՉՈ՞Ւ¹

I . - Ինչո՞ւ հարկավոր է կարդալ Աստվածաշունչը հունարեն

Եվրոպական երկրներում Աստվածաշունչը սովորաբար ընթերցում են կա՛մ գրական եբրայեցերեն, կա՛մ էլ որպես բարբառային եբրայեցերենի փոխադրված մի բնագիր, որ կոչվում է Մասորա (նաև մասրետներ, մասորական բնագիր): Ի՞նչ կարիք կա ընթերցելու այն նաև հունարեն (Յոթանասնից թարգմանություն, Septuaginta, LXX) կամ նույնիսկ հունարենից կատարված թարգմանությամբ: Վերջին քսան տարվա ընթացքում կատարվել են Յոթանասնից անգլերեն, ֆրանսերեն, գերմաներեն և իտալերեն թարգմանությունները: Դրանք դեռ ավարտված չեն. կատարվել է աշխատանքի միայն մի մասը: Օրինակ, Ֆրանսիայում Մարգարիտ Հառլը, Օլիվյե Մուննիիսը և ես հիմնեցինք «Ալեքսանդրյան Աստվածաշունչ» մատենաշարը: 13 հատոր արդեն հրատարակվել են, Հնգամատյանը պատրաստ է, մյուս հատորները պատրաստվում են հրատարակման:

Եվ ինչո՞ւ է դա արվում: Դա արվում է երկու պատճառով.

1. Պատմականորեն Եկեղեցու Աստվածաշունչ մատյանը հունարենն էր: Նոր Կտակարանը մեջբերումներ է կատարում Յոթանասնից թարգմանությունից: Նույն LXX բնագիրը թարգմանվել էր լատիներեն (vetus latina՝ հին լատիներեն), ղպտերեն, եթովպերեն, արաբերեն և սլավոնական լեզուներով: Ճիշտ է, ասորերեն թարգմանությունը կատարվել է եբրայեցերենից, բայց այս սկզբնական թարգմանությունը հետագայում խմբագրվել է հունարեն բնագրի հիման վրա: Մեսրոպ Մաշտոցն ու Սահակ Պարթևն Աստվածաշնչի իրենց թարգմանությունը կատարել են կա՛մ ասորերենից, կա՛մ հունարենից. այս խնդիրը վիճարկվում էր ամբողջ միջնադարի ընթացքում, այն շարունակում է վիճահարույց մնալ նաև այսօր: Վրացերեն թարգմանությունն արվել է կա՛մ հայերենից, կա՛մ հունարեն բնագրից: Արևմտյան Եվրոպյան բացառություն է. այստեղ vetus latina (հին լատիներեն թարգմանությունը) հետզհետե շրջանառությունից դուրս է մղվել և փոխարինվել Հիերոնիմոսի թարգմանությամբ, այսպես կոչված, vulgata-յով (լատ. «համընդհանուր», «համատարած»), որ փոխադրվել է եբրայեցերենից:

2. Հունարեն Աստվածաշունչը պարունակում է որոշ՝ մասորական բնագրից տարբերվող տեղիներ, և այդ տարբերությունները կարևոր են քրիստոնյա ավանդության համար: Օրինակ, Դ 7-ում Աստված մերժում է Կայենի զոհաբերութ-

¹ Դասախոսությունը կարդացվել է 2006 թ. ապրիլի 21-ին Գևորգյան Հոգևոր Ճեմարանի Դ-2 լսարաններին:

յունն ու, ըստ Մատթայի՝ ասում նրան. «Եթե դու լավ կգործես, մի՞թե դա չի հայտնաբերվելու (բառացի՝ «չի բարձրանալու»): Իսկ եթե դու լավ չգործես, արդյո՞ք մեղքդ, որով մեղանչել ես, թաքնվելու է»: Այս խրթին բնագրի շարահյուսական կապերը խախտված են. եբրայեցերենում «մեղք» բառը իզական սեռի է, մինչդեռ «թաքնված» դերբայը բերված է արական սեռով: Յոթանասնից թարգմանությունը շատ է տարբերվում Մատթայից. «Եթե դու [զոհդ] ճիշտ չես մատուցել, այլ ոչ ճիշտ կերպով բաժանել ես, մի՞թե դու չես մեղանչել: Հանգիստ եղիր»: Այս բնագիրը կարևոր է մեղք գործելուց հետո հանդարտվելու, «մտքի խաղաղությունը» պահպանելու քրիստոնեական ըմբռնման առումով:

II. - Հնագույն տվյալներ

Հնագույն և թերևս ամենամբողջական տեղեկություններ եբրայեցերեն Օրենքը (Թորան) հունարեն թարգմանելու մասին տրվում են *Արիստեսի*² իր եղբոր՝ Փիլոկրատեսին ուղղած *նամակում*²: Այն պատմում է, որ Եգիպտոսի Պտղոմեոս թագավորի կարգադրությամբ Արիստեսան ուղարկվել է հրեաների քահանայապետի մոտ: Պարզ է, որ թղթում չի նշվում արքայի հերթահամարը Լագիդների արքայական հարստության մեջ: Նախ և առաջ մենք հայտնվում ենք Ալեքսանդրիայում (□ 1-82): Դեմետրիոս Փաղերացին, որը Ալեքսանդրիայի գրադարանի գրադարանավարն էր, առաջարկում է արքային թարգմանել հրեական օրենքը՝ այն գրադարանում ունենալու համար: Պտղոմեոսը համաձայնվում է: Նա որոշում է կայացնում ազատել Եգիպտոսում ապրող բոլոր հրեա ստրուկներին: Դեմետրիոսն առաջարկում է գրել Երուսաղեմի քահանայապետին՝ խնդրելով, որ նա յոթանասուներկու թարգմանիչ ուղարկի՝ վեցական թարգմանիչ յուրաքանչյուր ցեղից: Արքան պատրաստում է ընծաներ Տաճարի համար, ինչպես և ուղերձ, որին Եղիազար քահանայապետը պատասխանում է ամենայն բարյացակամությամբ: Այնուհետև նամակում թվարկվում են յոթանասուներկու թարգմանիչների անունները: Այժմ մենք տեղա-

² Անգլերեն հրատարակություններ. M. Hadas, *Aristeas to Philocrates*, New York/London, 1951; H.G.Meecham, *The Letter to Aristeas. A Linguistic Study*, Manchester, 1935; H.St. John Thackeray, "The Letter of Aristeas", in H.B.Swete, *An Introduction to the Old Testament in Greek*, Cambridge, 1902, rev. by R.R.Ottley, New York, 1914, repr. 1968, p.531-606: Ֆրանսերեն հրատարակություն. A. Pelletier, *Lettre d'Ariste à Philocrate*, Sources chrétiennes No 89, Paris, 1962: Գերմաներեն հրատարակություն. P. Wendland, *Aristeae ad Philocratem Epistula*, Leipzig, 1900: Իտալերեն հրատարակություն. R. Tramontano, *La lettera di Aristeia a Filocrate*, Napoli, 1931: Անգլերեն թարգմանություն. M. Hadas (տե՛ս վերը); H.G. Meecham, *The Oldest Version of the Bible: Aristeas on its Traditional Origin*, London, 1932; R.J.H.Shutt, "Letter of Aristeas (Third Century B.C. – First Century A.D.). A New Translation and Introduction", in J.H. Charlesworth, *The Old Testament Pseudepigrapha*, II, London, 1985, P.7-34: Ֆրանսերեն թարգմանություն. A.Pelletier (տե՛ս վերը): Գերմաներեն թարգմանություն. N.Meisner, *Unterweisung in erzählender Form. Aristeasbrief, Jüdische Schriften aus hellenistisch-römischer Zeit*, II, Gütersloh, 1973, p.35-87; P.Wendland, "Der Aristeasbrief", in E.Kautsch, *Apokryphen und Pseudepigraphen des Alten Testaments*, II, Tübingen, 1900, p.1-31: Իտալերեն թարգմանություն. C.Kraus Reggiani, *La Lettera di Aristeia a Filocrate, introduzione, esame analitico, traduzione*, Roma, 1979; R.Tramontano (տե՛ս վերը): Իսպաներեն թարգմանություն. N.Fernandez Marcos, "Carta di Aristeas", in A.Diaz Macho, *Apocrifos del Antiguo Testamento*, II, Madrid, 1983, p.9-64. Խնդրի արդի վիճակի մասին տե՛ս. A.-M.Denis, *Introduction à la littérature judéo-hellénistique*, Tournhout, 2000, p.911-946.

փոխվում ենք Հուդայի երկիր, Հրեաստան (□ 83-171): Արիստեսը նկարագրում է Տաճարը, ծեսը, Երուսաղեմ քաղաքը, Պաղեստին երկիրը և վերջինիս բարիքները: Եղիազարն ընտրում է յոթանասուներկուսին, որոնք «հմտացած էին հրեական դավանանքի մեջ, բայց և նվիրված էին հույն մշակույթին»: Դիմելով այլաբանական մեթոդին, Արիստեսը փառաբանում է Օրենքը և բացատրում սննդական զգուշավորության խորին իմաստը: Դրանից հետո մենք վերադառնում ենք Ալեքսանդրիա (□ 172-322): Արքան բարևում է յոթանասուներկու թարգմանիչներին և յոթանգամ խոնարհվում ոսկե տառերով գրված փաթեթների առջև: Նա ճաշկերույթ է տալիս և յոթ գիշեր յոթանասուներկուսից յուրաքանչյուրը պատասխանում է մի հարցին, որ տալիս է թագավորը: Նա հիացած է մնում տրված պատասխանների ճշտությունից: Վերջապես պատմվում է թարգմանության մասին (□ 301-322): Յոթանասուներկուսը կատարում են այն յոթանասուներկու օրվա ընթացքում, մի կղզում, որի անունը չի հիշատակվում, բայց այն կարող էր լինել միայն Փարոսը: Դեմետրիոսն ընթերցում է հունացված Օրենքը հրեաների ժողովին: Դրա պատճեն փոխանցվում է առաջնորդներին: Այնուհետև քահանաները, թարգմանիչները և համայնքի (politeuma) պատգամավորները, համայնք, որ հրեաների որպես էթնիկական խմբի հատուկ կազմակերպություն էր Ալեքսանդրիայում, հանդիսավոր կերպով արգելում են այդուհետև որևէ փոփոխություն մտցնել թարգմանության մեջ: Վերջապես Օրենքը կարդացվում է թագավորին, որը և հայտնում է իր հիացմունքը: Դեմետրիոսը հայտարարում է, որ «Օրենքը տրվել է Աստծո կողմից»: Յոթանասուներկուսը վերադառնում են Երուսաղեմ՝ իրենց հետ տանելով նվերներ Եղիազարի և իրենց համար: Ամփոփելով, Արիստեսը հայտարարում է, որ նա մտադիր է ապագայում պատմել այլ կարևոր իրադարձությունների մասին: Մենք, սակայն, չունենք ոչ մի այդպիսի պատմություն, եթե անգամ այն երբևիցե գոյություն է ունեցել:

Նամակը տեղիք է տալիս բազմաթիվ հարցերի.

1. Ո՞վ է հեղինակը: Արիստեսան ասում է, որ նա հրեա չէ, այլ հույն, որը երկրպագում է Ջեսին: Բայց քանի որ նա լավատեղյակ է հրեական իրողություններից և քաջ տիրապետում է այլաբանական մեթոդին, նա անկասկած ալեքսանդրացի հրեա է: Սովորաբար նրան անվանում են Կեղծ Արիստես՝ նրան հրեա պատմիչ Արիստեսից և այլ բազում Արիստեսներից տարբերելու համար:

2. Ինչպե՞ս է թվագրվում «Նամակը»: Արիստեսը հավակնում է լինել Դեմետրիոսի և Պտղոմեոսի ժամանակակիցը: Դեմետրիոսը վախճանվել է 280 թ.: Ըստ պատմական տեղեկությունների, որոնք բերվում են «Նամակում», առավել հավանական է, որ Պտղոմեոսը Պտղոմեոս Բ Փիլադելֆիոսն է (285-246 թթ.), այլ ոչ Պտղոմեոս Ա Լագոսը (Ք.ա. 323-282 թթ.): Սակայն Արիստեսան ապրել է նրանցից էլ ավելի ուշ, հատկապես այն պատճառով, որ նա խոսում է հրեական politeuma՝ ինքնակառավարվող համայնքի մասին, մինչդեռ այն մինչև Պտղոմեոս Զ-ի թագավորությունը (Ք.ա. 180-145 թթ.)³ գոյություն չի ունեցել: Նամակը հաճախ թվագրվում է Ք.ա.

³ Մինչ այժմ հարցը հետազոտողների կարծիքն էր, որ Ալեքսանդրիայի հրեությունը չի ունեցել քաղաքացիական իրավունքներ, սակայն կազմում էր քաղաքի էթնիկական խումբ, այսպես կոչվող politeuma. Մինչև Օգոստոսի դարաշրջանը այս politeuma-ն կառավարվում էր ethnarchos-ի (ազգի առաջնորդի)

Բ դարի երկրորդ կեսի վերջով, բայց որոշ հետազոտողներ մտածում են, որ այն գրվել է ավելի և շատ ավելի ուշ, Փիլոն Ալեքսանդրացուց հետո⁴:

3. Ո՞րն է «Նամակի» նպատակը: Արդյո՞ք դա հունարեն թարգմանության փառաբանումն է, ինչպես ենթադրում է Հովսեփոս Փլավիոսը (Հրեական հնություններ XII 12-118): Թե՞ այն գրված է հույների համար և գովաբանում է հրեադավանությունը, նրա սննդական խտրականությունը, նրա այլաբանական մեթոդը⁵: Կամ, ընդհակառակը, թերևս այն ուղղված էր Պաղեստինի հրեաների՞ն և նպատակ ուներ պաշտպանելու Ալեքսանդրիայի հրեադավանության ստեղծագործությունները⁶: Այս պարագայում արդյո՞ք «Նամակը» պարզապես հաստատում է Յոթանասնից թարգմանության բարձր արժեքը⁷, թե՞ այն կոչված էր պաշտպանելու Յոթանասնից թարգ-

կողմից, որը զբաղվում էր համայնքի վարչական, ֆինանսական և արխիվային գործերով: Նրան աջակցում էր *gerousia* (ծերակույտը), խորհուրդի տեսակ, որ տարածված էր անտիկ դարաշրջանում: Հրեական դատական ատյանը, հավանաբար, գոյություն չի ունեցել: Տե՛ս A.Kasher, *The Jews in Hellenistic and Roman Egypt. The Struggle for Equal Rights*, Tübingen, 1985 (եբրայեցերեն գրված գրքի թարգմանությունն է, Tel-Aviv, 1978), p. 29-38, 192-197, 356-357; J.Mélèze Modrzejewski, *Les Juifs d'Egypte de Ramsès II à Hadrien*, Paris, 1991, p.64-71, 131-150; E.Schürer, *The History of the Jewish People in the Age of Jesus Christ (175 B.C. – A.D. 135)*, New English Version by G.Vermes, F.Millar, M.Goodman (eds.), III, 1, Edinburgh, 1986, p.41-59; V.Tchericover, *Hellenistic Civilization and the Jews*, Philadelphia, 1959, p. 296-305. Այս հայացքները, հատկապես V.Tchericover-ին և A.Kasher-ին պատկանողները, քննադատվել են C.Zuckerman-ի կողմից՝ “Hellenistic politeumata and the Jews. A Reconsideration”, *Scripta classica israelitica* 8/9, 1989, p.171-185. հեղինակը ցույց է տալիս, որ politeuma բառը Ալեքսանդրիայի դեպքում կիրառելի չէ, իսկ հրեաների միավորումը անկախ քաղաքական կազմակերպություն չի եղել: G.Lüderitz, “What is the Politeuma?” հոդվածում, in J.W.Van Henten, P.W.Van der Horst, *Studies in Early Jewish Epigraphy*, Leiden, New York, Köln, 1994, p.183-225, հաստատում է, որ հրեաների politeuma-ի առկայությունը Ալեքսանդրիայում չափազանց կասկածելի է:

⁴ Երկրորդ դարի կեսը պաշտպանում է E.Bickerman, “Zur Datierung des Pseudo-Aristeas”, *Zeitschrift für die neutestamentliche Wissenschaft* 29, 1930, p.280-296, C. Kraus Reggiani (տե՛ս նաև. 1), V.Tchericover, “The ideology of the Letter of Aristeas”, *Harvard Theological Review*, 51, 1958, p.59-85; E.Van't Dack, “La date de la ‘Lettre’ d’Ariste”, *Antidoron V.Peremans, Studia Hellenistica* 16, 1968, p. 263-278; J.W.Wevers, “An Apologia for Septuagint-Studies”, *Bulletin of the International Organization for the Septuagint and Cognate Studies*, 18, 1985, p.16-38. H.Meecham (տե՛ս նաև. 1), N.Meisner (տե՛ս նաև. 1), H.St. John Thackeray (տե՛ս նաև. 1), M.Van Esboeck, “Une form inédite de la Lettre du roi Ptolémée pur la traduction des LXX”, *Biblica*, 57, 1976, p.542-549 փաստարկում է Ք. ա. երկրորդ դարի դարավերջի օգտին: J.G. Février, *La date, la composition et les sources de la ‘Lettre’ d’Ariste à Philocrate*, Paris, 1925 առաջարկում է Փիլոն Ալեքսանդրացու դարաշրջանը 883-171 և 8306-307 և Ք.ա. 100-30թթ. մնացած պարբերությունների համար: R.Goulet, *La Philosophie de Moïse. Essai de reconstitution d'un commentaire préphilonien du Pentateuque*, Paris, 1987, p. 535-541 փաստում է Փիլոնի ժամանակի օգտին: L.Hermann, “La ‘Lettre’ d’Ariste à Philocrate et l’empereur Titus”, *Latomus*, 25, 1966, p. 56-77, առաջարկում է Ք.հ. 80-ական թթ.:

⁵ Այս կարծիքը պաշտպանում է N.Meisner (տե՛ս նաև. 1):

⁶ Գիտնականների մեծ մասը փաստում են այս տեսակետի օգտին, օրինակ J.R.Barlett, *Jews in the Hellenistic World*, Cambridge, 1985, E.Bickerman (տե՛ս նաև.3), D.W.Gooding, “Aristeas and Septuagint Origins”, *Vetus Testamentum*, 13, 1963, p.357-379, M.Hadas (տե՛ս նաև. 1), R.Hanhart, “Fragen um die Entstehung der LXX”, *Vetus Testamentum*, 12, 1962, p.119-163, F.Parente, “La Lettera di Aristeas come Fonte per la Storia del Giudaismo alessandrino durante la prima metà del 1 sec. a.C.”, *Annali della Scuola normale superiore di Pisa* 2, 1972, p. 177-237, 517-567, V.Tchericover (տե՛ս նաև.3), G. Zuntz, “Aristeas Studies. I. The Seven Banquets”, *Journal of Semitic Studies*, 4, 1959, p.21-36, “Aristeas Studies. II. Aristeas and the Translation of the Torah”, *Journal of Semitic Studies*, 4, 1959, p.109-126.

⁷ Այս կարծիքը պաշտպանում էր G.Howard, “The Letter of Aristeas: A Re-Evaluation”, *Journal of*

մանությունը ընդդեմ Պաղեստինում նոր կատարված խմբագրությունների⁸, կամ նույնիսկ, ինչպես մտածում են որոշ գիտնականներ, ընդդեմ մրցակից թարգմանության, որը նախաձեռնվել է Լեոնտոպոլիս քաղաքում, Օնիաս Դ-ի հովանու ներքո: Այս վերջինը եղել է օրինավոր քահանայապետի աքսորված որդի, Պտղոմեոս Չ Փիլոմետոռի օրոք (Ք.ա. 181-146 թթ.)⁹:

Այլ հնադարյան տվյալներ հայտնվում են նախ Արիստոբուլոսի, արիստոտելյան դպրոցի փիլիսոփայի կողմից: Այս հրեան հավանաբար եղել է Պտղոմեոս Չ արքայի խորհրդատուն: Եվսեբիոս Կեսարացու՝ առաջին եկեղեցական պատմություն հեղինակողի *Ավետարանական նախապատրաստություն* երկում (Praep. Ev. XIII 12, 1-2) գտնվող պատասխկում Արիստոբուլոսը հայտնում է, որ Օրենքի ամբողջական թարգմանությունը տեղի է ունեցել Պտղոմեոս Բ Փիլադելփոս արքայի օրոք Դեմետրիոս Փաղերացու նախաձեռնությամբ, սակայն դեռևս Պյութագորասի և Պլատոնի ժամանակ գոյություն են ունեցել ոչ ամբողջական, մասնակի թարգմանություններ, որոնց վերոհիշյալ փիլիսոփաները պարտական են սեփական ամենահանճարեղ մտքերով: Այս պնդումը պետք է հասկանալ «հույների գողության» թեմայի համատեքստում. բանն այն է, որ Ալեքսանդրյան հրեաները զարգացնում էին այն տեսակետը, համաձայն որի հունական մտքի կոթողները ունեցել են սուրբգրային ակունքներ, ինչը ենթադրում է, որ Սուրբ Գրքի հունարեն թարգմանությունն արդեն իսկ առկա էր, գոնե դրա որոշ մասը¹⁰:

Ք. ծ. Ա դարի կեսին Փիլոն Ալեքսանդրացին «Մովսեսի կյանքը» գործում (Vita Mosis II 25-44) պատմում է մի պատմություն, որը մոտ է Արիստեսի հայտնածին: Փիլոնը, սակայն, շատ ավելի, քան Արիստեսը ընդգծում է թարգմանության ոգեշնչված լինելը և թարգմանիչներին անվանում է «հիերոֆանտեր» («քրմեր») և «մարգարեներ»: Նա հայտնում է, որ ամեն տարի Փարոս կղզում տոնվում է մեծ տոն՝ թարգմանության տեղը պաշտելու և Աստծուն՝ իր բարերարության համար գոհություն հայտնելու նպատակով:

Նույն դարի վերջում Հովսեփոս Փլավիոսը կասկածներ է հայտնում թարգմանիչների թվի առնչությամբ՝ եղել են նրանք յոթանասուններկո՞ւ (J.A. XII 56), թե՞ յոթանասուն (J.A. XII 57): Այսպիսի կասկածներ կարելի է գտնել նաև քրիստոնյա հեղինակների գրվածքներում: Սրանք կասկածի են ենթարկում ևս մի հարց. արդյո՞ք Սուրբ Գիրքը թարգմանվել էր Պտղոմեոս Ա Լագոսի (Ք. ա. 323-282 թթ.) նախաձեռնությամբ, ինչպես մտածում էր Իրենեոս Լուզդունացին, *Ընդդեմ հերձվածողների*

Theological Studies, 22, 1971, p.337-348.

⁸ S.P.Brock, "The Phenomenon of the Septuagint", *Oudtestamentische Studien* 17, 1972, p. 11-36. Յոթանասնից թարգմանության վերանայումը կատարվում էր Ք.ա. Ա դարի ընթացքում, այսպես կոչված, «կայգե» խմբից (այս խումբը թարգմանում էր wegam եբրայեցերեն մասնիկը հունարեն kaige մասնիկով): Խմբի ամենահայտնի անդամն էր Թեոդոտիոնը, որն ստեղծագործում էր քրիստոնեության սկզբնավորման ժամանակաշրջանում:

⁹ S.Jellicoe, "The Occasion and Purpose of the Letter of Aristeas: a Reexamination", *New Testament Studies* 12, 1965-1966, p.140-150; A.F.J.Klijn, "The Letter of Aristeas and the Greek Translation of the Pentateuch in Egypt", *New Testament Studies* 11, 1964-1965, p. 154-158.

¹⁰ N.Walter, *Der Torauesleger Aristoboulos*, Berlin, 1964.

(Adv. haer. III 21, 2), թե՞ Պտղոմեոս Բ Փիլադելփոսի (թ. ա. 285-246 թթ.) նախաձեռնությամբ, ինչպես կարծում էին Տերտուլիանոս (*Ջատագով*՝ *Apologeticus* 18, 5-9), Եվսեբիոս Կեսարացին (*Ավետարանական նախապատրաստություն*՝ PE VIII 1, 8), Կյուրեղ Երուսաղեմացի (*Կոչումն ընծայութեան*՝ *Catecheses* 4, 34), Եպիփան Կիպրացի (*Ամիսների և կշիռների մասին*՝ *De mens. et pond.* 3 և 6) և շատ ուրիշներ։ Թե, ինչպես ենթադրում են Կղեմես Ալեքսանդրացին (*Կարպետներ*՝ *Stromata* I 22, 143), Անատոլիոս Ալեքսանդրացին (*Կանոններ*՝ մեջբերված Եվսեբիոսի Եկեղեցական պատմությունում, HE VII 32, 14-19), այն թարգմանվել է նշված երկու արքաների օրոք։ Արդյո՞ք թարգմանությունը սահմանափակվել է Օրենքի հինգ գրքերով (դա վերը մեջբերված հրեա հեղինակների կարծիքն է), թե՞ այն ներառում էր Մարգարեների, ինչպես և պատմական և, թերևս, որոշ պարականոն գրքեր (Հուստինոս, *Ջրույց Տրիփոն հրեայի հետ*՝ *Dial. cum Tr.*, 124, 3 և 137, 3 և Որոգինես, (*Վեցեջանը*՝ *Hexapla*)։ Քրիստոնեական գրվածքներում առաջ են գալիս նոր թեմաներ. յոթանասուն կամ յոթանասուններկու կացարան Փարոս կղզում (Կեղծ Հուստինոս, *Հորդորում առ Հույնք*՝ *Cohortatio ad Graecos* 13). յոթանասունը կամ յոթանասուններկուը թարգմանություն են կատարում միմյանցից առանձին, և հրաշալի կերպով բոլորի մոտ նույն բնագիրն է ստացվում (Իրենեոս և շատ ուրիշները), կամ էլ խոսվում է թարգմանիչների երեսունվեց զույգերի, երեսունվեց խրճիթների և երեսունվեց նույնական թարգմանությունների մասին (Եպիփան Կիպրացին և որոշ այլ հեղինակներ)։

Ընթերցողների տվյալները համահունչ են այս թեմաների հետ. նրանք միայն ավելացնում են մի գիծ, այն է՝ Օրենքի աղավաղումներ, որ թարգմանիչները ներմուծել են Պտղոմեոս արքայի պատճառով¹¹։ Այս տվյալները արժեքավոր են, քանի որ սահմանափակում են թարգմանությունը միայն եբրայական Թորայի (Օրենքի) գրքերով և հաստատում են, որ թարգմանությունը կատարվել է հույն թագավորի նախաձեռնությամբ։

Վերջապես, գոյություն ունեն որոշ հայկական տվյալներ։ Ըստ Մայքլ Սթոունի, Մատենադարանի ձեռագրերում գտնվում է «Յոթանասուններկու թարգմանիչների մասին» գրվածքը, որը հայտնում է, որ Սիմեոնի՝ յոթանասուններկու թարգմանիչներից մեկի հետ հրաշք է պատահել. Եսայի Է 17 թարգմանելիս («Ահա կույսը կհղանա և կծնի մի որդի»), նա, վաթսուն տարեկան հասակում լինելով, ապրեց ևս երեք հարյուր քառասունչորս տարի, մինչև Հիսուսի ծնունդը։ Նա է Նոր Կտակարանի Սիմեոնը (Ղուկ. Բ 25-28)։ Երևանի Մատենադարանում, Երուսաղեմում և Փարիզում կան նաև ձեռագրեր, որոնք պարունակում են Եպիփան Կիպրացու «Ամիսների և կշիռների մասին» գրվածքի հայերեն թարգմանությունը, որը որոշ տարբերություններ է ցույց տալիս հունարեն բնագրի համեմատությամբ։ Վերջապես, առանձին

¹¹ K. Müller, "Die rabbinische Nachrichten über die Anfänge der Septuaginta", in J. Schreiner (ed.), *Forschung zur Bibel. Wort, Lied und Gottesspruch. Beiträge zur Septuaginta, I. Festschrift für Joseph Ziegler* 1, Würzburg, 1972, p. 73-93; E. Tov, "The Rabbinic Tradition concerning the 'Alterations' inserted into the Greek Pentateuch and their Relation to the Original Text of the LXX", *Journal for the Study of Judaism* 15, 1984, p. 65-89; G. Veltri, *Eine Tora für der König Tolmai. Untersuchungen zum Übersetzungsverständnis in der jüdisch-hellenistischen und rabbinischen Literatur*, Tübingen, 1994.

հետաքրքրություն է հարուցում Վարդանի «Մաղմոսների մեկնությունը» և հատկապես դրա նախաբանը:

III. - Հին տվյալների արժեքը

1. Արդյո՞ք թարգմանությունը սկսվել է միայն Օրենքով (Torah), առանց Մարգարեների և Գրվածքների (Պատմական գրքերի): Եվ ընդհակառակը, արդյո՞ք պետք է վստահել եկեղեցու հայրերին, որոնք սովորություն են ունեցել Յոթանասնից անունը կապել առավելապես ամբողջական Աստվածաշնչի հետ: Այսօր «Septuaginta»՝ «Յոթանասնից» բառը նշանակում է Հունարեն Հին Կտակարանն ամբողջությամբ, այսինքն մի կողմից այն գրքերը, որոնք ունեն իրենց եբրայեցերեն նախօրինակները, մյուս կողմից էլ «երկրորդականոն» գրքերը, եթե մենք դատում ենք որպես հռոմեակաթուղիկներ, կամ «պարականոն», եթե դիմենք բողոքականների մոտ ընդունված եզրին: Վերջին գրքերը բացակայում են եբրայեցերեն Սուրբ Գրքում. դրանց մի մասը թարգմանված է եղել եբրայեցերենից կամ արամեերենից (Ա Եզրասի, որը չի նույնանուն Բ Եզրասի գրքին, Հուդիթ, Ա Մակաբայեցվոց, Բ Մակաբայեցվոց 1-2, 18, Սաղմոս 151, Սողոմոնի սաղմոսներ, Ժողովող, Տոբիթ՝ լատիներեն Tobias և որոշ հավելվածներ Դանիելի, Էսթերի, Երեմիայի, Սաղմոսների բնագրերում): Մյուս մասը անմիջապես գրված էր հունարեն (ինչպես Բ Մակաբայեցվոց 2, 19 նն, Գ և Դ Մակաբայեցվոց, Իմաստություն, որոշ հավելվածներ Էսթերի, Երեմիայի, Սաղմոսների բնագրերում): Այնուամենայնիվ, հստակ հայտնի է, որ Թորայի (Օրենքի) թարգմանությունը նախորդել է Աստվածաշնչի մնացած գրքերի թարգմանությանը, ոչ միայն այն պատճառով, որ դրա մասին են խոսում հելլենիստական դարաշրջանի հրեական վկայությունները և բաբբիները, այլև քանի որ միայն Թորայի թարգմանությունն է, որ մեջբերվում է Ք.ա. Գ դարի ընթացքում, մասնավորապես ոմն Դեմետրիոսի կողմից: Այս վերջինը Դեմետրիոս Փաղերացին չէ, այլ հրեա մի ժամանակագիր. նա օգտագործում է հունացված Ծննդոց գիրքը իր *Հրեաստանի արքաների մասին* գործում¹²:

2. Օրենքի թարգմանությունից առաջ եղե՞լ են արդյոք մասնակի թարգմանություններ: Այս վարկածն ապացուցելու համար որոշ գիտնականներ մեջբերում էին դրվագներ Արիստեսի նամակից (□ 29-40, 312-316), Արիստոբուլոսի որոշ արտահայտությունները, Հեկատայոս Արդեոացու պատառիկը՝ Հեկատայոս, որը Ք.ա. Դ դարի վերջում իբրև մեջբերում է մի թարգմանություն, որը Յոթանասնիցը չէ, և Փոկյուլիդես՝ Ք.ա. 2 դարի բանաստեղծին, որը կարծես թե ակնարկում է Թորայի (Օրենքի) տեղիները: Մակայն այս տեքստերից և ոչ մեկը համոզիչ չէ¹³: Այսպես, օրինակ, Փոկյուլիդեսը հրեա բանաստեղծ էր, որն ապրում էր հրեական սփյուռքում արդեն Ք. ծ. Ա դարում: Պաուլ Կալեն բերում է ավելի լուրջ փաստարկներ¹⁴: Նա ա-

¹² Ժամանակակից հրապարակումը պատրաստել է C.R.Holladay, *Fragments from Hellenistic Jewish Authors*, volume I: Historians, Chico (California), 1983, p.51-91.

¹³ St' u G.Dorival, "La Bible des Septante chez les auteurs païens (jusqu'au Pseudo-Longin)", in *Lectures anciennes de la Bible, Cahiers de Biblia Patristica* 1, Strasbourg, 1987, p.9-26.

¹⁴ P.Kahle, "Problems of the LXX", *Studia Patristica* I, 1945, p. 328-338, and *The Cairo Genizah*, Oxford, 1959U

ռաջ է քաշում արամեերեն թարգմանների գոյությունը: Դրանք գրի առնվելուց առաջ եղել են Թորայի բանավոր թարգմանություններ, հանպատրաստից կատարված և մասնակի: Ըստ Կալեի, Յոթանասնից հրեական պապիրուսները ցույց են տալիս, որ, նախքան բնագիրը միանման տեսքի է բերվել 130-ական թվականների ընթացքում, եղել են նաև հունարեն թարգմաններ: Այսօր, սակայն, այս տեսակետը չի ընդունվում, որովհետև Պաուլ Կալեն շփոթել է երկու տարբեր պապիրուսագիտական իրողություն. Յոթանասնից հրեական պապիրուսները, որոնք իրականում համարյա թե նույնական են¹⁵, և այլ պապիրուսներ, որոնք վկայում են Յոթանասնից վերանայման փորձը¹⁶:

3. Որտե՞ղ է կատարվել թարգմանությունը: Յոթանասնից Ալեքսանդրյան ծագումը, որ ենթադրվում է բոլոր հին բնագրերում, բացի Միքայել Ասորուց՝ ԺԲ դարի հեղինակից, որ խոսում է Կիպրոս կղզու մասին (Ժամանակագրություն, J.-B. Chabot, Paris 1899, p. 123-126), հերքվել է Մոզես Գաստեռի կողմից¹⁷: Ըստ նրա, միայն Երուսաղեմում կատարված թարգմանությունը կարող էր ունենալ այնպիսի հեղինակություն, որ ընդունված լիներ ամբողջ սփյուռքի կողմից: Սակայն սա լոկ հավանականություն է, որ հենվում է այն պատկերացման վրա, որ թարգմանությունը պայմանավորված էր հրեական համայնքի կարիքներով, թեև աղբյուրները պնդում են հույն արքայի նախաձեռնությունը: Ավելին, Յոթանասնից Ալեքսանդրյան ծագումը հաստատվում է որոշ հանգուցային տեղիներով: Այսպես, Թվոց գրքում ամեն ցեղ (phyle) բաժանվում է տարածքային համայնքների՝ «դեմոսների» (demoi), ճիշտ այնպես, ինչպես Ալեքսանդրիայում, որում եղել է հինգ ցեղ (phyle), յուրաքանչյուրը բաժանված տասներկու «դեմոսների» (demoi)¹⁸: Կամ prostagma («հրաման, կարգադրություն») բառի կիրառությունը Աստծո պատվիրանի համար համապատասխանում է այդ նույն բառի գործածության՝ և՛ թագավորի կողմից արձակված հրամանի, և՛ աստվածային վարչակարգի հարկադրողական որևէ դրսևորման իմաստով¹⁹:

4. Ե՞րբ է կատարվել թարգմանությունը: Անտիկ տվյալները, որոնք տատանվում են Պտղոմեոս Ա Լագոսի (Ք.ա. 323-282 թթ.) և Պտղոմեոս Բ Փիլադելփոսի (Ք.ա. 285-246 թթ.) արքայության ժամանակների միջև, սովորաբար համարվում էին անվավեր: Հին ժամանակագիրները առաջարկում էին տարեթվեր, որոնք մինչև ցից շատ չէին տարբերվում²⁰: Ավելին, Դեմետրիոս Փադերացու և Փիլադելփոսի համագոր-

(chapter III 2).

¹⁵ Տե՛ս E. Bickerman, "Some notes on the transmission of the LXX", *A Marx Jubilee Volume*, New York, 1950, repr. in *Studies in Jewish and Christian History* I, Leiden, 1976, p. 137-166.

¹⁶ Տե՛ս D. Barthélemy, "Redécouverte d'un chaSon manquant de l'histoire de la LXX", *Revue biblique* 60, 1953, p. 18-29, and *Les devanciers d'Aquila*, Leiden, 1963; E. Tov, *The Greek Minor Prophets Scroll from Nahal Hever*, Oxford, 1990.

¹⁷ M. Gaster, *The Samaritans*, London, 1925 (գլուխ III).

¹⁸ Տե՛ս G. Dorival, *Les Nombres*, "La Bible d'Alexandrie" 4, Paris, 1994, p. 159-161.

¹⁹ Տե՛ս H. Cadell-Charpentier, "Vocabulaire de la législation ptolémaïque, problème du sens de dikaiôma dans le Pentateuque", in G. Dorival, O. Munnich (eds.), *Selon les Septante. Hommage à Marguerite Harl*, Paris, 1995, p. 207-221.

²⁰ Տե՛ս F. Vattioni, "Storia del testo biblico: l'origine dei LXX", *Annali dell'Istituto orientale di Napoli* 40, 1980, p. 115-130, որը ցույց է տվել, որ անտիկ ժամանակագիրները տալիս են թվագրման առնվազն վեց

ծակցությունը դիտվում էր որպես պատմական ճշմարտությանը հակասող հանգամանք, քանի որ, Դիոգենես Լաերտացու վկայության համաձայն (V 78), վերջինը, դառնալով արքա, բանտարկեց առաջինին: Իրականում, սակայն, արքան և գրադարանավարը կարող էին համագործակցել Լագոսի և Փիլադելփոսի միասնական իշխանության ժամանակ, 285 և 282 թվականների միջև, թերևս և ավելի ուշ, քանի որ նրանց գծողությունը, թեև դրա մասին շատ է խոսվել, այդքան էլ ապացուցված փաստ չէ: Նինա Քոլլինզը, որ ուշադրություն է հրավիրել այս հանգամանքի վրա, ասում է նաև, որ հին թվագրումների տարբերությունները կարելի է բացատրել հինգ տարբեր տոմարների գործածությամբ՝ օլիմպական, մակեդոնյան, եգիպտական, Աբրահամի թվարկությամբ և Հիսուս Քրիստոսից առաջ տարեհամարով²¹: Ըստ նրա, բոլոր թվագրումները կարելի է համատեղել այնպես, որ որոշակի է դառնալու միայն մեկ ժամանակահատված, որ ընկած է 280 թ. փետրվարի 11-ի և նույն տարվա ամառվա միջև: Այս ենթադրությունը ակնհայտորեն հակասում է Megillat Taanit մեկնության մեջ գտնվող այն տեղեկությանը, որ թարգմանությունը կատարվել է Տբեթի ութին, այսինքն դեկտեմբեր-հունվար ամիսներին, առանց տարեթվի նշման: Բայց, օգտագործելով Արիստեսի «Նամակը», որը խոսում է Օրենքը՝ Ալեքսանդրյան հրեաների առջև առաջին անգամ ընթերցելու մասին, և դրա երկրորդ ընթերցման՝ արքայի առջև, Նինա Քոլլինզը ենթադրում է, որ առաջին արարողությունը տեղի է ունեցել 281 թ. դեկտեմբերի 28-ին կամ 29-ին, իսկ երկրորդը՝ 280 թ. գարնանը:

5. Ովքե՞ր էին թարգմանիչները: Նախ և առաջ, ո՞րքան էին նրանք: Բաբբինական ավանդության համաձայն (Բաբբի Նաթանի Abot գրվածքի մեկնության B 37 և Masseket Sopherim 1 7), նրանք հինգ թարգմանիչներ էին: Այս թիվը պետք է կապել Օրենքի հինգ գրքերի հետ: Սակայն որպես կանոն հունակիրք հրեաները, եկեղեցու հայրերը և բաբբիները տատանվում են երկու թվերի միջև՝ յոթանասուն կամ յոթանասուններկու: Յոթանասուն թիվը կապ է հաստատում թարգմանիչների և Թվոց գրքում մեկ անգամ մարգարեացած յոթանասուն երեցների միջև (Թիվք 11): Նրանց պես թարգմանիչներն էլ մարգարեներ են, և նրանց թարգմանությունը, վերջնական և հավերժական, ներշնչվել է Աստծո կողմից: Թարգմանիչների յոթանասուներկուսը լինելու մասին տվյալները ակներև կապ են հաստատում նրանց և Իսրայելի տասներկու ցեղերի միջև, որոնցից յուրաքանչյուրն ուղարկել էր վեց թարգմանիչ: այս պարագայում ստացվում է, որ թարգմանությունը ամբողջ Իսրայելի գործն է: Ավելին, իրականում այս երկու թվերը նույնն են. առաջինը՝ Աստծո թիվն է, իսկ երկրորդը՝ մարդ արարածների: Ինչպես պարզաբանում է բաբբինական ավանդությունը, յոթանասուն երեցներ ընտրելու համար Մովսեսը նախ վեցական մարդ է վերցնում յուրաքանչյուր ցեղից, այսինքն ընդհանուր հաշվով յոթանասուներկու մարդ: Այնուհետև, վիճակ գցելով, նա հանում է երկուսին, և դա թույլ է տալիս հասնել Աստծուց պատվիրած յոթանասուն թվին: Ուստի, երկու թվերն էլ զուտ խորհրդանշաններ են և չեն հայտնում թարգմանիչների իսկական թիվը²²:

տարբերակ՝ 285/281, 284/283, 279/278, 269/268, 267/266, 266/265:

²¹ N.Collins, *The Library in Alexandria and the Bible in Greek*, Leiden, 2000.

²² Sté u G.Dorival, "La Bible des Septante: 70 ou 72 traducteurs?", in G.J.Norton, S.Pisano (eds.), *Tradition of the*

Յոթանասուներկու թարգմանիչների անունները թվարկվում են Արիստեսի (□ 47-50) և Եպիփանի (De mens. et pond. 3) կողմից. նրանց ցուցակները միմյանցից տարբերվում են միայն երեք դեպքում: Տրված անունները վերլուծության է ենթարկել Բ.Ս.Ջ. Իսսերլինը, որը հայտնել է, որ այս անունները ընդունված չէին Եգիպտոսում, այլ ավելի մոտ են Պաղեստինում ընդունված անուններին, եթե անգամ դրանցից մի քանիսը այնտեղ վկայված չեն²³: Ամենատարածված կարծիքի հակառակ, կարծիք, որի համաձայն թարգմանիչները Ալեքսանդրյան հրեաներ էին, Արիստեսի պնդումը նրանց՝ Երուսաղեմից ժամանելու մասին որոշ չափով հավաստի է: Մեկ այլ դիտարկում տանում է նույն ուղղությամբ: Արի վան դեոյը ցույց է տվել, որ թարգմանիչները ոչ թե *թարգմանիչներ* էին, այսինքն առևտրական կան արքունական թարգմանիչներ, որոնք փոխադրում էին բառ առ բառ և հատված առ հատված, այլ դպիր-թարգմանիչներ, որոնք ներմուծում էին իրենց թարգմանության մեջ ներդաշնակություններ (harmonizations)²⁴ և ավանդության մեջ ընդունված մեկնաբանումներ: Այս հանգամանքը ցույց է տալիս նրանց առնչությունը առավել Տաճարի, քան Պաղեստինի արքունիքի հետ²⁵:

6. Ինչպե՞ս էին աշխատում թարգմանիչները: Հնագույն վկայությունները տատանվում են երեք բացատրությունների միջև. բոլորը միասին (Արիստես, Հիերոնիմոս), առանձին-առանձին, թարգմանությունն էլ, ինչպես պարզվեց, նույնական էր (Իրինեոս, TB Megillah 9a), զույգերով (Եպիփան Կիպրացին): Ժամանակակից հեղինակները կիսում են այս կասկածները. Օրենքը կարող էր թարգմանված լինել մի խումբ թարգմանիչների կողմից, որոնք աշխատում էին միևնույն սկզբունքներից ելնելով, կա՛մ հինգ գրքերից յուրաքանչյուրը կարող էր թարգմանված լինել մեկ կամ մի քանի թարգմանիչների կողմից, կա՛մ էլ ամեն մի գրքի թարգմանությունը կատարել են երկու թարգմանիչ: Դա դեռ հետազոտման կարոտ հանգամանք է:

Արդյո՞ք թարգմանիչներն աշխատում էին Փարոս կղզում: Ինչևէ, մ.թ. Բ դարի սկզբում և դրանից հետո էլ կարելի էր այցելել թարգմանիչների խրճիթները (TB Megillah 9a, Կեդծ Հուստինոս, *Հույների հորդորում* (Exhort. 13)): Ըստ Արիստեսի, նրանք օգտագործել են Թորայի օրինակը, որը գրված էր ոսկե տառերով: Այս հանգամանքը հակասում է հրեական սովորույթին երկու պատճառով. Թորան սովորաբար գրվում էր միայն մեկ փաթեթի վրա (TB Menahot 30a), իսկ ոսկե տառերը արգելված էին (Sefer Torah I 10, Soferim I 9): Սակայն այս կանոնները թերևս ունեցել են բացառական ծագում: Ավելի վաղ ժամանակ Թորայի յուրաքանչյուր գիրքը, հավանաբար, պահանջում էր մեկ փաթեթ, ինչպես դա եղել է Քումրանում: Ավելին, Sefer Torah I 10, Soferim I 9 պատմում են, որ Ալեքսանդրիայում եղել է մի փաթեթ, որում Աստծո անունը գրված էր ոսկե տառերով: Պարզ է, որ այս փաթեթը ամբողջությամբ

Text. Studies offered to Dominique Barthélemy in Celebration of his 70th Birthday, Göttingen, 1991, p.45-62.

²³ B.S.J. Isserlin, "The Names of the 72 Translators of the LXX (Aristeas, 47-50)", *The Journal of the Ancient Near Eastern Society of Columbia University* 5, 1973, p. 191-197.

²⁴ Խոսքը մեկնողական և թարգմանչական հնարի մասին է, որի միջոցով անձանթ կամ անհասկանալի արտահայտության իմաստը բխեցվում է ավելի խոշոր միավորի՝ նախադասության, պարբերության ևն ընդհանուր բովանդակությունից (*ծան. թարգմանիչ*):

²⁵ A. van der Kooij, Perspectives on the study of the Septuagint. Who are the Translators?, in F.G. Martinez, E. Noort (eds.), *Perspectives in the Study of the Old Testament in Early Judaism*, Leiden, 1998, p.214-229.

ոսկե տառերով չէր գրվել: Այնուհանդերձ այս մասամբ ոսկեգիր փաթեթը հուշում է, որ Արիստեասը հայտնում է հավաստի, համենայնդեպս մասամբ հավաստի տեղեկություններ:

Արդյո՞ք թարգմանությունը գրվել է մեկ փաթեթում, թե փաթեթները այնքան էին, որքան Աստվածաշունչ գրքերը: Հնգամատյանի «Պենտատեխոս» անունը (հուն. *teuchos` փաթեթ*) կարող է նշանակել և՛ փաթեթ, որը պարունակում է հինգ գիրք, և՛ հինգ փաթեթից կազմված հավաքածու: Միգուցե պապիրուսների տվյալները թո՛ւյլ են տալիս ավելի ստույգ ընտրություն անել այս երկու կարծիքների միջև: Պապիրուս Fouad 266-ի համաձայն, Բ Օրինաց գիրքը գրված է եղել կա՛մ երեք փաթեթներում, յուրաքանչյուրը տասը և կես մետր երկարությամբ, կա՛մ երկու 16 մետրանոց փաթեթներում: Ուստի, Օրենքի հինգ գիրք պահանջում էին տասը փաթեթ՝ յուրաքանչյուրը տասնվեց մետր երկարությամբ: Եթե դա այդպես է, ապա անհնար է, որ Հնգամատյանը գրված լիներ մեկ փաթեթում: Այնուամենայնիվ, թեև եզրիտական սովորական փաթեթը եղել է 3 մ 20 սմ-ից մինչև 3 մ 60 սմ երկարությամբ, պատահել են փաթեթներ, որոնք ունեցել են բացառիկ երկարություն՝ մոտ երեսուն մետր: Թարգմանված Աստվածաշնչի հինգ գրքերը կարող էին ընդօրինակված լինել հենց այդպիսի հինգ փաթեթներում: Ուստի, «Պենտատեխոս»՝ Հնգամատյան անվանումը կարող էր նշանակել հինգ փաթեթների խումբ, որից ամեն մեկը պարունակում էր Օրենքի մեկ գիրք:

7. Արդյո՞ք թարգմանված Օրենքը պահվել է Ալեքսանդրյան գրադարանում, ինչպես հայտնում են Տերտուլիանոսը (*Apologeticon* 18) և Եպիփանը (*De mens. et pond.* 3): Ընդհակառակը, Արնալդո Մոմիլյանոն պնդում է Յոթանասնից թարգմանության նեղ համայնքային բնույթը՝ այն պահպանվում էր միայն հրեական համայնքում²⁶: Եվ, իսկապես, հեթանոսների գործերում չկա և ոչ մի մեջբերում Յոթանասնից բնագրից ընդհուպ մինչև Կեղծ Լոնգինոսի (Ղունկիանոս) *Ճարտասանական արվեստը* (*Ars rhetorica* 9,9), որը գրված էր 50-ական թվականներին: Այս երկում նա խոսում է Մովսեսի վերամբարձ ոճի մասին, որի հաջող օրինակներ է համարում Ծննդ. Ա 3 և 9: Նա ներկայացնում է այս տեղիները՝ ասելով, որ դրանք գտնվում են «Օրենքների ամենասկզբում»: Այս «Օրենքների» հղումը՝ հոգնակի թվով, որը թերևս կարելի է հակադրել Արիստեասի գործածած եզակի թվին, կարող է ակնարկել այն իրողությունը, որ թարգմանված Թորան դասվում էր Գրադարանի առանձին բաժնում, այն է՝ Օրենքների (*nomoi*) բաժնում, որտեղ գրքեր էին պահվում տարբեր քաղաքների և արքայությունների օրենքների վերաբերյալ:

8. Ինչպե՞ս էին հղում Օրենքին: Ամբողջական Օրենքի մասին խոսելու համար գործածվում էին մի քանի եզրեր: Սրանք բաշխվում են չորս իմաստային դաշտերի միջև: 1. «Թարգմանության» իմաստային դաշտը. Արիստեասն, Արիստոբոլոսը, եկեղեցու հայրերը խոսում են «թարգմանության» մասին՝ *hermeneia*, Արիստեասը գործածում է *metagraphe* ([գրավոր] փոխադրություն) բառը, Հովսեփոս Փլավիոսն օգտագործում է *exegesis* (մեկնություն) եզրը: Եկեղեցու հայրերը հաճախ գործածում են «յոթանասուն/յոթանասուններկու թարգմանողներ»՝ *hermeneusantes* արտահայտությունը: 2. «Օրենքի» իմաստային դաշտը. Արիստեասի նամակում՝ հո

²⁶ A. Momigliano, *Alien Wisdom*, Cambridge, 1976 (գլխի 4):

nomos («օրենք»), he nomothesia («օրենսդրություն»), հրեական Թորան անվանելու համար, սակայն □ 309 ho nomos վերաբերում է Օրենքի հունարեն թարգմանությանը, և այս արտահայտությունն այնուհետև գործածվելու է երկար ժամանակ: 3. Գրադարանավարների բառապաշար. Փիլոն Ալեքսանդրացին, Կեղծ Լոնգինոսը և այլ ուշ դարաշրջանի հեղինակները գործածում են hoi nomoi («Օրենքներ») եզրը, որը, հավանաբար, գալիս է Ալեքսանդրյան գրադարանում ընդունված՝ գրքերի դասակարգումից: Հունարեն գրքերին վերաբերող բառեր. Արիստեսասի «Նամակում» ta biblia՝ «գրքեր» բառը կիրառվում է հրեական Թորայի համար, բայց և հունարենի վերածված Օրենքի վերաբերյալ (□ 317): Մեկ անգամ որպես Թորայի անվանում հանդիպում է he biblos (□ 316) բառը: Եկեղեցու հայրերը գործածում են ta biblia կամ hai bibloi՝ «գրքեր» արտահայտությունը՝ նույն նշանակությամբ, և նույնիսկ he ekdosis ton o'ob՝ «յոթանասունների կամ յոթանասուներկուսի խմբագրությունը»: He biblos՝ եզակի թվի ձևը կրկին հանդես է գալիս Դ դարում, Գրիգոր Նյուսացու «Ընդդեմ Եվնոմիոսի» (Cont. Eun.12) գործում: Բայց սովորաբար այն նշանակում էր ամբողջ Աստվածաշունչը և ոչ միայն հունարենի փոխադրված Օրենքը: Այս վերջինին հղելու համար Արիստեսասն օգտագործում է ta teuche (□ 310) մասնագիտական եզրը, որ նշանակում է «փաթեթներ»: Հատուկ եզր՝ pentateuchos՝ բառացի «հինգափաթեթ», այսինքն «հնգամատյան» առաջին անգամ հայտնաբերվում է մ.թ. երկրորդ դարի կեսին Պտղոմեոս Գնոստիկոսի «Թուղթ առ Փլորա» գրվածքում, որի պատառիկը պահպանվել է Եպիփան Կիպրացու «Ընդդեմ աղանդների» գործում (Adv.haer. 33, 4): Սակայն այն կարող է լինել և ավելի հին:

Pentateuchos, Հնգամատյան անվանումը իր մեջ է միացրել Թորայի կամ Օրենքի երկու կտրվածքները. Օրենք, որպես մի ամբողջականություն, և Օրենք, որպես հինգ գրքերի գումար: Ինչպե՞ս են դրանք խորագրված: Յոթանասնից թարգմանության հնագույն ձեռագրերը, որոնք ընդօրինակվել են Դ դարի վերջին կեսի ընթացքում, տալիս են այս գրքերի այն վերտառությունները, որոնք լատիներենի միջոցով յուրացվեցին նաև նոր լեզուներում. Genesis, «առաջացում, գոյացում», այն է՝ աշխարհի և նահապետների, Exodos, «Ելք» Մովսեսի առաջնորդությամբ եբրայեցիների ելքն Եգիպտոսից, Levitikon, գիրք՝ նվիրված այն պաշտամունքին, որի համար պատասխանատու էին Ղեվիի ցեղը, Arithmoi, «Թիվք», որ այդպես է կոչվում երկու մարդահամարի արդյունքները գրքի սկզբում և գրքի վերջում հայտնելու համար. Deuteronomion, այն է՝ Երկրորդ Օրենք, կամ, ավելի ճիշտ, երկրորդ անգամ ասված Օրենք: Այս անվանումները Դ դարից ավելի հին են, քանի որ դրանք վկայված են հունախոս հրեաների ավանդության մեջ, Փիլոն Ալեքսանդրացու երկերում, որը, սակայն, չի գործածում Թիվք բառը, և Ելից գիրքը անվանում է Exagoge Exodos-ի փոխարեն: Նույն Exagoge բառը առկա է Արիստոբուլոսի և ողբերգագիր Եգեկիելի մոտ: Այնուհանդերձ, Հովսեփոսը գործածում է exodos խորագիրը (Ant. V 72): Չկա և ոչ մի կասկած, որ այս խորագրերը հին են: Առաջին հայացքից բաբբինական ավանդությունը և մատրական Աստվածաշունչը ցույց են տալիս այլ կիրառություն. խորագրերը կազմված են յուրաքանչյուր գրքի առաջին տան մեկ կամ մի քանի բառերից՝ Bereishit, «սկզբից», Shemot «անուններ», Wayyiqra «և նա կանչեց», Bemidbar «անապատում», Debarim «բառեր»: Գոյություն ունի, սակայն, ևս մեկ բաբբինական ա-

վանդություն, որ համահունչ է հունախոս հրեաների ավանդության հետ²⁷: Ծննդոց գիրքը երբեմն կոչվում է *seper jetsirat ha'olam*՝ «գիրք աշխարհի արարման [մասին]». Ելից գիրքը՝ *seper jetsirat Mitsraim*՝ գիրք «Եգիպտոսից ելնելու [մասին]». Ղևտացիք՝ *Seper torat kohanim*՝ «գիրք քահանաների օրենքների [մասին]». Թիվք՝ *Homes happeiqqudim*՝ հինգերորդ [գիրք] մարդահամարի («գիրք», քանի որ Օրենքը բաղկացած է հինգ գրքից). Երկրորդ(ումն) Օրինաց՝ *Seper mishnei torah*՝ գիրք Օրենքի կրկնօրինակի [մասին]:

IV. - Թարգմանություն, ինչո՞ւ

Այս հարցը արդի ուսումնասիրությունների շնորհիվ կրկին հետաքրքրություն է հարուցել և կարոտ է այսօր հատուկ քննարկման: Բոլոր հնագույն տվյալները՝ հելլենիստական, բաբելոնական և հայրաքանական խոսում են հույն թագավորի նախաձեռնության մասին: Սակայն թագավորական հետաքրքրության պատճառները անհասկանալի են: Երբ կարդում ես Արիստեասին և Արիստոբուլոսին, տպավորություն է ստեղծվում, թե պատճառն այն էր, որ թագավորները ձգտում էին իրենց վարկը բարձրացնող քաղաքականություն վարել մշակույթի և դպրության ասպարեզում: Դեմետրիոսի դերը հենց այսպիսի միտում է ցույց տալիս: Նա եղել է Արիստոտելեսի աշակերտը և քաղաքական կարևոր դեր է խաղացել Աթենքում: Թերևս նա դիտում էր Ալեքսանդրոսին և Պտղոմեոսներին իբրև մարդկանց, որոնք ի վիճակի էին որոշակի ժամկետներում իրականացնել *paideia*, այսինքն «կրթվածության» ունիվերսալիստական իդեալը: Մյուս պատճառը բերում է Արիստեասը (□ 307-312)՝ թագավորի եբրայեցասիրությունը: Բայց դա ժամանակային անհամապատասխանություն է, քանի որ առաջին եբրայեցասեր արքան եղել է Պտղոմեոս Զ Փիլոմետոսը (186-145): Վերջին պատճառը կարելի է կոտակել Արիստեասի երկից (□ 312). այն է՝ արքայի օրենսգիտական հարցերն ուսումնասիրելու հակումը և, թերևս, նրա՝ Ալեքսանդրիայում բնակվող էթնիկական խմբերից մեկի Օրենքին հունարեն լեզվով ծանոթանալու ցանկությունը: Այնուամենայնիվ, այս հետաքրքրությունն ավելի հարմարվում է Պտղոմեոս Բ-ին, քան նրա հորը, քանի որ հենց Պտղոմեոս Բ-ն մոտ 275 թ. վերափոխում էր Եգիպտոսի դատական համակարգը:

Այս բոլոր փաստարկները, սակայն, դիտվել են որպես անօգտակար այն պահից, երբ գիտնականները կասկածի տակ դրեցին Արիստեասի «Նամակի» վավերականությունը²⁸: Եվ, իսկապես, արդյո՞ք կարելի է հավատալ «կեղծողին», ինչպես անվանել է Արիստեասին Հ. Հոդին 1685 թվականին²⁹: Այս ժամանակից ի վեր գիտնականները փորձում են այս թարգմանության կատարումը բացատրել Ալեքսանդրիայի հրեական համայնքի կարիքներով: Հենրի Սեն Ջոն Թաքերեյը ամենահայտնի գիտնականներից էր, որ պաշտպանում էր Յոթանասնից նկատմամբ «ծիսական»

²⁷ Տե՛ս H.M. Orlinsky, *Essays in Biblical Culture and Bible Translation*, New York, 1974, p.368.

²⁸ XVI դարի սկզբին L.Vives, *In XXII Libros De Civitate Dei Commentaria*, Basel, 1522 մանրամասն ներկայացրել է իր կասկածները Օգոստինոսի երկի XVIII 42 տեղիի կապակցությամբ:

²⁹ H.Hody, *Contra historiam LXX Interpretum Aristaeae nomine inscriptam dissertatio*, Oxford, 1685.

մոտեցումը³⁰: Ըստ նրա և բազում այլոց, ալեքսանդրացի հրեաները, որոնք կազմում էին քաղաքի մեծ և տնտեսապես հզոր էթնիկական խումբը, արդեն չէին տիրապետում եբրայեցերենին և կարոտ էին հունարեն թարգմանության ժողովարաններում ծես կատարելու և աղոթքը կարդալու համար: Այս իմաստով հունարենի վերածված Թորան դիտվում է որպես հնագույն *թարգում*, ուստի և ուսումնասիրողները ձգտում են նկարագրել Յոթանասնից բոլոր թարգմանական դրսևորումները: Նշվում էին և այլ հնարավոր կարիքներ. անհատական ընթերցում (Առնալոդ Մոմիլյանո), կրթություն (Սեբաստիան Բրոք, Շառլ Պետո), դավանական քարոզչություն (Առնալոդ Մոմիլյանո)³¹:

Իրականում, սակայն, այս բացատրությունը, որը կարելի է անվանել դասական, հանդիպում է լուրջ առարկության: Նախ և առաջ, Յոթանասնից թարգմանությունը տարբերվում է թարգմաններից բազմաթիվ գծերով³²: Երկրորդ, այն փաստը, որ հրեաներն այլևս չէին տիրապետում եբրայեցերենի, բնավ չի ենթադրում գրավոր թարգմանության ստեղծումը. թարգմանները կատարվում էին բանավոր և հանապափաստից ընդհուպ մինչև 150 թ.³³: Երրորդ, մենք ոչ մի բան չգիտենք Գ դարի ժողովարանի ծեսի մասին. չկա և ոչ մի ապացույց այն բանի, որ ընդունված է եղել Թորայի ամբողջական ընթերցումը, որը կպահանջեր նաև ամբողջական թարգմանություն: Ավելի հավանական է, որ ընթերցվում էին ընտրյալ տեղիներ, ինչպես դա եղել է նաև վաղ քրիստոնեական ծեսում³⁴: Առավել ևս այս բացատրությունն անբավարար է՝ հին աշխարհում թարգմանության կարգավիճակի մեր ունեցած գիտելիքների տեսանկյունից: Սեբաստիան Բրոքը, Ելիաս Բիքերմանը և Գեորգ Յունցը ապացուցել են, որ մասնավոր թարգմանությունը գոյություն չի ունեցել մինչև Ք.ա. II դ.³⁵: Միջերկրածովյան երկրներում երրորդ դարում և դրանից առաջ բոլոր մեզ հայտնի թարգմանությունները եղել են պաշտոնական և կախված էին քաղաքական նախաձեռնություններից: 260-250 թթ., այսինքն անմիջապես Յոթանասնից հունարենի թարգմանելուց հետո, հնդիկ արքան՝ Աշոկան, հրամայում է թարգմանել իր հնդկերեն կարգադրությունները արամեերեն և հունարեն՝ իր թագավորության արամեախոս և հունախոս հպատակների համար³⁶: Այս օրինակը ցույց է տալիս, որ հույն

³⁰ H.St John Thackeray, *The Septuagint and Jewish Worship*, London, 1921.

³¹ C.Perrot, "La lecture de la Bible dans la diaspora hellénistique", in Association catholique française pour l'étude de la Bible (ed.), *Études sur le judaïsme hellénistique*, Paris, 1984, p. 109-132. S.P.Brock և A.Momigliano մեջբերվում են 7 և 24 ծանոթագրություններում:

³² Տե՛ս R. Le Déaut, "La Septante, un Targum?", in Association catholique française pour l'étude de la Bible (ed.), *Études sur le judaïsme hellénistique*, Paris, 1984, p.147-195.

³³ Մեզ հայտնի ամենահին թարգումը՝ Հոբ գրքի թարգումն է, որ հայտնաբերվել է Քումրանում: Տե՛ս J.P.M. van der Ploeg, A.S.van der Woude, *Le Targum de Job de la grotte XI de Qumrân*, Leiden, 1972.

³⁴ Տե՛ս C.Perrot, նշվ.աշխ., ծան. 29:

³⁵ S.P.Brock, "The Phenomenon of Biblical Translation in Antiquity", *Alta: The University of Birmingham Review* 8, 1969 (repr. in S.Jellicoe, *Studies in Septuagint.Origins, Recensions and Interpretations*, New York, 1974, p.541-571); E. Bickerman, "The Septuagint as a Translation", *Proceedings of the American Academy for Jewish Research* 28, 1959 (= *Studies in Jewish and Christian History*, vol.I, Leiden, 1976, p.167-200); G.Zuntz, նշվ.աշխ., ծան. 5:

³⁶ Տե՛ս G.Dorival, M.Harl, O.Munnich, *La Bible grecque des Septante. Du judaïsme hellénistique au christianisme ancien*, Paris, 1988, p.70-71.

թագավորի նախաձեռնության վարկածը հավաստի է:

Առաջին գիտնականը, որը հրաժարվեց դասական բացատրությունից, Ելիաս Բիքերմանն էր³⁷: Այնուհետև Լյուդվիգ Ռոստը ենթադրել էր, որ թարգմանությունը թույլ էր տալիս հրեաներին, իրենց դավանանքը պահելով հանդերձ, ձեռք բերել Ալեքսանդրիայի քաղաքացիություն³⁸: Ըստ Դոմինիկ Բարթելեմիի, թարգմանությունը թույլ էր տալիս հրեական համայնքին (politeuma) դատավարել մի օրենսդրությամբ, որը մատչելի էր հույն արքային³⁹: Սակայն այս մոտեցումները քննադատելի էին այն պատճառով, որ հրեաները, որպես էթնիկական խմբի ներկայացուցիչներ, չէին կարող ձեռք բերել ալեքսանդրյան քաղաքացիություն, և ինքը հրեական politeuma-ն գոյություն չի ունեցել Գ դարում, եթե առհասարակ այս կազմակերպությունն երբևիցե գոյություն է ունեցել: Այժմ անդրադառնանք Յոզեֆ Մելեզ-Մոդժեյևսկու հետազոտություններին⁴⁰: Մոտավորապես 275 թ. Պտղոմեոս Բ Փիլադելֆոսը բարեփոխում է դատական համակարգը: Արքայական դատավորները (քրեմատիստները) և արքայական քաղաքացիական ծառայողները իրավունք են ստանում կիրառել բնիկների նկատմամբ կա՛մ հունական օրենքը, կա՛մ էլ սովորութենական իրավունքը: Այս վերջինը գրի է առնվել ժողովրդական (demotic) լեզվով և հայտնի է Գ դարի պապիրուսի շնորհիվ, որ կոչվում է Արևմտյան Հերմուպոլիսի դեմոտիկ օրենսգիրք⁴¹:

Այս օրենսգիրքը բնիկների նկատմամբ կիրառելու համար խրեմատիստները և արքունիքի սպասավորները կարիք են ունեցել դրա հունարեն թարգմանության: Սկզբնապես եղել է երկու հնարավորություն. կա՛մ կատարել հետևողական և պաշտոնական թարգմանություն, որը կպահվեր արքունիքի արխիվում, կա՛մ էլ թարգմանել այն ըստ պահանջի պաշտոնական թարգմանչի օգնությամբ: Օբսիդինքսում թիվ 3285 պապիրուսի գյուտը խոսում է հոգուտ հետևողական թարգմանության, քանի որ այն պարունակում է Արևմտյան Հերմուպոլիսի սովորութենական դեմոտիկ օրենսգրքի հունարեն թարգմանությունը⁴²: Այս պապիրուսի հրատարակումից հետո հայտնաբերվել են հունարեն թարգմանություն պարունակող և այլ պապիրուսներ: Յոզեֆ Մելեզ-Մոդժեյևսկու ենթադրությունն այն է, որ նույն ընթացքն է ապրել և Թորան՝ որպես սովորութենական իրավունք: Որպեսզի երաշխավորվի հրեաների համար կիրառվող հրեական օրենքի նկատմամբ հարգանքը, այս օրենքը պետք է որ մատչելի լիներ դատավորներին իրենց սեփական լեզվով: Թարգմանված

³⁷ E.Bickerman, նշվ. աշխ., ծան. 14 և 33:

³⁸ L.Rost, "Vermutungen über den Anlass zur griechischen Übersetzung der Tora", in H.J.Stoebe, *Wort-Gebot-Glaube*, Zürich, 1970, p. 39-44.

³⁹ D.Barthélemy, "Pourquoi la Torah a-t-elle été traduite en grec?", *On Language, Culture and Religion*. In Honor of E.A.Nida, Den Haag, 1974, p. 23-41.

⁴⁰ J.Méléze Modrzejewski, "La règle de droit dans l'Egypte ptolémaïque. Etat des questions et perspective de recherches", *Essays in Honor of C.B.Welles*, New Haven, 1966, p. 125-173; "Droit et justice dans le monde hellénistique au IIIe siècle avant notre ère", *Mélanges G.A.Petropoulos*, I, Athens, 1984, p.55-77; "Splendeurs grecques et misères romaines. Les Juifs d'Egypte dans l'Antiquité", in J.Hassoun, *Juifs du Nil*, Paris, 1985, p. 237-245; "Livres sacrés et justice lagide", *Acta Universitatis Lodzensis. Folia iuridica* 21, 1986, p. 11-44; և նշվ.աշխ., ծան. 2, էջ 84-101.

⁴¹ G.Mattha, G.P.Hughes, *The Demotic Legal Code of Hermoupolis West*, Cairo, 1975.

⁴² Պապիրուս Oxyrynchus 3285 հրապարակե է չ J.Rea, *The Oxyrynch Papyri*, XLVI, London, 1978.

լինելով հունարեն, հրեական օրենքը դառնում էր հունական օրենք և երաշխավորվում արքայի հեղինակությամբ:

Այս հետաքրքրական գաղափարը ենթակա է առարկության: Նախ, չկա և ոչ մի անհերքելի ապացույց այն բանի, որ Յոթանասնից թարգմանությունը ներգրավված էր Պտղոմեոսների դատական համակարգը: Jud. I, 128 (= Enteuxeis 23, 218 թ.) պապիրուսում *nomos politicos* բառակապակցությունը ներմուծված է որպես ենթադրելի: Jud. I, 19 (=Papyrus Petrie III 21g + Papyrus Gourob 2, 226 թ.) պապիրուսում *nomoi politikoi* բառերը թերևս իրոք ի նկատի ունեն հունարենի թարգմանված Թորան, բայց բնագիրը, ինչպես և ցանկացած այլ եզակի և մեկուսացված վկայություն, դժվարհասկանալի է⁴³: Երկրորդ առարկությունն այն է, որ Մելեգ-Մոդթենսկու տեսությունը հեռու է անտիկ տվյալներից: Դրանք երբեք չեն վկայում Պտղոմեոս Բ դատական բարեփոխումները: Դրանք ակնարկում են 280 և ոչ 275 թվականը: Դրանք շեշտում են Դեմետրիոս Փաղերացու մասնակցությունը և արքայի մշակութային բնույթի հետաքրքրությունը:

Ինչևէ, նորագույն հետազոտությունները կրկին հավաստիություն են հաղորդում այն պատմությանը, որ շարադրված է «Արիստեասի նամակում»: Պատկերացումը թագավորի նախաձեռնության մասին չի կարող հաշվի չառնվել, որքան էլ մթին լինի արքայի խաղացած դերը: Կարելի է նկատել, որ դա առաջին թագավորական միջամտությունը չէ հրեաների պատմության մեջ: Կարելի է որոշակի կապ հաստատել Պտղոմեոսի և Արտաշեսի միջամտության միջև, երբ արքայից արքա Արտաշեսը թույլ է տալիս հրեաներին վերադառնալ աքսորից՝ Մովսեսի Օրենքը պահելու համար, ինչպես պատմվում է Եզրասի Երկրորդ գրքում է 11-28 և 18: Մյուս կողմից, ինչպես մտածում է Սեբաստիան Բրոքը⁴⁴, հնարավոր է, որ բոլոր անտիկ տվյալները կախված են «Նամակից», ընդ որում «Նամակն» ինքը գրական հորինվածք է, բոլորովին արհեստական: Այս խիստ առարկությունը քննարկման կարիք ունի: Նախ, ամենևին էլ հստակ չէ, որ Արիստոբոլոսը, Փիլոնը, րաբբիները և եկեղեցու հայրերը ամբողջովին կախված են Արիստեասից: Այսպես, օրինակ, երբ Փիլոնը հայտնում է, որ ամեն տարի Փարոս կղզում տոն է կատարվում թարգմանության տեղը պաշտելու և Աստծուն՝ դրա համար գոհություն հայտնելու նպատակով, նա բերում է պատմական մի փաստ, որը չի հիշատակվում Արիստեասի կողմից: Եվ ամենևին էլ հստակ չէ, որ առանձնահատկությունները, որ ունեն անտիկ գրողների պատումները, կարելի է համարել որպես հետագա հավելում: Թերևս դա կարող է ասվել Հայրերի վերաբերյալ: Բայց րաբբիների դեպքում այն փաստը, որ նրանք բոլորը խոսում են թագավորական նախաձեռնության մասին, վճռական կովանն է այն հետազոտողների համար, ովքեր համաձայն չեն համայնքի կարիքներից ելնող բացատրության հետ: Անշուշտ այս կետը հետազոտման ենթակա է: Այժմ քննարկենք երկրորդ առարկությունը, որը շեշտում է «Նամակի» գրական հորինվածք լինելը: Իրականում «Նամակը» ըստ իր ժանրային ձևի կարող է դիտվել իբրև «հիմնադրման պատում» (տվյալ դեպքում՝ թարգմանության սկզբնավորում): Իսկ հայտնի է, որ

⁴³ Papyri I, 128 և I, 19 վերահրատարակել է V. Tcherikover, *Corpus papyrorum judaicarum*, Cambridge (Massachusetts), 1959.

⁴⁴ Աթենքում 2001 թ. նոյեմբերին տեղի ունեցած մասնավոր գրույցում:

այսպիսի «հիմնադրման պատումներ», ինչպիսիք են, օրինակ, աշխարհի արարման պատմությունը, որը հայտնում է Ծննդոց գիրքը, կամ Մարսելի հիմնադրման պատմությունը, ինչպես այն բերում է Արիստոտելեսը, պատմական ժանրին չեն պատկանում, այլ իրենց էությանմբ առասպելներ են ինչ-որ բանի «սկզբի» մասին⁴⁵։ Դրանցից որևէ պատմական տեղեկություններ քաղելու փորձը անտեղի է։ Սակայն արդյո՞ք դա նշանակում է, որ արքայական նախաձեռնությունը լոկ հորինված մի բան է։ Անշուշտ արքայական նախաձեռնության գաղափարը հենվում է «Նամակի» տվյալների վրա։ Սակայն այս նախաձեռնության առկայության փաստը մենք կարող ենք հաստատել ոչ թե «Նամակի» պատմածով, այլ մեր գիտելիքներով անտիկ դարաշրջանում թարգմանությունների կարգավիճակի և Պտղոմեոս Բ դատական բարեփոխումների մասին մեր ունեցած տեղեկություններով։ Այսպիսով կարելի է ենթադրել թագավորական նախաձեռնությունը և, միաժամանակ, ընթերցել «Նամակը» իբրև գրական հորինվածք՝ առանց որևէ պատմական արժեքի։ Օրենքի հունարեն թարգմանությունը բխում էր թագավորական նախաձեռնությունից ոչ թե այն պատճառով, որ «Նամակն» է պատմում նրա մասին, այլ նրա համար, որ այս եզրակացությանն են հանգեցնում նորագույն ուսումնասիրությունները⁴⁶։

*Թարգմանությունը անգլերենից
կատարեց ՕԼԳԱ ՎԱՐԴԱՋԱՆՅԱՆԸ*

⁴⁵ S. Honigman, *The Septuagint and Homeric Scholarship in Alexandria. A Study in the narrative of the Letter of Aristaeas*, London/New York, 2003 կարծում է, որ Արիստեսի «Նամակը» ոչ թե պատմական տեղեկություն է, այլ հենքային առասպել սփյուռքի հրեադավանության համար։ Ըստ այդմ, եբրայեցերեն Թորայի թարգմանությունը մի բնագիր է, որ վայելել է հոմերոսյան վեպերին համեմատ հեղինակություն։

⁴⁶ Խորին շնորհակալություն եմ հայտնում իմ գործընկեր և բարեկամ Օլգա Վարդազարյանին՝ այս հոդվածը հայերեն թարգմանելու համար։

Տ. ԿՈՄԻՏԱՍ ՎԱՐԴԱՊԵՏ ՀՈՎՆԱՆՅԱՆ

ՄԻԱԲԱՆԸ ՈՐՊԵՍ ՔԱՐՈՋԻՉ

ա. Ի՞նչ է Քարոզը և ինչպե՞ս այն մատուցել:

Քարոզ նշանակում է համոզվածությանը համոզումը այլոց: Իսկ քարոզել նշանակում է բարձրաձայնել այն, ինչի ճշմարտացիությունը անկասկած է և անտարակույս:

Քարոզությունը, համաձայն Սուրբ Գրոց Բառարանի, նշանակում է «հրապարակաւ եւ բանիւ *պատմել* կամ *ուսուցանել* կրօնական ճշմարտութիւններ, մանաւանդ Քրիստոսի Աւետարանին ճշմարտութիւնները» (Բառարան Սուրբ Գրոց, Կոստանդնուպոլիս, 1881, էջ 574): Այսինքն՝ քարոզ նշանակում է մի բան պատմել կամ ուսուցանել: Հետևաբար, քարոզխոսությունը պիտի չլինի միայն ձև, որպէս մատուցում, այլ ավելի իմաստ և բովանդակություն, որպէս նպատակ: Կարևոր է, որ քարոզիչը ուշադրություն դարձնի իր մատուցած խոսքի վրա: Եթե մենք ներկայացուցիչներն ենք Նրա՝ Աստծո Բանի-Խոսքի, ապա այդ աստվածային խոսքը հավատացյալներին պիտի փոխանցվի այնպէս, որ ազդու լինի այդ խոսքը, միտքը և դրա նպատակը, որն ուզում ենք համոզեցուցիչ դարձնել, այսինքն՝ կարևորել իմաստը և բովանդակությունը: Անկասկած կարևոր է նաև խոսքի մատուցման ձայնային տվյալները, շեշտադրումը, բառի ելևէջային ճիշտ մատուցումը, այսինքն՝ խոսքը չենք կարող մատուցել մոնոտոն-միապաղաղ, լինի դա ընթերցված կամ արտասանված քարոզ: Տպավորիչ և լավ քարոզխոսության պայմաններից մեկը հոգևորական արվեստին տիրապետելն է: Այսինքն՝ մատուցման ձևը:

Եվ այստեղ կարևոր է նշել, որ քարոզել չի նշանակում պարզապէս խոսել, այլ քարոզել նշանակում է աստվածային խոսքը փոխանցել: Մի բան կարող ենք փոխանցել, եթե դա մեկից ստացել ենք և այդ գերագույն Մեկը Սուրբ Հոգին է: Այստեղ հարց է ծագում, ի՞նչ է քարոզը, արդյունք իմաստության, արդյունք հավատքի, թե արդյունք Սուրբ Հոգու ներգործության: Քարոզը արդյունքն է այս երեքի միասնականության:

բ. Քարոզիչը որպէս անձ, ով է ինքը իր կյանքով:

Քարոզիչ, համաձայն Նոր Բառագիրք Հայկազեան Լեզուի, նշանակում է «մունետիկ, ազդարարող» (Նոր Բառագիրք Հայկազեան Լեզուի, Բ հատոր, էջ 999): Ուրեմն որպէս մունետիկ, ազդարարող, ապա և պատմող, ուսուցանող, ինչպիսի՞ն պիտի լինի քարոզիչը: Քարոզիչը նախ իր կյանքով, կեցվածքով և կենցաղով պիտի լինի առաջին անխոս խոսված քարոզը:

Քարոզիչ հոգևորականի ամենակարևոր զենքը ընդդէմ չարի մղվող պայքարի, նրա հոգեկան, բանական և մարմնական զորավոր հատկանիշներն են:

Քարոզիչը պիտի նմանվի այն ասպետին, որն իր սուրը փայլեցնում է կատար-

յալ, առանց նրա վրա բիծ անգամ թողնելու: Քարոզիչի սուրբ իր ներքնաշխարհին է, որը պիտի փայլի նրա անբիծ և մաքուր էությունից: Քանզի եթե Ավետարանի քարոզիչը ուշադրություն չի դարձնում իր ներքնաշխարհին, դա վնասում է ոչ միայն իրեն՝ անձնապես, այլ առավել նրա գործին և կոչմանը: Քարոզիչը նման է քաղաքային այն ժամացույցին, որով իրենց ժամացույցն են ուղղում քաղաքի բնակիչները: Եթե այդ ժամացույցի անկանոն աշխատանքի պատճառով ժամանակը ճիշտ ցույց չի տրվում, ապա քաղաքի բոլոր բնակիչների ժամացույցներն աշխատում են սխալ: Քարոզիչի կյանքի սխալ ժամանակացույցը կարող է ազդել համայնքի-ծովսի սխալ ժամանակաընթացքի վրա՝ առաջնորդելով նրանց դեպի մեղսագործություն:

Վատ քարոզիչը նման է ջրի, որն անցնելով ժանգոտած խողովակի միջով՝ փոխում է իր քաղցր համը: Նույնպես և Ավետարանական խոսքերը անցնելով հոգեկան անառողջ շրթներից՝ կարող են այնքան անհամանալ, նվաստանալ, որ օգնելու փոխարեն վնաս հասցնեն լսողներին: Իրավացի էր մեծն Գրիգոր Նազիազանցին, երբ ասում էր. «Ձեռքը, որը պիտի սրբի ուրիշներին, նախ ինքը մաքուր պիտի լինի»:

Քարոզիչ նշանակում է նաև ուղեկից, որի պարտականությունն է պապական սրտերին առաջնորդել դեպի կյանքի աղբյուրը, հոգու-հավատքի ծարավը հագեցնելու համար: Մակայն ինչ զգացում կարող են ունենալ ծարավյալները, երբ առաջնորդողը նրանց առաջնորդի չորացած աղբյուրի մոտ, և հոգիները մնան անհագուրդ:

Շատ աստվածաբանների համոզմամբ, եթե քարոզիչը ինքը մեղք գործելով ընկել է հանցանքի մեջ, ապա ապաշխարության հատուկ շրջան անցնելուց հետո միայն իրավունք պիտի տրվի նրան կրկին քարոզելու: Քանի որ քարոզիչը ոչ այլ ոք է, քան նա, ով մարմնավորում է Քրիստոսին, դեռ նույնիսկ ավելին, Քրիստոսին որևէ մեկը Հայր անվանումը չտվեց, մինչդեռ քարոզիչ վարդապետին կոչում են թե՛ հայր և թե՛ սուրբ:

գ. Քարոզիչը որպես քրիստոնյա:

Յուրաքանչյուր անձ, որի նպատակը որևէ մի գաղափարախոսության խոսնակը կամ մունետիկը, ուսուցիչը կամ ուսմունքի հանդիսանալն է, պայման է իր հետևած գաղափարի ամբողջական յուրացումը, որպես ուսմունք, նրա ողջ կանոնական համակարգով ու ավանդական կառույցով և՛ հետևողականությունը: Առավել ևս, երբ այդ ուսմունքը պարզ մարդկայինից տարբերվում է իր աստվածային լինելով, որի նպատակը մարդուն մահկանական վիճակից հավիտենական վիճակի փոխադրումն է: Հիսուսի «Գնացե՛ք ուրեմն աշակերտ դարձրե՛ք բոլոր ազգերին» (Մատթեոս ԻԸ 19) պատգամով հիմքը դրվեց աստվածային նպատակի շարունակականության, որի սկիզբը Հոր միածին Որդու հայտնությամբ սկսված փրկագործությունն էր. «Աստված այնքան սիրեց աշխարհը, որ մինչև իսկ Իր միածին Որդուն տվեց, որպեսզի ով Նրան հավատա, չկորչի, այլ ընդունի հավիտենական կյանքը» (Հովհ. Գ 16): Ուրեմն Քարոզիչը, որպես մարմնավորողը Քրիստոսի, Ում գերագույն նպատակն էր մարդկանց դարձնել «կատարյալ, ինչպես Երկնավոր Հայրն է կատարյալ», որպեսզի «Ես կենդանի եմ, և դուք էլ կենդանի եք լինելու» գաղափարը, ուսմունքից վերածվեր կյանքի: Եվ այս բոլորի կյանքի կոչողը, համոզողը այսօր հենց ինքը՝ քարոզիչն է: Քարոզիչ նշանակում է Հիսուս, Հիսուս նշանակում է կատարյալ Որդին

Աստուծո, քանզի «Ես ձեզ ասացի, թե աստվածներ եք դուք և բոլորդ էլ Բարձրյալի զավակներն եք» (Մաղմոս 2Ա 6):

Քարոզիչը ամեն բանից առաջ պիտի լինի կատարյալ քրիստոնյա, նախ իր հավատքով, ապա փրկագործության հաղորդակցությամբ, որպեսզի դրանով կարողանա իրականացնել բանական հոտի՝ խոստում ոչխարների փրկագործությունը: Նա իրեն պիտի զգա կատարյալ ժառանգակից Քրիստոսի, Ում եղբայր է կոչում, Աստծուն Հայր հայտարարելով (Հայր մեր որ յերկինս ես) և դառնում ոչ թե պարզ խոսնակ Աստուծո Բանի, ինչպես մարգարեներն էին, այլ եղբայրակից Քրիստոսի, պայմանավ, որ այդ եղբայրակցությունը չլինի «Անառակ որդու» կերպարի նմանությամբ, այլ ավագ եղբոր նվիրվածությամբ: Ոչ ոք չստացավ այն, ինչ ստացանք մենք՝ առաքյալների շառավիղներս. «Նրանց վրա փչեց և ասաց. Առեք Սուրբ Հոգին. եթե մեկին ներեք իր մեղքերը, թող ներված լինի, և եթե չներեք մեկի մեղքերը, թող ներված չլինի» (Հովհ. Ի 22-23): Քարոզիչը այս հավատքով և գիտակցությամբ պիտի մոտենա իր կոչմանը, քանի որ քարոզիչ հոգևորական նշանակում է աստվածային գործություն ստացած անձ: Ում ենք դիմում ասելով. «Տէր թող զմեղս մեր», Աստծուն, իսկ այս պարագայում մենք ենք դառնում այդ գործության տերը. «Եթե մեկին ներեք իր մեղքերը, թող ներված լինի»: Ուրեմն առանց կատարելության ձգտման անհնարին է կատարելության առաջնորդելը:

Մեծագույն դժբախտությունը միաբան-հոգևորականի կյանքում սկսում է այն ժամանակ, երբ նա ի վերուստ տրված կոչում չի զգում իր մեջ, որով աներևակայելի է դառնում այն բեռի ծանրությունը, որը դրվում է նրա ուսերին: Նա կարող է բնական տաղանդով փայլել խոսքի մեջ, սակայն եթե բարձր չէ նրա հոգևոր աշխարհը, լավ է այդպիսին հրաժարվի քարոզելուց այնքան ժամանակ, մինչև որ զգա, թե դա պարզ պարտականությունից վեր է ածվել աստվածային կոչումի: Այս մասին իրապես արժեքավոր են Պոլսո Պատրիարքներից Խորեն արքեպիսկոպոս Աշըգյանի «Կենցաղ Եկեղեցականաց» գրքի հետևյալ տողերը. «Քահանայութեան պատիւն ի մարդկեղէն ընտրութենէ չէ, այլ կոչումն աստուածային է: Առանց Աստուծոյ կոչման այս պատույն յանդգնողներն սրբապղծութիւն ըրած կը լինեն, խաբեբաներ են ինքնակոչ եղողներն, որ փոխանակ իրենց անունովն խօսելու, յանուն Աստուծոյ կը խօսին, մինչդէռ յԱստուծոյ կոչեցեալ չեն, Աստուծոյ զօրութիւնը կը գործածեն, մինչդէռ Աստուած Իր զօրութիւնն անոնց չէ տուեր. Աստուծոյ գործը կը գործենք, կ'ըսեն, մինչդէռ Աստուած Իր գործն անոնց չէ հաւատացեր. մարդ Աստուծոյ ենք կ'ըսեն, մինչդէռ Աստուծոյ առաքեալը չեն» («Գանձասար» հանդես, Երևան, 1993, էջ 8):

Եվ որպեսզի այս ամենից զերծ լինի միաբան քարոզիչը, կոչման հետ մեկտեղ նրան հարկավոր է մանանեխի հատիկի չափ հավատք, անշարժությունը տեղից շարժելու և համոզում, որ «իմ լուծը քաղցր է եւ բեռը՝ թեթեւ»: Իսկ եթե բացակա են թե՛ հավատքը և թե՛ կոչումը, ապա միաբան-քարոզիչի կյանքում դադարում է «Մնացե՛ք Իմ մեջ, եւ Ես՝ ձեր մեջ» (Հովհ. ԺԵ 4) պատգամը գործելուց: Աներևակայելի է դառնում «Իմ լուծը ձեր վրա վերցրե՛ք»-ի (Մատթ. ԺԱ 29) քաղցրությունը, այլ զգալի է դառնում այդ լուծի ծանրությունը միայն, որը դրվում է նրա ուսերին: Եվ «բեռնավորվածներ, ես ձեզ կը հանգստացնեմ»-ի փոխարեն, այն դառնում է տանջանք և տառապանք:

Եվ այդժամ ի՞նչ կարող է անել այն անձը, ով ընդունելով հոգևորականի սուրբ

կոչումը, իր ողջ կյանքում չի գտնում ուժը այն ի կատար ածելու: Ինչպե՞ս կարող է նա քարոզի միջոցով մոտեցնել և ջերմացնել հավատացյալների սրտերը առ Հիսուս Քրիստոսը, երբ ինքն իրեն խորթացած է զգում Տիրոջ փրկչական սիրուց:

Իրավացի են նրանք, ովքեր քարոզչին համարում են դեպի դրախտ առաջնորդող ուղեկից, սակայն պատկերացրեք՝ ինչ կլինի, եթե նա իր տկար հավատքի պատճառով ուղեկցի հավատացյալներին ոչ թե դրախտ, այլ՝ դժոխք: Եվ դա կարող է պատահել, երբ անձը ուրիշներին սովորեցնելով չմոռանալ Փրկչին, ինքը իր սրտում Նրան չհիշի: Երբ ուսուցանելով ուրիշներին հավատքի մասին, ինքն իր գործերով կորցնի հավատքը: Երբ մտահոգ ուրիշների հոգևոր սնունդով, ինքը նախապես սովամահ լինի, քարոզելով այլոց մեծ ճշմարտությունների մասին, ինքը մնա դրանց անհաղորդ: Հաճախ կարծում ենք՝ եթե քարոզիչ ենք և մի քիչ էլ բանասաց, ապա փրկված ենք և արժան Երկնքի Արքայության: Ոչ, փրկությունը մարդուն տրվում է նրա խորհրդի, բանի և գործոց ամբողջական և կատարյալ լինելու պարագային:

դ. Քարոզիչը որպես մտավորական:

Ամեն մեկ քարոզ քարոզիչի տրամաբանության արդյունքն է՝ մտքի հղացումը և զգացմունքի ծնունդը: Որպես այդպիսին պայման է, որ յուրաքանչյուր քարոզիչ զարգացնի իր մտային կարողությունը և ջերմացնի իր զգացմունքայնությունը, որպեսզի այդ երկուսը միանալով Սուրբ Հոգուց ստացած շնորհին, կարելիություն տան քարոզչին իր խոսքը համոզեցուցիչ դարձնելու:

Մեզանից յուրաքանչյուրը հաճախ է կրկնել մաշտոցյան առաջին թարգմանության տողերը. «Ճանաչել զիմաստություն եւ զխրատ, իմանալ զբանս հանճարոյ», սակայն որքանով ենք անդրադարձել ավելի վերջ ասվածին. «որպեսզի դրանք լսելով, իմաստունն ավելի իմաստուն լինի, իսկ հանճարեղը առաջնորդություն ստանա»:

Քիչ վերը նշեցինք, թե քարոզիչ միաբան նշանակում է մարդկային մտքի և հոգու առաջնորդող: Ուրեմն որպես այդպիսին՝ քարոզիչ միաբանը պիտի ճանաչի իմաստունների, այսինքն փիլիսոփաների գործերը, նրանց գաղափարները, պիտի իմանա գործնական կյանքից ծնված խրատների իմաստը, քանզի ինքը ևս քրիստոնեական խրատող է, իմանա հանճարեղ մարդկանց մտքերը, խոսքերը, որպեսզի հաճարներին հաղորդակից դարձնելով իր բանական հոտի անդամներին՝ պարզ ոչխարային վիճակից առաջնորդի նրանց դեպի Գառն Աստուծո լինելու վիճակին: Նա պիտի կարողանա իմաստությունն ամբարած «ընկալել խոսքի բարդ դարձվածքները», որպեսզի ազատի իր ժողովրդին ազգային, քաղաքական, կրոնական կյանքից ներս պատրաստվող, կազմակերպվող և ինչ-ինչ անվանումներով մեզ մատուցվող փորձություններից:

Որպես «ճշմարիտ արդարությունը» արժեվորող, նա պիտի «ուղղի իրավունքը», այսինքն իմանալով սահմանները արդարության ու իրավունքի, իր խոսքով-քարոզով դաստիարակի իրապես արժանի հետևորդներ: Քանզի դա է մեզանից պահանջվում. «Պարզամիտներին խորագիտություն և երիտասարդներին միտք ու հանճար տալ»:

Հին եգիպտացիներն իրենց քրմերին ընտրում էին այն աշակերտներից, որոնք լավագույնս էին տիրապետում իրենց իմաստասերների գործերին և նրանց մեծա-

րում էին այնպես, որ հետագայում իրենց արքաներին քրմերի միջից էին ընտրում: Ուրեմն քարոզիչ նշանակում է անձ, որի համար «փմաստությունը պիտի հաճելի լինի քո ականջին, սիրտդ պիտի հաճույք գտնի գիտության մեջ» (Առակ Բ 2), ինչու, որ լուրի հետև «փմաստությունն ավելի թանկ արժե, քան ոսկու և արծաթի գանձերը» (Առակ Գ 14):

Է. Հին Կտակարանը, քարոզի հիմք և այստեղ առկա պատվիրանները:

Մինչ «Հին Կտակարանը որպես քարոզի նյութ» խնդրին անդրադառնալը, նախ կուզենայի փոքրիկ ակնարկով անդրադառնալ Հին Ուխտին: Այն մի նոր ազգի հիմնադրման նպատակով կնքված դաշինք է Աստծո և Աբրահամի միջև, ազգ, որը պիտի հռչակվեր «Աստծո սուրբ ժողովուրդ», որին օրինապահության և պատվիրանապահության պարագայում տրվում էր ամենայն իշխանություն, դառնալու բոլոր ազգերից ամենաբարձրը: Այդ Ուխտը կնքվում էր երկու պայմանով.

Առաջին. «Քեզ մեծ ցեղի նախահայր պիտի դարձնեմ, պիտի օրհնեմ քեզ, պիտի փառավորեմ քո անունը, և դու օրհնյալ պիտի լինես:

Պիտի օրհնեմ քեզ օրհնողներին, իսկ քեզ անիծողներին պիտի անիծեմ:

Քեզնով պիտի օրհնվեն աշխարհի բոլոր ժողովուրդները» (Ծննդ. ԺԲ 2-3):

Երկրորդ. «Քո հետնորդներին եմ տալու այդ երկիրը՝ եգիպտացիների գետից մինչև Եփրատ մեծ գետը» (Ծննդ. ԺԵ 18):

Ուխտի կնքումից անմիջապես հետո տրվում են Աստվածային հետևյալ խոստումները.

ա. «Քեզ հովանավոր պիտի լինեմ, և քո վարձը չափազանց շատ պիտի լինի» (Ծննդ. ԺԵ 1):

բ. «Նայի՛ր երկնքին ու հաշվի՛ր աստղերը, ...այդքան է լինելու քո սերունդը» (Ծննդ. ԺԵ 5):

գ. «Ես դատաստան պիտի տեսնեմ այն ազգի հետ, որը պիտի ստրկացնի (քո սերնդին): Քո սերունդը այստեղ պիտի վերադառնա բազում հարստությամբ (Ծննդ. ԺԵ 13-14):

դ. «Բազում ազգերի նախահայր եմ դարձնելու քեզ: Քո սերունդը շատ եմ աճեցնելու, քեզնից բազում ազգեր պիտի սերեմ, ու թագավորներ պիտի ծնվեն քեզնից (Ծննդ. ԺԷ 56):

ե. «Քո հետնորդներին եմ տալու այս երկիրը» (Ծննդ. ԺԲ 7):

Ուրեմն այս էր Աստծո և Աբրահամի միջև կնքված այն Ուխտը, որի համար մաքառեց հրեա ժողովուրդը իր ողջ պատմության ընթացքում, և ուր էլ որ նա գնաց, պահեց այդ Ուխտի ոգին, և ուր որ հաստատվեց, ջանաց այդ ոգուն համապատասխան օրենքներ շարադրել, որոնք առավել պիտի ամրագրեին Աստծո և Աբրահամի միջև կնքված Ուխտը: Եվ որպեսզի այդ Ուխտը ավելի ամուր կապեր ունենար, դրանք հանգուցվեցին Աստծո կողմից հայտնված օրենքներով: Օրենքների ուխտակիրն այս անգամ եղավ Մովսեսը՝ Եգիպտական պալատում կրթություն ստացած, ամբոխին ազգ դարձնելու գիտակցությամբ լեցուն այն առաջնորդը, որին ոչ միայն Աստծո խոսնակի դերը տրվեց, չնայած իր ծանրալեզվությանը, այսինքն՝ թիկնությանը, այլև նա «աստված» հայտարարվեց. «Տերն ասաց Մովսեսին. «Ահա ես քեզ

փարավոնի համար *մի աստված դարձրի*, իսկ քո եղբայր Ահարոնը թող լինի քո մարգարեն» (Ելք Է 1): Ուրեմն Աբրահամով սկսած մեկ անձով ազգը, Մովսեսի ժամանակ դառնալով մոտ կես միլիոն, կարիքն ուներ ամբոխային վիճակից հավաքական վիճակի վերածվելու, որն արվեց սկզբնական 10 օրենք-պատվիրանների միջոցով, որոնց հիմքը Համուրաբիի օրենսդրությունն էր (ի դեպ բաբելոնյան օրենսդրությունը ժառանգված էր շումերներից, իսկ վերջիններս էլ դրանք վերցրել էին Արատտա պետության օրենքներից, որին կոչում էին «Սուրբ օրենքների երկիր»), իսկ ավելի ուշ նաև շարադրվեցին մնացյալ կանոնները, օրենքները, պատվիրանները: Եվ դրանց շնորհիվ սկսված, ամբոխից ազգի վերածելու ժամանակաշրջանն իր գազաթնակետին հասավ, երբ ճշտվեց այն ծրագիրը, որը ազգային կառույցի հիմքը պիտի հանդիսանար: Դա մենք կոչեցինք Հնգամատյան, իսկ հրեաները՝ Թորա: Այն Բյուզանդ Եղիայանի խոսքերով, «կը բովանդակէ օրենսդրական գործեր, գրեթէ օրենքի բոլոր ճիւղերով. անհատական, բարոյական, կալուածական, երկրագործական, ընտանեկան, զինուորական, տօնական, ծիսական, մարդասիրական, պետական» (Քննական Պատմութիւն Սուրբգրական ժամանակներու, Անթիպաս-Լիբանան, 1972, էջ 16), իսկ մենք կավելացնենք նաև՝ քաղաքական:

Բոլոր նրանք, որոնք կհամարձակվեին խախտել այնտեղ Աստծո անունով շարադրված որևէ օրենք կամ պատվիրան, դատապարտված էին մահվան: Նախ վկաները թող քար նետեն նրա վրա՝ սպանելու նրան, ապա՝ ամբողջ ժողովուրդը: Դրանով դու չարը ձեր միջից վերացրած կլինես» (Բ Ծրենք ԺԷ 7): Եվ ինչո՞ւ էին կարևոր այդ օրենքների և պատվիրանների կատարումը, քանի որ »Եթե լսեք մեր Տեր Աստծու ասածները, ... հետևելով նրա պատվիրաններին՝ կատարեք դրանք, ապա **ձեր Տեր Աստվածը ձեզ երկրի բոլոր ազգերից ավելի բարձր կդասի**» (Բ Ծրենք ԻԸ 1): Եվ որպեսզի դա տեղի ունենար, հարկավոր էր բառացիորեն իրականացնել այն, ինչը Տերը նրանցից պահանջում էր, այսինքն՝ «Երբ քո Տեր Աստվածը քեզ տանի այն երկիրը, ուր պիտի մտնես այն ժառանգելու համար, և քո առջևից հալածի մեծ ու բազմաթիվ ազգերին ... և նրանց մատնի քո ձեռքը, կհարվածես, կոչնչացնես նրանց: Նրանց հետ ուխտ չդնես և նրանց չխնայես: Նրանց հետ խնամություն չհաստատես. քո աղջկան նրա որդուն չտաս, նրա աղջկան քո որդու համար կին չառնես, ... **Դու ես քո Տեր Աստծու սուրբ ժողովուրդը**, և քո Տեր Աստվածը քե՛զ է ընտրել, որ դու լինես **Իր սեփական ժողովուրդը**» (Բ Ծրենք Է 1-6): Ուրեմն, եթե այդպես է, ապա «Շատ ազգերի փոխ կտաս, բայց ինքդ պարտք չես վերցնի, բազում ազգերի կտիրես, բայց քեզ չեն տիրի» (Բ Ծրենք ԺԵ 6): Այս և նմանատիպ օրենքների գորությունն էր, որ ուժը պիտի հանդիսանար Աստծո սուրբ ժողովրդի, իրականացնելու աստվածային Ուխտը: Եվ բոլոր այն պարագաներում, երբ սրբության սահմանագծի մեջ պահող օրենքներից դուրս էր գալիս ժողովուրդը՝ պատժվում էր, ինչպես պատժվեցին Ոսկե Հորթի երկրպագողները. «Ձեզնից յուրաքանչյուրը թող սպանի իր եղբորը, յուրաքանչյուրը՝ իր ընկերոջը, յուրաքանչյուրը՝ իր մերձավորին: ... Այդ օրը ժողովրդի միջից շուրջ երեք հազար մարդ կոտորվեց» (Ելք ԼԲ 27-28):

Ուրեմն աստվածային ուխտի հիմքը հանդիսացող յուրաքանչյուր պատվիրան պետք է տառացիորեն պահպանվեր: Եվ այդ պատվիրանների իրագործման համար կային հատուկ հսկողներ: Դրանք Աստծո մունետիկներն էին և կոչվում էին մարգարեններ: Նրանք, որպես հաջորդները Մովսեսի, գիտեին Տիրոջ պատգամը. «Ես Իմ

մատյանից կջնջեն նրան, ով մեղանչել է Իմ դեմ» (Ելք ԼԲ 33), որով դառնալով խոսնակները Բարձրյալի, մարգարեները ջանում էին կանխել ժողովրդի մեղանչանքն այնպես, որպեսզի այն բնաջնջման պատճառ չդառնար: Որով և, Հին Կտակարանում գոյություն չունի քարոզ հասկացողությունը, այլ կա հայտնել, ծանուցանել, ազդարարել իմաստը: Աստվածաշնչյան Հանրագիտարանում ասվում է. «Հինկտակարանյան մարգարեները իրենց համարում էին Աստծո բերանը կամ շուրթերը: Նրանք Աստծո կամքի հայտնողներն ու ծանոթացնողներն էին»: Մարգարեները հավաքական կյանքի խախտվածության, բարոյական կյանքի կերպարանափոխման ժամանակ «աղաղակողներն ու տագնապողներն էին»: Այսինքն՝ Հինկտակարանյան «մարգարեները ոչ թե իրենց, այլ Աստծո խոսքի ծանուցիչներն էին» (Lexikon zur Bibel, R. Brockhaus Verlag, 1988 Wuppertal, s. 1086):

Այսպիսով, ո՞ր է Հին Կտակարանի արժեքը, այսօրվա առումով, որպես ուղեցույց և հիմք քարոզխոսության, եթե դրանում ամփոփված են միայն հրեա ժողովրդի ազգային, քաղաքական ծրագրերին վերաբերող մտքեր: Ըստ իս, ամենահատկանշականն այնտեղ, որը իրապես արժանի է մեծագույն ուշադրության, Աստծո նկատմամբ ունեցած հավատքն է, նվիրումն ու հավատարմությունն է, վստահությունն ու փրկության հույսն է. «Քո վրա հույս դրին հայրերը մեր, ... և Դու փրկեցիր նրանց» (Սաղմ ԻԱ 59): Չնայած երբեմն խախտելով, երբեմն մեղանչելով, սակայն միշտ վերադառնալով և վերագտնելով այն: Որով պատահական չէ բնութագրումը Սուրբ Գրոց բառարանի, թե «Մեծ փրկություն գործել Իսրայելի մեջ, կը նշանակե փրկել գԻսրայել մօտալուտ վտանգէ մը, [կամ] ստանալ մեծ յաղթություն թշնամույն վրայ» (Բառարան Սուրբ Գրոց, Կ. Պոլիս, 1881, էջ 564) և այդ բոլորը, ըստ նրանց, Տիրոջից է, քանզի «Ես հույսս դրի Տիրոջ վրա, պիտի ցնծամ և ուրախանամ Քո տված փրկությամբ» (Սաղմ. Լ 8): Քրիստոնեական առումով Հին Կտակարանը կարևորվում է այնտեղ առկա Մեսիայի մասին մարգարեություններով, կարևորվում է Առակացի խրատներով, Սաղմոսների աղերսալի աղոթքներով, որոնք էլ քարոզխոսության հիմնական նյութերն են հանդիսանում, չնայած մեսիականության հարցում տարբեր են հրեական և քրիստոնեական պատկերացումները: Մեսիան հրեաների համար քաղաքական փրկիչ է, Դավթի թագավորության վերականգնողը, պետության վերահիմնողն ու գերությունից ազատողը: Եվ որպես այդպիսին, Հին Կտակարանյան աստվածաշնչությունը միջոց ու կերպ է հավաքական կյանքը գորացնելու, նախապայման ունենալով ազգային միասնականությունը: Հանուն հավաքական գոյակցության առաջխաղացման, անհատական շահի նվաստացմամբ և հավաքական շահի գերադասմամբ: Ինչպես գրում է Բյուզանդ Եղիայանը, «Իսրայել իր ցեղային ինքնությունը անկորուստ պահպանելու ոյժ ունեցող եւ աշխարհի մէջ մշակութային առաքելութիւն մը կատարելու կոչում ստացած ժողովուրդ մըն է, որ թէեւ հատուածուի ու կոտորակուի, պիտի չկործանուի, այլ միշտ վերստին պիտի կանգնի՝ աշխարհի մէջ շարունակելու համար իր ցեղային գոյութիւնը եւ միաստուածեան առաքելութիւնը» (Քննական պատմութիւն Սուրբ Գրային ժամանակներու, էջ 16):

Ահա այստեղ է ոգին, ուժը ներշնչանքի և նյութը, որով միաբան քարոզիչը, որպես ուսուցիչ, պիտի ուսուցանի հայ հավատացյալներին այն, ինչը մեր պարագայում էլ մեզ հասցնի այնպիսի վիճակի, որ հայության համար ևս կատարվի նույնատիպ խոստովանություն. թե հայը «թէեւ հատուածուի ու կոտորակուի, սակայն պի-

տի չկործանուի», իսկ դրա համար հարկավոր է, որ Սուրբ Գիրքը միայն ընթերցողի հիացումը շարժող ընթերցանության գիրք չլինի, այլ լինի քարոզի, ուսուցման, ներշնչանքի դասագիրք, որի վրա հիմնվելով մենք էլ կարողանանք զորավոր հավատքի և հատկապես օրինապահության միջոցով գտնել կերպը Աստծո ժողովուրդը լինելու: Իսկ դրա համար հարկ է մեզ կա՛մ նմանատիպ օրենքներ ստեղծել, կա՛մ էլ մեր զորավոր քարոզությամբ համոզել հավատացյալներին, որ նրանք Սուրբ Գրքի օրենքները պահեն ու իրականացնեն այնպես, ինչպես մեզ սովորեցնում է այդ Մատյանը:

Մեզանից ո՞վ կարող է տարակուսել Սուրբ Գրքի այնպիսի օրենքների կարևորության վրա, որպիսիք են.

ա. Թող ձեր մեջ կարիքավորներ չլինեն (Բ Օրենք ԺԵ 4):

բ. Եթե ... մի տղամարդ կամ կին, դրժի Աստծո ուխտը, պաշտի օտար աստվածների, ... ապա խստորեն հարցովորձ կանես: Եթե իրոք ... պղծությունը կատարվել է Իսրայելի մեջ, ապա չար բանը կատարած տղամարդուն կամ կնոջը կբերես ձեր քաղաքի դռների մոտ, և քարկոծելով կսպանեք նրանց: Դրանով դու չարը ձեր միջից վերացրած կլինես (հմմտ Բ Օրենք ԺԵ 2-7):

գ. «Քո իսրայելացի եղբայրների՝ ց քեզ իշխան կնշանակես: Չհամարձակվես նշանակել օտար մի մարդու, որը քո եղբայրը չէ: Նա թող ... չգայթակղվի և շատ արծաթ ու ոսկի չկուտակի: Երբ իր իշխանության գլուխ անցնի, նրա համար կգրես օրենքներ, նա դրանք պետք է կարդա և սովորի երկնչել քո Տեր Աստծուց,... չմեծամտանա իր ցեղակիցների մոտ, պատվիրաններից աջ կամ ձախ չշեղվի» (հմմտ Բ Օրենք ԺԵ 15-20):

Ցավոք, պիտի նշեմ, որ նմանատիպ օրենքների բացակայությունը մեզանում մեր ժողովրդին հասցրեց այն վիճակին, որ վիճակին էլ մենք հասցրել ենք մեր Երկիրը: Եվ ինչո՞ւ, ահա այս հարցն է, որ կարիքն ունի իր պատասխանին:

Աստվածաշնչյան օրենքների կիրառումն էր, որ հրեա ժողովրդին հնարավորություն տվեց շուրջ երկու հազար տարի առանց հայրենիքի գոյատևելու՝ միշտ միևնույն նշանաբանը կրկնելով. «Գալ տարի դեպի Երուսաղեմ», մինչև ավելի ուշ կարողացան իրականացնել հայրենիքի վերստեղծումը: Ուրեմն, ըստ իս, մերօրյա միաբան քարոզիչը իր քարոզներով մեր ժողովրդին պիտի առաջնորդի ոչ թե ձուլման ողբի կանտատոյն հյուսած, վերացական քարոզներով դեպի անորոշություն, այլ Սուրբգրային օրենքների գործադրման նույնատիպ ոգով և փրկության կարգախոսով, թե «Գալ տարի դեպի Սրբազնասուրբ լեռը Արարատ», մեր բանական հոտին դաստիարակի այնպես, որ նա կարողանա Հիսուսի խոսքերով «Աստծունը տալ Աստծուն, իսկ Կայսրինը՝ Կայսեր»:

գ. Քարոզի նյութը, Հին և Նոր Ուխտերի տարբերությունը, քավության նոխազի նույնությունը և Հիսուս Քրիստոսի փրկագործության խորհուրդը:

Հին Ուխտը կնքվեց Աստծո և մարդու միջև, անհատից հավաքականություն-ազգ ստեղծելու նպատակով, ուր նվազեցնելով անհատի շահը, գերադասվեց հավաքականության-ազգային շահը: Նոր Ուխտով հավաքականության մեջ անհատի դերը բարձրացնելով՝ ջանք թափվեց նոր իմաստ տալ հավաքական կյանքին:

Հին Կտակարանը հավաքական կյանքի երկրային արժեվորումն էր, Նոր Կտակարանը՝ անհատական կյանքի կատարելությամբ երկնայինի գերադասումը, որը հստակ երևում է մեսիական հարցի երկու տարատես մոտեցումներում: Հին Ուխտի Մեսիան երկրային թագավոր է, որն այնպիսի իշխանություն պիտի ապահովի հրեա ժողովրդի համար, որ նա «երկրի բոլոր ազգերից ավելի բարձր» դասվի (Բ Օրենք ԻԸ 1) և «բազում ազգերի տիրի, բայց իրեն ոչ ոք չտիրի» (Բ Օրենք ԺԵ 6): Մինչդեռ Նոր Ուխտի Մեսիան, որի «թագավորությունը այս աշխարհից չէ» (Հովհ. ԺԸ 36), ժամանակավորի մեջ հավիտանականի բացահայտողն է: Եվ դրա իրականացման համար հարկավոր է, որ անհատը կարողանա երկրային, նյութական, ֆիզիկական և զգացմունքային ժամանակավորը հակադրել հոգեկան, երկնային, աստվածային հավիտենականին, այսինքն՝ առնելով խաչը, հետևել Հիսուսի նեղ և դժվարանցանելի ուղուն, որի վերջավորությունը աննյութական թագավորությանը ժառանգակից լինելն է:

Նոր Ուխտը կնքվեց՝ որպես աստվածային սիրո արդյունք, գահավիժած արարածին կրկին գահին բազմեցնելու նպատակով. «Աստված այնքան սիրեց աշխարհը, որ մինչև իսկ Իր միածին Որդուն տվեց, որպեսզի, ով Նրան հավատա, չկորչի, այլ ընդունի հավիտենական կյանքը» (Հովհ. Գ 16): Այս խոսքերով հավիտենականությունը կորցրած մարդուն հնարավորություն տրվեց վերադառնալու դեպի հավիտենականություն, այսինքն՝ փրկագործության ընձեռում Երկնավոր Հոր կողմից: Այստեղից էլ բխում է երկու Ուխտերի հիմնական տարբերությունը: Առաջին Ուխտը կնքվեց նախանձոտ Աստծո հետ. «Ե՛ս եմ քո Տեր Աստվածը՝ մի նախանձոտ Աստված. հայրերի մեղքերի համար պատժում եմ որդիներին» (Ելք Ի 5), երկրորդը՝ սիրող Հոր հետ. «Աստված այնքան սիրեց աշխարհը, որ ... Իր միածին Որդուն տվեց, որ ով Նրան հավատա, չկորչի»:

Եթե առաջինում Աստված անգութ, դաժան և չներող Տեր է, որի հրահանգներն են կոտորել, ջնջել և վերացնել առանց խղճալու, ապա երկրորդում Նա Հայր է ներողամիտ («օրվա մեջ յոթն անգամ յոթանասուն ներող», Մատթ. ԺԸ 22), ողորմած («առաջին քարը թող նետի նա, ով մեղք չունի», Հովհ. Ը11), գթառատ («որդիս մեռած էր և կենդանացավ, կորած էր և գտնվեց», Դուկ. ԺԵ 24):

Ի տարբերություն Հին Ուխտի, ուր կարևորագույնը նյութական և քաղաքական շահն է. «Երբ (Եգիպտոսից) դուրս գաք, ձեռնունայն դուրս չգաք: Ամեն մի կին իր հարևանից ... թող ուզի ոսկե ու արծաթե անոթներ եւ զգեստներ: ... Այդպիսով կողոպտած կլինեք եգիպտացիներին» (Ելք Գ 21-22), Նոր Ուխտում նախընտրելին և ցանկալին հոգևոր շահն է. «Գանձեր մի՛ դիզեք երկրի վրա, ... այլ գանձեր դիզեցե՛ք երկնքում» (Մատթ. Զ 19-20):

Փրկագործության խորհրդի պարագայում, սակայն, նույնանում են Հին և Նոր Ուխտերի քավության կերպերը: Փրկագործությունն իրականացնողը նույն Գառն է, որն ուրիշի գործած մեղքի համար զոհվում է, Իր արյունն է թափում, մեղավորին մեղքերից մաքրելու, սրբելու և այդ կերպ փրկելու համար: Համաձայն Հին Ուխտի՝ քավության համար զոհաբերված խոյի մսին «Ով որ ձեռք տալ..., կը սրբանայ» (Ղևտ. Ը 27), քանի որ մաքրության ու սրբության նախապայմանը զոհի թափած արյունն է համարվում: Ահարոնին և նրա ծիսական զգեստները Մովսեսը սրբագործում է քավության զոհի արյունով. «Մովսեսը, վերցնելով ... զոհասեղանի վրայի

արյունից, ցանեց Ահարոնի ու նրա զգեստների ... վրա: Նա **սրբազործեց** Ահարոնին ու նրա զգեստները» (Ղևտ. Ը 30-31):

Նոր Ուխտի մեջ նույնը տեղի է ունենում վերջին ընթրիքի ժամանակ. «Խմեցե՛ք դրանից բոլորդ, որովհետև այդ է նոր ուխտի Իմ արյունը, որ թափվում է շատերի համար՝ իրենց մեղքերի թողության համար» (Մատթ. ԻԶ 28), այսինքն մաքրվելու սրբազործվելու համար:

Հին Ուխտի մեջ մեղք է համարվում, երբ անձը կամ հավաքականությունը «ակամա մեղք է գործում Տիրոջ որևէ պատվիրանի դեմ» (Ղևտ. Դ 2): Կարևոր չէ, թե մեղավորը օժված քահանայապետ է, որի «գործած մեղքը տարածվում է ամբողջ ժողովրդի վրա» (Ղևտ. Դ 2), «Իսրայելի ողջ ժողովուրդն» է, որն «անգիտակցաբար խախտում է Տիրոջ պատվիրաններից մեկնումեկը» (Ղևտ. Դ 13-15), իշխան է, թե՛ ժողովրդից պարզ մեկը, պայման է, որ «նա գիտակցի իր կատարած մեղքը», ապա նոր միայն «զոհաբերի մի նոխազ» (Ղևտ. Դ 23): «Նա իր ձեռքը թող դնի նոխազի գլխին» (Ղևտ. Դ 24), որովհետև դա էր զոհաբերության ընդունված այն կերպը, որով մեղավորի գործած մեղքն իր վրա էր վերցնում քավության նոխազը: Մորթելով զոհը. «նրանք (մեղք գործածները կամ գործածը) իրենց մեղքերի թողություն» (Ղևտ. Դ 26) էին ստանում: Ահա այս բոլորից հետո հստակ է դառնում, թե ինչու էր Հովհաննես Մկրտիչը բարձրաձայնում. «Ահա՛ Գառն Աստուծո, որն (Իր վրա է) վերցնում աշխարհի մեղքը» (Հովհ. Ա 29):

Այսպիսով Նոր Ուխտի փրկագործության խորհուրդը դառնում է շարունակականությունը Հին Ուխտի: Հնում «Տիրոջ որևէ պատվիրանի դեմ» (Ղևտ. Դ 2) գործելը համարվում էր մեղք, որի համար կարիքը կար քավություն ստանալու, նույնն էր պարագան նաև Նոր Ուխտում. «Եթե կամենում ես հավիտենական կյանքը մտնել, պահի՛ր պատվիրանները» (Մատթ. ԺԹ 17): Սակայն գործված մեղքից հետո, եթե անձը «գիտակցի իր կատարած մեղքը», թող «զոհաբերի մի նոխազ» (Ղևտ. Դ 23), որպեսզի «մեղքերի թողութիւն» (Ղևտ. Դ 26) ստանա, (չնայած Առակացում «Ողորմությամբ ու հավատով է մեղքը մաքրվում», Առակ. ԺԵ 27), իսկ Նոր Կտակարանում այն մի պարագայում տեղի է ունենում «ապաշխարության մկրտությամբ՝ մեղքերի թողության համար» (Մարկ. Ա 4-5), իսկ մեկ այլ պարագայում՝ քավության կերպը Հին Ուխտի նմանությամբ է իրագործվում, սակայն ավելի կատարյալ ձևով:

Քանի որ «Մի՛ կարծեք, թե Օրենքը կամ մարգարեներին ջնջելու եկա. չեկա ջնջելու, այլ՝ լրացնելու» (Մատթ. Ե 17), հետևաբար, Հին Ուխտի քավությունն իր վրա կրող անբան զոհին փոխարինած բանականը՝ Աստծո միածին Որդին, կատարելության է հասցնում մեղավորին. «գիտակցի իր կատարած մեղքը»-ի քավություն ստանալու կերպը: Այսինքն, քավության համար անմեղ կենդանու անընդհատ թափվող արյունը գալիս է անձի գիտակցված զոջումով փոխարինվելու. «Գնա՛, այսուհետև մի՛ մեղանչիր» (Հովհ. Ը 11) պայմանով: Իսկ եթե սխալվես, քանզի «Ո՞վ կարող է պարծենալ, թե ինքը սուրբ սիրտ ունի, կամ ո՞վ կհամարձակվի ասել, թե ինքը զերծ է մեղքերից» (Առակ. Ի 9), ապա ապաշխարության ճանապարհով, այսինքն անդրադարձով, զոջումով, ինքնաշարժաբանաբար և մեծ հավատքի միջոցով ստացիր քավությունդ («Եւ ահա նրա մոտ բերեցին մի անդամալույծ, որ պառկած էր մահճի մեջ: Հիսուս նրանց հավատը տեսնելով՝ ասաց անդամալույծին. «Քո մեղքերը քեզ ներված են» (Մատթ. Թ 2): Կամ «Եվ ասաց այն կնոջը (անբարո, որ Հիսուսի

ոտքերը յուղով օծեց)։ «Քո մեղքերը քեզ ներված են»։ ... «Քո հավատը քեզ փրկեց, գնա՛ խաղաղությամբ» (Ղուկ. Է 48-50)։

Այսպիսով, մարդկության փրկությունը իրականանում է քավության միջոցով, պայմանով, որ նա ընթանա մեծ հավատքով և գիտակցված զոջումով, որպեսզի այդ կերպ նա առաջնորդվի դեպի հավիտենական «կյանք»։ Իսկ այդ «Կյանքին» հասնելու համար կարիքը կար ընթանալու Նորկտակարանյան ճանապարհով, որը Քրիստոսի քարոզությունն է, ցույց տված ուղղությունը, որով մարդուն տրվեց միջոցը՝ իր միջից վերացնելու այն, ինչի պատճառով նա արտաքսվել էր դրախտից՝ չարը։ «Տեր Աստվածն ասաց. «Ահա Ադամը դարձաւ մեզ նման մեկը, նա գիտի բարին և չարը» (Ծննդ. Գ 22)։

Ուրեմն չարի գաղափարի առկայության պատճառով տեղի ունեցած մարդու անկումը պիտի վերականգնվեր դրա դեմ մղվող պայքարի միջոցով, իսկ չարի բացարձակ բացակայությունը պայմանն է փրկագործության, վերականգնումի և Աստծո Արքայության մեջ վերահաստատման. «Ձեզ ասում եմ. սիրեցե՛ք ձեր թշնամիներին, օրհնեցե՛ք ձեզ անիծողներին, բարություն արեք ձեզ ատողներին և աղոթեցե՛ք նրանց համար, որ չարչարում են ձեզ և հալածում» (Մատթ. Ե 44)։

Ուրեմն այլոց չարության դիմաց պատասխանելով բարությամբ՝ մեր միջից արմատախիլ ենք անում չարի առկայությունը։

Ահա թե ինչու էր Հիսուս բարձրաձայնում. «Երանի՛ նրանց, որ սրտով սուրբ են, որովհետև նրանք Աստծուն պիտի տեսնեն» կամ »Երանի՛ խաղաղարարներին, որովհետև նրանք Աստծու որդիներ պիտի կոչվեն» (Մատթ. Ե 8-9), քանզի այդ պատվիրան-քարոզները գալիս էին ճշտելու ամեն մի հետևորդի որպիսին և ինչպիսին լինելու պայմանը։ Սրբության, խաղաղության գաղափարներին միանալով ներողամտության և սիրո գաղափարները, (առաջին պարագայում «Եթե դուք մարդկանց ներքե իրենց հանցանքները, ձեր երկնավոր Հայրն էլ ձեզ կների» (Մատթ. Զ 14) երկրորդում. «Ինչպես Ես ձեզ սիրեցի, դուք էլ միմյա՛նց սիրեցեք» (Հովհ. ԺԳ 22), մարդուն դեպի աստվածային բարձունքները առաջնորդող աստիճանավանդակներն են դառնում։ Քանզի սերը, ներողամտությունը, սրբությունն ու խաղաղությունը պայմաններն են չարի վերացման, իսկ դա հնարավոր է դարձնում մարդուն Աստծո որդի կոչվելու և Աստծուն տեսնելու։

Քրիստոս «Ճշմարտություն»-ն էր, քանզի ոչինչ կար նրա քարոզներում անճիշտ, սխալ և անբարո, ոչինչ կար նրա խոսքերում ընդդեմ մարդկային կամ ընդդեմ բարու, այլ՝ ճիշտ հակառակը։ Եվ ամենայն ճշմարտություն, որ դուրս էր գալիս Փրկչի աստվածային շրթներից, ուներ միայն մեկ նպատակ՝ մարդու փրկության ապահովումը և կատարելության առաջնորդումը։ Եվ վստահ լինելով իր խոսքի գործության և ճշմարտացիության վրա, Հիսուս հայտարարում էր. «Երկինքն ու երկիրը կանցնեն, բայց իմ խոսքերը չեն անցնի» (Մատթ. ԻԴ 35)։

Ահա թե ինչու միաբանի խոսված յուրաքանչյուր քարոզ, որպես «չանցնող» խոսքերի փոխանցում, համոզեցուցիչ պիտի դարձնի Տիրոջ ցույց տված ճանապարհի ճշմարտացիությունն այնպես, որ ամեն մի հավատացյալի հոգում և մտքում Աստվածորդու խոսքերը դառնան պարարտ հողի մեջ ընկած սերմի հատիկի նման, տալով միայն դրական արդյունքներ, որպեսզի նրանում ոչինչ չմնա չարից, այլ դառնալով լուստ և ճշմարտության որդի, Քրիստոսով ընդունի հավիտենական կյանքը։

Քանզի «Ես եմ ճանապարհը, ճշմարտությունը և Կյանքը» (Հովհ. ԺԴ 6):

Միաբան քարոզիչը, աստվածային այդ խոսքերը հավատացյալներին պիտի չփոխանցի պարզապես Քրիստոսի օրինակով և որպես Քրիստոսից տրված խոսքեր միայն, այլ այդ խոսքերը պիտի մատուցի այնպես, որ ունկնդիր հավատացյալին առաջնորդի Աստուծո Որդի լինելու ձգտումին: Ինչպես նշում է երջանկահիշատակ Գաբրեղին Ա Կաթողիկոսը. «Քարոզիչը պետք է զգացնե, թե այսօր Քրիստոս Իր անձին և քարոզին մեջեն կխոսի ժողովուրդին, ինչպես երկրավոր կյանքի ընթացքին խոսեցավ Ան իր աշակերտներուն» (Ձեռնարկ Հովուական Աստուածաբանութեան, էջ 109): Իսկ դա տեղի ունենալու համար պետք է, որ քարոզիչի մեջ ոչ թե իր անձը խոսի, այլ՝ Քրիստոսին: Այսինքն քարոզիչը պարտավոր է նույնանալ Քրիստոսի հետ, որպեսզի կարողանա նույնացնել իր հոտին՝ Փրկչին:

Քարոզը պիտի լինի այն ուժը, որը կարողանա մարդկային հոգիներից ներս թափանցել այնպես, որ ամեն մի հավատացյալի էության մաս դառնա Հիսուսի «Ես Իմ Հոր մեջ եմ, և դուք՝ Իմ մեջ. ու Ես՝ ձեր մեջ» բանաձևը: Այսինքն քարոզիչը ոչ թե պիտի ջանա քարոզի միջոցով պարզապես հավատացյալին հաղորդակից դարձնել Հիսուսին, այլ նույնացնել նրան Քրիստոսի հետ: Քարոզիչը իր հավատքի, իր խորը համոզվածությամբ պիտի կարողանա հասցնել իր հոտի անդամներին այնպիսի իրավիճակի, որ նրանցից յուրաքանչյուրը համոզվի, որ «Ոչ ոք չի գա Հոր մոտ, եթե ոչ՝ ինձանով» (Հովհ. ԺԴ 6): Իսկ այդ վիճակին հասնելու պայմանը ամբողջ հոգով Հիսուսին սիրելն է: Եվ ո՞վ կարող է սիրել Նրան. «Ով Իմ պատվիրաններն ընդունում և դրանք պահում է, նա՝ է, որ Ինձ սիրում է» (Հովհ. ԺԴ 21): Այստեղ է, որ քարոզիչին պիտի հաջողվի համայնքային կյանքից ներս սիրո՝ այդ մեծագույն պատվիրանի իմաստը բարձրացնել այնպես, որ յուրաքանչյուր հավատացյալ հասկանա, որ ինքը կարող է Հիսուսին լինել, եթե սիրում է իր նմանին. «Եթե դուք միմյանց սիրեք, դրանով բոլորը պիտի իմանան, որ դուք Իմ աշակերտներն եք» (Հովհ. ԺԳ 35) և եթե իմիններս եք, ապա «Ես կենդանի եմ, և դուք էլ կենդանի եք լինելու» (Հովհ. ԺԴ 19): Քանի որ այդ կենդանությունը մարդուն տրվում է հավիտենականության մեջ, ուրեմն Քրիստոսի խոսքը դառնում է վավերացումը, թե ճշմարիտ հավատացյալին տրվում է երկնքի թագավորության ժառանգականության վկայականը: Ճշմարիտ հավատացյալը նա է «ով Ինձ սիրում է» և որպես արդյունք Քրիստոսասիրության նա էլ «պիտի սիրվի Իմ Հորից»: Եվ հավատացյալին այս իրավիճակի կարող է առաջնորդել միաբան քարոզիչը, եթե քարոզը մատուցվում է կատարյալ հավատքով, մեծ իմացականությամբ և Սուրբ Հոգու ներշնչանքով:

Ահա թե ով է միաբան քարոզիչը, և ինչ է նշանակում նրա շրթներից դուրս եկած քարոզի իմաստը, նշանակությունը: Նա բանական հոտի միասնականության գրավականն է և աստվածային էության հետ հավատացյալին կապող գորավոր օղակը:

Է. Քարոզի նյութը. Հայ Եկեղեցու ավանդություններն ու ազգային սրբությունները:

Այսօր, երբ խոսում ենք հայ ժողովրդի ավանդությունների մասին, նկատի ունենք միայն այն, ինչը ստեղծվել է քրիստոնեությունից հետո և ինչը վերաբերվում է քրիստոնեությանը: Շատերի համոզումն է, որ քրիստոնեությունը մեր ազգային ինք-

նության և նկարագրի կազմավորման մեջ իր կարևորագույն դերն է խաղացել: Հատկապես, երբ այն չորրորդ դարից հետո հայտարարվել է Հայաստան աշխարհի պետական կրոնը, իսկ հինգերորդ դարում էլ, գրերի գյուտով և Աստվածաշնչի հայացմամբ, մեր Եկեղեցին ազգային դիմագիծ է ընդունել: Հայոց Եկեղեցին հետագա դարերի ընթացքում, երբ կորցրեցինք մեր պետականությունը, բարոյա-հոգևոր կերպարի հետ միաժամանակ ստացավ նաև քաղաքական ուժ և դերակատարում: Եվ այս երկու ասպարեզներում, հոգևոր-մշակութային և քաղաքական, տեղի ունեցած երևույթներն էլ հիմքը հանդիսացան մեր քրիստոնեական ավանդույթների, շաղախված Աստվածաշնչյան ավանդություններով: Որքան էլ ծեսերը, տոները, սուրբերի հիշատակությունները համաքրիստոնեական էին, սակայն այնտեղ սկսեցին ներգրավվել նաև ազգային արժեքներ: Որքան էլ Տյառնընդառաջը Հիսուսի տաճարի ընծայումն էր խորհրդանշում, սակայն Տըրընդեզի խարոյկավառությունը մնաց դրան անքակտելի, որքան էլ Այլակերպությունը դարձավ տաղավար տոն, սակայն Վարդավառյան ջրցանուկը մնաց դրանից անբաժան: Քանզի հստակ է մեկ բան, ամենալավ նոր ուսմունքն անգամ չպետք է խախտի անցյալից փոխանցված արժեքները, որոնցով էլ կերտվում է տվյալ ժողովրդի ազգային դիմագիծը, եթե այդ ուսմունքի նպատակը, անշուշտ, այդ դիմագծի վերացումը չէ:

Քրիստոնեական այդ արժեքներից է նաև սրբերի վարքագրությունը: Ի թիվս Հայ Եկեղեցուն ծանոթ և հայտնի Տրիփոն, Գորդիոս, Պողիքտոս, Կղոդյա, Ապիտոն սրբերի, մեզանում տեղ գտան նաև Հայազգի սրբեր, որոնք միաժամանակ եղան հիմնադիրները հայ ժողովրդի նոր՝ քրիստոնեական մշակույթի:

Հայ սուրբերի վարքերը ընթերցման լավագույն նյութերն են և ուսուցման լավագույն կերպերը: Քանի որ այնտեղ խոսք չի գնում վերացական առաքինությունների մասին, այլ այդ առաքինությունները մեզ են մատուցվում իրենց իրականացված ձևի մեջ, ինչպիսիք են աստվածապաշտությունը, կատարյալ հավատքը, խոնարհությունը, ժուժկալությունը, համեստությունը, ուսումնաստենչությունը, սերը իր նմանի նկատմամբ, հայրենիքի, ընտանիքի, ազգային արժեքների նկատմամբ նվիրվածությունը:

Ինչպիսի՞ն է այսօր մեր՝ միաբան քարոզիչներին կեցվածքը այդ մեկ ափի հայ սուրբերի հիշատակության հարցում: Արդյոք որքանո՞վ ենք մեր քարոզներում ըստ պատշաճի ներկայացնում նրանց ոչ թե գրական արժեքները, այլ սրբակենցաղությունը՝ որպես ճշմարիտ օրինակ քրիստոնեական կերպարի: Նրանցից որևէ մեկը երբեք չմտածեց մեկ օրվա մեջ երեք անգամ ուրանալով, սրբագործվելու մասին, այլ բոլորն էլ միշտ մահը նախընտրած, ընթացան կյանքում որպես արժանի հետևորդը մեծ Վարդապետի, որպեսզի Նրա նկատմամբ ունեցած հավատքով, նվիրվածությամբ և սիրով, կարելիություն ունենային միանալու Երկնավոր Հորը:

Մեզանից քանիսն են անդրադառնում այնպիսի սուրբի, որպիսին Վահան Գողթնեցին է, որը օրինակների օրինակն է հատկապես այն «քրիստոնեաների» համար, որոնք հանուն իրենց այսօրվա նեղ, անձնական շահի կամ փառքի, կամ մատնված ամենափոքր դժվարության, պատրաստ են ուրանալ թե՛ իրենց հավատը և թե՛ իրենց Աստծուն՝ մոռանալով, որ նյութական բարգավաճմանը հաճախ զուգահեռ է բարոյական աղքատությունը: Իրավացի էր քսաներորդ դարի ամենասրբակենցաղ հայ հոգևորականներից Պոլսո բարեհիշատակ Շնորհ Պատրիարք Գալուստյանը՝

գրելով. «Երբ կորսնցնենք մեր սուրբերը, պիտի կորսնցնենք սրբութեան գաղափարը, հիմնական ու գերազանց գաղափարը ամբողջ Աստուածաշնչին, ամբողջ մեր կրօնքին: Պիտի դադրինք սուրբ ըլլալէ եւ սուրբեր արտադրելէ: Եկեղեցի մը, որ դադրած է սուրբեր երկնելէ, կորսնցուցած է իր գերագոյն նպատակը. դարձած է ամուլ, դարձած է անպտուղ» (Հայագգի Սուրբեր, Գանձասար, Երևան 1997, էջ 23):

Այդ ամլության և անպտուղության առաջն առնելու համար հարկավոր է անընդհատ և տքնաջան քարոզչական աշխատանք իրականացնել, հայ հավատացյալի մտքում արթուն պահելու հայ ավանդության անքակտելի մասը հանդիսացող սուրբերի վարքը, որպէսզի նրանց կյանքի օրինակով այսօրվա հավատացյալը կարողանա իրականացնել Աստվածային պատվիրանը, թե «Սրբվեցեք և սուրբ եղեք, որովհետև Ես՝ ձեր Տեր Աստվածը, սուրբ եմ» (Ղևտ. ԺԱ 44):

Միաբան քարոզիչի մյուս կարևոր խնդիրը ժամանակակից հարցերին անդրադառնալն է, հատկապէս համաշխարհայնացման՝ գլոբալիզացիայի մեր այս ժամանակաշրջանում, երբ մարդկությունը, որոնց մեջ և մեր ժողովուրդը, սկսել է համարյա անտեսել հոգևոր ժառանգությունները, ազգային ավանդությունները՝ մատնվելով անտարբերության և ինքնամոռացման վտանգին: Մենք՝ միաբան քարոզիչներս, պարտավոր ենք մեր խոսքի զորությամբ կանխել հայի էությունից նրա ավանդությունների և ազգային արժեքների արմատախլումը, պարտավոր ենք կանխել քրիստոնեական արժեքների խաթարումը՝ որոնցից ամենասարսափելիներն են՝ միասեռականությունը, մանկապղծությունը, մարմնավաճառությունը, թմրամոլությունն ու հոգեորոշությունը: Այս հարցում բազում են խնդիրները, որոնց ոչ թե անհատ քարոզիչ միաբանը լուծում պիտի գտնի, այլ հավաքական լուծման խոսնակը պիտի հանդիսանա նա: Իսկ դրա համար մենք ավետարանական ռաբբիների, դպիրների, փարիսեցիների օրինակով պարտավոր ենք ամեն վայրկյան հսկել, հետևել, գննել, տեսնելու համար, թե նախ ովքեր են, ինչու են և ինչպէս են շեղում ճամփան մեր հոտի, և ապա միասնաբար գտնենք դրա ճիշտ և վերջնական լուծումը և մշակված քարոզչության միջոցով կանխենք մեր հոտին մատուցվող, նույնիսկ պարտադրվող կործանարար ընթացքը: Յուրաքանչյուր միաբան քարոզիչի ուղեցույցը պիտի լինեն մեր մեծ Վարդապետի՝ Հիսուս Քրիստոսի խոսքերը. «Այլ տեղ չեմ ուղարկված, եթե ոչ Իսրայելի տան կորուսյալ ոչխարների մոտ» (Մատթ. ԺԵ 24), այսինքն. այլ տեղ չեմ ուղարկված, եթե ոչ Նոյի սերնդի կորուսյալ ոչխարներին փրկելու: Իսկ դրա համար մեր պարտականությունն է ամբողջ ժամանակ հսկել մեր հոտի ոչխարների ընթացքը, և եթե պատահի, որ նրանցից մեկը մատնվի կորստյան, թողնելով 99-ին՝ գնանք այդ մեկի ետևից, քանի որ ամեն մի հավաքականություն սկսվում է հենց այդ մեկից:

ՀԱԿՈՒՔ ՔՅՈՍԵՅԱՆ

Բանասիրական գիտությունների թեկնածու

ԱՍՈՐԵՐԵՆ ԲՆԱԳՐՈՎ ԱՆՀԱՅՏ ՃԱՌ Ս. ԵՓՐԵՄԻ ԱՆՈՒՆՈՎ

Վաղուց գիտակցված և արժեվորված է այն կարևորությունը, որ թարգմանական երկերն ունեն գրական, մշակութային հարաբերությունների ուսումնասիրման բնագավառում: Թարգմանված երկերի բովանդակությունը հստակ պատկերացում է տալիս դարի հոգևոր պահանջարկի, մշակութային կացության վերաբերյալ: Ինչպես մյուս դարաշրջանները, քրիստոնեական միջնադարը ևս կյանքի կոչեց արժեքների մի համակարգ, որ պայմանավորված էր սուրբգրային հայտնությամբ, եկեղեցական ավանդությամբ: Յուրաքանչյուր ազգ քրիստոնեական քաղաքակրթությանը բերեց հայտնության իր ընկալումը, որ մասնավոր տարագով իր դրսևորումը գտավ հոգևոր տարաբնույթ ժառանգության մեջ: Արևելաքրիստոնեական մատենագրության մեջ իր ուրույն տեղն է զբաղեցնում ասորականը, որի մեջ անադարտ կերպով պահպանված են սուրբգրային ոգեկանության, արամեական մտածողության, աստվածաբանական ավանդույթի վաղնջական ձևերը: Ուստի պատահական չէ, որ աստվածաշնչյան արժեքներին, Արևելաքրիստոնեական ավանդույթին փարված Հայ Եկեղեցին պետք է մասնահատուկ վերաբերմունք որդեգրեր այդ արժեքները առավել հարազատորեն հայելացնող Ասորի Եկեղեցու նկատմամբ: Մյուս կողմից հայ-ասորական գրական, մշակութային հարաբերությունները բնական և օրինաչափ շարունակությունն են դառնում եկեղեցաքաղաքական հարաբերությունների: Այս գույզ գործոնների տիրական թելադրանքով իրականացվեցին սուրբգրային, հայրախոսական բնագրերի ասորերենից հայերեն թարգմանությունները¹: Թերևս Աստվածաշնչին զուգահեռ հայացվեցին ասորական (և ոչ միայն ասորական) Եկեղեցու մեծագույն հեղինակություններից մեկի՝ Ս. Եփրեմի երկերը (սուրբգրային մեկնություններ, ճառեր, աղոթքներ, կցուրդներ և այլն), որոնց թարգմանությունների մի զգալի մասը հրատարակվել է Մխիթարյան հայրերի ջանքերով²: Սակայն պետք է

¹ Այս մասին հանգամանալից տե՛ս **Հ. Հ. Անդրիկյան**, Արեւելեան վկայք, «Բազմավեպ», 1905, էջ 251-255, 358-360: **Երվ. Տեր-Մինասյան**, Աբրահամ Խոստովանողի «Վկայք Արեւելից»-ը և նրա ասորական սկզբնատիպը, **նույնի** «Զգաւն» կոչված գրքի հեղինակի հարցը, տե՛ս հեղինակի «Պատմաբանասիրական հետազոտություններ» (հոդվ. ժող.), Եր., 1971, էջ 65-87, 411-424: **Հ. Գ. Մելքոնյան**, Հայ-ասորական հարաբերությունների պատմությունից (III-V դդ.), Եր., 1970, **Լ. Հ. Տեր-Պետրոսյան**, Աբրահամ Խոստովանողի «Վկայք Արեւելից»-ը (բնագրագիտական հետազոտություն), Եր., 1976, **նույնի**՝ Հայ հնագույն թարգմանությունների մատենաշարը-Գիրք Օննդոց, քննական բնագիր աշխատ. Ա. Ս. Ջեյթունյանի, Եր., 1985, էջ 24-26: **Л. А. Тер-Петросян**, Сиро-армянские литературные связи в IV-V вв (Роль сирийской культуры в формировании древнеармянской словесности) Автореферат дисс. Л., 1986:

² Տե՛ս Ս. Եփրեմի մատենագրութիւնը, հտ. Ա-Դ, Վենետիկ, 1836 «Սրբոյն Եփրեմի Ասորոյ Մեկնութիւն

նկատել, որ Եփրեմյան ժառանգության շատ էջեր տակավին հրատարակված ու արժեվորված չեն: Դրանց մեջ քիչ չեն այնպիսիք, որոնց ասորերեն բնագրերը մեզ չեն հասել: Այդպիսի երկերից է «Վասն չուտելոյ զչորեքշաբաթն եւ զուրբաթն եւ վասն ուրացողացն եւ պիղծ յիշոցնատուացն» ճառը: Այն մեզ հասել է բազմաթիվ ընդօրինակություններով, որոնցում որոշարկելի է խմբագրական երկու տարբերակ: Այսպես, ՄՄ թիվ 640 (295ա-305բ), 3791 (435բ-439բ), 944 (212ա-221ա), 4599 (50ա-56բ) ձեռագրերում առկա բնագիրը ներկայացնում է խմբագրական մի տարբերակ, իսկ թիվ 1521 (252բ-254ա), 4822 (344ա-348ա), 2890 (193բ-197ա) ձեռագրերում պահպանվածը՝ մեկ այլ: Եվ հիրավի, նկարագրելով այս ճառը պարունակող Վիեննայի թիվ 224 ձեռագիրը Հ. Հակովբոս վրդ. Տաշյանը ծանուցում է, որ խնդրո առարկա (երկրորդ) միավորը (N 100) նախորդի (N 20) համեմատ «շատ տարբեր խմբագրություն, կարծես ուրիշ թարգմանություն է»³: Քննությունը պարզում է, որ խմբագրական տարբերակներն իրենք իսկ միատարր չեն: Այսպես, Ա տարբերակի C ձեռագրում առկա են ուշ շրջանին հատուկ հետսմուտ տարրեր. առավել ներկայանալի է հետևյալ հատվածը. «Ապա վասն է՞ր ժողովեցան նեստորականքն եւ ի բաց հանին ի միաբանութենն, որ զձեթն եւ զգինին ծառոյ բեր ասացին եւ զձուկն՝ ջուրց, զի Մովսէս զձուկն մի՛ ասաց... Եւ Բարսեղ Կեսարացին գազան ասաց»⁴: Բ տարբերակում նմանապես առկա են ուշ շրջանին բնորոշ իրողություններ, որոնք գլխավորաբար վերաբերում են լեզվին: Այս տարբերակն աչքի է ընկնում միջին հայերենին բնորոշ բառազանձով. օր. «փոշիմանել» և «մաղաթ». առաջինը պարսկ. *pusime*, թրք. *pənsman* («զոջացած», «ափսոսած»), իսկ երկրորդը արաբ. պարսկ. *madad* («օգնություն», «նյութական օժանդակություն») բառն է⁵: Այս փաստերը, ինչպես նաև մի կողմից ճառի սուրբգրային վկայությունների բնագրային համապատասխանությունը Աստվածաշնչի հայերեն ընկալյալ թարգմանությանը, և մյուս կողմից «Բարոյախաւս»-ի (տե՛ս օձի և արջի բնույթի վերաբերյալ վիպող հատվածը Ա տարբերակի C ձեռագրում) հայերեն թարգմանության մասնավորաբար հայերենով պահպանված նրա համառոտ խմբագրության հետ⁶ ունեցած հարաբերությունը թույլ են տալիս ենթադրել, որ այս երկը թերևս բնագրի տեղայնացված տարբերակն է:

Այն, որ ճառն իրապես էլ պատկանել է Ս. Եփրեմի գրչին և նրա անունով էլ հնուց անտի ճանաչված է եղել հայ միջնադարում, վկայում է ոչ միայն բովանդակությունը, խորագրային պարզ ու մեկին տեղեկությունը, այլ նաև ԺԳ-ԺԴ դդ. մատենագիր Կիրակոս Երզնկացին: Իր կարնեցիներին հղած նշանավոր թղթում նա

Գործոց առաքելոց», աշխատ. Հ. Ն. վրդ. Ակինեան, Վիեննա, 1921, «Կցուրդք Ս. Եփրեմի Խուրին Ասորւոյ», աշխատ. Հ. Ն. վրդ. Ակինեան, Վիեննա, 1957, «Սրբոյն Եփրեմի Ասորւոյ Մեկնութիւն Եզեկիէլի» աշխատ. Յ. Քէոսէան «Գանձասար» Աստուածաբանական հանդէս, Ը (հրատ. ընթացքում):

³ Ցուցակ հայերէն ձեռագրաց Մատենադարանին Մխիթարեանց ի Վիեննա, Վիեննա, 1895, 574, 580:

⁴ Տե՛ս **Բարսեղ Կեսարացի**, Մեկնութիւն Վեցօրեայ արարչութեան, աշխատ. Կիմ Մուրադյանի, Եր., 1984, էջ 221, տ. 4-5:

⁵ Տե՛ս **Ռ. Մ. Ղազարյան, Հ. Մ. Ավետիսյան**, Միջին հայերենի բառարան, հտ. Բ, Եր., 1992, էջ 112, 421:

⁶ Դ՛՞ժ Physiologus. The Greek and Armenian Versions with a Study of Translation Technique by Gohar Muradyan, Peeters, Leuven-Paris-Dudley, MA, 2005, p. 108-109 (14.0-14.8), p. 178, 180-181 (35.1-35.12):

գրում է. «Քանզի ասէ սուրբն Եփրեմ ի ճառ որ վասն պահոց, եթէ՝ Որ լուծանէ չորեքշաբաթն մասն Յուդայի առցէ եւ որ լուծանէ գուրբաթն ընդ խաչահանութեանցն դասեացի»⁷:

Ճառի՝ Ս. Եփրեմի հեղինակային պատկանելության օգտին վկայող ամենագործող պարագան նրա բովանդակությունն է: Թերևս Եկեղեցու հայրերից և ոչ մեկը այնպիսի նախանձախնդրությամբ չի դրվատում ճգնական խստակեցությունը, այնքան մանրամասնորեն չի նկարագրում անդենականն ու դատաստանը, ինչպես Ս. Եփրեմը⁸: Հատկապես ուշագրավ են ճառիս վախճանաբանական այն նկարագրությունները (տե՛ս Ա տարբերակ, տարբեր. 151-166), որոնք առավել խստակորեն հարաբերվում են ասորերեն բնագրով պահպանված Ս. Եփրեմի մի փոքրիկ գրության հետ, ուր պատկերված է հոգու բաժանումը մարմնից. դները ցանկանում են, որ հոգին իրենց հետ գեհեն գնա, մինչդեռ «հրեշտակներին ցանկալի է, որ նա նրանց հետ հասնի լուսո բնակարան»⁹:

Ի թիվս մի շարք աղբյուրների Ս. Գրիգոր Նարեկացին իր Աղոթամատյանը շարադրելիս անտարակույս աչքի առջև է ունեցել Ս. Եփրեմի այս ճառը. Աղոթամատյանի «Մտեմ ի բոյնն աղանի եւ անդուստ ագռաւ ելանեմ, Գամ սակաւ մի սպիտակ, եւ սրանամ դառնամ բնաւին սեւացեալ» (Բան ՀԱ, Բ)¹⁰ տողերը հղացվել են ճառիս, «զի եթէ իբրեւ զագռաւ սեւացեալ եւ մեղաւք, եւ մտեալ յեկեղեցին խոստովանիս՝ իբրեւ զաղանի սպիտակացեալ ելանես յեկեղեցոյն՝ խոստովանութեամբ եւ ապաշխարութեամբ» բառերի ազդեցությամբ՝ իմաստային դրափոխության կիրարկումով: Ս. Եփրեմի ճառի ընդհանուր ազդեցությունն է նշմարվում Գրիգոր Ավագ Վկայասեր կաթողիկոսի (կթղ. 1065-1105 թթ.) «Խրատք վարուց եւ կենաց, եւ պատուելքք եւ քարոզ վասն յիշոցաց եւ վասն կիրակեի...» խորագրով երկի վրա¹¹:

Սակայն, ինչպես երևում է, այս ճառը ոչ միանշանակ ընդունելության է արժանացել ուշ միջնադարում: 1512 թ. ընդօրինակված ճառընտիր մի ժողովածուի մեջ (Երուսաղեմ ձեռ. 173, թ. 211-215բ) գտնվող «այս ճառը ետքէն գծմուած է, մանաւանդ խորագիրը, որ դժուարաւ կը կարդացուի: Էջ 215 վերի լուսանցքին վրայ նօտրգիր կը տեսնուի սա տողը. «Վասն այն եղծցի, զի ոչ էր գրեալ աստուածաբանից»¹²:

⁷ «Կիրակոսի վարդապետի Երզնկացոյ թուղթ առ Կարնեցիս», աշխատ. Ա. քհ. Դանիէլեան, «Գանձասար», Աստուածաբանական հանդէս, Զ, Եր., 1996, էջ 572: Տե՛ս և հմմտ. Ճառիս Ա տարբերակ, տարբեր. 16-16ե:

⁸ Տե՛ս **Прот. Г. Флоровский**, Восточные отцы церкви, М. 2003, с. 310:

⁹ Տե՛ս Святий Ефрем Сиринь, Творения, т. 4, М., 1995, с. 492:

¹⁰ **Գրիգոր Նարեկացի**, Մատենան Ողբերգութեան, աշխատ. Պ. Մ. Խաչատրյանի, Ա. Ա. Ղազինյանի, Եր., 1985, էջ 529, տ. 73-74:

¹¹ ՄՄ ձեռ. 8030, թ. 410ա-422ա: Գրիգոր Վկայասերի այս խրատն ընդհանրության առավել ակներև եզրեր ունի «Պատմութիւն Եփրեմ Խորին ասացեալ է Յաղագս պատուելոյ վասն կիրակեի» երկի (ՄՄ ձեռ. 833, թ. 122ա-128ա Հմմտ. ՄՄ, ձեռ. 850, թ. 98բ-121բ, նաև՝ Վիեննա, ձեռ. 172, թ. 99ա-108բ, 395, թ. 72բ-91բ) հետ է:

¹² Տե՛ս Մայր ցուցակ ձեռագրաց Սրբոց Յակոբեանց. հտ. Բ, Կազմեց Նորայր եպս. Պողարեան,

Ճառը հրապարակվում է ըստ հետևյալ ձեռագրերի.

Ա տարբերակ

A= ՄՄ, ձեռ. 640, ժողովածու: **Ժամանակ**՝ 1297 թ. **Գրիչ** Հեթում քիյ., **Ստացող**՝ Վասիլ Հայելեկցի (՝), **Թերթ**՝ 317: **Նյութ**՝ թուղթ: **Գրություն**՝ միասյուն: **Գիր**՝ բոլորգիր: **Տող**՝ 21: **Բնագիրը**՝ թ. 295ա-305բ:

B=ՄՄ, ձեռ. 3791. Ճառընտիր: **Ժամանակ**՝ ԺԵ դար (1453-ից առաջ): **Գրիչ**՝ Կարապետ, տեր Պողոս, Աբդուլմսելա: **Կազմող**՝ Վարդան: **Ստացող**՝ Հովհաննես: **Թերթ**՝ 724: **Նյութ**՝ թուղթ: **Գրություն**՝ երկսյուն: **Գիր**՝ բոլորգիր: **Տող**՝ 35: **Բնագիր**՝ թ. 435բ-439բ

C=ՄՄ ձեռ. 944: ժողովածու: **Ժամանակ**՝ 1431թ. **Վայր**՝ Էրեզ վանք: **Գրիչ**՝ Հովհաննես, Ղազար աբեղայք: **Ստացող**՝ Խաթուն: **Թերթ**՝ 227: **Նյութ**՝ թուղթ: **Գրություն**՝ միասյուն: **Գիր**՝ բոլորգիր: **Տող**՝ 26-27: **Բնագիր**՝ թ. 212ա-221ա:

Բ տարբերակ

A= ՄՄ, ձեռ. 1521: Ճառընտիր: **Ժամանակ**՝ 1404 թ.: **Գրիչ**՝ Գրիգոր: **Ստացող**՝ Ստեփանոս, Թումա աբեղայք: **Թերթ**՝ 453: **Նյութ**՝ թուղթ: **Գրություն**՝ երկսյուն: **Գիր**՝ բոլորգիր: **Տող**՝ 38-40: **Բնագիր**՝ թ. 252բ-254ա:

B= ՄՄ, ձեռ. 2890: ժողովածու: **Ժամանակ**՝ 1718 թ.: **Վայր**՝ Վան: **Գրիչ**, ստացող՝ Թումա Մոկացի: **Թերթ**՝ 376: **Նյութ**՝ թուղթ: **Գրություն**՝ երկսյուն: **Գիր**՝ բոլորգիր: **Տող**՝ 32: **Բնագիր**՝ թ. 193բ-197ա¹³:

Երուսաղեմ, 1953, էջ 114:

¹³ Տեղեկություններն ըստ Ցուցակ ձեռագրաց Մաշտոցի անվան Մատենադարանի, հտ. Ա, կազմեցին՝ Օ. Եզանյան, Ա. Զեյթունյան, Փ. Անթաբյան, Ներածությունը՝ Օ. Եզանյանի, խմբագրությամբ՝ Լ. Խաչիկյանի, Ա. Մնացականյանի, Եր., 1965, էջ 370, 444, 573, 896-897, 1085:

ՏԱՐԲԵՐԱԿ Ա

**ՇԱԲԱԹ ԱԻՐ ՔԱՌԱՄՆԻՅ ՃԱՇՈՅՆ. ԵՐԱՆԵԼԻՈՅՆ ԵՓՐԵՍԻ ԽՈՐԻՆ
ԱՍՈՐԻՈՅ ԱՍԱՅԵԱԼ ՎԱՍՆ ՉՈՒՏԵԼՈՅ ԶՉՈՐԵՔՇԱԲԱԹՆ ԵՒ ԶՈՒՐ-
ԲԱԹՆ ԵՒ ՎԱՍՆ ՈՒՐԱՑՈՂԱՅՆ ԵՒ ՊԻՂԾ ՅԻՇՈՑՆԱՏՈՒԱՅՆ***

Ո՛վ եղբարք իմ սիրելիք եւ քրիստոսասէր ժողովուրդք, լսեցէք¹ ինձ եւ ի միտ առէք զքարոզս² եւ զպատուիրանս զայս, զոր հանդերձեալ եմ պատմել³ ձեզ, զի ոչ ի⁴ մարգարէիցն եւ ոչ յառաքելոցն եւ ոչ ի վարդապետաց եւ ոչ ի քահանայից⁵ է ասացեալ. այլ նոյն Ինքն Աստուած⁶ Իւր^{6ա} ամենասուրբ բերանովն յԱւետարանի անդ աղաղակելով⁷ ասէ վասն անաւրէն ուրացողացն եւ պիղծ յիշոցնատուաց, որք⁸ ապականեն զհոգի եւ զմարմին եւ առ ոտն հարկանեն զաւր սգոյ եւ չարչարանացն Քրիստոսի: Վասն զի որք լուծանեն զչորեքշաբաթն կամ զուրբաթն⁹ ոչ եթէ ընդ մեղաւք միայն^{9ա} անկանին¹⁰, այլ ի հաւատոյն¹¹ որոշին եւ ի քրիստոսական գնդէն հեռանան^{11ա}, վասն զի յաւուր չորեքշաբաթի եղեւ խորհուրդ^{11բ} արարչութեան եւ յաւուր ուրբաթի ստեղծ Աստուած զմարդն: Յաւուր չորեքշաբաթի չարնախանձ եղեւ Ադամայ եւ յաւուր ուրբաթի ուտել ետ ի պտղոյն եւ ելանել^{14ա} յաստուածագործ դրախտէն: Յաւուր չորեքշաբաթի¹⁵ մարմնացաւ Քրիստոս^{15ա} ի սուրբ Կուսէն, յաւուր չորեքշաբաթին Յուդայ մատնեաց զՔրիստոս^{15բ} եւ յաւուր ուրբաթի ծնաւ Քրիստոս^{15գ}, եւ յաւուր ուրբաթի խաչեցաւ Քրիստոս^{15դ}:

Արդ, որ զչորեքշաբաթն լուծանէ¹⁶ ընդ Յուդայի մատնչին պատժին^{16ա} եւ ընդ աստուածավաճառացն դատեսցի ի Քրիստոսէ^{16բ}, եւ որք զուրբաթն լուծանեն ընդ Պիղատոսի դատապարտին^{16գ} եւ ընդ այլ^{16դ} խաչահանուացն համարեսցին^{16ե}: Իսկ որ անչարչարանաւք եւ անպատուիասս հանէ զբան ուրացութեան ընդ պեղծ բերանն, եւ ասէ զբան ահագին եւ սոսկալի, որ կոչի ուրացութիւն՝ զնայ ուրացեալ է Արարիչն երկնի եւ երկրի¹⁷: Լուարուք զահագին բան Փրկչին, որ ասէ^{17ա} .Որ ուրացի զԻս առաջի մարդկան՝ ուրացայց եւ Ես զնա առաջի Հաւր Իմոյ, որ յերկինս էե^{1*}: Քանզի ոչ լինի թողութիւն ուրացողին, այլ հուրն անշէջ եւ աններելի պատուհասն եւ սոսկալի տանջանքն է նմա պատրաստեալ¹⁸ եւ ոչ գտանէ¹⁹ ողորմութիւն յԱստուծոյ, զի առանց պատուհասի եւ չարչարանաց ուրացաւ զՔրիստոս²⁰:

Արդ,^{20ա} աղաչեմ զձեզ^{20բ}, հարք իմ եւ եղբարք²¹ եւ ծառայակիցք իմ^{21ա} զլսելիս ձեր առ իս մատուցիք եւ մի՛ անգիտութեամբ եւ դանդաղանաւք ընդունիք զհրամանս²², զի ի բերանոյ Աստուծոյ²³ է եւ ոչ ի հողեղինէ^{23ա}, զոր եւ ես լսողացդ մատուցանեմ մաղթանաւք եւ^{23բ} անփոփոխելի մտաւք՝ պատրաստ ունելով զլսելիս ձեր առ իս^{23գ}, զի այս իսկ է պատուիրանն Աստուծոյ,^{23դ} որ հաւատա եւ առնէ՝ եղիցի նա որպէս զաղանի նորափետուր՝ զարդարեալ առաջի փառացն Աստուծոյ^{23ե} եւ որք ոչ հաւատան Բանին Աստուծոյ^{23զ} բարկութիւն Աստուծոյ մնա ի վերայ նոցա²⁴: Այլ^{24ա}, զոր դարձեալ^{24բ} ասեմ ձեզ, ի միտ առէք՝

¹ Մատ. Ժ 33, Ղկ. ԺԲ 9:

պահել զպատուիրանս եւ զհրամանս²⁴ Աստուծոյ՝ մի՛ զմիտսդ²⁵ եւ զականջսդ ընդ վայր^{25ա} տարածանել²⁶, զի սատանա ոչ տայ^{26ա} լսել պատուիրանացն Աստուծոյ: Եւ որ ոչ լսէ պատուիրանին Աստուծոյ²⁷ նմանեցի^{27ա} այնմ, որ Դաւիթ ասէ. «Սրտմտութիւն նոցա ըստ նմանութեան աւձի, որպէս²⁸ իժի եւ քարբի, զի խցեալ է զականջս իւր՝ ի չլսելոյ զձայն թովչի ճարտարի, եւ մի՛ առցէ²⁹ դեղ ի դեղատուէ իմաստնոյ^{2*}»^{29ա}: Աղէ, ածէք³⁰ զմտաւ, թէ ով է թովիչ կամ ով³¹ իմաստուն դեղատուն^{31ա}: «Թովիչն ճարտար» քահանայն է եւ «իմաստուն^{31բ} դեղատուն»՝ Աստուած:

Ո՛վ անաւրէն եւ պիղծ յիշոցնատուի³², ի գուր վաստակաւոր^{32ա}. որպիսի հուր եւ աննէրեկի տանջանք^{32բ} պատրաստեալ է^{32գ}, որ զանասնախառն եւ զպիղծ^{32դ} բան յիշոցացն ասեն: Դարձեալ ասեմ^{32ե} անաւրիինն՝ յանդիմանելով զնա. Ո՛վ անաւրէն եւ պիղծ յիշոցնատու, ո՛չ ապաքէն գազանք եւ անասունք արիւնեն զԱստուած³³, իսկ անաւրէն եւ պիղծ յիշոցնատուն թշնամանէ զԱստուած^{33ա}:

Դարձեալ ասէ Տէր^{33բ}. Գազանք վայրենիք եւ անասունք^{33գ}, որք³⁴ ի լերինս բնակեալ են եւ հեղուն զարիւն³⁵ մարդկան, ամենեքեան^{35ա} զսուրբ զանունն Աստուծոյ^{35բ} փառաւորեն, եւ Աստուած կերակրէ զնոսա^{35գ} ի ժամու^{35դ}: Իսկ³⁶ անաւրէն եւ պիղծ^{36ա} յիշոցնատուն³⁷ թշնամի է³⁸ Աստուծոյ^{38ա}: Ջրերան քո եւ զլեզու, տես, արարի, ասէ Աստուած, զի յաշխարհի զիս փառաւորես, եւ դու դարձուցեր³⁹ զայդ Ինձ ի թշնամութիւն եւ ի ցնծութիւն սատանայի, արբանեալ եղեր հաւրն քո սատանայի եւ կատարիչ⁴⁰ կամաց նորա: Ո՛վ^{40ա} հակառակ ճշմարտութեան եւ⁴¹ պիղծ հայհոյիչ բերան, գործաւոր եւ վաստակաւոր⁴² սատանայի, այն արն տեսանես զպատիժն⁴³ քո, յորժամ հասանի գալուստ⁴⁴ Որդւոյն Աստուծոյ՝ արդար դատաւորին Քրիստոսի. եւ յար մեծի ատենին⁴⁵ եւ ար մահս քո լինի ի ձեռն նորա, եւ կապանք⁴⁶ անլուծանելի դնի ի բերան քո⁴⁷ եւ քարշեն զքեզ ի տուր^{47ա} անշէջ եւ բորբոքի ի վերայ քո եւ ծախէ զանաւրիներալ մարմին քո^{47բ}, ո՛վ անաւրիներալ եւ պիղծ յիշոցնատու⁴⁸: Յայնժամ իջանէ Աստուածութիւն յերկնից յերկիր⁴⁹ եւ «երկինք առաջի նորա գալարին որպէս մագաղաթ^{3*50}» եւ «երկիր որպէս մոմ⁵¹ հալի առաջի նորա^{4*}»: Եւ Դաւիթ՝ քնար հոգւոյն ասէ^{51ա}. «Ասացից⁵² ինձէն զմեղս իմ^{5*}», Եւ դարձեալ «Զմեղս իմ ցուցից քեզ եւ զանաւրէնութիւնս իմ ոչ ծածկեցից ի քէն»^{52ա}: Արդ, եթէ խոստովանի անաւրէնն զմեղս իւր ի ձեռն քահանային՝ զնալով ի դուռն եկեղեցւոյն^{52բ} դնելով դեղ ապաշխարութեան դառնայ ի^{53ա} չարեացն: Ապա քաղցրանա բարերարն^{53բ} Աստուած, թողութիւն առնէ յանցանաց^{53դ} նորա: Ապա թէ ոչ դառնա ի մեղաց^{53ե} եւ դադարէ⁵⁴ ի չարեաց⁵⁵՝ եւ ի նոյն չարիսն⁵⁶ մեռանի: Յայնժամ ասէ Տէրն եւ ճշմարիտ^{56ա} քննողն⁵⁷ Աստուած^{57ա} երկրորդ անգամ. Ո՛վ հայհոյիչ⁵⁸ եւ պիղծ^{58ա} բերան եւ անաւրէնութեան պաշտանեա եւ սուտ քրիստոնեայ^{58բ}, զի՞նչ բարի տեսայ յանաւրիներալ^{58գ} բանիցդ⁵⁹ եւ յանաւրէն^{59ա} յիշոցացդ, կամ

² Սղմ. ԾԷ 5-6:

³ Եսայի ԼԴ 4:

⁴ Եսայի ԿԴ 2:

⁵ Սղմ. ԼԱ 5:

զի՞նչ բարի եցոյց քեզ բան⁶⁰ քո անաւրինեալ, որ ի յերկինս զԱթոռն Իմ⁶¹ շարժես⁶²: Ասէ Տէր ամենակալ⁶³. «Ես արարի զերկինս եւ զերկիր, Ես հաստատեցի զարեգակն եւ զլուսին եւ զաստեղս, զծով եւ զցամաք եւ Ես տամ կերակուր ամենայն⁶⁴ թռչնոց երկնից եւ զազանաց շունչ կենդանի, եւ Ես⁶⁶ կերակրեմ զամենայն արարածս առատ^{66ա} բարերարութեամբ Իմով^{66բ}: Իսկ դու, ընդ էր ատեցեր զԻս⁶⁷ եւ զսատանա սիրեցեր⁶⁸, եւ արարեր քեզ բարեկամ զսատանա^{68ա}: Ես վասն քո յերկնից^{68բ} ի յերկիր իջի եւ ի Կուսէն մարմնացայ եւ մարդացայ^{68գ},

Վասն քո, հրեայքն ապտակեցին զԻս եւ Բեղզեբուղ կոչէին զիս^{6*} եւ^{68դ} ի պոռնկութենէ ծնեալ⁶⁹ ասէին զիս^{69ա}:

Վասն քո⁷⁰ սամարացի եւ դիւահար կոչէին զիս հրեայքն⁷¹ եւ քարկոծ առնէին⁷²:

Վասն քո ի Յորդանան գետ⁷³ մկրտեցայ եւ⁷⁴ զքեզ մկրտութեամբ^{74ա} մաքուր քրիստոնէա զարդարեցի եւ Ինձ որդի կոչեցի^{74ա}:

Վասն քո թուք եւ ապտակ ընկալայ⁷⁵:

Վասն քո ի Խաչ ելի եւ հեղի զարին Իմ եւ զքեզ Իմ արեամբս^{75ա} գնեցի^{75բ} եւ Հաւր Իմոյ ընծայեցի եւ զարքայութիւն Իմ^{75գ} քեզ պատրաստեցի, ճանապարհ^{75դ} հորդեցի^{75ե} գալ առ Իս, որպէս ասէ⁷⁶, թէ՛ «Ուր Ես եմ, անդ եւ պաշտանեայն իմ եղիցի»^{7*}: Ո՛վ անաւրէն եւ պիղծ⁷⁷ յիշոցնատու, անաւրէնութեամբ մատուցանես^{77ա} պատարագ զանասունս^{77բ} ի հաւտից քոց ո՛չ⁷⁸ զիտես, թէ⁷⁹ պիղծ է այն⁸⁰ եւ խոտան առաջի Աստուծոյ եւ սուրբ Սեղանոյն: Որպէս ասէ Եսայի մարգարէն⁸¹. «Թէ⁸² մատուցանիցէ ինձ անաւրէն յիշոցնատուն եզն^{82ա} պատարագ, այնպէս է, որպէս եթէ շուն ոք մորթիցէ, եւ մատուցանիցէ ինձ^{82գ} նաշի^{82դ} կամ բաշխի ի պիղծ^{82ե} վաստակոց իւրոց, այնպէս է ինձ^{82զ} որպէս է եթէ ոք^{82ե} հեղու արին խոզի, եւ եթէ մատուցանիցէ ինձ^{82զ} կնդրուկ, այնպէս է, որպէս թէ ոք հարկանիցէ կառափն մարդոյ^{8*} 83»:

Լուր^{83ա} Պաւղոսի, որ ասէ⁸⁴. «Ամենայն բան տգեղ ի բերանոյ ձերմէ մի՛ ելցէ»^{9*}: Եւ մարգարէն^{84ա} Դաւիթ ասէ. «Լռեցո զլեզու քո ի չարութենէ եւ շրթունք քո մի՛ խաւսեցին զնենգութիւն, խոտորեա ի չարէ եւ արա զբարի»^{10*}:

Զի^{84բ} յիշոցնատուին պիղծ են⁸⁵ պահքն^{85ա}, պիղծ են⁸⁶ աղաւթքն^{86ա}, պիղծ են եւ ալթեւանք⁸⁷ նորա, պիղծ են⁸⁸ եւ խունկք նորա, որպէս թէ յարդ եւ ժանդ^{88ա} ոք ծխեսցէ⁸⁹, եւ ճրագ նորա⁹⁰, որ վառէ յանուն^{90ա} սրբոց, այնպէս է որպէս^{90բ} թէ ոք հայիոյութեամբ անարգեսցէ զԽաչ եւ զեկեղեցի⁹¹: Ո՛վ անաւրէն եւ պիղծ յիշոցնատու, հայր քո սատանա է եւ դու կամարար նորին^{91ա} եւս, զի՞արդ իշխես .բանալ զպիղծ եւ զազրացեալ^{91բ} բերանդ եւ յիշել զանունն Իմ⁹², քանզի բարբառակից եւ կամարար^{92ա} սատանայի եւս: Ո՛վ անաւրէն եւ պիղծ յիշոցնատու, զի՞արդ կաս յամառեալ ի մեղս չարութեան սատանայի⁹³ եւ խնուս զա-

^{6*} Տե՛ս Ստթ. ԺԲ 24, ՂԿ. ԺԱ 15:

^{7*} Յովի. ԺԲԲ 26:

^{8*} Եսայի ԿԶ 3:

^{9*} Եփես. Դ 29Է

^{10*} Սղմ. ԼԳ 14:

կանջսդ քո^{93ա} որպես իժի եւ քարբի՝ չլսել⁹⁴ զձայն թովչի ճարտարի: Երգեր^{94ա} Գաբրիէլ հրեշտակապետն⁹⁵ աղաչելով⁹⁶ եւ ասէր. Տէր, ողորմեա ինձ վասն աստուածութեան Քո⁹⁷ եւ տուր ինձ⁹⁸ պատասխանի, աղաչեմ զմարդասիրութիւնդ Քո, թէ լինիցի որ ի ծերոց կամ ի տղայոց կամ յերիտասարդաց կամ ի կուսից⁹⁹ կամ ի կանանց, որ¹⁰⁰ հանէ բան անարեւնութեան ընդ բերանն իւր՝ զի՞նչ է պատուհաս նորա: Պատասխանի ետ¹⁰¹ Փրկիչն եւ ասէ. Նորա թողութիւն ոչ գոյ, այլ յանլոյծ կապանսն կայցէ, եւ դատաստան¹⁰² նորա առ սատանայ է^{102ա}:

Լուարուք զբանս Տեառն զահաւոր^{102բ} եւ զսոսկալի եւ զարհուրեցուք^{102գ}, հայեցարուք ի ձեզ, յորժամ ցաւքն նեղեն զձեզ¹⁰³ եւ մեղքն յիշեն^{103ա} եւ չարիքն պատեն^{103բ} շուրջանակի, եւ դու վայ եւ եղուկ կարդաս^{103գ} ասելով. Ով^{103դ} թշուառական անձն մեղաւք¹⁰⁴, զի՞նչ գործեցեր. զքեզ միայն գտի մեղաւք: Արդ, մի՛ մնար եւ խոստովանեայ¹⁰⁵, մի՛ վստահանար ի բարեկենդանութեան քո¹⁰⁶, քանզի չար է արն այն. յայնժամ¹⁰⁷ դողաս եւ սարսէս^{107ա} եւ կրճտես զատամունսդ^{107բ} ոչ որ^{107գ} է, որ աւգնէ եւ փրկէ զքեզ, քանզի ճեպումն ի հոգւոյդ եւ տազնապումն¹⁰⁸ մարմնոյդ, որ զհոգիդ ի բաց պահանջէ, եւ ոչ կարես ժամանել խոստովանութեան^{108ա}, իբրեւ զորոգայթ ըմբռնէ^{108բ} քանզի¹⁰⁹ գող է արն այն. իբրեւ թռչուն սլանայ, եւ ոչ զիտես, եթէ ի¹¹⁰ լեառն կործանիցիս^{110ա} թէ՞¹¹¹ ի ձոր որոգայթիս կամ ի գետ կամ ի ծով¹¹² անկանիցիս¹¹³, կամ վիմաւք^{113ա} քարավէժ լինիցիս¹¹⁴, կամ գազանաբէկ լինիցիս, կամ անարգել կորնչիս¹¹⁵, կամ սրով մեռանիցիս^{115ա} կամ ի գերութիւն անկանիցիս^{115բ} կամ զփողիցդ¹¹⁶ դժնդակ ցաւաւք^{116ա} վերք հասանիցեն¹¹⁷, եւ դու^{117ա} անապաշխար ի գեհենն անկանիցիս¹¹⁸ եւ ոչ որ կարէ աւգնել քեզ յանաչառ դատաստանին¹¹⁹. ո՛չ հայր, ո՛չ մայր, ո՛չ եղբայր, ո՛չ քոյր, ոչ այր զկին կարէ թափել եւ ոչ կին՝ զայր, բայց՝ միայն բարեգործութիւն իւր: Արդ, մի՛ երթար մեղաւք ի գեհենն¹²⁰, այլ¹²¹ ապաշխարութեամբ՝ ի կեանսն յաւիտենից: Քանզի ժամ է դառնալոյ¹²² յապաշխարութիւն եւ ժամ է զալ¹²³ ի դուռն եկեղեցւոյ եւ ի ձեռն քահանայի: Յուսա յԱստուած, դիմեա յեկեղեցին^{123ա}, քանզի եկեղեցին արեգակն է արդարութեան^{123բ}, քաւարան է մեղաւորաց¹²⁴, սրբիչ է¹²⁵ յանցանաց^{125ա}, ժողովարան է¹²⁶ մոլորելոց^{126ա}, նաւահանգիստ է¹²⁷ արդարոց, դուռն է¹²⁸ երկնից^{128ա}, ճանապարհ է¹²⁹ արքայութեան ի վերին Երուսաղէմ^{129ա}, որ է մայր մեր ամենեցուն, որք մտանեն ընդ դրունսն նորա¹³⁰ հաւատով^{130ա} եւ խոստովանութեամբ եւ արինութեամբ յարկս նորա ի¹³¹ ձեռն քահանային, զի կարող է քահանայն թողուլ զմեղս՝ թէ պէտ եւ տկար իցէ¹³² որպէս Տէրն մեր^{132ա} հրամայեաց Պետրոսի եւ ասաց^{132բ}, թէ՝ «Ձոր կապիցես¹³³ յերկրի՝ եղիցի կապեալ յերկինս»^{11*}: Նոյնպէս¹³⁴ եւ քահանայն թողու, զոր Տէր հրամայեաց¹⁴⁰:

Ո՛վ մարդ, մի՛ յուսար ի ժամանակս¹⁴¹ ծերութեան քո, մի՛ ասեր¹⁴², թէ ի ծերութեան¹⁴³ ապաշխարեմ¹⁴⁴, զի գող է թշնամին, խաբէ եւ կորուսանէ զքեզ եւ ոչ ժամանես ապաշխարել: Զի՞նչ է ապաշխարելն¹⁴⁵. դադարելն ի մեղաց, մեղանչելն մարդկարէն է եւ չդառնալն՝ սատանայէ¹⁴⁶: Պարտ է նախ¹⁴⁷ երթալ առ քահանայն եւ^{147ա} խոստովանել

11. Մտթ. ԺԶ 19:

զմեղսն^{147բ} եւ ոչ թաքուցանել ամաչելով¹⁴⁸: Զի եթէ աստէն^{148բ} ի միոջէ քահանայէ ամաչելով թաքուցանես զմեղսն եւ ոչ խոստովանիս¹⁴⁹՝ ի տիեզերական հրապարակին զի՞նչ անես^{149ա} յորժամ տիեզերք ամենայն ժողովին եւ գաղտնիք մարդկան յայտնին եւ ի Քրիստոսէ ամալթով լինին^{150ա}: Իսկ որք խոստովանին¹⁵¹ զմեղս իւրեանց¹⁵² եւ հաղորդին¹⁵³ ի^{153ա} մարմնոյ եւ յարեան^{153ա} Որդւոյն Աստուծոյ¹⁵⁴, յորժամ վախճանի, տանին հրեշտակք զհոգի նորա ի լուսեղէն աւղն¹⁵⁵՝ ունելով¹⁵⁶ զհաղորդութիւն յաջոյ ձեռնին իբրեւ զմոմեղէն, եւ խոստովանութիւն ի բերանն¹⁵⁷ իբրեւ զմատանի արքունական, նմա դոնապանն բանա, եւ մերձ կացուցանէ առաջի¹⁵⁸ փառաց Աթոռոյն Աստուծոյ¹⁵⁹: Եւ հաղորդութիւն, զոր ճաշակեաց ի մարմնոյ եւ յարենէ Տեառն¹⁶⁰, մտանէ ի մարմինն^{160ա} եւ հալէ¹⁶¹ զսառնացեալ մեղսն եւ առնէ իբրեւ զոսկի, գործէ առանց աղտոյ եւ¹⁶² զոսկերս մարտիրոսաց^{162ա}: Իսկ որ ոչ խոստովանի՝ կարկի լեզու նորա որպէս զաւձի եւ որպէս զանասուն բերանակապ լինի^{162բ} եւ յետին թոշակին ոչ կարէ հասանել¹⁶³: Եւ որք ի յետին թոշակէն զրկին¹⁶⁴՝ առնուն հրեշտակք զհոգի նորա^{164ա} եւ տանին¹⁶⁵ ընդ խաւարային^{165ա} աւղն¹⁶⁶: Նմա դոնապանն ոչ բանա^{166ա}, քանզի մատանի արքունական^{166բ} ոչ ունի: Այլ^{166գ} է բնակութիւն նորա յատակս դժոխոց, հուրն անշէջ ըմբոնէ զնա եւ որդն անքուն քանցեն զմարմին եւ զլեզու նորա: Այնպիսոյն ոչ է արժան¹⁶⁷ պատարագ մատուցանել, այլ բաշխել զինչս նորա կարատելոց եւ գերեաց,¹⁶⁸ զի տանջանացն ներողութիւն գտցէ^{168ա}:

Արդ¹⁶⁹, աղաչեմ զձեզ եղբարք իմ, դադարեացուք ի լռելոյ զայնպիսիսն, որ հանեն զբան հայիոյութեան ընդ պիղծ բերանն, զի այդ են մեղք մահուչափ, որ կորուսանէ զհոգին ի հրացայթ տարտարոսն, դատող նորա սատանայ է, եւ հոգի նորա ի դժոխս: Քանզի այդ է վճիռ դատաստանի նորա, զի անչափ կորստեան եհաս: Իսկ որ հանեն զբանն անաւրէն ընդ պիղծ բերանն, զայնպիսեացն զաղաւթսն ոչ ընդունի Աստուած, եւ զձայն զաբրիւկեան փողոյն ոչ լսեն եւ ի դատաստանն Քրիստոսի ոչ մտանեն եւ որոշեալ են ի փառաց Որդոյն Աստուծոյ, այլ զտանջանսն յաւիտենից ժառանգեն, քանզի խիստ գտաւ բանն անաւրէն յիշոցացն քան զշնորհիւն, քան զգողութիւն, քան զպոռնկութիւն, քան զարուագիտութիւն, քան զանասնամոլութիւն եւ քան զամենայն մեղս: Իսկ որ պիղծ բան յիշոցացն ասէ, բարկացուցանէ զԱստուած եւ զվերին զաւրսն տրտմեցուցանէ, եւ Հոգին Սուրբ հեռանայ ի նմանէ, եւ բնակարան դիւաց լինի, եւ բարկութիւն Աստուծոյ մնայ ի վերայ նորա, եւ մեղաց նորա թողութիւն ոչ լինի: Հուր բորբոքի ի վերայ նորայ եւ կիզէ զանսուրբ մարմին նորա: Եւ ելցէ ի խաւարն արտաքին, ուր լալ աչացն եւ կրճել ատամանցն: Եւ քահանայ որ լսէ զբանն անաւրէն յիշոցացն եւ զանց առնէ, հասցին ի վերայ նորայ բանքն, զոր ասաց Փրկիչն. «Առէք ի դմանէ զտաղանդն». զի՞նչ. զառաքելութիւնն, զմարգարէութիւնն, զքահանայութիւնն, զոսկալին ասեն՝ զշնորհքն աւագանին, ընդ մէջ կտրեցէք եւ զբաժին նորա ընդ անհաւատսն դիք: Ահա այդ են խոստումն քահանային, որ լսէ զբանն անաւրէն եւ զանց առնէ, քանզի յիշոցնատուն որոշեալ է ի շնորհաց Հաւր եւ ի փառաց Որդոյն Աստուծոյ, եւ յողորմութենէ Հոգոյն Սրբոյ զրկեալ գտանի: Ոչ է արժան բնակել ընդ նմա, այլ որոշեալ ի սիրոյ եւ ի սեղանոյ նորա, զի պիղծ է կերակուր եւ ըմբելի նորա, պիղծ է սեղան եւ սեղանակից նորա եւ ամենայն ինչքն նորա պիղծագոյնք են, զի դէռ մերձ են առ նայ, եւ զաւրք դիւաց բոլորեալ են շուրջ զսեղանով նորա եւ կորնչի յաւուր բարկութեան իւրոյ զոր աւրինակ թոշի ազոաւ ի բունոյ իւրոյ, նոյնպէս թոշի ոգի պղծոյն յիւրում մարմնոյն եւ

այնչափ կորստեան հանդիպի, ոչ առնու մասն եւ բարին յողորմութենէն Աստուծոյ, այլ անչափ բարկութիւն եւ աններելի պատուհաս մնա նմայ: Բայց արդարոյն առաջնորդեն հրեշտակք, զանաւրինացն հոգիքն ընկալցեն դէս¹⁷⁰:

Ո՛վ եղբարք¹⁷¹, երկերուք ի մահուանէ, երկերուք ի հրոյն, զի անշէջ է, երկերուք ի տարտարոսացն, զի ոչ ունին յինքեանս ճաճանչ լուսոյ, երկերուք ի յորդանցն, զի անքուն են եւ անվախճան: Եւ դարձեալ ասէ.

Վա՛յ ինձ, զի քարոզէին եւ ոչ լսէի: Վա՛յ ինձ, զպատուիրանն ոչ պահեցի եւ զշոգին Սուրբ տրտմեցուցի: Վա՛յ է ինձ, զի տեղեակ էի արդարութեան եւ կատարեցի զանաւրեւութիւն: Վա՛յ է ինձ, զի տեսանէի զլոյսն եւ փախչէի ի խաւարն: Ո՛վ լայցէ զիս կամ ո՛վ ողբասցէ զմեռեալս մեղաւք եւ զկործանեալս անաւրէնութեամբ: Վա՛յ անաւրինաց յաւուր մահուան իւրոյ: Խոստովանիմ հոգով եւ մարմնով մինչ դեռ ի սգայութեան եմ:

Խոստովանիմ զՀայր, որոյ հայրութիւնն անհասանելի է:

Խոստովանիմ զՀոգին Սուրբ, որ ի Հարեւելանէ եւ ընդ Որդւոյ երկրպագեալ եւ փառաւորեալ միութեամբ Երրորդութեամբ:

Եւ արդ, եղբարք, ապաւինիմք ի Նորայ մարդասիրութիւնն, որ վասն մեր՝ մեղաւորացս խոնարհեցաւ յերկնից ի յերկիր, զի զմեզ ազատեցէ ի մեղաց եւ յերկնից բարութիւնսն հասուցանէ ի Քրիստոս Յիսուս ի Տէր մեր, Որում փառք յաւիտեանս յաւիտենից. Ամէն¹⁷²:

ՏԱՐՆԹԵՐՑՈՒՄՆԵՐ

Խորագիր՝ Ը Երանելոյն Եփրեմի Խորին Ասորւոյ եւ տիեզերաց վարդապետի ասացեալ վասն անաւրէն ուրացողացն եւ պիղծ յիշոցնատուացն եւ վասն լուծանելոյ զուրբաթ կամ զչորեքշաբաթ՝ ուտելով կամ ըմպելով: Բ յիշընցնատուաց (**այսպէս եւ այլուր**):

Բնագիր՝ 1 Ը լուարուք: 2 Ը զքարոզ: 3 Ը յասել **փիւ**. պատմել: 4 Ը **չիք** ի: 5 Ը ոչ քահանայից եւ ոչ վարդապետաց: 6 Ը այն Աստուծոյ **փիւ**. նոյն... Աստուած, Աստուծոյ: 6ա Ը զոր **փիւ**. իւր: 7 Ը աղաղակեալ: 8 Ը որ: 9 Ը զուրբաթ (Ը զուրբաթին) եւ զչորեքշաբաթ: 9ա Ը BC **չիք** միայն: 10 Ը մտանեն **փիւ**. անկանին: 11 Ը հաւատոցն: 11ա Ը ի Քրիստոսն արտաքս անկանին **փիւ**. որոշին... հեռանան: 11բ Ը եղև խորհուրդ: 12 Ը ուրբաթու: 13 Ը զուրբաթի զմարդն էստեղծ Աստուած: 14 Ը մարդոյ, Ը բանսարկուն վասն մարդոյն **փիւ**. Աղամայ: 14ա Ը ելեալ **փիւ**. ելանել: 15 Ը չորեքշաբաթին: 15ա Ը Քրիստոս մարմնացաւ: 15բ Ը BC եւ յաւուր ուրբաթի ծնաւ Քրիստոս **փիւ**. յաւուր... զՔրիստոս: 16 Ը լուծանեն: 16ա Ը BC **չիք** պատժին: 16բ Ը **չիք** դատեցի ի Քրիստոսն: 16գ Ը BC **չիք** դատապարտին: 16դ Ը BC **չիք** այլ: 16ե Ը **չիք** համարեցին: 17 Ը Իսկ որ անպատեհ եւ վայրապար հանէ զբան անաւրէնութեան ընդ բերանն իւր նա ուրացի զՔրիստոս, Ը Իսկ որք անպատուհաս եւ քան չարիք հանեն զբան ուրացութեան ի բերանոյ՝ նա ուրացի զԱրարիչն երկնի եւ երկրի **փիւ**. Իսկ որ... երկրի: 17ա Ը BC Լուարուք զահեղ բարբառն, որ ասէ յԱւետարանն, թէ **փիւ**. Լուարուք... ասէ: 18 Ը պատրաստեալ նմա, Ը **չիք** նմա: 19 Ը **չիք** անդ: 20 Ը **չիք** եւ սոսկալի: 20ա Ը **չիք** Արդ: 20բ Ը **չիք** զձեզ: 21 Ը եղբարք եւ ծառայակիցք **փիւ**. հարք իմ եւ եղբարք: 21ա Ը BC **չիք** եւ ծառայակիցք իմ: 22 Ը ի միտ առէք զպատուիրանս զայս, առջիք զհրամանս **փիւ**. մի անգիտութեամբ... զհրամանս: 23 Ը Տեառնէ **փիւ**. Աստուծոյ: 23ա Ը հողեղինի **փիւ**. ի հողեղինէ:

23 C մաղթանս մատուցանեմ, զի **փիս** մատուցանեմ մաղթանաւք եւ: 23q A **չիք** առ իս: 23η A Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի **փիս**. Աստուծոյ: 23ե BC աստուածութեան **փիս**. փառացն Աստուծոյ: 23q BC **չիք** Բանին Աստուծոյ: 24 B նորա **փիս**. նոցա: 24ա BC Արդ, զպատուիրանս **փիս**. Այլ: 24բ A **չիք** դարձեալ: 24գ **չիք** եւ զհրամանս: 25 B զմիտս: 25ա A այլ **փիս**. վայր: 26 C տարածեալ: 26ա BC չտա: 27 B **չիք** եւ որ... Աստուծոյ: 27ա A նմանէ: 28 C **չիք** որպէս: 29 B ոչ առնու **փիս**. մի առցէ: 29ա A եւ դարձեալ եթէ մի՛ լուիցէ նիա զձայն թովչի ճարտարի **փիս**. որպէս իժի... իմաստնոյ: 30 C ած: 31 B **չիք** թովիչ կամ ով: 31ա A **չիք** իմաստուն: 31բ A **չիք** իմաստուն: 32 C յիշոցնատու: 32ա A **չիք** ի զուր վաստակաւոր: 32բ A տանջանք աններելի: 32գ BC պահի նոցա **փիս**. պատրաստեալ է: 32դ A պէղծ: 32ե BC ասէ: 33 AC եթէ զագանք եւ անասունք զՏէր արինեն (C արինեսցեն) **փիս**. Ով... զԱստուած: 33ա BC թշնամի է Աստուծոյ **փիս**. թշնամանէ զԱստուած: 33բ A Եւ դարձեալ **փիս**. Դարձեալ... Տէր: 33գ A **չիք** վայրենիք եւ անասունք: 34 C որ: 35 B զարինս: 35ա A այլ ամենեքեան: 35բ BC անուն իմ **փիս**. զանուն Աստուծոյ: 35գ BC եւ տամ նոցա կերակուր **փիս**. Աստուած... զնոսա: 35դ A **չիք** ի ժամու: 36 C **չիք** իսկ: 36ա A **չիք** եւ պիղծ: 37 C յիշոցնատու: 38 C **չիք** է: 38ա A թշնամանի զԱստուած **փիս**. թշնամի է Աստուծոյ: 39 C զլեզու քո արարի եւ եւ զբերանդ որ յաշխարհի զիս փառաւորելով, դու դարձուցեր **փիս**. Զբերան քո... դարձուցեր: 40 AC արբանեկ եղեր եւ կատարիչ կամաց նորա **փիս**. արբանեակ... կատարիչ: 40ա A Ոյ: 41 C **չիք** եւ: 42 B գործաւոր սատանայի եւ վաստակաւոր: 43 C զպատին **փիս**. զպատիժն: 44 A հասանէ ար մեծ տագնապ ատենին, C հասանի ար մեծ ատենին եւ զալուստ: 44ա A **չիք** Որդւոյն Աստուծոյ: 45 C **չիք** եւ յար... ատենին: 46-47 B լեառն որպէս տոռունս, եւ բեռն որպէս ճանճիւն **փիս**. կապանք ... քո. **Վենետիկի ձեռագրում**. Ո՛վ բերան հայոյոյիչ, յորժամ հասանի օր մահուան քո, յայնժամ դնեն ճանճիւն հրեղէն ի բերան քո եւ քարշէն ի գեհենն (ՆԲՀ, Բ, էջ 170), դնեն ի բերան յիշոցնատուին **փիս**. դնի... քո: 47ա B գնա **փիս**. զբեզ: 47ա-47բ B եւ քարշէն գնա ի գեհենան, ուր ոչ շիջանի հուրն եւ բոցն բորբոքեալ ի վերա նորա ուտէ զանարիւնեալ մարմինն յիշոցնատուին **փիս**. ի հուր... քո: 48 BC **չիք** ով անարինեալ... յիշոցնատու: 49 C ի յերկիր: 49ա A զալարի: 50 C իբրեւ մագաղաթ զալարի **փիս**. զալարին որպէս մագաղաթ: 51 C իբրեւ գնոմ **փիս**. որպէս մոմ: 51ա A **չիք** եւ երկիր... նորա: 51բ BC Յայնժամ ասէ մարգարէն Դաւիթ, ասացի, թէ **փիս**.. Եւ Դաւիթ... ասէ: 52 B պատմեցից, C պատմեցի: 52ա A **չիք** ի քէն: 52բ A **չիք** գնալով ի դուռն եկեղեցւոյն: 53 C գնալով ի դեղ ապաշխարութեան **փիս**. գնալով... ապաշխարութեան: 53ա BC դառնալով յանարէն **փիս**. դառնայ ի: 53բ BC Աստուած յերկինս: 53գ BC թողու զմեղս **փիս**. թողութիւն... յանցանաց: 53դ A **չիք** ի մեղաց: 54 C ոչ դադարէ: 55 B չարաց: 56 B չարիս: 56ա BC ճշմարիտ: 57 C ճշմարտութեան սիրողն **փիս**. ճշմարիտ քննողն: 58 A **չիք** եւ անարեւելութեան... քրիստոնեայ: 59 C բերանոյդ **փիս**. բանիցդ: 60 C բանք: 61 B Աստուծոյ **փիս**. իմ: 62 C շարժեցեր: 59ա-63 A **չիք** եւ յանարէն... Ամենակալ: 63 C **չիք** ասէ... ամենակալ: 63ա A եւ այս յայտ է **փիս**. եւ հաստատեցի: 64 C **չիք** ամենայն: 65 C սողին: 66 C **չիք** Եւ: 66 A իմով առատ: 66բ A **չիք** իմով: 67 BC զիս, ով անարէն եւ պիղծ յիշոցնատու: 68 C ատեցեր զիս եւ զսատանա սիրեցեր **փիս**. ատեցեր զիս... սիրեցեր: 67-68 BC սիրեցեր. Եւ (C **չիք** Եւ) հաստատեցի զբերան եւ զլեզու քո արինել զիս եւ դու դարձուցեր զայդ ինձ ի թշնամութիւն եւ արարեր: 68ա A զսատանայ արարեր: 68բ BC վասն քո յերկնից ի յերկիր **փիս**. Եւ... վասն քո: 68գ A **չիք** եւ մարդացա: 68դ A Բեղիար եւ **փիս**. Բեղգեբուղ կոչէին զիս: 69 C ծնած: 70 C **չիք** Վասն քո: 71 A քարկոծ հրէիցն վասն քո եղէ: 72 B առնէին վասն քո: 73 C **չիք** գետ: 74 B զի **փիս**. եւ: 74ա BC

մաքուր **փիւ**. մկրտութեամբ: **74բ** BC զարդարեցի **փիւ**. անուանեցի: **74գ** BC անուանեցի **փիւ**. կոչեցի: **75** **Բ չիք** վասն քո թուք... ընկալայ: **75ա** BC արեամբ իմով **փիւ**. իմ արեամբս: **75բ** BC գնեցի եւ փրկեցի ի սատանայէ եւ յանիծիցն, որ կային ձեզ յաւրէնսն Մովսէսի: Ես եղէ պատարագ վասն քո եւ ազատեցի զքեզ յանասնականն պատարագէն, որ ոչ գոյր (C չկայր) փրկութիւն: Ես զքեզ Հար իմոյ: **75գ** BC **չիք** իմ: **75դ** BC ցուցի քեզ ճանապարհ: **75ե** BC **չիք** հորդեցի: **76** BC ասէ Աւետարանն: **77** C պեղծ: **77ա** BC մատուցանես անաւրէնութեամբ: **77բ** A **չիք** զանասունս: **78-79** BC եւ ասես (C աւել) ցրահանայն՝ մատաղ արժան է մատուցանել Աստուածութեան ի սուրբ եկեղեցի: Ոչ է պարտ քահանային մերձենալ ի պիղծ զուարակն յիշոցնատուին (C մերձենալ ի լուարակս նորա **փիւ**. մերձենալ... յիշոցնատուին) **փիւ**. ո՛չ գիտես, թէ: **80** **Բ չիք** այն: **81** A մարգարէն Եսայի ասէ, **չիք** մարգարէն: **82-83** C «Եթէ անաւրէն յիշոցնատուին մատաղն այնպէս է որպէս թէ շուն որ մորթիցէ, եւ եթէ մատուցանիցէ ինձ կնդրուկ, այնպէս է որպէս թէ հարկանէ որ զկառափն մարդոյ» **փիւ**. «Թէ... մարդոյ»: **82ա** A **չիք** եզն: **82բ** BC որ **փիւ**. անաւրէն... եթէ: **82գ** BC **չիք** ինձ: **82դ** A նաշի: **82ե** BC ի **փիւ**. կամ բաժկի ի պիղծ: **82զ** BC **չիք** ինձ: **82է** BC **չիք** որ: **82բ** BC **չիք** ինձ: **83ա** BC Ով անաւրէն եւ պիղծ յիշոցնատու, ո՛չ լսես առաքելոյն **փիւ**. Լուր: **84** C ասէ, թէ: **84ա** A **չիք** մարգարէն: **84բ** BC **չիք** Զի: **85** C է: **85ա** A յարկքն **փիւ**. պահքն: **86** C է: **86ա** A եւ սահմանք նորա **փիւ**. աղաւթքն: **87** BC ի տուն (C յարկ **փիւ**. ի տուն) նորա մտանել **փիւ**. աւթեանք նորա: **88** C պիղծք են: **88ա** BC **չիք** եւ ժանդ: **89** C ծխիցէ: **90** A **չիք** նորա, ճրագն **փիւ**. եւ... նորա: **90ա** A **չիք** յանուն: **90բ** A **չիք** որպէս: **91** BC հայիոյութիւն մատուցանէ Խաչի կամ (C եւ **փիւ**. կամ) եկեղեցոյ **փիւ**. հայիոյութեամբ... զեկեղեցի: **91ա** BC նորա: **91բ** A **չիք** զազրացեալ: **92** B Աստուծոյ: **92ա** BC **չիք** կամարար: **93** B զի բարբառ սատանայի է, որ խաւսիս **փիւ**. քանզի բարբառակից... սատանայի: **93ա** BC **չիք** քո: **94** B առ ի չլսելոյ **փիւ**. չլսել: **94ա-102ա** A **չիք** Երզեր... սատանայ է: **95** C **չիք** հրեշտակապետն: **96** C անգանելով առաջի Աստուծոյ **փիւ**. աղաչելով: **97** B **չիք** վասն... Քո: **98** B **չիք** ինձ: **99** C կուսանաց: **100** C եւ **փիւ**. որ: **101** C **չիք** ետ: **102** C դատ: **102բ** BC զահեղ: **102գ** BC զարհուրեցարոյ: **103** A **չիք** զձեզ, B զքեզ: **103ա** BC յիշեն: **103բ** BC պատին: **103գ** BC տաս անձին, քում եղուկ **փիւ**. եւ եղուկ կարդաս ասելով: **103դ** A **չիք** Ով: **104** C յիշոցնատու **փիւ**. անձն: **105** BC զիտեա, մեղա (C մեղաւք) ասա եւ խոստովանեայ (C **չիք** ասա եւ խոստովանեայ) եւ (A արի) մի մնար **փիւ**. գտի... խոստովանեայ: **106** A **չիք** մի վստահանար... քո, C **չիք** քո: **107** C յորժամ: **107ա** BC սարսափես **փիւ**. սարսես: **107բ** A **չիք** եւ կրճտես զատամունսդ: **107գ** BC եւ ոչ որ: **108** B տագնապումն է: **108ա** BC **չիք** խոստովանութեան: **108բ** BC **չիք** իբրեւ... ըմբոնէ: **109** B զի: **110** C սայր: **110ա** BC սար կորնչիս **փիւ**. լեառն կործանիցիս: **111** C կամ **փիւ**. թէ: **112** AC **չիք** կամ ի ծով: **113** C անգանիցիս: **113ա** A **չիք** վիմաւք: **114** C լինիցիս: **115** A տնարգեալ կործանեցիս կամ զազանաբեկ լինիցիս **փիւ**. զազանաբեկ... կորնչիս, C **չիք** կամ... կորնչիս: **115ա** A սատակեցիս **փիւ**. մեռանիցիս: **115բ** BC **չիք** կամ... անկանիցիս: **116** B փողաւթդ: **116ա** A **չիք** ցաւաւք: **117** B հասանիցի: **117ա** BC կորնչիս **փիւ**. դու: **118** C դառնապէս **փիւ**. դառնաս: **118ա** BC յանողորմ **փիւ**. յանաչառ, B դառնաս ի հուր գեհենին **փիւ**. ի գեհենն անկանիցիս: **119** B դատաստանն: **120** C դժոխսն: **121** C այլ երթ: **122** B դառնալ: **123** C զալ: **123ա** A **չիք** Յուսա... յեկեղեցին: **123բ** A **չիք** արեգակն է արդարութեան: **124** C մեղաց (**չիք** է): **125**, **126**, **127**, **128**, **129** C **չիք** է: BC **չիք** ի վերին Երուսաղէմ: **125ա** A **չիք** սրբիչ է յանցանաց: **126ա** BC ցուելոց **փիւ**. մոլորելոց: **128ա** A **չիք** դուռն երկնից: **129ա** BC ցուելոց **փիւ**. մոլորելոց: **128ա** A **չիք** դուռն երկնից: **129ա** BC **չիք** ի վերինն Երուսաղէմ: **130** C սորա: **130ա**

Ա **չիք** հաւատով: **131** B **չիք** քանզի: **131-132** BC Քահանայն փոխան է առաքելոյն, քանզի (B **չիք**) կարող է սուրբ եւ ամենայն ճշմարտութեամբ զմեղս թողուլ **փիւ**. ի ձեռն... իցէ: **132ա** BC **չիք** մեր: **132բ** B ասէ: **133** B կապեցես: **134-140** BC եւ զոր արձակեցես (C արձակիցես) յերկրի եղիցի արձակեալ յերկինս: Բայց որ երթա զհետ **Պետրոսի** եւ ոչ վաճառէ զշնորհս Հոգւոյն Սրբով զանձով, որպէս Սիմոն կախարդն, նա (C **չիք** նա) կարող է թողուլ զմեղս, որպէս կենարարն՝ զպոռնկին եւ զմաքսաւորին եւ զաւագակին (C զաւագակին եւ զմաքսաւորին): **Ջոր** խոստովանիս արտասուաւք (C **չիք** արտասուաւք) ի դուռն եկեղեցւոյ ի ձեռն (C ի ձեռն սուրբ եւ ճշմարիտ) քահանայի թողու զքեզ Քահանայապետն Քրիստոս, եւ (C **չիք** եւ) ազատեցէ զքեզ յաւիտենական տանջանացն (C ի մեղացն յայնմանէ) **փիւ**. նոյնպէս... հրամայեցա: **141** B վաստակս **փիւ** ժամանակս: **142** C ասես (**չիք** մի): **143** C եթէ ծերանամ: **144** B աշխարեմ **փիւ**. ապաշխարեմ: A եթէ ծերանամ՝ ապաշխարեմ **փիւ**. թէ... ապաշխարեմ: **145** C ապաշխարեալն: **146** B սատանայական **փիւ**. ի սատանայաւ: **147** C Եւ պարտ է **փիւ**. Պարտ է նախ: **147ա** A **չիք** եւ: **147բ** A **չիք** զմեղսն: **148** C թաքուցանել ամաչելով: **148ա** BC **չիք** Ջի: **148բ** BC **չիք** աստէն: **149** C **չիք** Եթէ ի միոջէ... խոստովանիս: **149ա** B գործես **փիւ**. առնիցես: **150-150ա** BC ուր բիրք բիրտոցն ժողովին եւ զաղտնիք մարդկան յայտնին եւ դու ամաւթով (C ամաւթալից) լինիս ի Քրիստոսէ **փիւ**. յորժամ տիեզերք... լինին: **151** B խոստովանի: **152** B իւր: **153** C հաղորդի: **154** C Տեառն **փիւ**. Որդւոյն Աստուծոյ: **155** C արթն: **156** C **չիք** ունելով: **157** B **չիք** ի բերանն: **158** B մերձեցուցանեն առ սուրբ: **159** C Աստուածութեան **փիւ**. փառացն... Աստուծոյ: **160** B **չիք** ի մարմնոյ... Տեառն: **160ա** A **չիք** մտանէ ի մարմինն: **161** B հանէ **փիւ**. հալէ: **162** C **չիք** զոսկի... աղտոյ եւ: **162ա** A **չիք** զոսկերս մարտիրոսաց, B առնէ իբրեւ զոսկերս մարտիրոսաց: **162բ** A բերան նոցա պիղծ կոչի **փիւ**. եւ որպէս... լինի: **163-164** B զաւճի եւ յետին թոշակին ոչ կարէ հասանել: Եւ որք ի յետին թոշակէն զրկին, C Եւ յետին թաւշակին ոչ հասանել կարէ **փիւ**. եւ որք... զրկին, A **չիք** եւ որք... զրկին: **164ա** A **չիք** Առնուն հրեշտակք զհոգի նորա եւ: **165** C տանին զհոգի նորա **փիւ**. առնուն... տանին: **165ա** A խաւարայեան: **165բ** A տէրունական **փիւ**. արքունական: **166** C աւղբն: **166ա** B բառնա: **166բ** A տէրունական **փիւ**. արքունական: **166գ-167** BC Նմա ոչ է պարտ **փիւ**. Այլ է բնակութիւն... ոչ է արժան: **168** C գերելեաց: **168ա** BC ներողութիւն լինի տանջանացն **փիւ**. տանջանացն... գոցէ: **169-170** BC Արդ, աղաչեմ զամենեսեան, ով քահանայք, աղբիւրք ծարաւելոց, հանգիստ աշխատելոց, առաջնորդք կուրաց եւ լոյսք (C լոյս) խաւարելոց, ողջացուցիչք (B ողջացուցիչ) հիւանդացելոցն մեղաւք, որ մշտնջենաւորն ընկալայք (C ընկալեալ էք) ի Հոգւոյն Սրբոյ զվերակացութիւն ժողովրդեանն Քրիստոսի, համարս տալոց էք յաւուրն դատաստանի:

Արդ, տեսէք եւ (C **չիք** եւ) զգոյշ լերուք, զգերեալս ի սատանայէ փրկեցէք, զմոլորեալսն դարձուցէք, զհիւանդացեալն ի մեղաց կարողացուցէք, մի՛ դադարէք զգոյշացուցանել (C լռեցուցանել) զայնոսիկ, որ հանեն զբան անարեւն յիշոցաց (C անարեւնութեան **փիւ**. անարեւն յիշոցաց) ի բերանոյ իւրեանց, զի այն է իսկ (C իսկ է), անապաշխար մեղքն, որ ոչ գայցէ յապաշխարութիւն խոստովանութեամբ (C ի խոստովանութիւն եւ ի թողութիւնն **փիւ**. յապաշխարութիւն խոստովանութեամբ (C ի խոստովանութիւն եւ ի թողութիւնն **փիւ**. յապաշխարութիւն խոստովանութեամբ) կորուսանէ զխոտորողն եւ զչխոստովանողն՝ ի հուր գեհենին եւ ի տաքտաքոսն խաւարային, եւ դատող նորա սատանա է: Եւ հոգի նորա ի դժոխս բնակէ, (C մտանէ) քանզի այդ է վճիռ դատաստանի նորա, զի անդարձ կորստեանն եհաս: Իսկ որ հանէ զպիղծ (B **չիք** զպիղծ) բան անարեւնութեան յիշոցաց ընդ բե-

րանն իւր՝ յայն բերանոյն Աստուած, այլ (C **չիք** այլ) զաղալթսն (B աղալթք) ոչ ընդունի, զձայն փողոցն Գաբրիէլի (B **չիք** Գաբրիէլի) նա (C **չիք** նա) ոչ լսէ եւ ի դատաստան ընդ (C **չիք** ընդ) Քրիստոսի ոչ մտանէ (C մտցէ), զլոյս (C զփառս) Խաչին ոչ տեսանէ, այլ զյաւիտենական տանջանսն (C զտանջանսն յաւիտենական) ժառանգեցէ, քանզի խիստ չար է բան անաւրէնութեան յիշոցաց (C բան անաւրէն յիշոցացն խիստ է), քան զշնութիւն, քան զպոռնկութիւն, (B **չիք** քան զպոռնկութիւն) քան զգողութիւն, քան զարբեցութիւն, քան զարուագիտութիւն (B **չիք** քան զարուագիտութիւն) եւ քան զամենայն չարաչար մեղս առաւել չար է (C քան զայլ չար մեղս), եւ պիղծ է ասացողն (C **չիք** եւ պիղծ է ասացողն): Զի (C **չիք** Զի) որ յիշոցն տա՝ զԱթոռ Աստուածութեան շարժէ եւ զվերնական զարսն տրտմեցուցանէ, Հոգին Սուրբ փախչի եւ հեռանա ի նմանէ եւ բնակարան լինի դիւաց (C բնակութիւն դիւաց լինի) եւ բարկութիւն Աստուծոյ մնա ի վերայ նորա: Մեղաց նորա թողութիւն ոչ լինի ոչ աստ եւ ոչ ի հանդերձեալն (C հանդերձելումն): Թէ ոչ խոստովանի եւ ապաշխարէ (C **չիք** թէ ոչ... ապաշխարէ) հուրն բորբոքի ի վերա նորա եւ ելցէ ի խաւարն արտաքին, ուր լալ աչաց անդադար (B է **փխ** անդադար) եւ կրճել ատամանցն անհանգիստ, քանզի յիշոցնատուն որոշեալ է ի փառաց Հաւր եւ ողորմութենէ Որդւոյն Աստուծոյ եւ ի շնորհաց Սուրբ Հոգւոյն (C ի շնորհացն Հաւր եւ ի փառացն Որդւոյն Աստուծոյ, յողորմութենէ Հոգոյն Սրբոյ) , ոչ է արժան բնակիլ ընդ նա (C նմա) , այլ, իբրեւ ի դիւահարէ (B դիւէ), փախչիլ ի նմանէ, զի պիղծ են ամենայն ինչք (C ինչ) նորա եւ ուր ձեռք նորա հասանէ (C ուր հաւանին ձեռք նորա): Եւ կորնչի յաւուր բարկութեան իւրում, զոր արինակ թոչի ագռաւ ի բունոյ իւրմէ, նոյնպէս եւ հոգի պիղծ յիշոցնատուին (C պղծոյն **փխ** պիղծ յիշոցնատուին) ի մարմնոյ իւրմէ, եւ անդարձ կորստեան հասանէ, եւ (C **չիք** եւ) ոչ առնու մասն եւ բաժին յողորմութենէն Աստուծոյ, այլ անչափ բարկութիւն եւ աններելի պատուհաս մնա ի վերայ նորա (C նմա): Այլ (B Եւ) արդարոցն առաջնորդեն հրեշտակք եւ զմեղաւորաց հոգիքն կալցեն դէպ տանջողք. **փխ** Արդ, աղաչեմ... ընկալցեն դէպ:

171-172 B Ո՛վ եղբարք երկերուք ի հրոյն, զի անշէջ է, երկերուք ի մահուանէն, զի դառն է, երկերուք ի տարտարոսացն, զի ոչ ունի ջերմութիւն, զարհուրեցուք յորդանցն, զի անքուն են, երկերուք ի հրեշտակացն, զի անողորմ են, երկերուք ի Դատաւորէն, զի անկաշառ է: Սիրելիք, աստէն փոխանակեցուք զկողմ ողորմութեան մարդասիրին ընդ անսպառ տանջանացն, մինչդեռ ողորմութեան դուռն բաց է: Խնդրեցէք ողորմութիւն ի յառատ պարգեւողէն եւ զանանց բարութիւնսն, ժառանգեցէք յանտրտում ուրախութիւնսն: Եւ որ ոչն խոստովանի եւ ապաշխարէ եւ անզեղջ մեռանի՝ յայնժամ ասասցէ. վա՛յ ինձ, քարոզէին քահանայքն եւ ես ոչ լսէի, ընթեռնուին զպատուիրանն Աստուծոյ եւ ես ոչ պահէի: Վա՛յ ինձ, զի տեղեակ էի արդարութեան եւ առնէի զանիրաւութիւն: Վա՛յ ինձ, զի ճանաչէի զխաւարն եւ գնայի ընդ նա: Եւ արդ, ո՞վ լացցէ զիս կամ ո՞վ ողբասցէ զմեռեալս մեղաւք եւ զկործանեալս անաւրէնութեամբ. Վա՛յ անաւրինին յաւր մահուան իւրոյ:

Եւ արդ, ո՞վ անաւրէն եւ պիղծ յիշոցնատու, դարձիր ի չարեացոյ եւ յանառակ վարուցոյ եւ ասա զղջմամբ եւ յառաչանաւք. Մեղա Աստուծոյ կենդանոյ: Խոստովանիմ, զՀայր, որոյ հայրութիւն անհասանելի է, խոստովանիմ զՈրդի, որոյ ծնելութիւն անբաժանելի է, խոստովանիմ զՀոգին Սուրբ, որ ընդ Հաւր եւ ընդ Որդւոյ երկրպագի եւ փառաւորի էութեամբ եւ միաւորութեամբ: Եւ արդ, մենք՝ հաւատացեալքս ապաւինիմք ի Նորա մարդասիրութիւն, որ վասն մեր՝ մեղաւորացս խոնարհեցաւ յԻւր անճառելի հայրական փառացն եւ զմեզ ազատեաց ի սատանայէ եւ ի չար գործոց նորա եւ երկնից արքայութեան զմեզ ար-

ժանի արար: Ժողովուրդդ եւ ծառայդ Աստուծոյ, այր եւ կին, ծերք եւ տղայք, հայեցարուք ի ձեզ եւ տեսէք, թէ յոր ժամանակ եմք հասել, որ ոմանք ի գերութիւն են եւ ոմանք ի սով են, ոմանք ի շարժ են եւ ոմանք՝ ի մահտարածամ, եւ դուք տեսանէք եւ ոչ զղջայք եւ ոչ ապաշխարէք, եւ գիտէք, որ վասն մեղաց է այս ամենայն ի վերայ աշխարհի:

Ո՛վ եղբարք. վասն սիրոյն Քրիստոսի եւ յուսոյ արքայութեան, ամենեքեան դարձիք ի մեղաց, խոստովանեցէք զանցանս ձեր եւ բոլորով սրտիւ ասացէք. Մեղա՛ Աստուծոյ: Թողէք յիշոցն, որ գլուխ է ամենայն մեղաց, մի լուծանէք զչորեքշաբաթն եւ զուրբաթն, զի մի ընդ անաստուած անաւրէնսն դատապարտիք: Թողէք զբամբասանս, զպոռնկութիւն, զշնորհիւն, զգողութիւն, զարբեցութիւն, զգրկանք, զոխակալութիւն, զերդումն եւ զամենայն մեղաց տեսակ, եւ դարձջիք առ Տէր Աստուած ձեր, եւ սիրեսջիք զմիմեանս եւ զաղքատն մի՛ առնէք անտես, զի աղքատն փոխանակէ Աստուծոյ: Եւ Աստուած բարձցէ ի ձէնջ զցասումն եւ զմահտարածամ, զշարժ, զսով եւ զամենայն պատուհաս: Արդ, բարերարն Աստուած քաղցրութեամբ հայեցի ի մեզ եւ ի ձեզ ի ժողովուրդդ եւ առաքեսցէ զնորիս Հոգւոյն Սրբոյ ի ձեզ եւ յոսկերս ննջեցելոց ձերոց քահանայիցդ եւ ժողովրդեանդ **փիւ**. ով եղբարք... Ամէն:

Ը Ո՛վ եղբարք երկերուք ի մահուանէ, զի դառն է, երկերուք ի հրոյն, զի անշէջ է, երկերուք ի հրեշտակացն, զի անողորմ են, երկերուք ի տարտարոսացն, զի ոչ ունին ծրարեալ զջերմութիւն, զարհուրեցաք ի մեղաւորն ի հուր գեհենին: Յայնժամ ասէ ի միտս իւր. Վայ ինձ, զի քարոզէին եւ ես ոչ լսէի. վա՛յ ինձ, զի կորուսի զպտուղ ապաշխարութեան, զանցաւոր կեանս սիրեցի եւ զյաւիտենականսն արհամարհեցի. վա՛յ ինձ, զի զպատուիրանս Աստուծոյ ոչ պահեցի, այլ զՀոգին Սուրբ տրտմեցուցի, վայ ինձ, զի գիտէի զբարին եւ ոչ առնէի, այլ զչարն գործի, վա՛յ ինձ, զի սգայի զարդարութիւն եւ կատարեցի զանաւրէնութիւն, վա՛յ ինձ, զի ճանաչեմ զլոյսն եւ փախչիմ ի խաւարն: Ո՛հ, որ զիս միայն տեսանեմ մեղաւք ի տանջանս եւ կենցաղաւարս չարէ, յաւժարանայի լսել զբարբառ Սուրբ Աւետարանին եւ ոչ առնէի: Ո՛վ զիս լայցէ կամ ո՛վ ողբացէ զմեռեալս մեղաւք եւ զկործանեալս անաւրէնութեամբ: Վայ անաւրէնին յաւուր մահուան իւրոյ: Զի որ սիրէ զԱստուած՝ լոնցէ ի չարութենէ առ ի ճանաչել զպատուիրանն Աստուծոյ եւ լսել քարոզութեան սուրբ գրոց, պնդել պահաւք եւ աղաթիւք, ի բաց ընկենուլ զսատանայի խորհրդովք իւրովք, զաչս ցածուցանել առ ի չտեսանելոյ զկանայս, զսիրտն պահել ի ցանկութենէ^{12*}, զի կանայք զէն են խաբողական թշնամոյն, եւ նոքաւք պատերազմի ընդ որդիս մարդկան, զի գործի մեղաց ստեղծաւ յառաջմէ իսկ արեւ, զի նովաւ իսկ եմուտ^{13*} թշնամին յաշխարհս, զի նովաւ մարտնչի ընդ սուրբս եւ ընդ ընտրեալսն: Վասն այնորիկ փախեցեն^{14*} եւ բնակեցեն ոմանք ի փապարս լերանց եւ որք կացին ի շէնս յաշխարհի բազումք գայթակղեցին^{15*}: Վասն այնորից ասէ. եթէ «Զոր կին եւ զինի ոչ է խաբել՝ զնա դժոխք ոչ յաղթահարեցեն»^{16*}, զի ուր կանայք և զուսանքն խաղան՝ ի ձայնէ նոցա փախստական լինին դասք հրեշտակաց, ողբան եւ անձինք, եւ վերանա ի նոցանէ Հոգին Սուրբ, տրտմին եւ հոգիքն

¹² ցանգութիւն:

¹³ եմուտ:

¹⁴ փափեցեն:

¹⁵ գայթակղեցին (այսպէս և այլուր):

¹⁶ յաղթահարեցեն:

ննջեցելոցն, ի նոցանէ լինին կռիւք եւ ատելութիւնք: Անդ դատէ հայր գորդի եւ որդի գիայր, անդ դատէ մայր գորուսոր եւ դուստր՝ զմայր, եւ նոքա լինին բնակարանք եւ արթեւանք դիւաց: Վասն զի յոյժ ցանկալի ցուցաւ գեղեցկութիւն կանանց յաչս առն, որով փորձէ սատանա զամենեսեան, բայց կապեալ լիցի բերանն այն, որ ասիցէ, թէ շնութիւն չէ մեղք, իսկ որ ընդ Աստուծոյ խաւսէին, զցանկութիւն շնութիւն ասացին եւ զախտն շարժումն զարշ համարէին: Իսկ զշնութիւն որպէս ասեմք թէ չէ մեղք, զի այսպէս ասացին, որք սուրբն են սրտիւք եւ անբիծ՝ ամենայն գործովք: Այսպէս ասեն, եթէ զգոյշ կացէք ի տեսութենէ աղտելի կանանց, որ սանդորին^{17*} եւ աւծանին, պաճուճին եւ ճիմին, խաղան եւ ճուրին ի հրապարակս տեսողացն, եւ գայթակղեցուցանեն զմիտս ծերոց եւ տղայոց, եւ լինին սաստիկ պատիժք տեսողացն, զի ուր կաքաւիչք են, անդ եւ դէպ ժողովին եւ ծափս հարցեն ընդ նոսա: Եւ որ կաքաւենն նման են դիւահարի, վազին ի մէջ նոցա՝ ոտնաթաւաթով^{18*}, անձնախաղած^{19*}, քակէ զաւդուածն ի միմեանց, այլայլի, ոլորի, ճկի, ճկմկի^{20*} նոյնպէս իբրեւ զդիւահարս, եւ այսիւ ամենայնիւ գայթակղեցուցանէ զտեսողացն եւ հեռացուցանէ^{21*} ի պատուիրանացն Աստուծոյ, եւ աւտարացուցանէ ի քարոզութենէ սուրբ գրոց: Արդ, աղաչեմ զձեզ, եղբարք, յիշեցէք զաւր ահեղ դատաստանին եւ զահագին տեսիլ դատաւորին, զվերանալ արդարոցն եւ զմնալ մեղաւորացն ի տանջանսն, ուր ոչ ինչք եւ ոչ ողբք յաւգուտ եւ յաւուրն յայնմիկ, ոչ արդարքն մաղթեն եւ ոչ սուրբքն բարեխաւսեն վասն գնացելոցն մեղաւք, զի աստ է պատրաստ^{22*} լինել ամենայնի: Մի՛ յուսար ի ծերութիւն եւ մի՛ համարիր քեզ ժամանակս բազումս, զի աներեւոյթ են ելք մեր յաշխարհէս. ոչ գիտես զաւրն եւ զժամն, ոչ ի տուէ գիտես եւ ոչ ի գիշերի, ոչ ի ննջել եւ ոչ յառնել կամ ի գնալ ի ճանապարհի կամ ի գետոց որձանաց կամ ի տանց ի վերայ անգելոց կամ յայլ պատահարաց զինչ եւ իցէ կամ ի տուր առ շնչոյն կամ ի բարբառոյ բերանոյդ եւ ի քթթել ականդ ելանես յաշխարհէ եւ ոչ ժամանես ապաշխարել: Յիշեա զյանցանս քո եւ հայցեա յարածամ զթողութիւն մեղաց քոց, զոր գործեցեր զհետ խաբող թշնամոյն ասելով՝ «Հայր, մեղա յերկինս եւ առաջի Քո, ես ոչ եմ արժանի կոչիլ որդի Քո, այլ համարեա զիս իբրեւ զմի ի վարձկանաց քոց» (Ղուկ. ԺԵ 19): Եւ յորժամ զայս ասասցես, դադարեա ի մեղացն, եւ զոտս քո, որ ի մեղս գնաց, ընթացոյ գեկեղեցին եւ զձեռք, որ ի մեղս շաւշափեցան, համբարձ առ Աստուած, դարձոյ զսիրտդ ի բարի խորհուրդ եւ զմիտսդ սրբեա ի չար ոխակալութենէ, ժողովեա եւ եկ ի քեզ, եւ աղաւթեա առ նա ճշմարտութեամբ՝ զամենայն մարմինդ սիրտ առնելով եւ զսիրտդ՝ ոգի, զի ի բոլոր սրտէ արինեսցես զԱստուած եւ ոչ ապականես զաղաւթն աւտար խորհրդով եւ դատարկութեամբ: Այս է, որ ասէ, թէ՝ «Ուր երկու եւ երեք ժողովին յանուն Իմ՝ անդ եմ ես ի մէջ նոցա, եւ կատարեցից զխնդրուածս նորա» (Մտթ. ԺԸ 20): Եւ դարձեալ ասէ. «Հայեցաւ նա յաղաւթս խոնարհաց եւ ոչ արհամարհեաց զխնդրուածս նոցա» (Սղմ. ՃԱ 18): Եւ այլ ասէ. «Ոչ բնակեցայց յոք, եթէ ոչ ի հեզս եւ ի խոնարհս եւ յայնոսիկ որ դողան ի բանից իմոց» (Եսայի, ԿԶ 2): Եւ դուք տեսանիցէք զերիցունս եւ զքահանայս եւ համարիք զնոսա իբրեւ զմի ի ժողովրդենէ, եւ ոչ գիտէք եթէ յանդիման են՝ Աս-

¹⁷ սանդորին:

¹⁸ Չիք՝ ՆԲՀ:

¹⁹ Չիք՝ ՆԲՀ:

²⁰ Չիք՝ ՆԲՀ:

²¹ հեռացուցանեն:

²² պատրաստ:

տուծոյ, որպէս Փրկիչն ասէր. «Երթայք, մկրտեցէք զնոսա յանուն Հայր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ» (Մտթ. ԻԸ 19): Եւ պատուեր տայր պահել զպատուիրանսն: Եւ այլ ասէ. «Թէ զպատուիրանս իմ պահեսցեն, ապա եւ ձերն պահեսցեն, եւ եթէ զԻս հալածեսցեն, ապա եւ զձեզ հալածեսցեն» (Յովհ. ԺԵ 20): Եւ ետ իշխանութիւն յերկրի թողուլ զմեղս մարդկան: Եւ ասէ. «Ձոր կապեցէք յերկրի եղիցի կապեալ յերկինս եւ զոր արձակիցէք յերկրի եղիցի արձակեալ յերկինս» (Մտթ. ԺԶ 19) զի աջ քահանային բարձր է քան զերկինս, եւ աջ քահանային զհողանիւթ մարդիկ հաւասար հրեշտակաց առնէ, զփայտ եւ զքար նշան կենսաբեր խաչին առնէ, շինուածս՝ տաճար Աստուծոյ եւ բնակարան հրեշտակաց եւ քաւարան մեղաւորաց առնէ եւ ի ձեռն քահանային բաշխի մարմին եւ արին Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի: Ո՛վ քահանայք, ի պատուիրանս կացէք, որ կարող լինիք կատարել զգործ քահանայութեան: Եւ այլ իշխանութիւնք բազում են, զոր ետ Աստուած ի ձեռն քահանային, որ է բացող դրան արքայութեան երկնից եւ իշխան յերկրի եւ ունի իշխանութիւն յերկինս: Վասն այնորիկ կացոյց Աստուած երիցունս եւ դատաւորս, քանզի էրեցն աւագ թարգմանի եւ քահանայն՝ առաջնորդ, ոչ ընդունիս եւ արհամարհես եւ փախչիս ի քարոզութենէ նորա: Ոչ զիտես, եթէ նովաւ ազատիս ի մեղաց եւ նովաւ մտանես ի կեանսն յաւիտենից, զի նա ցուցանէ զճանապարհ վերինն Երուսաղէմի, զոր Պաւղոս ասէ. թէ՛ «Ձոր ակն ոչ ետես եւ ունկն ոչ լուաւ եւ ի սիրտ մարդոյ ոչ անկաւ» (Ա Կորնթ. Բ 9): Այնպիսի ուրախութիւն գտանեն մարդիկ ի ձեռն քահանային, քանզի բժշկէ ամենայն ցաւոց. զի յորժամ գնացէ հիւանդն առ բժիշկն եւ ցուցանէ զցաւն, որ յանձինն, եւ նա դիցէ զդեղն, ըստ ցաւոյն եւ բժշկեսցէ: Ապա եթէ ոչ ասիցէ ճշմարիտ՝ ոչ աւգուտ լինի դեղն նմա: Նոյնպէս եւ մարդն, յորժամ խոստովանի զմեղս իւր եւ ոչ թաքուցանէ, այլ յայտնէ առաջի Աստուծոյ եւ յանդիմանէ զթշնամին, յայնժամ առնու զթողութիւն մարդասիրութեամբն Աստուծոյ եւ իշխանութեամբ քահանային ի ձեռն խոստովանութեան եւ ապաշխարութեան, զի որ խոստովանեցաւ՝ քաւեցաւ, որդի լուսոյ կոչեցաւ, զի խոստովանութիւն կեանք է, խոստովանութիւն ճանապարհ է եւ դուռն արքայութեան: Վասն այնորիկ ասէ. «Ասա նախ զմեղս քո, զի արդարացիս» (Եսայի ԽԳ 26). զի եթէ իբրեւ զագոռա սեւացեալ ես մեղաւք եւ մտեալ յեկեղեցին խոստովանիս՝ իբրեւ զաղանի սպիտակացեալ ելանես յեկեղեցւոյն խոստովանութեամբ եւ ապաշխարութեամբ: Ո՛վ եղբարք, ուսարուք ի սողնոյն՝ ի դժնդակ թունաւոր աւձէն, զի յորժամ մորթն բրտասցի^{23*} եւ թոյնքն^{24*} դառնասցի եւ գիտասցէ, եթէ ա[յ]սպէս ոչ կարէ^{25*} ապրել, ապա երթեալ ի տեղի ինչ կացցէ^{26*} անսուղ զաւուրս քառասուն գտիւ եւ զգիշեր: Եւ յետ այնորիկ մորթն խլեսցի ի մարմնոյն եւ ապա երթեալ մտցէ ի տեղի ինչ նուրբ եւ ի բաց մերկանա զմորթն եւ ձգէ զթոյնսն ի բաց եւ մանկանա ի նոյն մանկութիւն, եւ գնա անկանի ի ջուր եւ լուանի, զի մի մնացէ առ նմա ի հին չարութենէն, եւ յորժամ ելանիցէ, ոչ դառնա ընդ այն ճանապարհն, զի երկնչի յառաջին թոյնիցն, որ ի բաց ընկեց: Եւ դու, ով մարդ, թանձրացեալ ես մեղաւք եւ ոչ խոստովանիս քառասնաւրեա ապաշխարութեամբ եւ ի բաց բառնաս զմեղսն եւ ոչ դառնալ ի նոյն եղծանի մեղքն: Նոյնպէս եւ արջն, յորժամ զիտասցէ, եթէ ձմեռն գալոց է, երթա ի խոռոչ

²³ բրդասցի:

²⁴ թոյնքն:

²⁵ կարել:

²⁶ կացէ:

ջուրց եւ այնչափ ըմբիցէ մինչեւ լուսացի որովայն նորա եւ ոչ մնասցէ ի հին կերակրոյն աղիքն, զի եթէ մնասցէ առ նմա ի հնոյն, ոչ ապրի, եւ ապա կերիցէ տակ ինչ, եւ թմբրիցէ մինչեւ զգարուն: Ով մարդ, եւ դու արասցես նոյնպէս, յորժամ խոստովանիս ճշմարիտ, որ ոչ մնասցէ ի հին մեղացն եւ ապականէ զքեզ, զի զոր թագուցանես ի մարդոյ, որ կամի բժշկել զքեզ, որ ոչ սաստիւ, այլ քաղցրութեամբ ցուցանէ զդեղ իրացն: Եւ դու զցաւսն ոչ յայտնես յաշխարհական յատենին յանդիման ամենեցուն ցուցանի, որ ոչ կարես թագուցանել եւ ծածկել^{27*}: Մի՛ ապաւինիք ի ծերութիւն եւ համարիք ժամանակս բազումս, մի՛ մոռանայք զերկիւղն^{28*} Աստուծոյ, զի զերկիւղն Աստուծոյ մերժէ զամենայն ամբարշտութիւն*, իսկ հպարտութիւն մերժեալ հեռացուցանէ զերկիւղն Աստուծոյ: Ի չորից իրաց հաստատի ամենայն առաքինութիւն. ի հաւատոց, եւ ի յաղաթից, եւ ի հոգեւոր վաստակոց, եւ ի տքնութենէ: Արդ, պարտ է ի տղայութեան աւուրց մինչեւ ցճերտութիւն անարատ պահել պահաւք եւ աղաւթիւք, մի՛ յանդգնել բանիւք, մի՛ շատախաւս լինել ի ծաղր, պատկառանաւք զարդարիլ ի վայր ունել զաչսն եւ ի վեր զխորհուրդն, մի՛ հակառակող լինել, այլ հնազանդ լինել եւ կատարիչ պատուիրանացն Աստուծոյ, եւ յինն ժամն զպէտս մարմնոյն ճաշակել եւ ոչ անառակ կերակրաւք վարիլ յաւուրս պահոց եւ ուխտից: Որպէս եւ Պաւլոս ասէ. թէ՛ «Մի՛ որ զձեզ խաբեսցէ ուտելով կամ ըմբելով կամ մասամբք տաւնից կամ ամբամտիւք կամ շաբաթիւք, որ են ստուերք մահու հանդերձելոցն» (Կողոս. Բ 16): Եւ այլ ասէ. Յամենայն պարարտ կերակրոց յաւուրս պահոց եւ ուխտից մի՛ ճաշակեր, զի պահքն մարմնոյն սուգ է եւ տաւնքն մարտիրոսաց՝ յիշատակ չարչարանացն եւ տանջանացն, եւ նոքա չարչարին եւ մեք ուրախանամք՝ ուտելով եւ ըմբելով զտանջանսն պատուեմք: Նոքա վասն հաւատոց չարչարեցան եւ վասն մեր աղաչեցին զԱստուած եւ մեք ոչ պահաւք եւ աղաւթիւք եւ ճգնութեամբ զյիշատակ չարչարանացն եւ ճգնութեան նոցա կատարեմք, զի մի՛ նմանիցեմք հերձուածողացն, որ պահք ասեն եւ զարդարեն զսեղանս զինով եւ ձկամբ, եւ արիւնոտ պատարագ մատուցանեն Ջատկին իբրեւ զհրէայքն եւ անասունսն մասն առնուն եւ միաւորին, եւ ի Քրիստոսի մարմնոյն եւ յարիւնէն ի բաց կենան եւ ի վերայ այսր ամենայնի այլ եւս անառակութիւն գործեն: Եւ արդ, ո՞վ ասէ զայսպիսի պահս պահք եւ ընդունելի Աստուծոյ, զի ուր կերակուրք եւ արբեցութիւնք են, անդ են եւ խեղկատակութիւնք, անդ են եւ թատերք, ժանգաւոտութիւնք, անդ են լկտիք եւ գործիք դիւաց եւ ի նոցանէ լինին չարախաւսութիւնք եւ գոյժք եւ մարդասպանութիւնք: Վասն այնորիկ ասէ. Փակեաց Տէր զարքայութիւն ընդդէմ կերողաց եւ արբեցողաց. զի պոռնիկք եւ գողք եւ արուագէտք եւ արբեցողք եւ իգացեալք զարքայութիւն Աստուծոյ ոչ ժառանգեն^{29*}, զի կամս սրտից իւրեանց կատարեցին անառակ վարիւք՝ արտաքոյ պատուիրանացն Աստուծոյ, խցեցին զականջս իւրեանց, որպէս իժի եւ քարբի, զի մի՛ լուիցեն զձայն թովչի ճարտարի եւ մի՛ առցեն դեղ ի դեղատուէ իմաստնոյ: Վասն այսորիկ ասէ յահեղ ատեանն. Յայնժամ աչք կուրաց բացցին եւ ականջք խլից լուիցեն, զի անդ յայտնի, եւ անդ ճանաչի ամենայն գործք մարդկան՝ բարոյ եւ չարի, եւ որոշեացի որումն ի ցորենոյն: Վասն այնորիկ պարտ է պահել զպատուիրանս Աստուծոյ, որ յառաքելոցն են եւ ի հայրապետացն սահմանեալ, զի ի հայրապետացն սահմանեցաւ վասն մարդեղութեան Աստուծոյ

^{27*} ծածկելով:

^{28*} զերկեղն:

^{29*} Տէ՛ս Ա Կորնթ. Զ 9-10:

եւ ասէն յաւուրս պահոցն մի՛ գինի եւ թթու գինի եւ մի՛ ի բերոյ որթոյ: Եւ Մովսէս ասէ. «Մի՛ ճաշակեր յաւուրս պահոց եւ ուխտից, մի՛ ի խաղողոյ եւ մի՛ չամչոյ եւ մի՛ գինոյ» (Թիւք 2 3): Եւ Փրկիչն ասաց. «Ոչ արբից ի բերոյ որթոյ մինչեւ նորոգեցից զձեզ յարքայութիւն Հաւր իմոյ» (Ղուկ. ԻԲ 18): Եւ բազումք էին ի նախահարցն, որ միս ուտէին եւ գինի ոչ ըմպէին. զի սուգ ունէին նախահարքն վասն Ադամայ, ապա վասն է՞ր ժողովեցան նեստորականքն^{30*} եւ ի բաց հանին ի միաբանութենէն, որ զձեթն եւ զգինին ծառոյ բեր ասացին եւ զձուկն՝ ջուրց, զի Մովսէս զձուկն մի ասաց եւ Եսայի աւձ՝ կամակոր վիշապ, եւ Յունան վիշապ ասաց, եւ առաքեալքն մարմին ասացին, եւ Բարսեղ Կեսարացին գազան ասաց: Արդ, եթէ իմացեալ էաք զնա եթէ ջուր է եւ մեք ճաշակեաք եւ մարձ կացուցանեաք զորովայնս մեր: Այլ առաքեալն զձեթ եւ զձուկն եւ զեւղ եւ զպանիր մի ասացին: Եւ Պաւլոս ասէ. «Ա՛յլ մարմին ձկանց եւ ա՛յլ մարմին գազանաց եւ ա՛յլ մարմին թռչնոց» (Ա Կորնթ. ԺԵ 39) եւ ձուկն եւ թռչուն մի են. ձկանց եւ թռչնոց միապէս թելք գոյ, եւ թռչունք թռչին ընդ աւղս եւ ձկունք լողան ի ծովու եւ ամենայն ինչ կենդանի է: Եւ վասն ձիթոյ ասէ մարգարէն Դաւիթ. «Ձեթ ի պարարտութեան եւ եւղ ի զարութիւն» (Սղմ. ՂԱ 11), Եւ ի կենսաբեր Սուրբ Աւետարանին ասէ. «Տուք մեզ յեւղոյդ ձերմէ, զիսհա շիջանին լապտերք մեր» (Մտթ. ԻԷ 8): Եւ ոչ ուրեք ձեթ ասացին հարքն մեր, այլ «եւղ» ասէին: Եւ որ զձեթ փայտի ծնունդ ասէ կամ խոտոյ ի պատճառս ուտելոյ պահոցն: Այլ զձուկն եւ զձեթ եւ զեւղ եւ զպանիր միապէս ասացին, զի նոյնպէս եւղ եւ պանիր ի խոտոյ ծնանի եւ ի ջրոյ, զի առանց խոտոյ եւ ջրոյ անհնարին է կիթ տալ անասնոց: Նոյնպէս եւ ձուկն հաւասար է թռչնոց: Եւ այլ եւս խստագոյն, քանզի ձկունք թռչին ի վերայ ջրոց, իսկ եթէ ձկունք ջուր են՝ թռչունք՝ հողմ են: Եւ դու մի ընտրել ի միմեանց. կեր ի միասին զերկոսեանն, քանզի զամենայն ինչ մեծ եղեւ ձուկն, քանզի զամենայն գազանսն ցուցանէ եւ զմիմեանս կլանուն, եւ զմարդիկ ըմբեն ի քիմս իւրեանց եւ յորովայնս: Այլ կամեցան սուրբ հարքն մեր ընդ եւղոյ եւ ընդ պանրոյ միաւորել զնոսա յաղագս կրանաւորաց եւ կարգաւորաց մխիթարութեան, որպէսզի ճաշակեցեն ի մարմնոյ նոցա փոխանակ մտոյ, քանզի բազումք են, որ պատճառանաւք մեղս գործեն եւ հեզնելով^{31*} ուրասցին զպատուիրան եւ մատաղ մատուցին եւ ճաշակեցին խորհրդով եւ հայեցեցին զպատուիրադիրն^{32*}, որ կրանաւորացն չկա հրաման պատարագ մատուցանել, քան զՔրիստոս, եւ ճաշակեալ խորհրդով զսուրբ մարմինն եւ զարիւնն Քրիստոսի: Այլ որպէս ամենայն փակ բանալի ունի, նոյնպէս եւ ամենայն մեղաց ապաշխարութիւն գոյ եւ թողութիւն, զի որպէս մոմ, որ այրի ի հրոյ, նոյնպէս եւ ամենայն մեղք, յորժամ դադարեն ի մեղացն, դիւրաւ ջնջի ի ձեռն քահանային: Արդ, զիտեմք զՔրիստոս քաղցեալ եւ զիտեմք զՔրիստոս ի հինգ նկանակէ եւ յերկուս ձկանցն զհինգ հազարսն կերակրեալ՝ թող զկանայս եւ զմանկտիս, զիտեմք զՔրիստոս ծարաւի, եւ զիտեմք զՔրիստոս զջուրն ի գինի դարձուցեալ, զիտեմք զՔրիստոս ի նաւի նստեալ եւ զիտեմք զՔրիստոս ի վերայ ջուրց գնացեալ, զիտեմք զՔրիստոս մեռեալ եւ զիտեմք զՔրիստոս մեռեալս յարուցեալ, զիտեմք զՔրիստոս, զի կայր առաջի Պիղատոսի, եւ զիտեմք զՔրիստոս ընդ աջմէ Հաւր նստեալ, զիտեմք զՔրիստոս թշնամանեալ ի հրէիցն, եւ զիտեմք զՔրիստոս երկրպագեալ ի հրեշտակաց: Արդ է, ինչ որ ըստ Աստուածութեան

^{30*} նստորականքն

^{31*} հենգնելով:

^{32*} Չիք ՆԲՀ (բայց՝ պատուիրանադիր, Բ, 620):

իմանի եւ է, ինչ որ ըստ մարդկութեան: Եւ վասն այսորիկ յերկուցն ասի Քրիստոս, զիտեմք զՔրիստոս ի Մարիամայ ծնեալ եւ զիտեմք զՔրիստոս յառաջ քան զյաւիտեանս:

Փառաւորեացոյք այսուհետեւ զՅիսուս Քրիստոս՝ զանքակ պարիսպն, զհիմն հաւատոյ ի վերայ վիմի հաստատեալ է, քանզի Նա է, որ ասաց ցՊետրոս, եթէ «Դու ես վիմ եւ ի վերայ այդր վիմի շինեցից զեկեղեցի Իմ սուրբ եւ դրունք դժոխոց զնա մի յաղթահարեացեն» (Մտթ. ԺԶ 18): Նոյնպէս եւ առաքեալն Պաւղոս ուսուցանէ եւ ասէ, թէ՝ «Հիմն այլ ոք ոչ կարէ դնել, քան զեղեալն, որ է Յիսուս Քրիստոս» (Ա Կորնթ. Գ 11): Աղաչեմ զձեզ այսուհետեւ եղբարք, զի ամենայն հեգուրթեամբ ուտելով եւ ըմպելով է եւ բազմադիմի յանդգնութեամբ: Արդ, մի՛ զոք յանդգնեալ գայթակղեցուցանէք եւ առ յապա ժամանակին ի դատաստանին վճարէք: Արդ, մի տայք տեղի սատանայի, զի մի՛ մատնեացէ զձեզ ի տանջանսն յաւիտեանական, այլ զՔրիստոսի փառաւորեացոյք հանապազ, զի Նմա վայելէ փառք, իշխանութիւն եւ պատիւ յաւիտեանս յաւիտենից. ամէն փիւ. ով եղբարք... Ամէն:

ՏԱՐԲԵՐԱԿ Բ

ԵՐԱՆԵԼԻՈՅՆ ԵՓՐԵՄԻ ԽՈՐԻՆ ԱՍՈՐԻՈՅ ԱՍԱՑԵԱԼ ՎԱՄՆ ՅԻՇԸՆՑՆԱՏՈՒԱՅ ԵՒ ԱՅՆՈՑԻԿ ՈՐ ՈՒՏԵՆ ԶՊԱՀՍ ՈՒՐԲԱԹՈՒ ԵՒ ԶՉՈՐԵՔՇԱԲԱԹՈՒ, ԵՒ ԼԻՆԻՆ ՄԱՄՆԱԿԻՑ ԽԱՉԱՀԱՆՈՒԱՅՆ՝

Արդ¹⁻², որք, լուծանեն ուտելով զպահս Չորեքշաբաթի, եւ կամ զուրբաթի, այնպիսիքն ոչ եթէ միայն ընդ մեղաւք անկանին, այլ ի հաւատոց որոշին եւ ի քրիստոնեական հաւատն հեռանան: Վասն զի յաւուր չորեքշաբաթի եղեւ չար խորհուրդ աւձին³ նախամաւրն Եւայի: Եւ յաւուր ուրբաթու⁴ կերան ի հրաժարեցուցիչ⁵ պտղոյն եւ մերկացեալ⁶ ի լուսոյն, արտաքսեցան ի դրախտն եւ հեռացան յԱրարչէն⁷: Եւ դարձեալ յաւուր⁸ չորեքշաբաթին եղեւ մատնութեան խորհուրդն Յուդային վասն Քրիստոսի: Եւ յաւուր ուրբաթու⁹ մատնեցաւ Քրիստոս յատեանն Պոնդացոյ¹⁰ Պիղատոսի եւ դատապարտեցաւ ի մահն Խաչի: Տէրն մեր ի ձաղանս եւ ի կատականս¹¹ հրէիցն՝ եւ դու¹² պարարտութեամբ կերակրովք¹³ յաւրանա¹⁴, Տէրն քո¹⁵ ի չարչանանս խաչին՝ զքացախն ընդ¹⁸ լեղեան էարբ՝ եւ դու անոյշ զինով արբենայս: Եւ որ ում թողութեան արժանաւոր լինիցիք: Արդ, որ զչորեքշաբաթու պահսն լուծանէ՝ ընդ Յուդայի եւ ընդ աստուածասպան քահանայիցն դատեացէ ի Քրիստոսէ¹⁹: Եւ որ՝ զուրբաթն լուծանէ ընդ Պիղատոսի եւ ընդ այլ խաչահանուացն համարեցի²⁰: Իսկ որ բան անարեւն²¹ հայիոյութեան ի բերանոյ հանէ եւ յիշոցնատուն ուրացեալ է ի Քրիստոսէ²²: Լուարուք զահեղ²³ բարբառն, զոր ասէ Քրիստոս²⁴ յԱւետարանն, թէ՝ «Որ ուրացի զիս առաջի մարդկան՝ ուրացայց եւ Ես զնա առաջի Հաւր Իմոյ, որ յերկինս է»³³: Քանզի ուրացողն ոչ ունի մասն ի Քրիստոսէ Աստուծոյ՝ այլ զհուրն անշեջ եւ զպատիժ աններելի տանջանացն յաւուրն ահագին²⁵:

Արդ, զոր զպատասխանս Աստուծոյ լսել ոչ կամիցի²⁶ եւ զքարոզութիւն սրբոց գրոց ոչ

³³ Մտթ. Ժ 33, Ղուկ. ԺԲ 9:

ախորժե՝²⁷ նմանեցի այնմ որ²⁸ Դաւիթ ասէ. «Սրտմտութիւն նոցա ըստ նմանութիւն աւ-
ձին, որպէս իժի եւ քարբի, զի խցեալ է զականջս իւր, զի մի՛ լուիցէ նա զձայնս թովչի ճար-
տարի, եւ մի՛ առցէ²⁹ դեղ ի դեղատուէ իմաստնոյ»^{34*}: Աղէ, ածեք զմտաւ³⁰, թէ ո՞վ է թովչին
կամ³¹ իմաստուն դեղատուն. ճարտար թովչին³² քահանայն է եւ իմաստուն դեղատուն
Քրիստոս է³³: Ո՛վ անաւրէն եւ պիղծ յիշընցնատու ի զուր վաստակաւոր եւ գործաւոր սա-
տանայի³⁵, որպիսի հուր եւ անվախճան³⁶ տանջանք³⁷ կան եւ պահին քեզ³⁸, որ զպիղծ եւ
զանառակ բանս յիշոցացոյ³⁹ ասէս⁴⁰⁻⁴¹ մարդկան եւ անմեղ⁴² անասնոց: Ո՛վ⁴³ մահաշունչ
բերան եւ անաւրէնութեան պաշտանեայ եւ սուտ քրիստոնեայ, զի՞նչ ունիս ասել աստո-
ւածային պատուիրանացն, որ ասէ. «Պատուեա զհայր քո եւ զմայր»^{35*}: Եւ դու հայիոյես
զբերան եւ զհաւատ հար քոյ եւ զմար, զաչս եւ զականջս յանուանէ ի յիշես եւ յիշընցաւք
հայիոյես, անարգես եւ քամահես⁴⁴: Զի՞նչ ունիմ⁴⁵ պատասխանել⁴⁶ արեւնսդրացն հնոց եւ
նորոց⁴⁷, որ հայիոյես պիղծ եւ զազիր յիշընցաւք զմարդն, որ պատկեր է Աստուծոյ եւ զա-
նասուն, որ արհնաբանիչք են Աստուծոյ, լուր զինչ ասէ մարգարէն. «Գազան եւ անասուն
զՏէր արհնէք»^{36*}. Եւ դուք անգեղջ սրտիւ զայնպիսիսն հայիոյէք, մանաւանդ, զորս տո-
ւեալ է Աստուած ի ծառայութիւն ձեզ եւ յաւգնութիւն տկարութեան մերում, զոր լծեմք եւ
կրթեմք, հեծնումք եւ բառնամք, զբուրդն զգենումք, զմազն առնեմք, որոց պարտապան եմք
դարմանել եւ զպիտոյս կարգացն լցուցանել, լաւ եւ անուշ պահել, զոհանալ զնոցա տո-
ւաղէն մեզ ի մադաթ եւ յաւգնականութիւն: Ով պիղծ բերան եւ անաւրէն յիշընցնատու
զի՞նչ լինիս տալ դու պատասխանի Աստուծոյ, որ հայիոյես զստեղծուած Նորա, զոր բա-
րերարութեամբն Իւրով Աստուած տուեալ ի շահ եւ յաւգուտ քեզ: Տես, թէ որով կարես
գտանել քեզ թողութիւն մեղաց դու, ով պահսակեր զամենայն բարիս ունիս քեզ ի վայել
խիստ ծանր է եւ դժուարին, թէ ի շաբաթն երկու ար պահես եւ զայն ոչ թէ ծոմով, զոր
պարտ է ծոմաջան պահել, եւ դու զայն զինով եւ ձկամբ լուծանես: Եւ զո՞ր ներեալ թողու-
թիւն ունիս գտանել յԱստուծոյ⁴⁸: Մարգարէքն պահեցին եւ արեւնս եդին պահել, եւ առա-
քեալքն զնոյնս⁴⁹ հաստատեցին: Տես, զի Քրիստոս վկայէ զասելն փարիսեցւոյն⁵⁰, թէ՛ «Պա-
հեմ երկիցս ի շաբաթու»^{37*}: Յայտ է, որ զչորեքշաբաթն եւ զուրբաթն⁵¹ ասէ. թէպէտ եւ նա
վրիպեալ⁵² ի վարձուցն վասն սնափառութեան իւրոյ, սակայն սրբոցն արեւնս եդեալ է
պահել զայն աւուրսն, եւ առաքեալքն զիրս եւ⁵⁵ ընթերցուածս կարգեցին նոյն աւուրցն եւ
ծոմաջան պնդութեամբ պահել պատուիրեցին, որպէս յայտ է ընթերցուածոցն Տեառն եդ-
բորն⁵⁶ Յակոբայ, որ յաւուրս քառասնորդաց պահոցս եդեալ է եւ սահմանեալ ի չորեքշա-
բաթու եւ յուրբաթու⁵⁷: Եւ դու զի՞արդ համարձակիս յուտել մինչ զի եւ զինով եւս զեխեալ
գտանես եւ արբեցութեամբ շրայտիս⁵⁸ եւ յանառակ մեղս թաթախիս եւ անաւրէն որկորս-
տութեամբ լիանաս: Եւ զո՞ր ներել թողութիւն մեղաց ունիս գտանիլ եւ կամ յորպիսի՞ ա-
հագին տանջանացն ակն ունիս ապրել, որ զայնպիսի սուրբ աւուրսն ապականես
որկորստութեամբ քով⁵⁹: Եւ դու անաւրէն բարկացաւդ ո՞չ լուար ի Սաղմոսէն եւ յԱռաքե-

³⁴ Սղմ. ԾԷ 5-6:

³⁵ Ելք Ի 12. Օրէնք Ե 16, Մտթ. ԺԹ 19, Մրկ. Է 10, Ժ 19, Ղուկ. ԺԸ 20, Եփես. Զ 3:

³⁶ Հմմտ. Սղմ. ՃԽԸ 10:

³⁷ Սղմ. ԼԳ 14-15:

լոյն, թէ՞⁶⁰ «Բարկանայք եւ մի մեղանչէք»^{38*}, եւ զՏեառն հրաման⁶¹, թէ՛ «Որ բարկանայ եղբար իւրում ի տարապարտուց՝ պարտապան լիցի գեհեան հրոյն»^{39*}: Զայս Տէրն իսկ ասէ եւ ոչ առաքեալ եւ կամ մարգարէ⁶²: Եւ Յակոբոս Տեառնեղբայրն ասէ, թէ՛ «Բարկութիւն մարդոյ զարդարութիւն Աստուծոյ ոչ գործէ»^{40*}: Եւ դու⁶³ զի՞նչ ունիս տալ Աստուծոյ պատասխանի, որ ոչ միայն բարկանաս, այլ եւ անաւրէն հայհոյութեամբ եւ յիշոցնատըութեամբ⁶⁴ ի բարկութիւն շարժես եւ⁶⁵ զայրացուցանես զանբարկանալին Աստուած: Ասելով մարդոյն, որ ըստ պատկերին Աստուծոյ յարիներալ է, թէ այս ի՞նչ չարալուր բարբառով զքո հաւատդ, զքո բերանդ: Զնոյն ասես եւ անմեղ անասնոցն, որ քեզ ի ծառայութիւն տուեալ է զԱստուծոյ եւ յաւգնականութիւն տկարութեանդ քո⁶⁶ տուրք եւ պարգեւք մեծք⁶⁷ յԱստուծոյ, որ զոմն լծես եւ զայլն⁶⁷ կրես, զմինն բառնաս եւ զմեւսն հեծնուս, եւ⁶⁹ այնցիկ բարկանա՛ս, զայնոսիկ հարկանե՛ս եւ հայհոյե՛ս, եւ նոցա յիշո՛ցն տաս, որ քեզ ոտք են եւ ձեռք, մշակ եւ հաց, վաստակ⁷⁰. եւ զո՞ր գեհեան չես ընդունելոց եւ կամ զո՞ր խաւար աղջամղծին չես ժառանգելոց եւ կամ յո՞ր տարտարոս չիցես⁷¹ երթալոց, վասն զի այն⁷² ամենայն հայհոյանք յԱրարիչ նոցա վերաբերի⁷³: Եւ արդ, եթէ զղջանաս ի մեղաց եւ փոշիմանիս յիշընցացդ, դառնաս յանառակ վարուցդ եւ խոստովանեալ ապաշխարես⁷⁴ զչարաչար յանցանադ՝ գոյ ներումն եւ կայ յոյս գտանել թողութիւն անուղղայ գնացիցդ եւ ծանրագոյն պարտուցդ⁷⁵: Լուր մարգարէին, որ ասէ. «Լռեցոյ զլեզու քո ի յարութենէ եւ շրթոնք քո մի՛ խաւսեսցի զնենգութիւն: Խոտորեա ի չարէ եւ արա զբարի, խնդրեա զխաղաղութիւն եւ երթ զհետ նորա»^{41*}: Իսկ որ այսմ ոչ լսէ որ անսա եւ ոչ հնազանդի⁷⁷, այնպիսոյն պիղծ են եւ պահսն⁷⁸ պիղծ է մատաղն, պիղծ են եւ խունկն: Ով անաւրէն հայհոյիչ, յորժամ⁷⁹ զկամսն սատանայի առնես, զի՞ արդ իշխես բանալ զբերան քո եւ ասել. «Հայր մեր, որ յերկինսդ ես»: «Այնպիսոյն⁸⁰ ասէ Հայրն երկնաւոր, թէ ոչ լսեմ Ես⁸¹ քեզ, այլ նա լսէ քեզ, զորոյ⁸² զկամսն կատարես»⁸³:

Լուարուք զբանս ահագինս⁸⁴ եւ զարհուրեցարուք եւ մի մնասցուք աւուրն անաւգնականի եւ անհնարի⁸⁵: Այլ աստէն խոտորեցուք ի չարեաց եւ արացուք զբարիս, խոստովանեցուք զմեղս եւ ապաշխարեցուք զյանցանս, զի մի յորժամ ցաւքն նեղեն զմեզ եւ մեղքն մեր յիշատակին ի միտս մեր եւ յանցանք մեր շուրջանակի պատեն զմեաւք եւ դու վայ եւ եղուկ ասես եւ ոչ ինչ աւգտիս⁸⁶: Ո՛վ թշուառական զի՞նչ ասես⁸⁷ յայնժամ եւ կամ զի՞ արդ ապրեսցիս. մի՛ վստահանար ի բարեկենդանութիւն քո, քանզի չար է արն այն մեղաւորաց, յայնժամ դողաս եւ սարսափես⁸⁸ եւ զատամունս կրճտես եւ ոչ ոք է, որ աւգնէ եւ փրկէ զքեզ, քանզի ճեպումն է հոգւոյ եւ տագնապ մարմնոյդ, որ զհոգիդ ի քէն⁸⁹ ի բաց պահանջեն, եւ դու ոչ կարես ժամանել յաւգնականութիւն անձին քում: Զի գող է արն այն եւ երագ հասանէ, եւ դու ոչ զիտես, թէ ի գետ⁹⁰ անկանիս կամ թէ ի ծով խեղդիս: Ոչ զիտես, թէ քարավեժ լինիս եւ կամ թէ հողով ծածկիս: Ոչ զիտես, թէ սրով մեռանիս եւ կամ թէ զազանակուր լինիս⁹¹ եւ կամ այլ որոգայթիւ անապաշխար մեռանիս եւ երթաս⁹² ի հուր գե-

³⁸ Սղմ. Դ 5, Եփես. Դ 26:

³⁹ Մտթ. Ե 22:

⁴⁰ Յակ. Ա 20:

⁴¹ Սղմ. ԼԳ 14-15:

հենին, ուր ոչ ոք կարելի չէր արգելափակել լինելը⁹³ քեզ յանողորմ դատաստանին. ո՛չ հայր եւ ո՛չ մայր եւ ո՛չ եղբայր եւ ո՛չ քոյր եւ ո՛չ այլ ազգական եւ կամ բարեկամ ո՛չ այր զկին ազատել կարել եւ ո՛չ կին՝ զայր, ո՛չ եղբայր⁹⁴ զեղբայր կարել թափել եւ ո՛չ հայր զորդի կարել փրկել, զոր ասել մարգարէն. «Եղբայր ոչ փրկել եւ ոչ փրկել մարդ»^{42*}, բայց միայն՝ բարեգործութիւնք մեր⁹⁵: Արդ, եղբայր⁹⁶, մեղաւք մի ելանէր⁹⁷ յաշխարհէս անապաշխար եւ մի՛⁹⁸ լինիր հրոյ բաժին յաւիտենական⁹⁹: Այլ զղջացիր¹⁰⁰ երթ եւ ժառանգեալ ուրախութեամբ¹⁰² զկեանսն յաւիտենականս: Յուսա յԱստուած եւ դիմեալ ի դուռն եկեղեցւոյն՝ զղջամբ սրտի եւ խոստովանութեան մեղաց ի ձեռն¹⁰³ քահանային, քանզի եկեղեցին քաւարան է մեղաւորաց, ժողովարան՝ ցրուեցելոց եւ դարձուցիչ մոլորելոց¹⁰⁴, դուռն է երկնից եւ ճանապարհի արքայութեան բնակարան սրբոց եւ նաւահանգիստ արդարոց, մայր եւ դայեակ¹⁰⁵ ամենեցուն, որք հաւատով մտանեն ընդ դրունս նորա¹⁰⁶ եւ խոստովանութեամբ եւ աւրինութեամբ ի յարկս նորա: Իսկ քահանայն փոխանորդ է առաքելոցն եւ հայր ժողովրդեան, ուսուցիչ եւ խնամածու եւ կարող առ ի թողուլ զմեղս: Որպէս եւ Քրիստոս հրամայեաց Պետրոսի, թէ՛ «Ձոր կապիցեք¹⁰⁷ յերկրի՝ եղիցի կապեալ յերկինս եւ զոր արձակեսցես յերկրի՝ եղիցի արձակեալ յերկինս»^{43*}: Բայց որ երթայ ընդ հետոցն Պետրոսի եւ ոչ որ¹⁰⁸ վաճառէ զշնորհս Հոգւոյն Սրբոյ արծաթոյ՝ նա կարող է թողուլ զմեղս որպէս կենարարն զմեղս¹⁰⁹ զպոռնկին եւ զաւագակին, զմաքսաւորին եւ զանդամալուծին: Զի զոր դու հաւատով խոստովանիս¹¹⁰ քահանային՝ թողու քեզ մեծ Քահանայապետն Քրիստոս¹¹¹ եւ ազատեսցէ զքեզ յաւիտենական¹¹² տանջանացն:

Ո՛վ մարդ, մի՛ յուսար ի վաստակս¹¹³ ծերութեան քո եւ մի՛ ասեր, թէ՛ ի ծերութեան ապաշխարեմ: Զի գող է սատանա¹¹⁴, խաբէ եւ կորուսանէ զքեզ եւ ոչ ժամանես ապաշխարելն, այս է՝ դադարել ի մեղաց¹¹⁵: Մեղանչելն մարդկաւրէն է, եւ անդարձ ի մեղս մնալ սատանայի աւրէն է¹¹⁶:

Բայց պարտ է նախ երթալ առ քահանայն զղջամբ եւ արտասուալ¹¹⁷ եւ խոստովանել զմեղս եւ ոչ թագուցանել: Եւ թէ ի միոջե¹¹⁸ քահանայէ ամաչելով թագուցանես զմեղս քո եւ ոչ խոստովանիս՝ ի տիեզերական հրապարակին զի՞նչ արասցես, ուր բիրք բիրուց եւ հազարք հազարաց ժողովին, եւ գաղտնիք մարդկան յայտնեալ հրապարակին¹¹⁹: Յայնժամն է ամալթն ահագին, յայնժամն է¹²⁰ պատկառանքն սոսկալի: Իսկ որ ճշմարտապէս¹²¹ խոստովանի զմեղս իւր զամենայն եւ հաղորդի մարմնոյ եւ արեան Որդոյն Աստուծոյ, եւ¹²² վախճանի¹²³ տանին զնա հրեշտակք բարիք ընդ ամպս լուսաւորս¹²⁴: Ունելով զհաղորդութիւն յաջոյ ձեռնին որպէս զմոմեղէն եւ զխոստովանութիւն որպէս զմատանի արքունական ի միւս ձեռնին¹²⁵: Նմա դոնապանն բանա եւ ժամանեալ հասանէ առաջի փառաց աթոռոյ Աստուածութեան: Իսկ աստ մտանէ հաղորդութիւն ի մարմին հաղորդաւորին եւ հանէ զսառնացեալ¹²⁶ մեղս ի նմանէ եւ առնէ զնա անմեղ իբրեւ¹²⁷ զոսկերս մարտիրոսաց: Իսկ որ ոչ խոստովանի՝ եւ յետին թռչակին¹²⁸ արժանի ոչ լինի, առնուն հրեշտակք զայնպիսի հոգին եւ տանին ընդ աւղն¹²⁹ խաւարային եւ նմա դոնապանն ոչ

42- Մղմ. ԺԸ 18:

43- Մտթ. ԺԸ 18:

բանա, քանզի ոչ ունի զարքունական մատանին եւ ոչ մոմեղէն լուսատու¹³⁰ յաջոյ ձեռնին:

Արդ, աղաչեմ զձեզ, ով քահանայք՝ հաց քաղցելոց եւ¹³¹ աղբիւր ծարաւելոց եւ առաջ-նորդք մոլորելոց, որք զվերակացութիւնդ ընկալայք ի Հոգւոյն Սրբոյ, զգուշացարուք¹³² ժողովրդեանն Քրիստոսի, զի վասն նոցա համարս տալոց էք յաւուրն դատաստանին: Արդ, տեսէք եւ զգոյշ կացէք, զգերեալսն ի սատանայէ դարձուցէք, զհիւանդացեալսն մեղաւք առողջացուցէք¹³³, զմարդս պատուական ըստ պատկերին Աստուծոյ յանարգ մեղացն հանէք, զի բերան Աստուծոյ կոչեսջիք: Իսկ որ ոչ լսէ քահանային եւ մնացէ անապաշխար՝ քահանայն անպարտ է յարենէ նորա: Ըստ մարգարէին, որ ասէ¹³⁴ «Անաւրէնն յանաւրէնութեան իւրում մեռցի եւ դու զանձն քո ապրեցուցես»^{44*}: Ապա թէ «ոչ զգուշանայցես նմա»¹³⁵ զարիւն նորա ի ձեռաց քոց խնդրեցից»^{45*}: Եւ նա¹³⁶, որ աստ ոչ լսէ¹³⁷ քահանային զքարոզ պատուիրանին եւ ոչ անդ լսէ ի Քրիստոսէ «Աւրինեալք Հաւր իմոյ եկայք»⁴⁶ «-ն»¹³⁸: Այլ զայն լսէք, թէ՛ «Երթայք յինէն, անիծեալք ի հուրն յախտենական»^{47*}:

Ո՛վ եղբայրք, երկերուք ի հրոյն, զի անշէջ է, վախեցէք ի մահուանէ, զի դառն է: Երկերուք ի սառնամանեացն, զի անտապ է¹³⁹: Վախեցէք ի յորդանցն, զի անքուն են¹⁴⁰: Զարհուրեցարուք¹⁴¹ ի տարտարոսացն, զի անդադար են: Մոսկացարուք¹⁴² ի խաւարէն, զի աննշոյլ է: Սարսեցէք ի լալ աչացն¹⁴³, զի սաստիկ են: Մասանեցարուք¹⁴⁴ ի կրճել ատամանցն, զի ահագին է: Երկերուք ի Դատաւորէն, զի անաչառ է: Վախեցէք ի Դատաւորէն, զի ահաւոր է: Զարհուրեցէք ի յատենէն, զի անկաշառ է¹⁴⁵: Սարսեցէք¹⁴⁶ ի հրեշտակացն, զի անողորմ են: Պատկառեցէք ի յամաւթոյն, զի անվրէպ է: Դողացէք ի տանջանացն, զի անանց է: Զանգիտեալ սարսեցէք ի չարչարանացն, զի յախտենական է¹⁴⁷: Սիրելիք, աստ սերմանեցուք¹⁴⁸ զողորմութիւն, զի անդ հնձեցուք զբարութիւն: Աստէն տացուք յաղքատն, զի¹⁴⁹ անդէն առցուք յԱստուծոյ: Աստէն¹⁵⁰ տեցուք զհիւանդսն, զի անդէն տեցուք զՔրիստոս¹⁵¹: Աստէն խնդրեցուք եւ անդէն առցուք: Աստ աշխատեցուք եւ անդ հանգիցուք: Աստ պահեցուք¹⁵² եւ անդ վայելեցուք: Աստ լացցուք եւ անդ ծիծաղեցուք: Աստէն սգացուք¹⁵³ եւ անդէն խնդացուք: Աստ տրտմեցուք եւ անդ ուրախացուք: Աստ սուգ¹⁵⁴ մտցուք, զի անդ ուրախացուք: Աստ զհերս ընկալցուք, զի անդ ի Քրիստոսէ զփոխարենն առցուք: Աստ զսրբոց ոտս լուսացուք, զի անդ ի Քրիստոսէ մեծարեցուք: Աստ զորքս եւ զայրիս խնամեալ սփոփեցուք¹⁵⁵, զի անտի Հոգւոյն Սրբոյ մխիթարեցուք: Աստ կանոնաց սրբոց հնազանդ լիցուք, զի անդ ի Հաւրէ Աստուծոյ աւրինեցուք:

ՏԱՐՐՆԹԵՐՑՈՒՄՆԵՐ

Խորագիր. B Երանելոյն Եփրեմի Ասորւոյ ասացեալ Վասն լուծանելոյ զչորեքշաբաթն եւ զուրբաթն

Բնագիր՝ 1-2 B Արդ, որ ոք լուծանէ զպահս ուրբաթին եւ զչորեքշաբաթին ոչ թէ միայն մեղանչէ, այլ ի հաւատոց ուրացեալ է չար եւս քան զանհաւատն է եւ ի քրիստոսական

⁴⁴ Եզեկ. Գ 19:

⁴⁵ Անդ, 20:վ

⁴⁶ Մտթ. ԻԵ 34:

⁴⁷ Մտթ. ԻԵ 41:

արինացն հեռացեալ է: Եւ արդ, գիտելի է, զի **փիւ**. Արդ... հեռանան: Վասն: **3** Բ աւձին ընդ: **4** Բ Ուրբաթին: **5** Բ **չիք** հրաժարեցուցիչ: **6** Բ մերկացան: **7** Բ **չիք** եւ հեռացան յԱրարչէն: **8** Բ ի **փիւ**. յաւուր: **9** Բ Ուրբաթի: **10** Բ **չիք** Պոնդացոյ: **11** Բ կայտական: **12** Բ դուք: **13** Բ պարարտ կերակրաւք: **14** Բ յաւրանայք: **15** Բ մեր **փիւ** քո: **16** Բ անուշանայք: **17** Բ Յիսուս Քրիստոս **փիւ** քո: **18** Բ **չիք** ընդ: **19** Բ դատապարտեսցի յԱստուծոյ: **20** Բ դատեսի **փիւ** համարեսցի: **21** Բ **չիք** անարէն: **22** Բ յիշունց տայ՝ ի հաւատն ուրացեալ է եւ Քրիստոսէ յետս կացեալս. **փիւ** յիշոցնատուն... Քրիստոսէ: **23** Բ Եւ արդ, ով պահսակեր, լուարուք զահ եւ զահեղ **փիւ** Լուարուք զահեղ: **24** Բ **չիք** Քրիստոս: **25** Բ այլ՝ ի սատանայէ: Նոյնպէս եւ ամենայն յիշընցնատունքն ի կարգ անհաւատիցն զանշէջ հուր գեհենին ընկալցին եւ պատուհասն աններելի տանջանացն յաւուրն ահագին **փիւ** Աստուծոյ, այլ ահագին: **26** Բ կամիմ: **27** Բ **չիք** եւ զքարոզութիւն... ախորժէ: **28** Բ նման է իժին եւ քարբին, զոր **փիւ** նմանեսցի այնմ, որ: **29** Բ առ ի չլսել զձայնս թովչի ճարտարի ոչ առնէ **փիւ** զի մի լուիցէ... առցէ: **30** Բ Արդ, գիտելի է, պարտ է **փիւ** Աղէ... զմտաւ: **31** Բ կամ ո՞վ է: **32** Բ թովիչն ճարտար: **33** Բ Աստուած փիւ Քրիստոս է: **34** Բ պէտք (այսպէս եւ այլուր): **35** Բ անաւուտ բարբանջող փիւ գործաւոր սատանայի: **36** Բ աններելի: **37** Բ **չիք** կան: **38** Բ ձեզ: **39** Բ յիշընցացոյ: **40-41** Բ ասէք: **42** Բ **չիք** անմեղ: **43-44** Բ **չիք** Ով... քամահես: **45** Բ ունիք: **46** Բ ասել: **47-48** Բ լուծանես զպահս Չորեքշաբաթին եւ զՈւրբաթին **փիւ** որ... յԱստուծոյ: **49** Բ զնոյն: **50** Բ փարիսեցոյն: **51** Բ զուրբաթն եւ զչորեքշաբաթն: **52** Բ վրիպեցաւ: **53** Բ այլ **փիւ** Իւրոյ, սակայն: **54** Բ աւուրն: **55** Բ **չիք** եւ: **56** Բ **չիք** Տեառնեղբորն: **57** Բ որ Աւագ պահոց Չորեքշաբաթին եւ յուրբաթին կարգեալ է **փիւ** որ յաւուրս... յՈւրբաթոյ: **58** Բ շրւատիս: **59** Բ շոպլութեամբ քոց **փիւ** որկորստութեամբ քով: **60** Բ որ ասէ **փիւ** թէ: **61** Բ Եւ տէրն իսկ ասէ **փիւ** եւ զՏեառն հրաման: **62** Բ **չիք** զայս... մարգարէ: **63** Բ **չիք** դու: **64** Բ յիշընցնատուութեամբ: **65** Բ **չիք** ի բարկութիւն շարժես: **66** Բ քո տըւեալ է: **67** Բ տուրս եւ շնորհս **փիւ** տուրք... մեծք: **68** Բ զոմն **փիւ** զայն: **69** Բ զոմն հեծնուս եւ զոմն բառնաս **փիւ** զմինն... եւ: **70** Բ Չայնպիսիսն հայհոյես եւ այնոցիկ բարկանաս եւ նոցա յիշո՞ցն տաս **փիւ** այնոցիկ... վաստակ: **71** Բ չես: **72** Բ **չիք** այն: **73** Բ ել **փիւ** վերաբերի: **74** Բ ապաշաւես: **75** Բ **չիք** եւ ծանրագոյն պարտուցոյ: **76** Բ **չիք** խնդրես... նորա: **77** Բ **չիք** ոչ անսա... հնազանդի: **78** Բ պիղծ են եւ պահքն **փիւ** պիղծ են... պահսն: **79** Բ երբ դու **փիւ** յորժամ: **80** Բ Զի **փիւ** Այնպիսոյն: **81** Բ **չիք** եւ: **82** Բ որ: **83** Բ կատարեցեր: **84** Բ **չիք** ահագինս: **85** Բ **չիք** եւ անհնարի: **86** Բ աւկտիս: **87** Բ գործես **փիւ** աւես: **88** Բ սարսափի: **89** Բ **չիք** ի քէն: **90-91** Բ ի սար կորչիս եւ կամ թէ ի ձեր որոգայթիս: Ո՞ գիտէ, թէ ի ջուր անկանիս եւ կամ քարավէժ լինիս: Ո՞ կարծ է, թէ սրով մեռանիս եւ կամ զազանաբեկ լինիս **փիւ** ի գետ... լինիս: **92** Բ գնաս **փիւ** երթաս: **93** Բ աւզնել **փիւ** աւզնական լինել: **94-95** Բ ոչ հայր՝ զորդի եւ ոչ քոյր զեղբայր, այլ միայն բարեգործութիւն իւրաքանչիւրոց զինքն ազատէ **փիւ** ոչ եղբայր... մեր: **96** Բ **չիք** եղբայր (Բ եղբայրք): **97** Բ ելանէք: **98** Բ **չիք** եւ մի: **99** Բ յաւիտենականին: **100-101** Բ այլ ապաշխարութեամբ երթ **փիւ**: այլ զղջացիր... արդարացեալ: **102** Բ **չիք** ուրախութեամբ: **103** Բ խոստովանեա **փիւ** զղջմամբ... ձեռն: **104** Բ **չիք** եւ դարձուցիչ մոլորելոց... դայեակ: **106** Բ նորա հաւատով: **107** Բ կապեսցես: **108** Բ **չիք** որ: **109** Բ **չիք** զմեղս: **110** Բ խոստովանիս հաւատով: **111** Բ **չիք** Քրիստոս: **112** Բ յաւիտենից: **113** Բ վաստակ: **114** Բ թշնամին: **115** Բ ոչ թողու ապաշխարել քեզ զմեղս քո: Եւ թէ զի՞նչ է ապաշխարելն, ոչ այլ ինչ քան դադարել ի մեղաց **փիւ** ոչ ժամանես... ի մեղաց: **116** Բ եւ չդադարելն ի մեղաց՝ սատանայական **փիւ** եւ անդարձ... արբէն է: **117** Բ **չիք** զղջմամբ եւ արտասուաւք: **118** Բ ոչ ի միոջ **փիւ** ի միոջէ: **119** Բ յայտնին **փիւ** յայտ-

նեալ հրապարակին: **120** **Բ չիք ամառն... յայնժամն է:** **121** **Ա չիք** ճշմարտապես: **122** **Բ** յայն-
ժամ **փի** է: **123** **Բ** վաղջանի: **124** **Ա** լուսեղեն: **125** **Ա չիք** ի միւս ձեռին: **126** **Բ** զստացեալ:
127 **Ա** որպէս **փի** անմեղ իբրեւ: **128** **Բ** թուշակին: **129** **Բ** արթն: **130** **Բ չիք** լուսատու: **131** **Ա**
չիք հաց... է: **132** **Ա** զգոյշ լերուք **փի** զգուշացարուք: **133** **Ա** ողջացուցէք: **134** **Ա** թէ **փի** որ
ասէ: **135** **Բ** դու քահանայ **փի** նմա: **136** **Ա** այն: **137** **Ա** լսէ աստ: **138** **Ա** «իմոյ եկայք»ն: **139** **Բ**
ոչ ունի ջերմութիւն **փի** անտապ է: **140** **Բ չիք** Վախերուք... անքուն են: **141** **Ա** Զգուշացա-
րուք: **142** **Ա** **Զահի հարէք փի սոսկացարուք:** **143** **Բ լալանացն փի լալ աչացն:** **144** **Ա Մա-**
սանեցայք: **145** **Ա չիք** զարհուրեցէք... անկաշառ է: **146** **Ա** զարհուրեցարուք **փի** Սարսեցէք:
147 **Ա չիք** պատկառեցէք... յաւիտենական է: **148** **Բ** սերմանեցարուք: **149** **Ա** եւ **փի** զի: **150-**
151 **Ա չիք** աստէն... զՔրիստոս: **152** **Բ** վաստակեցուք **փի** պահեցուք: **153** **Բ** զգացուք:
154 **Բ** սուք: **155** **Բ** ամփոփեցուք **փի** սփոփեցուք:

ՊԱՏՄԱ-ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԱԶԱՏ ԲՈԶՈՅԱՆ

Պատմական գիտությունների դոկտոր

ՀԱՅ ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԸ

Հայոց իրավական մտածողության տարրերը սկիզբ են առել հայ ժողովրդի պատմության ասպարեզ մտնելու պահից և ուղեկցել են նրան մինչև մեր օրերը: Տարբեր գավառների սովորության լուրջ փոփոխություններ, որոնք արտացոլված են ժողովրդի կյանքում, այսօր էլ գրավում են ազգագրագետների ուշադրությունը: Հայոց ազգային իրավունքի մի յուրօրինակ շերտ պահվում է սովորության և բարոյական կաղապարների ձևով ժողովրդական մտածողության մեջ¹, որի վերհանումը կօգնի Հայոց իրավունքի հուշարձանների լիակատար ուսումնասիրությանը, կխթանի ազգային կառույցների համակարգի լիակատար ուսումնասիրությանը: Մակայն այստեղ մեզ ավելի շատ զբաղեցնում է իրավունքի գրավոր հուշարձանների դասակարգումը, որը, սկսած ԺԹ դարից, գրավել է հետազոտողների ուշադրությունը:

Իրավունքը մարդկության պատմության զարգացման ընթացքի հետ առաջացած այն գիտելիքներից է, որը փոխազդեցության միջոցով անցել է քաղաքական ու պետական սահմանները և ծառայել հասարակության տարբեր շերտերի, հատկապես կառավարողների շահերին: Կան իրավունքի հուշարձաններ, որոնց շատ դրույթներ միահյուսվել են հետագայի օրենսգրքերում և դատաիրավական տարբեր համակարգերում: Այդ մասին են վկայում ԺԹ դարի ընթացքում հայտնաբերված Համուրաբիի վիմագիր օրենսգիրքը, որի դրույթները կարելի է գտնել և՛ հունա-հռոմեական, և՛ մերձավորարևելյան իրավական պատկերացումներում, և՛ համաշխարհային իրավունքի հնագույն հուշարձաններում: Հայաստանը հնուց ի վեր գտնվելով Արևելքը և Արևմուտքը խաչաձևող խաչմերուկում, ազդել և ազդվել է այդ պատկերացումներից և դարերի ընթացքում ձևավորել է սեփական իրավական պատկերացումները: Իհարկե, նախագրային շրջանից մեզ են հասել փոքրաթիվ վիմագիր արձանագրություններ (ուրարտերեն, արամեերեն, հունարեն, լատիներեն), որոնք կարգավորել են իրավական որոշակի փոխհարաբերություններ: Դրանք հիմնականում թագավորական նոտարատնից դուրս եկած հրամաններ են, որոնց կարգադրությամբ կառուցվում էին նոր քաղաքներ (Էրեբունի և այլն), հեթանոսական աստվածությունների պաշտամունքի վայրերին տրված արտոնություններ են, որոնց քանակը հատկապես աճում է հելլենիզմի դարաշրջանում: Դրանք սահմանափակ են, որոնք կարգավորել են առանձին բնակավայրերի և շրջանների միջև սահմանները (հաստատված Արտաշես Ա-ի ժամանակներում), նվիրատվական բնույթի և

¹ Հայոց իրավունքի այդ շերտի ուսումնասիրությունը հետազոտողների ուշադրությունը գրավել է դեռևս ԺԹ դարում: Այդ բնագավառում արժեքավոր ուսումնասիրություններ են թողել Գ. Խալաթյանը (Օրագիր հայ ազգագրության և ազգային իրաւաբանական սովորութիւնների, Մոսկուա 1887), Կ. Կոստանյանը (Պոռոյգ և տուայր, «Ազգագրական հանդես», 13, էջ 131-138), Խ. Մամուլեանը (Հայ սովորութեան իրաւունքը, Թիֆլիս, 1911) և ուրիշներ:

վաղ ավատական հողատիրությունը կարգավորող արձանագրություններ են, որոնք ընդլայնում են մեր գիտելիքները թագավորական տիրույթի կառավարման (Գառնու արձանագրությունը) և իշխանական առանձին ընտանիքների տիրույթների մասին (օրինակ՝ Գնթունիների թողած Ապարանի հունարեն արձանագրությունը և այլն), Հայաստանում հռոմեական լեգիոնների առանձին շրջաններում տեղակայման մասին վկայություններ են: Մեզ հասած վիմագիր արձանագրություններում արձանագրված մոտեցումները իրավական որոշակի պատկերացումների արտացոլում են, որոնցից շատերը հաստատագրված են հարևան ժողովուրդներից հասած իրավական հուշարձաններում (օր.՝ Ավեստա, հունա-հռոմեական օրենսդրություն և այլն): Դրանց պետք է գումարել նաև վաղ միջնադարյան հայ պատմագիրների մոտ պահպանված արժեքավոր վկայությունները, որոնք ընդարձակում են մեր գիտելիքները նախաքրիստոնեական դարաշրջանի հայոց իրավական մտքի մասին: Դրանց նշանակությունը որքան էլ մեծ է ստրկատիրության և վաղ ավատատիրության ժամանակաշրջանի Հայաստանի իրավական պատկերացումների ուսումնասիրության տեսանկյունից, այնուամենայնիվ, դրանք չեն կարող փոխարինել օրենքների սիստեմատիկ շարադրանքին: Հայերեն լեզվով գրավոր օրենսդրության առաջին հիշատակությունները Հայաստանում առկա են միայն գրերի գյուտից (406 թ.) հետո: Այդ շրջանից է մեզ հասել քրիստոնյա հայկական համակեցության հիմքը կազմող Աստվածաշնչի թարգմանությունը, որը հասարակության բարոյական նորմերի և իրավական մոտեցումների ձևավորման համար կարևոր խթան է հանդիսացել: Ազգային ավանդների հիմքի վրա առաջացած հայ քրիստոնեական մատենագրության մի շարք հուշարձաններ ևս իրենց մեջ ամբարել են իրավական մտածողության տարրեր, որոնք շուտով իրենց արտացոլումն են գտել ավատական հասարակության պայմաններում ձևավորված Գանոնագրքերում և Դատաստանագրքերում: Դարերի ընթացքում իրավունքի գրավոր հուշարձանների քանակն աճել է նոր երկերով: Հայոց իրավունքն օրինադրելու իմաստով ավելի աչքի ընկնող է եղել Եկեղեցու դերը, քանի որ թագավորության կորստի երկարատև դարաշրջաններում (Ե-Թ, ԺԱ-ԺԲ, ԺԴ-Ի դդ.) Եկեղեցին է գրավել ազգային պետականության թափուր տեղը: Հայոց իրավունքի հուշարձանները ողջ միջնադարի ընթացքում անցել են ազգային համակեցության իրավաճանաչողության բովոյ, իսկ նրա նորմերը դարերի ընթացքում կիրառվել են հայ ժողովրդի հասարակական կյանքում:

Հայոց մատենագրությունը հարուստ է աշխարհիկ և եկեղեցական իրավունքի հուշարձաններով, որոնցով կանոնակարգվել է միջնադարյան Հայաստանի եկեղեցաքաղաքական կյանքը: Այս հուշարձանների մի նշանակալի մասը թարգմանվել է հարևան քրիստոնյա ժողովուրդների մատենագրություններից, հարմարեցվել է հայկական միջավայրի կարիքներին ու սերտաճել Հայաստանում ստեղծված օրենսդրական ժառանգության հետ: Նկատելի է նաև մեկ այլ գործընթաց ևս. ԺԳ դարից հետո պատմական Հայաստանի սահմաններից դուրս ձևավորված հայկական գաղութներում գործածության մեջ գտնվող օրենսդրական հուշարձանները թարգմանվել են լատիներեն, լեհերեն և ղփչաղերեն (Ղրիմ, Ռեչ Պոսպոլիտա, Լեհաստան), վրացերեն (Վրաստան) և ռուսերեն (Ռուսաստան)՝ հայկական իրավունքի հուշարձանները սեփականությունը դարձնելով նաև այդ ժողովուրդների իրավական մտածողության: Միջնադարյան իրավունքի հայկական հուշարձանների ընդօրինակությունները պահպանվում են Երևանի Մաշտոցի անվ. Մատենադարանում, աշ-

խարհի մի շարք ձեռագրատներում (Վենետիկի և Վիեննայի Մխիթարյան վանքերում, Երուսաղեմի Ս. Հակոբ, Զմմառի, Վատիկանի գրապահոցներ, Փարիզի Ազգային գրադարան, Բրիտանական թանգարան, Բեռլինի Կայսերական գրադարան և այլուր) և մասնավոր հավաքածուներում: Այս հրապարակման մեջ կփորձենք հետաքրքրվողներին հնարավորության սահմաններում պատկերացում տալ Հայոց իրավունքի տարաբնույթ հուշարձանների և նրանց ստեղծման և գործառնության ժամանակի մասին՝ ակնկալելով, որ իրավունքի պատմաբանների համար օգտակար կլինի մեր ձեռնարկումը: Հայկական օրենսդրական երկերի մի մասի բնագրերը հրապարակված են, իսկ մյուսները սպասում են իրենց ուսումնասիրողներին և հրատարակչներին:

Ա. Եկեղեցական կանոններ

Սկսած Ե դարից, Հայոց մատենագրության մեջ մուտք են գործում մի շարք թարգմանական կանոնախմբեր Տիեզերական (Նիկիայի, Կոստանդնուպոլսի, Եփեսոսի) և տեղական (Անկյուրիայի, Կեսարիայի², Նեոկեսարիայի, Գանգրայի և այլն) եկեղեցական ժողովների որոշումները: Հայերեն են թարգմանվում առաքյալներին և Եկեղեցու սուրբ հայրերին (Բարսեղ, Աթանաս և այլն) վերագրվող կանոնախմբերը: Այդ կանոնախմբերի մի նշանակալի մասը մեզ է հասել ուրույն խմբագրությամբ և բնագրով, որը չի համապատասխանում մայր բնագրի այսօրվա վիճակին: Արդեն հնագույն պատմական վկայություններում տեղեկություններ են պահպանվել այն մասին, որ մեր Եկեղեցու առաջին հայրերը լրացրել են դրանք և համապատասխանեցրել Հայաստանի իրավական դաշտի կարիքներին: Առաջին անգամ Շահապիվանի (444 թ.) ժողովում այդ վավերագրերը ի մի են հավաքվում և նրանց վրա ավելացվում են Հայոց Ազգային Եկեղեցու կողմից ստեղծված մի շարք կանոնախմբեր

² Կեսարիայի ժողովի կանոնախմբի բնագիրը հայտնի է միայն հայկական սկզբնաղբյուրներին: Այդ բնագրի վրա եկեղեցական ժողովների և կանոնական իրավունքի մասնագետների ուշադրություն է հրավիրել դեռևս 1938 թ. Ժ. Լեբոն (տե՛ս Lebon J., Sur un concile de Cnsarn. – in: Le Musnon, 51(1938), p. 89-132): Նա, հայերենով պահպանված այս հուշարձանի և նեստորական սկզբնաղբյուրների հադորդած վկայությունների վրա հիմնվելով, եկել է այն համոզման, որ Կեսարիայի ժողովը տեղի է ունեցել Նիկիայի Տիեզերական ժողովից առաջ, հավանաբար 314-319 թթ. միջև: Շուտով Ժ. Լեբոնի տեսակետը քաղաքացիություն է ստանում բյուզանդագիտական գրականության մեջ (տե՛ս H.-G. Beck, Kirche und theologische Litteratur im byzantinischen Reich, Muenchen 1959, S. 50): Վ. Հակոբյանին ծանոթ չեն եղել այս հրապարակումները: Այնուամենայնիվ, հայագետը, մասնավոր քննության ենթարկելով Կեսարիայի կանոնախմբի հողվածները, ինքնուրույնաբար եկել է այն համոզման, որ դրանց մի մասը սերում են Անկյուրիայի ժողովի կանոնախմբի հունարեն այն հողվածներից (Կես.Ա=Անկ. 20, Կես.Գ=Անկ.21, Կես.Դ=Անկ.22, Կես.Ե=Անկ.23, Կես.Զ=Անկ.24, Կես.Ը=Անկ.25), որոնք բացակայում են Անկյուրիայի ժողովի կանոնախմբի հայերեն թարգմանության բնագրում (հմմտ. Կանոնագիրք Հայոց, աշխատասիրությամբ Վ. Հակոբյանի, հտ. Ա, էջ 573-574): Վ. Հակոբյանը Կեսարիայի ժողովի կանոնների պատմականության հարցը երկբայելի է համարում՝ ավելացնելով. «Թեև այլ օրակարգով Կեսարիայում ժողով լինելու մասին կան տեղեկություններ, օրինակ, մինչև Գանգրայի ժողովը Կեսարիայի մի ժողովում նգովել են Սեբաստիայի եպիսկոպոս Եվստաթեոսին (տե՛ս «Սոկրատայ Մքրլաստիկոսի եկեղեցական պատմություն», Ա, էջ 205-206, կարդա՛ նաև Հեֆելեի Conciliengeschichte, Erster Band, § 48, էջ 442-443)»: Հիմնվելով Վ. Հակոբյանի եզրակացության վրա, Հ. Կաուֆոլդը կարծում է, որ Կեսարիայի ժողովի հիշատակությունը հայկական, լատինական և նեստորական կանոնական հուշարձաններում շփոթի արդյունք է (հմմտ. H. Kaufhold, Die Rechtssammlung des Gabriel von Basra und ihr Verhältniss zu den anderen Sammelwerken der Nestorianer. Berlin. 1976, S. 11-14): Կեսարիայի մի այլ ժողովի կանոններին անդրադառնում է Հոննիգսմանը:

(Գրիգոր Լուսավորչի, Սահակ Պարթև և այլն): Կանոնագրքի այս նախնական ժողովածուն հետևողական խմբագրության է ենթարկվում նախ Ե դարի վերջին, Հովհաննես Մանդակունի (կթղ. 478-490 թթ.) Կաթողիկոսի իշխանության տարիներին³: Ջ-Է դարերում Տիեզերական Եկեղեցում սկիզբ առած դավանաբանական պայքարին մասնակցում էր նաև Հայոց Եկեղեցին, որը ևս հրավիրում էր ժողովներ (Դվինի Բ, Կարին-Թեոդուսոպոլսի և այլն) և հստակեցնում իր դիրքը հրապարակ եկած վարդապետությունների և Տիեզերական Եկեղեցու կանոնների նկատմամբ:

Արաբական ռազմարշավների հետևանքով փոխվեց ուժերի հարաբերակցությունը տարածաշրջանում: Հայոց Եկեղեցին հնարավորություն ստացավ ամրապնդել իր ինքնուրույնությունը Բյուզանդականից: Ը դարի առաջին կեսին, արաբական տիրապետության ժամանակաշրջանում, Եկեղեցական կանոնների ժողովածուն նոր խմբագրության է ենթարկվում Հովհաննես Օձնեցի Կաթողիկոսի կողմից: Իր շատ թե քիչ լիակատար տեսքով, Վազգեն Հակոբյանի նվիրումի շնորհիվ, մեր տրամադրության տակ ունենք Հայոց Կանոնագրքի միայն այս վերջին ժողովածուն:

Հայ եկեղեցական իրավունքի մեզ հասած հնագույն հուշարձաններից է Հովհաննես Օձնեցու⁴ կազմած «Կանոնագիրքը» (728 թ.), որտեղ ի մի են բերված ինչպես Տիեզերական Եկեղեցու ժողովների և սուրբ հայրերի հեղինակած, այնպես էլ Հայոց Եկեղեցու ներսում ստեղծված առանձին կանոնախմբեր (ընդամենը՝ 24): Հեղինակն այս ժողովածուի վերջում տեղադրել է իր կաթողիկոսության ժամանակ տեղի ունեցած եկեղեցական ժողովի կանոնները և ավարտել է հավաքածուն սեփական հիշատակարանով: Հովհաննես Օձնեցու Կանոնագրքում տեղ են գտել Առաքյալներին վերագրվող երեք կանոնախումբ, համընդհանուր Եկեղեցու երեք Տիեզերական և վեց տեղական ժողովների կանոնախմբերը, սուրբ հայրերին վերագրվող երեք կանոնախումբ: Այդ երկերի հիմնական մասը թարգմանված է հունարենից, մի քանիսն էլ՝ ասորերենից: Այդ կանոնախմբերը մեզ են հասել բազմաթիվ խմբագրական հավելումներով, որոնք հեռացրել են այդ բնագրերը իրենց նախատիպ բնագրերից: Թարգմանական կանոնախմբերը 15-ն են և ընդգրկում են մինչև Քաղկեդոնի ժողովը Տիեզերական Եկեղեցու կողմից ընդունված հիմնական ժողովների որոշումներն ու սուրբ հայրերին վերագրվող կանոնախմբերը: Դրանց ավելացված են Հայոց Եկեղեցու սուրբ հայրերի ստեղծած կանոնախմբեր և Հայոց տեղական ժողովների կանոնախմբերը, ընդամենը 9 կանոնախումբ:

Այս 24 կանոնախմբերի մեջ Հովհաննես Օձնեցին չի մտցրել իր տրամադրության տակ եղած որոշ կանոնախմբեր, որոնց մի մասի բնագրերը հավանաբար ժամանակի ընթացքում կորել են կամ անմատչեմ են եղել (օրինակ՝ Աշտիշատի և Վաղարշապատի ժողովների և այլն), իսկ մյուս մասն էլ պահպանվել են կա՛մ առանձին կանոնախմբերի տեսքով (Ներսես Մեծի, Կոմիտասի և այլն), կա՛մ էլ մտել են Կանո-

³ Այս մոտեցումը զարգացրել են Վիեննայի Մխիթարյան միաբաններ Հ. Գաթըրճյանը, Հ. Տաշյանը և Ն. Ակինյանը:

⁴ Հովհաննես Օձնեցին (650^o-728 թթ.) ծնվել է Տաշիրք գավառի Օձուն գյուղում: Աշակերտել է Թեոդորոս Քոթենավորին (675^o): Հայոց կաթողիկոս է եղել 717-728 թթ.: Իր կաթողիկոսության տարիներին հրավիրել է Մանազկերտի (726 թ.) եկեղեցական ժողովը (տե՛ս Ա. Բոգոյան, Հովհաննես Օձնեցին և «Սակա ժողովոց» երկի բնագիրը, «Սուրբ Հովհան Օձնեցի Հայրապետը և իր ժամանակը», Ս. Էջմիածին, 2004, էջ 90): Բացի Կանոնագրքի կազմումից, նրա գրչին են պատկանում նաև Ը դարի Հայոց Եկեղեցու գործիչներին հուղող խնդիրների շուրջ գրված մի շարք պատմական, կանոնական և հրապարակախոսական երկեր, հոգեզմայլ շարականներ:

նագրքի՝ հետագայում ընդարձակված խմբագրությունների մեջ (օրինակ՝ Կարին-Թեոդոսուպոլսի և Դվինի ժողովների կանոնախմբերը)։ Նման կանոնախմբերից ուշադրության արժանի է Կանոնագրքի հետագա խմբագրություններում պահպանված Երկրորդ Նիկիական կանոնախումբը, որն իրենից ներկայացնում է Ե դարում ստեղծված, Տիեզերական (Նիկիայի) և տեղական (Անկյուրիայի, Կեսարիայի, Գանգրայի) ժողովների որոշումների մի ինքնատիպ ժողովածու, որի մեջ պահպանված հոդվածները հաճախ ավելի հարազատ են նույն կանոնների՝ մեզ հասած հունարեն խմբագրություններին, երբեմն էլ, ավելի նախնական վիճակ են արձանագրում։ Հետևաբար, հայկական Կանոնագրքի ստեղծման պատմությունը պետք է բաժանել երեք փուլի. 1) Հովհաննես Օձնեցուց առաջ գոյություն ունեցած ժողովածուներ, 2) նրա կողմից ստեղծված հավաքածու, և 3) այս ժողովածուի հիմքի վրա հետագայում կատարված ընդարձակումներ և նոր խմբագրություններ, որոնք իրենց կազմում ընդգրկում են նաև Հովհաննես Օձնեցու հավաքումից առաջ ստեղծված մի շարք կանոնախմբեր։

Կանոնագիրք Հայոցը ողջ միջնադարի ընթացքում դիտվել է իբրև իրավաբանական ակտերի պաշտոնական ժողովածու, որի կանոնները բազմիցս օգտագործվել են նաև քաղաքացիական օրենսգրքերում, հաստատագրվել են վիմագիր արձանագրություններում։ Թեպետ Հովհաննես Օձնեցու կազմած Կանոնագիրք Հայոցն ունի անհատականացված բնույթ և կրում է այդ հզոր գործչի գործունեության ընդգծված կնիքը, այնուամենայնիվ, իր ստեղծման օրից ժողովածուն պաշտոնական կերպարանք է առել, թեև այդ մասին չի պահպանվել որևէ որոշակի վկայություն⁵։ Հովհաննես Օձնեցին իր գործունեությամբ վարում էր բացահայտ հակաքաղեղոնական քաղաքականություն, որը պետք է գործունեության ազատություն տար նրան արաբների հետ փոխհարաբերություններում և ամրապնդեր Հայոց Եկեղեցու ինքնուրույնությունը։ Այս մոտեցումը բազմիցս փաստվում է նրա ստեղծած Կանոնագրքի բովանդակությամբ։

Հետագայում առաջացել են Կանոնագրքի տարբեր խմբագրություններ, որոնց հիմքում միշտ առկա է Հովհաննես Օձնեցու ստեղծած կանոնական ժողովածուն, որն արդեն Ժ դարի վերջում ընդարձակվել էր և ուներ շուրջ 40 կանոնախումբ։ Սկզբնաղբյուրների անուղղակի վկայություններով պարզվել է նաև, որ Անանիա Մոկացին և Մխիթար Գոշը օգտագործել են Կանոնագրքի ընդարձակված այս խմբագրությունը⁶։ Ճշտված են այդ հեղինակների ձեռքին եղած Կանոնագրքի տարբերակի բնագրերի մոտավոր սահմանը։ Տարբեր ժամանակաշրջաններում Կանոնագիրք մտած երկերի քանակը ճշտելու գործում բավական նուրբ բնագրագիտական աշխատանք է կատարված Հ. Տաշյանի⁷, Ս. Տիգրանյանի⁸, Ն. Ակինյանի⁹, Վ. Հակոբյա-

⁵ Խ. Մամուլեան, Հին Հայ իրավունքի պատմությունը, հտ. Ա, էջ 47 և 49։

⁶ Կանոնագիրք Հայոց, Բ, էջ ԻԹ։

⁷ Վարդապետություն Առաքելոց. անվանական կանոնաց մատենանը. թուղթ Յակոբյայ առ Կողրատոս և Կանոնք Թաղդէի, Քննություն և բնագիրք գրեց և հրատարակեց Յ. Տաշեան, Վիեննա, 1896։

⁸ Ռեծաբայ Օձնայի, Ածաբայի և Ռեծաբայի եկեղեցու ձեռնարկը. Ռեծաբայի եկեղեցու ձեռնարկը, 1918։

⁹ Ն. Ակինեան, Թուղթ Մակարայ Բ Երուսաղեմի հայրապետի առ Վրթանես եպիսկոպոսապետ Միւնեաց յաղագս կարգաց եկեղեցւոյ, Վիեննա, 1930, էջ 93-110, Ն. Ակինեան, Ազարիա վ. Մասնեցի աստղագետ, տոմարագետ և տաղաչափ, ՀԱ, 1936, էջ 315-320, 324-325։

նի¹⁰ և այլոց կողմից:

Կանոնագրքի հնագույն ձեռագիրը մեզ է հասել ԺԱ դարից: Այն ընդօրինակվել է 1098 թ. տեր Խաչիկի օրինակից, սկզբում Սև լեռան Պառլահու վանքում, ապա՝ Արմեն լեռան վրա գտնվող Հովհաննա անապատում¹¹: Ժ դարում առկա 40 կանոնական երկերին, 1098 թ. ընդօրինակված ձեռագրում ավելացված է շուրջ 17 նոր կանոնախումբ և Հայոց Կանոնագրքում դրանց թիվը հասել է 57-ի: Այս նորամուծություններն արդյունք էին Հովհաննա վանքի վանահայր Մելիտեի, փոխանորդ Գրիգորիսի և ձեռագրի գրիչ Հովհաննեսի աշխատասիրության¹²: Կանոնագրքի ընդարձակված այս տարբերակն արդեն ԺԲ դարի երկրորդ կեսին շրջանառության մեջ է եղել Սկևռայում և օգտագործվել, հավանաբար, Ներսես Լամբրոնացու կողմից:

Հովհաննես Օձնեցու Կանոնագրքի այս ընդարձակված տարբերակի հիման վրա, սկսած ԺԳ դարից, առաջանում է մի նոր խմբագրություն, որը պայմանականորեն անվանվում է Բ խմբագրություն: Այստեղ արդեն, ըստ ժամանակագրական հերթականության, փոխվում է 57 կանոնախմբերի դասավորությունը¹³: Իրար կողք են բերվում նույն հեղինակներին վերաբերող տարբեր կանոնախմբերը, ավելացվում են նորերը: Ըստ 1611 թ. Կ. Պոլսում ընդօրինակված մի մատյանի, որի ընդօրինակողը Հակոբ Քյոթահիացին է, տվյալ խմբագրության ստեղծողը Գեորգ (1245-1301 թ.) Լամբրոնացին կամ Սկևռացին է¹⁴: Այս խմբագրության հնագույն ձեռագիրը, մեր կարծիքով, ՄՄ-7615 մատյանն է, որն ընդօրինակվել է 1353 թթ., հավանաբար, Հովհաննես Երզնկացու 1326/7 թ. կազմած նախօրինակից: Նույն խմբագրության մի այլ ընդօրինակություն է Անկյուրիայի Կարմիր Վանքի թ. 43 մատյանը, որն Ազարիա Սասնեցու պատվերով 1609 թ. ընդօրինակել է Սիմեոն Լեհացին: Վերջինս էլ հայտնում է, որ այս օրինակի պակասները լրացրել է Գեորգ հռետորը: Վազգեն Հակոբյանը, հիմնվելով ԺԵ դարում Կանոնագրքի նոր խմբագրության վրա աշխատած Հակոբ Ղրիմեցու վկայության վրա, կարծում է, որ այդ լրացումները պատկանում են վերջինիս ուսուցիչ, ԺԴ դարի վերջի և ԺԵ դարի սկզբի մատենագիր, Հովհան Ռոտնեցու աշակերտ Գեորգ Երզնկացու գրչին¹⁵:

Կանոնագրքի այս օրինակն էլ օգտագործելով, 1609 թ. իր ընդօրինակության մեջ նոր հավելումներ է կատարել Գրիգոր Կեսարացու աշակերտ Ազարիա Սասնեցին¹⁶, որի ստեղծած խմբագրությունն էլ 1609 թ. ընդօրինակել է Սիմեոն Լեհացին¹⁷: - Այս նույն ժողովածուից 1611 թ. Կանոնագրքի իր տարբերակն է ընդօրինակում Հա-

¹⁰ Կանոնագիրք Հայոց, Բ, էջ Ժ-ԽԱ:

¹¹ Այդ ձեռագիրը պահվում է Նոր Զուղայի Ամենափրկիչ վանքում (թ.131):

¹² Կանոնագիրք Հայոց, Բ, էջ ԻԵ:

¹³ Իհարկե միայն նշված հատկանիշի փաստարկմամբ անհնար է ճշտել այս խմբագրության առաջացման ժամանակը:

¹⁴ Կանոնագիրք Հայոց, Բ, էջ ԼԵ:

¹⁵ Կանոնագիրք Հայոց, Բ, էջ ԼԵ:

¹⁶ Ազարիա Սասնեցին (1570^o-1628 թթ.) վարդապետական կոչումը ստացել է Կ. Պոլսի Գրիգոր Կեսարացի Պատրիարքից: Կ. Պոլսում ուսանելու տարիներին սովորել է իտալերեն: Նիկոմեդիայի կողմերում վանք հիմնելու անհաջող փորձեր է կատարել: 1628 թ. մահացել է Անտիոքից Եգիպտոս ուղևորվող նավի մեջ: Ըստ Գրիգոր Դարանաղցու՝ նրա դիակը ծովն է նետվել: Այն Տրիպոլսի մոտ գտել են մարոնիտ հոգևորականները և փառավորապես թաղել: Ազարիայից մեզ է հասել պատմությանը, աստղագիտությանը, տոմարին ու երկրաչափությանը նվիրված աշխատություններ: Նա իտալերենից հայերեն է թարգմանել Պտղոմեոսի Աշխարհագույցը (տե՛ս Ն. Պողարեան, Հայ գրողներ, Երուսաղեմ, 1971, էջ 493-496):

¹⁷ Տե՛ս Անկյուրիայի Կարմիր վանքի թ. 43 մատյանը:

կոր Քյոթահիագին (Կուտինագի): Բացի հիշյալ խմբագրությունները, գոյություն ունեն նաև Կանոնագրքի առանձին ձեռագրական խմբեր, որոնք մատենագրական այս հուշարձանի ուսումնասիրության համար կարևոր նշանակություն ունեն:

ԺԶ-ԺԷ դարերում ստեղծվում են նաև հայկական առաջին սիստեմատավորված Կանոնագրքերը: Կանոնագրքի օգտագործման փաստերի կարելի է հանդիպել գրեթե ողջ միջնադարյան մատենագրության մեջ: Հատկապես բազմաթիվ քաղվածքների ենք հանդիպում ԺԹ դ. կաթողիկոսական և հոգևոր բարձր իշխանությունների գրություններում: Օրինակ՝ 1815 թ. Ներսես Աշտարակեցին պատժում է Սադախլուի Հովսեփ քահանային ապօրինի պսակ կատարելու համար՝ մեղադրանքը հիմնավորելով Կանոնագրքից բերված քաղվածքներով¹⁸: 1915 թ. Գեորգ Ե Կաթողիկոսը հիշեցնում է իր սինոդին, որ հարկավոր է ամուսնական հարաբերությունները կարգավորելիս հետևել Կանոնագրքին¹⁹: Նմանատիպ դատական գործերում Կանոնագիրքը նախընտրում էին նաև գաղթօջախներում, ինչպես դա երևում է 1909 թ. Մատթեոս Բ Կաթողիկոսին Մանչեստրից ուղարկված նամակից²⁰:

Կանոնագիրք Հայոցում հստակորեն արձանագրված են հայոց ավատական հասարակության դասային առանձնահատկությունները, շեշտված է Եկեղեցու տեղը հասարակական կյանքում: Դարերի ընթացում նորովի խմբագրված ժողովածուները կարգավորել են հասարակական փոխհարաբերությունները Եկեղեցու ներսում և երբեմն էլ նրանից դուրս՝ առանձին դասերի ու անհատների միջև, եկեղեցական կազմակերպության շրջանակներում: Կանոնագրքի հոդվածների մի նշանակալի մասը վերաբերում է դավանանքին և պաշտամունքի ծիսական հարցերին, քանի որ հենց դրանով է Հայոց Եկեղեցին և հասարակությունը պետականության չգոյության պայմաններում դիմակայել օտար ուժերին և պահպանել ազգային մշակույթի ինքնակայությունը: Այս երկը պարունակում է նաև Հայոց նահապետական կենցաղին, ապրելակերպին և պատկերացումներին վերաբերող բազմաթիվ վկայություններ, որոնց դեմ դարերի ընթացքում պայքարել է Եկեղեցին: Կանոնագրքի մի շարք հոդվածներ ուղղված են միջնադարյան Հայաստանում տարածված աղանդավորական շարժումների դեմ: Այս երկը կարգավորում է ամուսնության և բարոյականության, գողության և կաշառակերության, մարդկային արատների և հարբեցողության, հասարակատնտեսական կյանքի կարգավորման բազմազան խնդիրներ: Այս հուշարձանն ընդլայնում է մեր պատկերացումները Հայաստանում գոյություն ունեցող հողային և ավատական փոխհարաբերությունների, հարկային համակարգի, դատավարության մեջ կիրառված դրամական և մարմնական պատիժների մասին:

Բ. Է-ԺԱ դարերի Հայոց միջնադարյան իրավունքի այլ հուշարձաններ

Միջնադարյան Հայաստանում Եկեղեցու գաղափարախոսական հիմքը Աստվածաշունչն էր, ուր արձանագրված բարոյախրատական նորմերը կազմում էին այն օրենքը, որոնցով առաջնորդվում էր միջնադարյան հասարակությունը: Կրոնի, հավատի ու դավանանքի հիմնական հոմանիշն է դառնում օրենքը: Այս հասկացության տակ հասկացվում էր բարոյախրատական նորմերի այն ամբողջությունը, ո-

¹⁸ Այդ մասին տե՛ս Վ. Հակոբյան, Կանոնագիրք Հայոց, Բ, էջ ԸԺԵ:

¹⁹ Նույն տեղում, էջ ԸԺԵ-ԸԺԶ:

²⁰ Նույն տեղում, էջ ԸԺԶ:

րով առաջնորդվում էր կրոնական տվյալ համայնքը, այս դեպքում՝ Հայոց Եկեղեցին, որի բարոյախրատական ամենահզոր զենքը Աստվածաշունչն էր: Քրիստոնեության առաջին դարերից Հայաստանում ստեղծվում էին կանոնական ժողովածուներ, որոնք վերաբերում էին Եկեղեցու դավանաբանությանը և (Ագաթանգեղոսի պատմության հատված դարձած «Վարդապետություն»-ը, Գրիգոր Լուսավորչի «Յաճախապատում» ճառերը), որոնք ունեին նաև բարոյախրատական նշանակություն և Աստվածաշունչից բերված բազմաթիվ քաղվածքներով կարգավորում էին քրիստոնյա հասարակության բարոյական և դավանաբանական սկզբունքները: Ե-Ձ դարերի ընթացքում քրիստոնեական աշխարհը հուզած դավանաբանական վեճերը իրենց շրջապատյուրի մեջ առան նաև Հայաստանը, որն ընտրեց իր սեփական ուղղությունը դավանաբանության մեջ և դրանք ամրագրեց իրավական նշանակություն ստացած ժողովածուներում (Կնիք Հավատո, Գիրք թղթոց): Դրանց նպատակն էր արձանագրել և պաշտպանել Հայոց Եկեղեցու ծիսական և դավանաբանական առանձնահատկությունները դավանական ոտնձգություններից:

Հայոց հնագույն, նախարարական կարգը պահպանելու միտումով էին ստեղծվում բազմաթիվ գահնամակներն ու գորանամակները, ուր հաստատագրվում էին տարբեր նախարարական տների դիրքը հասարակության կյանքում: Այդ հուշարձանների հնագույն ընդօրինակությունները մեզ են հասել Ժ-ԺԱ դարերից, սակայն պահպանված նյութը թույլ է տալիս ասել, որ դրանք կազմվում էին հին վավերագրերի հիման վրա, որոնց հետքերն առկա են Փավստոս Բուզանդի, Մովսես Խորենացու և Մեբեռսի Պատմություններում, նախամուսուլմանական Իրանի և Բյուզանդական կայսրության քաղաքական կառուցվածքում:

Երկրի բյուզանդական մասի կյանքում հասարակական հարաբերությունները կարգավորելու համար օրենսդրական նախաձեռնությամբ հանդես էին գալիս բյուզանդական կայսրերը, որոնք իրենց մի շարք նուվելներով փորձում էին ձևափոխել ժառանգական և ամուսնական փոխհարաբերությունները Հայաստանում, և այդ տեղական սովորություններն ու օրենքները հարմարեցնել բյուզանդական օրենսդրությանը: Նույն մտահոգությամբ իրավական գործունեություն էին ծավալել նաև Մասանյան արքաները, որոնք Հայաստանի պարսկական մասի ներքին կառուցվածքը փորձում էին հարմարեցնել սեփական իրավական պատկերացումներին: Երկու պետություններն էլ Հայաստանի ներքին կառուցվածքը փորձում էին կառավարելի դարձնել իրենց պետական կառույցների կողմից:

Է դարում Արաբական խալիֆայության կողմից գրավված Հայաստանը երկար ժամանակ ստիպված էր մնալ այդ պետության իրավական դաշտի սահմաններում: Այս հանգամանքը ստիպում էր հայկական հասարակության կառավարման բազմաթիվ նորմեր հարմարեցնել մուսուլմանական շարիաթի սկզբունքներին: Հիշատակված քաղաքական ազդեցությունների ուսումնասիրությունը Հայոց իրավունքի վրա դեռևս սպասում է իր հետազոտողին²¹:

Բազրատունյաց թագավորության շրջանում հայկական ծեսի կանոնականացման փայլուն օրինակ է Մաշտոց Եղվարդեցի²² Կաթողիկոսի (կթղ. 897-898 թթ.)

²¹ Հատկապես մեծաքանակ նյութ է պահպանվել Օսմանյան կայսրության շրջանից: Տե՛ս Ա. Փափազյան, Թուրքական վավերագրերը Հայաստանի և հայերի մասին (16-19-րդ դարեր), Երևան, 1999, էջ 34-77, 130-255:

²² Մաշտոցի հայրը ծնունդով Եղվարդ բնակավայրից էր, սակայն հաստատվել էր Սյունիքի Սոթք գա-

ստեղծած Մաշտոց ժողովածուն, որով Եկեղեցին կարգավորում է եկեղեցական պաշտամունքի և գործունեության հիմնական խնդիրները: Այստեղ են արձանագրված ծիսական կարևորություն ունեցող բոլոր խնդիրները, որոնց հայ հոգևորականը հանդիպում էր առօրյա կյանքում: Ժողովածուն դարերի ընթացքում հետզհետե ընդարձակվել է, սակայն պահպանել է հեղինակի մտահղացած կոռ կառուցվածքը:

Հայաստանի տեղական իրավունքը միավորված հայկական պետության շահերի համար մի վերջին անգամ փորձեցին օգտագործել Բագրատունիները: Այս ժամանակ երկրում առաջացավ Բագրատունյաց պետության հովանու տակ միավորված տերությունների մի լայն համակարգ, որի հիմնական սկզբունքը նախարարական տների տեղական իրավասությունների ընդլայնումն էր: Ցավոք, այս գործընթացը չհասավ իր տրամաբանական վախճանին, Բագրատունյաց թագավորության կործանումով կանգ առավ հասարակական նոր կառուցվածքների առաջացումը Մեծ Հայքի տարածքում: Այնուամենայնիվ, այդ ժամանակներից մնացած մի շարք քաղաքական հաստատություններ կարողացան ցույց տալ իրենց կենսունակությունը դարերի ընթացքում: Մինչև ԺԹ դարը պահպանվեցին բազմաթիվ իշխանական տներ, հատկապես Արցախում, որոնք միշտ մնացին Հայաստանում ազատագրական պայքարի հիմնական կրողները: Ցավոք, Բագրատունյաց շրջանի իրավական նորմերը գրառման չարժանացան և մեր պատկերացումները Հայոց իրավունքի այս փուլի մասին սահմանափակվում են պատմիչների հաղորդած աղբյուրիկ տեղեկություններով և սակավաթիվ վիմագիր արձանագրություններով: Իրավունքի պատմաբանի համար բազմաթիվ մուր դրվագներ ունի Հայոց օրինագիտության այս շրջանը, հատկապես տարօրինակ է, որ գրավոր քաղաքացիական օրենսդրություն չավանդած այս պետության կործանումից մեկ դար հետո, հայոց հասարակության մեջ մեծ մտահոգություն է նկատվում քաղաքացիական իրավունքի հուշարձանների ստեղծման բնագավառում: Հայոց իրավունքի գրավոր այդ հուշարձանների (մանավանդ Մխիթար Գոշի Դատաստանագրքի) բազմակողմանի ուսումնասիրության ընթացքում էլ ի հայտ են գալիս իրավական այն սկզբունքները, որոնցով առաջնորդվում էին Հայաստանում մինչև ԺԱ դարի առաջին կեսը:

Գ. Իրավագիտական խառը (քաղաքացիական և եկեղեցական) հուշարձաններ

Կանոնագրքի հիման վրա եկեղեցաքաղաքացիական օրենսդրական հուշարձանի ստեղծման առաջին փորձ կարելի է համարել Դավիթ Ալավկատրդի²³ Գանձակեցու «Կանոնական արեւնսդրութիւնը» (ԺԲ դարի առաջին կես): Այս իրավական հու-

վառում, որտեղ և ծնվել է Մաշտոցը: Մաքենոցաց վանքում նա Սյունյաց Դավիթ եպիսկոպոսից (840-857) ստացել է իր կրթությունն ու քահանայական աստիճանը: Մաշտոցը 874 թ. Սևանա կղզում վանք է կառուցում և մինչև 898 թ. վարում վանահոր պաշտոնը: Կաթողիկոս է եղել ընդամենը 7 ամիս (897-898 թթ.): Մաշտոցի աշակերտներից է Հովհաննես Դրասխանակետցին: Մաշտոց Եղվարդեցու մատենագրական ժառանգությունից մեզ է հասել մի քանի նամակ և հիշատակված ծիսական ժողովածուն:

²³ Դավիթ Ալավկատրդին ԺԲ դարի սկզբի մատենագիր է: Ժամանակակիցն ու գործակիցն է եղել Հովհաննես Մարկավագի: Զբաղվել է մանկավարժական գործունեությամբ: Գանձակեցի Արքայություն քահանայի խնդրանքով գրել է կանոնների իր ժողովածուն: Նա հավանաբար մահացել է 1139 թ. հետո, քանի որ միջնորդել է Գրիգոր Գ Պահլավունի Կաթողիկոսի առաջ Գագիկ եպիսկոպոսի թեկնածությունը, իբրև Աղվանից կաթողիկոսության թեկնածուի:

շարձանը մեզ է հասել մի քանի խմբագրություններով, որոնցից միայն մեկն է հրատարակված²⁴։ Այս երկում հեղինակը բանաձևում է սուրբ, անսուրբ և պղծված կերակուրների նկատմամբ վերաբերմունքը, սահմանում է այլակրոնի կարգավիճակը Եկեղեցում (այլակրոնի մկրտություն) և ամուսնական փոխհարաբերություններում (այլազգու հետ ամուսնություն), անդրադառնում է քահանայի հիմնական պարտականություններին, ամուսնական զույգի միմյանց և երեխաների նկատմամբ ունեցած պարտականություններին, ամուսնացած քահանայի վարքին, սեռական այլասերվածության, քահանաներին անարգողների, դրամը տոկոսով տվողների, Եկեղեցու հարկը չտվողների, կախարդությամբ զբաղվողների նկատմամբ հասարակության վերաբերմունքին։

Հայոց կանոնական և քաղաքացիական իրավունքի ուսումնասիրության բնագավառում ինքնուրույն նշանակություն է ձեռք բերել նաև Ներսես Շնորհալու²⁵ Թուղթ Ընդհանրականը։ Այս նամակը գրվել է 1165 թ., այն ժամանակ, երբ Ներսես Շնորհալին իր եղբայր Գրիգոր Գ Պահլավունու կենդանության օրոք ընտրվեց աթոռակից կաթողիկոս։ Թուղթ Ընդհանրականի հեղինակը դիմում է հայկական հասարակության բոլոր դասերին ու շերտերին, Հայոց Եկեղեցու հոգևոր կենտրոն Հռոմկլայից խրատներ է հղում իր հոտին, փաստորեն, շեշտադրելով այն հարցերը, որոնք անհանգստացնում էին Հռոմկլայում հաստատված Հայոց կաթողիկոսարանին, որն իր վրա էր վերցրել ժողովրդի բարոյական դիմագծին հետևելու պարտականությունը։ Այս երկում խրատներն ուղղված են ողջ Մերձավոր Արևելքում սփռված հայկական հասարակության հետևյալ դասերին. կրոնավորներին, վանքերի առաջնորդներին, եպիսկոպոսներին, քահանաներին, իշխաններին, զինվորներին, քաղաքաբնակներին, երկրագործներին և կանանց։ Այս բաժանումից ակնհայտորեն նկատելի է, որ հայ հասարակությունը ևս, ինչպես միջնադարյան Եվրոպայի մյուս ավատական սոցիումները, ունի եռամասն կառուցվածք. հոգևորականություն, իշխող դասակարգեր (ազնվականություն և զինվորականություն) և երրորդ դաս (քաղաքաբնակներ և երկրագործներ)։ Թուղթ Ընդհանրականի բնագրի մեծ մասը ապագա կաթողիկոսը նվիրել է հոգևորականությանը, ուր բազմազան խրատներ է տալիս այդ դասի տարբեր աստիճաններում գտնվող շերտերին։ Երկն ունեցել է բարոյակրթիչ նշանակու-

²⁴ Տե՛ս Ա. Աբրահամյան, Դավիթ Ալավկաորդու կանոնները, «Էջմիածին», 1952, սեպտ.-հոկտ., էջ 48-57, նոյեմբ.-դեկտ., էջ 56-67, 1953, հունվ., էջ 56-62, փետրվ., էջ 53-60, մարտ, էջ 51-63։ Այս Դատաստանագրքի բնագիրը անգլերեն թարգմանությամբ հրապարակել է նաև Ջ. Դովսեթը. *The penitential of David of Gandjak*. Edited by C.J.F.Dowsett, Louvain 1961 (=Corpus Scriptorum Christianorum Orientalium. vol. 216-217 = Scriptores Armeniaci 3 - 4).

²⁵ Ներսես Շնորհալին (1102^o-1173 թթ.) ծնվել է իր հորը՝ Ապիրատ Պահլավունուն պատկանող Ծով դղյակում։ Ուսումը ստացել է Քեսունի Կարմիր վանքում, Ստեփանոս Մանուկ վարդապետի դասարանում, ուր և ստացել է Շնորհալի մականունը։ Իր եղբայր Գրիգոր Գ Կաթողիկոսից (կթղ. 1113-1166 թթ.) ստացել է քահանայական ձեռնադրություն և երիտասարդ տարիքում հասել է եպիսկոպոսության աստիճանի, եղբոր հետ կիսելով նրա պաշտոնավարության բոլոր մտահոգությունները. գործուն մասնակցություն է ունեցել Լատին և Հույն Եկեղեցիների հետ վարվող բանակցություններում, փորձել է դադարեցնել Ռուբինյան և Օշինյան իշխանական տների հակամարտությունը։ 1165 թ. Գրիգոր Գ-ի ստիպումով ձեռնադրվում է աթոռակից կաթողիկոս, իսկ նրա մահից հետո՝ գլխավորում Հայոց Եկեղեցին։ 1173 թ. թաղվել է Հռոմկլայի բերդում։ Շնորհալին հայ մատենագրության ամենանշանավոր գործիչներից է։ Նա կարգավորել է Շարակնոցը, Ժամագիրքը, գրել է բազմաթիվ գանձեր ու տաղեր։ Ներսես Շնորհալին նաև Հայոց Եկեղեցու ամենաճանաչված աստվածաբան գիտնականն է, որի երկերը ուղեցույց են եղել հետագա սերունդների համար։

թյուն, կանոնավորել է հասարակության ներքին կյանքը: Թուղթ Ընդհանրականը ծրագրային փաստաթուղթ է և դարեր շարունակ ուղեկցել է հայ հոգևորականության բազմաթիվ սերունդների: 1268 թ. այն երկրորդ անգամ բազմացրել և Հայոց եկեղեցու բոլոր թեմերն է ուղարկել Հակոբ Կլայեցի (կթղ. 1268-1286 թթ.) Կաթողիկոսը:

Ներսես Շնորհալու այս երկի օրինակով է գրվել նաև Հովհաննես Երզնկացու²⁶ «Խրատ հասարակաց քրիստոնեից» երկը (ԺԳ դար) և այլ նմանաբնույթ երկեր, որոնց նշանակալի մասը դեռևս հրապարակված չէ և սպասում է իր ուսումնասիրողների:

Դ. Քաղաքացիական օրենսգրքեր

ԺԲ դարի վերջին և ԺԳ դարի սկզբին Հյուսիսային Հայաստանում, Զաքարյան իշխանական տան²⁷ հովանու ներքո ստեղծվում է Հայոց աշխարհիկ իրավունքի անդրանիկ քաղաքացիական ժողովածուն՝ Մխիթար Գոշի²⁸ Դատաստանագիրքը: Հատկապես կարևոր է այս հուշարձանի նախադրությունը, որտեղ հեղինակը քննարկում է իրավունքի տեսությանն ու պրակտիկ գործադրությանը վերաբերող հարցեր, որոնցով և Մխիթար Գոշը Հայոց իրավունքի համապարփակ տեսության հիմքն է դնում: Գիտությանը հայտնի է այս հուշարձանի երեք խմբագրություն²⁹, որոնցից յուրաքանչյուրն ունեցել է գործավարման իր շրջանակները, ժամանակը և տարածքը: Դատաստանագիրքը մեզ է հասել հեղինակի ինքնագիր օրինակով, որի վրա արդեն ԺԳ դարի ընթացքում ստեղծվել են նոր խմբագրություններ: Մխիթար Գոշի Դատաստանագրքի ձեռագրերի և սկզբնաղբյուրների վերհանումն ու ուսումնասիրությունը հայագիտության առաջնահերթ խնդիրներից մեկն է մնում:

Մխիթար Գոշի երկի անմիջական ազդեցությամբ և հետևողությամբ է կազմել իր Դատաստանագիրքը³⁰ ԺԳ դարի Կիլիկյան Հայաստանի նշանավոր զինվորական և

²⁶ Հովհաննես Երզնկացի (1240-1293 թթ.) ծնվել է Եկեղյաց գավառի Արկա գյուղում, կարճահասակության համար ստացել է Պլուզ մականունը: Մեպուհ լեռան Ս. Մինաս վանքում ուսանել է Հովհաննես վարդապետին, ապա աշակերտել է նաև Վարդան Արևելցուն Կայենոծորի վանքում: 1281 թ. ուխտի է գնացել Երուսաղեմ, իսկ հետո արձի ժամանակ երկու տարի (1281-1282 թթ.) դասավանդել է Հռոմկլայի կաթողիկոսական դպրատանը: 1284 թ. նրան հանդիպում ենք Տփղիսում, իսկ 1287 թ. երկրաշարժի ժամանակ՝ Երզնկայում: Թաղվել է Երզնկայի Ս. Նշան եկեղեցում: Բացի իրավական բովանդակության երկերից, նրանից մեզ են հասել բազմաթիվ տաղեր, ճառեր և մեկնություններ:

²⁷ Զաքարյանների իշխանական տունը Վրաց թագավորությանը ենթակա հայկական իշխանություն էր:

²⁸ Մխիթար Գոշը (1140-1213 թթ.) ծնվել է Գանձակ քաղաքում: Աշակերտել է Հովհաննես Տաուշեցի վարդապետին, ապա իր գիտելիքները խորացրել է Սև լեռների վանքերում: Երկրաշարժի հետևանքով ավերված Գետիկի վանքից հեռանալով՝ Կայենի գավառում կառուցում է Նոր Գետիկի վանքը, ուր և հաստատվում է իր աշակերտներով: Բացի Դատաստանագրքից, նրա գրչին են պատկանում նաև մի շարք այլ մատենագրական երկեր (վկայաբանություններ, աղոթքներ, ժամանակագրություն, առակներ, մեկնություն Երեմիայի, Թուղթ): Նրա աշակերտներից ամենանշանավորը Հովհաննես Վանականն է:

²⁹ Մխիթար Գոշի Դատաստանագիրքը Հայոց, Իրաւաբանական հետազոտութիւնք հանդերձ ծանոթութեամբ Վ. Օ. Բաստամեանց, Վաղարշապատ, 1880, Մխիթար Գոշ, Գիրք Դատաստանի, Աշխատասիրությամբ Խ. Թորոսյանի, Երևան 1975:

³⁰ Sempadscher Kodex aus dem 13. Jahrhundert oder Mittelarmerinisches Rechtsbuch nach der Venediger und der Etschmiadziner Version unter Zurückführung auf seine Quellen herausgegeben und übersetzt von J. k Karst. Strassburg 1905.

քաղաքական գործիչ Սմբատ Սպարապետը³¹։ Քաղաքացիական օրենսդրության հիշատակված հուշարձանները՝ Դատաստանագրքերը, արտացոլում են միջնադարյան Հայաստանի և Կիլիկիայի հայկական թագավորության³² հասարակական կյանքը, տնտեսական և ներքաղաքական փոխհարաբերությունները։

Ե. Թարգմանական իրավունքի համահայկական հուշարձաններ

Գոշի Դատաստանագրքի ստեղծմանը զուգահեռ, ԺԲ դարի 80-ական թթ. Տաթևնի արքեպիսկոպոս Ներսես Լամբրոնացու³³ ջանքերով, Կիլիկիայում հունարենից, ասորերենից և լատիներենից թարգմանվում են հռոմեական ու բյուզանդական աշխարհիկ և եկեղեցական իրավունքի մի շարք հուշարձաններ, որոնք նշված ժամանակաշրջանում դեռևս կիրառության մեջ էին տարածաշրջանում։ Այս գործում, մեր կարծիքով, մեծ դեր է կատարել այն հանգամանքը, որ ԺԲ դարում Կիլիկիայում հայերի կողքին բնակվում էր մեծ քանակությամբ հույն, լատին և ասորի բնակչություն, իսկ Հայոց պետականության կայացման գործում Հռոմկլայի կաթողիկոսարանը մեծ նշանակություն էր տալիս թվարկված ժողովուրդների կեցվածքին և վերաբերմունքին դեպի Հայոց ազգային պետականությունն ու Եկեղեցին։ Այս ժամանակ թարգմանված առաջին իրավաբանական հուշարձանները, «Ասորա-հռոմեական օրենսգիրքը» և «Համառոտ ժողովումն օրինաց» երկերն էին, որոնք Ներսես Լամբրոնացին թարգմանում է Հակոբիկ Ասորական Եկեղեցու ներկայացուցիչ Թեոդորոս ԲարՎահբունի³⁴ գործակցությամբ։ Այս երկերը հռոմեական իրավունքի հնագույն վավերագրեր են և մասնագետների կողմից դրանց շրջանառության մեջ մտնելու պահը թվագրվում է Բ-Ե դարերով։ Չեն պահպանվել այդ հուշարձանների մայր³⁵ բնագրե-

³¹ Սմբատ Սպարապետը կամ Գունդստաբլը (1206-1276 թթ.) որդին էր Պապեռոնի իշխան Կոստանդին պալի և եղբայրը Հեթում Ա թագավորի։ Ժառանգել է Պապեռոնի ամրոցը և կառուցել Սմբատկլա ամրոցը։ Ստացել է իր ժամանակի համար բազմակողմանի կրթություն, տիրապետել է ֆրանսերենին։ 1226 թ. նշանակվել է Կիլիկիայի հայկական պետության բանակի սպարապետ (գունդստաբլ) և 50 տարի վարել այդ պաշտոնը։ Հորից ժառանգել է Պապեռոն ամրոցը, մոտակայքում կառուցել է Սմբատկլա անառիկ ամրոցը։ Ամուսնացել է Թեֆանո իշխանուհու հետ։ 1248 թ. գլխավորել է թաթար խան Գիուգի մոտ գնացող դիվանագիտական առաքելությունը։ 1276 թ. մահացել է Եգիպտոսի մամլուկների դեմ վարած Սարվանդիքարի ճակատամարտում ստացած վերքից։ Նա նաև նշանավոր մատենագիր է։ Բացի Դատաստանագրքից, նրա գրչին են պատկանում մի շարք հիշատակարաններ, նամակներ։ Ֆրանսերենից հայերեն է թարգմանել Անտիոքի Ասիզները։ Նա Կիլիկիայի հայկական թագավորության պաշտոնական պատմագիրն է։

³² Կիլիկիայի հայկական թագավորությունը միջազգային հանրության կողմից ճանաչվել է 1198 թ. Հռոմի պապության, Հռիֆենշտաուֆենների պետության, Բյուզանդական կայսրության, Իլկոնիայի և Եգիպտոսի սուլթանությունների կողմից։ Այդ պետությունը գոյատևել է մինչև 1375 թ. և կործանվել Եգիպտոսի մամլուկների ավերիչ արշավանքների հետևանքով։

³³ Ներսես Լամբրոնացին (1153-1198 թթ.) ծնվել է Լամբրոնի իշխան Օշինի ընտանիքում։ Նրա դաստիարակն է եղել Հովհաննես Սկևռացի վարդապետը, ապա աշակերտել է Ստեփանոս Հակոբցի եպիսկոպոսին։ Երիտասարդ հասակում Ներսես Շնորհալի Կաթողիկոսից ստացել է քահանայական ձեռնադրություն, իսկ 1175 թ. Գրիգոր Տղան նրան օծել է Տաթևնի եպիսկոպոս։ Կատարել է բազմաթիվ թարգմանություններ ասորերեն, հունարեն, լանգդարդերեն և լատիներեն լեզուներից։ Հեղինակ է բազմաթիվ տաղերի, ճառերի, թղթերի մեկնությունների։

³⁴ Թեոդորոս ԲարՎահբունը Հակոբիկ Ասորական Եկեղեցու նշանավոր հոգևորականներից է, 70-80-ական թթ. ստեղծել է սեփական Եկեղեցու Կիլիկյան հակաթոռ պատրիարքությունը, որի համար ենթարկվել է Միքայել Ասորի Պատրիարքի նզովքին։

³⁵ Անհայտ է, թե դրանք ո՞ր լեզվով են գրվել. հունարեն՞, թե՞ լատիներեն։ Հայտնի է, որ մինչև 9 դարը

րը և միայն ասորերեն ու հայերեն թարգմանությունները միմյանց լրացնելով, կարող են ընդհանուր պատկերացում տալ վաղ միջնադարյան այդ հուշարձանների բնույթի և իրավական դաշտը ընդլայնելու կարողությունների մասին: Այս օրենսգրքերի թարգմանությամբ Ներսես Լամբրոնացին դատական գործընթացի ժամանակ հավասար պայմաններ էր ստեղծում Կիլիկիայում հակոբիկ-ասորի և օրթոդոքս-հույն բնակչության համար, որոնց շրջանում լայն կիրառություն ունեին այս օրենսգրքերը: Այս հուշարձաններում հիմնական շեշտը դրված է ժառանգական և ամուսնական իրավունքի կարգավորման վրա: Հ. Կաուֆհոլդի կողմից վերջերս հրապարակվեց «Համառոտ ժողովումնի» գիտական բնագիրը³⁶: Նրա կողմից պատրաստվում է Ասորա-հռոմեական օրենսգրքի³⁷ գիտական հրատարակությունը:

Ներսես Լամբրոնացու օրենսդրական գործունեության արդյունք հանդիսացող հուշարձանների մյուս խումբն անմիջականորեն առնչվում է բյուզանդական իրավունքին: 1196-1198 թթ. Լույուս ամրոցում պահպանված հունարեն մի հին ձեռագրից Ներսես Լամբրոնացին թարգմանում է բյուզանդական Էկլոգայի խմբագրություններից մեկը (Էկլոգա պրիվատա), իր մի շարք հավելվածներով: Էկլոգայի³⁸ հոդվածները վերաբերում են քաղաքացիական, դատական և քրեական իրավունքի բնագավառներին: Այս երկը արդեն Թ դարից օգտագործման մեջ է եղել Բյուզանդական կայսրության տարածքում: Այս խմբագրության բազմաթիվ հունարեն ձեռագրեր մեզ են հասել ԺԱ-ԺԳ դարերից, որը հավաստում է այն մասին, որ այդ երկը Կոմենենոսների դարաշրջանում իրավական վեճերը կարգավորող կարևորագույն հուշարձաններից է: Ներսես Լամբրոնացին Էկլոգան թարգմանել է նրա մի շարք հավելվածներով, որոնք են Մովսիսական³⁹ օրենսգիրքը, Զինվորական կանոնադրությունը⁴⁰, Հուստինիանոս կայսեր և Էյրենե թագուհու նովելներից հատվածները, Ազգականության վերաբերյալ երկն իր աղյուսակներով: Հուշարձանների այս խումբն, ամենայն հավանականությամբ, վաղուց ի վեր շրջանառության մեջ է եղել Բյու-

ականության ուժով Բյուզանդական կայսրության պաշտոնական լեզուն շարունակում էր մնալ լատիներենը:

³⁶ Die armenischen Übersetzungen byzantinischer Rechtsbücher. Erster Teil: Allgemeines. Zweiter Teil: Die "Kurze Sammlung" ("Sententiae Syriacae")/ herausgegeben, übersetzt und erläutert von Hubert Kaufhold. L'Öwenklau-Gesellschaft e.v. Frankfurt am Main 1997 (Forschungen zur byzantinischen Rechtsgeschichte, herausgegeben von Dieter Simon, Bd. 21): Այս հրատարակության մասին տե՛ս նաև իմ գրախոսությունը (ՊԲՀ, 1998, 3, էջ 223-227):

³⁷ Ասորա-հռոմեական օրենսգրքի բնագիրը տե՛ս Syrisch-römisches Rechtsbuch aus dem fünften Jahrhundert. Mit Unterstützung der Akademie der Wissenschaften zu Berlin aus den orientalischen Quellen herausgegeben, übersetzt und erläutert von K.G. Bruns und E.Sachau, Leipzig 1880. Բնագրի հայերեն բնագիրը տե՛ս նաև Քաղաքային օրենք Ներսիսի Լամբրոնացու ըստ Կոստանդինոսի, Թեոդոսի և Լևոնի թագաւորաց հռոմայեցւոց. հրատարակեց Կ. Յ. Բասմաջեան, Պարիս, 1907, Ասորական դատաստանագիրք. ձեռագրերի համեմատությամբ լոյս ընծայեց Ա. Ղլտճեան, Ս. Էջմիածին, 1917: Վերջերս Հ. Կաուֆհոլդի ջանքերով և հեղինակությամբ հրատարակվեց Վալտեր Զայբի կազմած այս հուշարձանի ասորերեն քնական բնագիրը, ուր լայնորեն օգտագործված են երկի միջնադարյան արաբերեն, հայերեն և վրացերեն թարգմանությունները (W. Selb, H. Kaufhold, Das Syrisch-Römisches Rechtsbuch, Bd. I-III, Wien 2002).

³⁸ Էկլոգայի բնագրի հայերեն տարբերակը դեռևս չի հրապարակված:

³⁹ Մովսիսական օրենսգրքի հայերեն տարբերակը դեռևս չի հրապարակված և մեր նախնական դիտումներով՝ ունի իրարից բավական հեռու երկու խմբագրություն:

⁴⁰ Զինվորական օրենսգրքի միակ հրատարակությունը տե՛ս Կ. Յ. Բասմաջեան, Զինուորական օրենք Ներսիսի Լամբրոնացու, Բանասեր, 4(1902), թ.11, էջ 321-328: Այժմ պատրաստ է այս բնագրի գիտական հրատարակությունը:

զանդական կայսրությանը ենթակա Կիլիկիայում: Հայկական միջավայրում հուշարձանի հետագա կիրառության մասին են վկայում պահպանված ձեռագրերը, որոնցից շատերի բնագրի վրա հետագայում կատարվել է խմբագրական աշխատանք: Այդ փոփոխություններով նպատակ է հետապնդվել ուշ միջնադարի ընթերցողին մատչելի դարձնել այդ երկերում հանդիպող անհասկանալի արտահայտություններն ու տերմինները:

Ներսես Լամբրոնացու թարգմանած հուշարձանների հաջորդ խումբը առնչվում է լատին մատենագրության հետ: Այդ հուշարձաններից ամենակարևորը Լատին Մաշտոցի (այն դեռևս 1185 թ. Հայաստան էր ուղարկել Լուկիոս Գ պապը) և նրա կազմում գտնվող թագավորի օժման ծեսի թարգմանությունն է: 1197 թ. Կիլիկիա եկած Հենրիխ Զ գերմանական կայսեր և Հռոմի պապի նվիրակ, Մայնցի արքեպիսկոպոս Կոնրադը, հանձնարարություն ունենալով Լևոն Ռուբինյանին թագավոր օծել, ամենայն հավանականությամբ, հրահանգ էր ստացել թագադրման ծեսը կատարել հիշատակված ծիսարանով, որի թարգմանությանը ձեռնամուխ է լինում Ներսես Լամբրոնացին: Այս հուշարձանը մեզ է հասել սակավաթիվ ձեռագրերով (հնագույներից է ՄՄ-1026-ը), որի ավելի ուշ և տեղայնացված խմբագրությանը կարելի է հանդիպել նաև, այսպես կոչված, Սսի Մաշտոցում: Թագադրման ծեսը այդ ժամանակից ի վեր կիրառության մեջ մտավ արքունական ծիսակարգում և ժամանակի ընթացքում ձևով և բովանդակությամբ ամբողջովին հայացվեց: Այս նորմատիվային ակտում տրվում են Հռոմի պապի, Արևմտահռոմեական կայսեր, Հայոց կաթողիկոսի և Հայոց թագավորի ինստիտուտների հարաբերակցությանը և վերջինիս օժման հիմնական ատրիբուտներն ու կարգը:

Եկեղեցական օրենսդրության բնագավառում ևս կարևոր է Ներսես Լամբրոնացու գործունեությունը: Նրա գրչին է պատկանում նաև Բենեդիկտյանների վանական կարգի կանոնադրության թարգմանությունը⁴¹:

Հայոց մատենագրությունը օտար իրավունքի հուշարձաններով հարստացնելու այս աշխատանքը ԺԳ դարում շարունակում է Սմբատ Սպարապետը, որը ԺԳ դարի 60-ական թվականներին հին ֆրանսերենից հայերեն է թարգմանում Խաչակրաց Արևելքի աշխարհիկ օրենսդրական հուշարձաններից մեկը՝ Անտիոքի ասիզները⁴², որը գիտական աշխարհին ծանոթ է միայն հայերեն թարգմանությամբ: Սա եվրոպական իրավունքին հայտնի Երուսաղեմի Ասիզների ստեղծման ժամանակներում կիրառված մի ինքնատիպ երկ է, ուր հաստատագրված է Անտիոքի նորման տերերի Սիցիլիայի թագավորությունից բերած դատաիրավական պրակտիկան: Օրենքների այս ժողովածուն բաղկացած է երկու մասից, որոնցից առաջինը կարգավորում է գերակայի և ստորակայի փոխարաբերությունները, նրանց իրավունքներն ու պարտականությունները, իսկ երկրորդը՝ քաղաքացիների ամուսնա-ընտանեկան, գույքային ու առևտրական հարաբերությունները: Այս օրենսդրական երկի կարևորությունը հայոց իրավունքի համար կայանում է նրանում, որ դրանով կիրառության մեջ են դրվում նոր սկզբունքներ, որոնք մինչ այդ հատուկ չէին Հայոց հասարակությանն ու օրենսդրությանը, սակայն օգտագործելի էին Կիլիկիայում, ուր

⁴¹ Բենեդիկտյան վանական կարգի կանոնադրությունը հրապարակել է Ղ. Ալիշանը:

⁴² Անտիոքի Ասիզները հրապարակել է Ղևոնդ Ալիշանը Assises d'Antioch. Reproduites en français et publiées au sixième centenaire de la mort de Sempad le Connétable leur ancien traducteur arménien. Venise 1876.

բնակվում էին մեծ թվով արևմտաեվրոպացի հողատերեր և ռազմական օրդենների ներկայացուցիչներ, որոնց և Հայոց արքունիքի միջև վեճերում հարկ էր լինում դիմել նաև այս օրենսգրքին:

Հիշատակված թարգմանական երկերի հայերեն տարբերակները հաճախ թույլ են տալիս սրբագրել մայր բնագրի եղծված իմաստները և վերականգնել հուշարձանի նախնական տեսքը: Թարգմանական այդ երկերը չափազանց ուշագրավ են նաև այն տեսանկյունից, որ դրանք թարգմանիչների կողմից հարմարեցվել են հայկական միջավայրի կարիքներին, իսկ ժամանակի ընթացքում խմբագրվելով, ավելի ու ավելի հասկանալի են դարձել հայ ընթերցողին և կազմել հայոց իրավական ժառանգության անքակտելի մասը:

Զ. Թարգմանական այլ կանոնագրքեր (Ծաղ-արքայուն-հոռոմների և կաթոլիկների)

Հայ բնակչության մի հատվածը դեռ վաղ ժամանակներից (Զ-Է դդ.) իր հպատակությունն է հայտնել բյուզանդական Օրթոդոքս Եկեղեցուն և ստեղծել է իր ինքնուրույն գրականությունը, որն անբաժանելի մասն է դարձել հայոց մշակույթի: Բնակչության այդ շերտը դարերի ընթացքում հանդես է եկել արքայուն, ծաղ, հոռոմ կամ վրացի անունների տակ: Մինչ այժմ հայտնի էր միայն այդ վանքերից մեկի՝ Բաշկովոյի վանքի (Բուլղարիայի Պլովդիվ քաղաքի մոտակայքում) կանոնադրությունը հունարեն և վրացերեն լեզուներով: Հիմա հայտնի է դարձել հայ-օրթոդոքսների օգտագործած կանոնական ժողովածուն, որը թարգմանությունն է Բյուզանդական Եկեղեցու Կանոնագրքի: Մեզ հասած այս բնագիրը բյուզանդական 14 տիտղոսների կանոնական ժողովածուի թարգմանությունն է, որը Բյուզանդական կայսրության մեջ շրջանառության մեջ է եղել Զ դարից: Հայերենով պահպանված բնագիրը պարունակում է տասնչորս տիտղոսները, Բյուզանդական Եկեղեցու կողմից ուղղափառ ճանաչված ժողովների (Նիկիա, Անկյուրիա, Նեոկեսարիա, Գանգրա, Անտիոք, Լավոդիկիա, Կոստանդնուպոլիս, Եփեսոս, Քաղկեդոն, Երկրորդ Նիկիական, Հինգվեցյան, Կարթեդոնի և այլն) և Սուրբ հայրերի կանոնների բնագրերը: Այս երկի հնագույն ձեռագիրը պահպանվում է Վենետիկի Մխիթարյանների մատենադարանում և թվագրվում է ԺԳ դարով: Հայոց Եկեղեցու միջավայրում նմանատիպ Կանոնագրքի օգտագործման միակ դեպքի մասին հիշատակում է Գրիգոր Անավարզեցի Կաթողիկոսը (կթդ. 1293-1307 թթ.) Հեթում թագավորին գրած իր նամակում⁴³: Իմ կարծիքով, այստեղ խոսքը գնում է ԺԴ դարի սկզբին այդ Կանոնագրքի նորագույն թարգմանության մասին, որի բնագիրը դեռևս ծանոթ չէ գիտությանը: Բյուզանդական Կանոնագրքի հայտնաբերված տարբերակը երբևէ ուսումնասիրության նյութ չի դարձել և սպասում է իր ուսումնասիրողին և հրապարակողին:

Խաչակրաց ռազմարշավներից հետո, հատկապես ԺԳ դարից սկսած, ունիթորական շարժման ժամանակներում հայ ազգաբնակչության մի ստվար հատված էլ իր հպատակությունը հայտնեց Հռոմի Կաթոլիկ Եկեղեցուն: Հայկական ձեռագրական մշակույթին հայտնի են Պետրոս Արագոնացու Դատաստանագրքի հայերեն թարգմանության ընդօրինակությունները: Փաստորեն սա մի սխտեմավորված Կանոնա-

⁴³ Տե՛ս Գ. Զարբանալեան, Մատենադարան հայկական թարգմանութեանց նախնեաց, Վենետիկ, 1889, էջ 488:

գիրք է, ուր կարգավորվում են Լատին Եկեղեցու ծիսական և իրավական հայեցակետերը: Հռոմի կաթոլիկ կանոնական այս հուշարձանը 1301 թ. ունիթոր հայերի կարիքների համար թարգմանել է Հակոբ Քոնեցի վարդապետը: Այս երկը ևս դեռևս հրապարակված չէ: Հայոց սիստեմավորված Կանոնագրքերի վրա այս ժողովածուի ազդեցությունն ակնհայտ է:

Է. «Եղբարց միութիւնների» կանոնադրություններ

Իրավական հուշարձանների մի խումբ վերաբերում է երիտասարդական-արհեստավորական կազմակերպությունների գործունեությանը, որոնց ցանցը տարածված էր ողջ Մերձավոր Արևելքում: Հայոց իրավունքի ինքնատիպ հուշարձան է Երզնկա քաղաքի «Եղբարց միութեան» կանոնադրությունը, որը 1280 թ. կազմել է վերն արդեն հիշատակված Հովհաննես Երզնկացին⁴⁴: Այս կազմակերպության հիմնական նպատակն է եղել միացյալ ջանքերով դիմագրավել բռնավորներին, օգնել տնտեսապես քայքայված ընկերներին, տնտեսական ու հասարակական կյանքի տարբեր բնագավառներում գորավիզ լինել միության անդամներին: Անիում, Վանում, Կարինում ԺԳ-ԺԴ դդ. գործած նմանատիպ կազմակերպությունների մեջ միավորվել են Հայաստանի քաղաքների առևտրական և արհեստավորական շերտերին պատկանող ամուրի երիտասարդները: 1522 թ. վկայություն ունենք Ռեչ Պոսպոլիտայի Կամենեց-Պոդոլսկ քաղաքում գործող «Կտրիճաւորաց եղբայրութեան» գործունեության մասին, որին հար և նման կազմակերպություն ստեղծվել է Ստանիսլավ քաղաքում Նիկոլ Թորոսովիչի արքեպիսկոպոսության տարիներին (1626-1681 թթ.): Պահպանվել է նաև ԺԷ դարի սկզբում ստեղծված Յազովեց քաղաքի հայ երիտասարդության «Կտրիճաւորաց եղբայրութեան» կանոնադրությունը⁴⁵: Այն բաղկացած է 31 հոդվածներից, որոնք շոշափում են կազմակերպության և նրա անդամների փոխադարձ պարտավորություններին ու իրավունքներին վերաբերող բազմապիսի հարցեր: Ուշագրավ է նաև 1690 թ. Եդիազար Կաթողիկոսի կողմից հաստատված, իսկ այնուհետև 1790 թ. Հովսեփ արքեպիսկոպոս Արդուրյանի վերահաստատած Պատուշան, Յաշ և Ուրմանի քաղաքների «Կտրիճաց եղբայրութեան» կանոնադրությունը⁴⁶:

Ը. Հայոց իրավունքի ռեցեպցիան (փոխառումը) այլ երկրներում

Հայկական վերջին թագավորության կործանումից հետո (1375 թ.) բազմաթիվ հայկական գաղթավայրեր են ստեղծվում բուն Հայաստանի սահմաններից դուրս, որոնց կենցաղում կիրառվում էին Հայոց իրավունքի հուշարձանները: Հայ բնակչությունը ինտեգրվելով այդ երկրներում (հատկապես՝ Վրաստան, Դրիմ, Ուկրաինա, Լեհաստան, Ռուսաստան)՝ հետամուտ էր իր օրենսգրքերը թարգմանված տեսնել

⁴⁴ Երզնկայի «Եղբարց միութեան» կանոնադրության բնագրի հրապարակումը և այդ կազմակերպությունների գործունեության ու նշանակության մասին տե՛ս Լ. Խաչիկյանի հոդվածները (1280 թվականի Երզնկայում կազմակերպված «Եղբայրութիւնը», «Տեղեկագիր» ՀՍՄՌ ԳԱ հաս. գիտ. 1951, թ. 12, էջ 73-84, Երզնկա քաղաքի «Եղբարց միաբանութեան» կանոնադրութիւնը (1280), «Բանբեր Մատենադարանի», 1962, թ. 6, էջ 365-377: Այս հոդվածների վերջին հրատարակությունը տե՛ս Լ. Խաչիկյան, Աշխատութիւններ, հտ. Ա, էջ 200-226):

⁴⁵ Այս բնագիրը պահպանվել է Վիեննայի մատենադարանի թ. 453 մատյանում:

⁴⁶ Բնագրի հրատարակությունը տե՛ս «Արարատ», 1889, էջ 387-405:

այդ երկրների լեզուներով:

1519 թ. Հայոց իրավունքի ժողովածուն, որի հիմքում Մխիթար Գոշի Դատաստանագիրքն էր, Միգիզմունդ Ա-ի հրամանով Ռեչ Պոսպոլիտայում թարգմանվում է լատիներեն և կիրառության մեջ մտնում Ռեչ Պոսպոլիտայում (հիմնականում՝ Լեմբերգի և Կամենեց-Պոդոլսկի հայկական գաղութներում)⁴⁷: Գիտությանը հայտնի են նաև հիշատակված լատիներեն բնագրից կատարված լեհերեն և լեհերենից ղփչադերեն (արևելագիտության մի ուրույն բնագավառ, որը դեռևս բավարար ուսումնասիրված չէ մեզանում⁴⁸) թարգմանությունները⁴⁹: Ռեչ Պոսպոլիտայում հայկական համայնքի օրենսդրական գործունեության վառ ապացույց են նաև Կամենեց-Պոդոլսկի դատարանի արձանագրությունները⁵⁰:

Հայոց իրավունքի մեկ այլ ժողովածու թարգմանվել է վրացերեն և մտել Քարթլիի կառավարիչ՝ վրաց արքայազն Վախթանգի «Հավաք օրինաց» ժողովածուի մեջ (1703-9 թթ.)⁵¹: «Հայկական օրենքները» Վրաստանում պարտավորիչ ուժ ունեին: Այդ է վկայում որդի Դավիթ արքայազնը⁵², որը իր հայր Գեորգ ԺԳ-ի հանձնարարությամբ կազմել է ավելի ընդարձակ օրենսգիրք:

Վախթանգի «Հավաք օրինաց» ժողովածուի 1813 և 1823 թթ. կատարված ռուսերեն թարգմանությամբ ԺԹ դարի առաջին կեսին հայկական օրենքների ժողովածուն մտնում է նաև Ցարական Ռուսաստանի իրավական ակտերի համահավաք:

1746 թ. Ռուսական սենատի որոշմամբ Աստրախանի հայկական գաղութի բնակչությանը թույլատրվում է ունենալ սեփական դատարան և դատավարության ընթացքում կիրառել հայկական իրավունքի նորմերը: 1779 թ. նույն արտոնությունը ստանում է նաև Նոր Նախիջևանի (Դոնի Ռոստով) հայկական գաղութը: Այս դատարանների գործունեությունը հավաստվում է Աստրախանի Հայոց Դատաստանագրքի կիրառությամբ⁵³:

1781 թ. Ռուսահայ թեմի առաջնորդ Հովսեփ Արղությանը Նոր Նախիջևանի հոգևոր դատարանի համար կազմում է «Կանոնադրություն», որը կիրառության մեջ է մնում Ռուսական կայսրության բոլոր հայկական եկեղեցիներում մինչև «Պոլոժենիի» ստեղծումը:

1828 թ. Արևելյան Հայաստանն անցավ Ռուսական կայսրության տիրապետության տակ: Ստեղծվեց Հայկական մարզի կանոնադրությունը, իսկ Հայոց Եկեղեցու

⁴⁷ Kohler J., Das Recht der Armenier.- in: Zeitschr. f. vergl. Rechtswissenschaft, 7(1887), S. 385-436.

⁴⁸ Կարելի՞ է արդյոք ենթադրել, որ Հայոց իրավունքի մի շարք հուշարձաններ դեռևս ԺԴ-ԺԵ դդ. ընթացքում Ղրիմում թարգմանվում են հայատառ ղփչադերեն: Վիեննայի Մխիթարյան թ. 468 և Փարիզի ազգային գրադարանի թ.176 ղփչադերենով պահպանվել է նաև Մխիթար Գոշի Դատաստանագրքի ներածությունը և Բ հոդվածը, որոնք, ըստ Հ. Տաշյանի, ստրկական թարգմանություն են հայերենից (տե՛ս Ցուցակ հայերեն ձեռագրաց մատենադարանին Մխիթարեանց ի Վիեննա, Վիեննա, 1895, էջ 943-945):

⁴⁹ Հիմնվելով Օսովյանյան գրադարանի թ.1916 մատյանի 1523 թ. գրված հիշատակարանի (թղ. 297ա) վրա, Խ. Թորոսյանը լեհերեն և ղփչադերեն թարգմանությունները թվագրում է 1519-1523 թթ. (տե՛ս Մխիթար Գոշ, Գիրք Դատաստանի /աշխատասիրությամբ Խ. Թորոսյանի, Երևան, 1975, էջ 2Ը):

⁵⁰ Այդ արձանագրությունները պահպանվել են հայերեն և ղփչադերեն լեզուներով: Տե՛ս Վ.Գրիգորյան, Կամենեց-Պոդոլսկի քաղաքի հայկական դատարանի արձանագրությունները (ԺԶ դ.), Երևան 1963 :

⁵¹ Խ. Թորոսյան, Մխիթար Գոշի Դատաստանագրքի վրացերեն խմբագրությունը, Բանբեր Մատենադարանի 11 (1973), էջ 73-124, հմմտ. Մխիթար Գոշ, Գիրք Դատաստանի, Եր., 1975, էջ 2Թ-Ղ: Ըստ Ժ. Կարստի, «Հավաք օրինաց»-ը կազմվել է 1676 թ., իսկ իբրև պաշտոնական ժողովածու շրջանառության մեջ է մտել 1723 թ. փետրվարի 15-ից հետո, երբ Վախթանգը գահ բարձրացավ

⁵² Մխիթար Գոշ, Գիրք Դատաստանի, Եր., 1975, էջ ԴԸ-ՂԹ:

⁵³ Տե՛ս Դատաստանագրիք Աստրախանի Հայոց, աշխատասիրությամբ Ֆ. Գ. Պոդոսյանի, Երևան, 1967:

և Ռուսական պետության փոխհարաբերությունները կարգավորելու համար 1843 թ. ընդունվեց «Պոլոժենիեն»: Այդ վավերագրի դրույթները այսօր ևս դրված են կաթողիկոսական ընտրությունների կազմակերպման հիմքում:

Թ. Պայմանագրեր

Միջնադարի ողջ պատմության ընթացքում Հայաստանը դիվանագիտական փոխհարաբերությունների մեջ է եղել աշխարհի բազմաթիվ երկրների հետ: Պատմիչների աշխատություններում և մատենագրական երկերում պահպանվել են պայմանագրերին վերաբերող բազմաթիվ վկայություններ: Դրանք հիմնականում միջպետական համաձայնագրեր են մի կողմից Հայաստանի հոգևոր և աշխարհիկ իշխանությունների, մյուս կողմից Բյուզանդական կայսրության, Սասանյան Պարսկաստանի, Արաբական խալիֆայության, Մելջոկ թյուրքերի, Մոնղոլ տիրակալների և այլոց միջև: Մեզ են հասել նաև առանձին վավերագրերի բնագրեր, որոնք պահպանվում են աշխարհի տարբեր արխիվներում: Այս վերջինների մեջ կան և՛ միջպետական ու առևտրական պայմանագրեր, և՛ զանազան գործարքների վերաբերող անհատական նախաձեռնությամբ ստորագրված համաձայնագրեր⁵⁴: Այս հուշարձանների ուսումնասիրությունը դուռ է բաց անում միջազգային իրավունքում հայկական գործոնի ուսումնասիրության համար:

Ժ. Կտակներ և մուրհակներ

Տնտեսաիրավական հարաբերությունները կարգավորող քաղաքացիական ակտերը պահպանվում են աշխարհի տարբեր երկրների արխիվներում և գրադարաններում: Դրանք պահպանվել են Հայոց թագավորների ու կաթողիկոսների, հարուստ վաճառականների և մի շարք նշանակալի քաղաքական ու մշակութային գործիչների թողոններում կամ առանձին միավոր են ներկայացնում: Դրանց մեջ հիշարժան է Հակոբ Ջուղայեցի Կաթողիկոսի թողած կտակը⁵⁵: Այս կարգի վավերագրերի մեջ հիշատակելի են նաև մուրհակները:

ԺԱ. Հայոց իրավունքի նոր ժամանակների հուշարձանները

Բուրժուական հեղափոխությունների ազդեցության ներքո, հնդկահայ հասարակական գործիչ Շահամիր Շահամիրյանի⁵⁶ ստեղծած խմբակը ԺԸ դարի վերջին հրապարակում է «Որոգայթ փառաց» աշխատությունը, որը վերականգնվելիք հայկական պետությանը հասցեգրված մի ինքնատիպ սահմանադրություն է⁵⁷: Այն նախատեսում է թուրք-պարսկական լծից ազատագրվելիք Հայաստանում վերականգնել հայկական պետականությունը: Այստեղ իրար են միաձուլված Հայոց ավանդական իրավունքի նորմերը և բուրժուական նոր աշխարհայեցողության տարրերը:

⁵⁴ Գլխիկյան Հայաստանի կողմից կնքված պայմանագրերի լավագույն հրատարակված ժողովածուն մտնում է Վիկտոր Լանգլուայի կազմածը (տե՛ս V. Langlois, Le trnsors des chartres d'Arménie, Venise 1863):

⁵⁵ Լ. Խաչիկյան, Հակոբ Ջուղայեցու կտակը, ՊԲՀ, 1966, թ. 4, էջ 173-186:

⁵⁶ Շահամիր Շահամիրյանը (1723-1797) ծնվել է Նոր Ջուղայում և մահացել Մադրասում: Հիմնադրել է առաջին հայկական պարբերականը՝ «Ազդարար» թերթը: Այդ խմբակի գործունեության մասին տե՛ս Թ. Ավդալբեգյան, Հայագիտական հետազոտություններ, Երևան, 1969, էջ 215-275:

⁵⁷ Տե՛ս Գիրք անուանեալ Որոգայթ փառաց..., Թիֆլիս, 1913:

Սահմանադրության մեջ նախատեսված կետերը վերաբերում են պետական շինարարության, քաղաքական, քրեական իրավունքի բնագավառներին, կարգավորելով քաղաքացիների ազատության և իրավահավասարության հարցերը: Հնդկահայ գաղութի այս խմբակի կողմից է գրվել նաև «Նշավակ»-ը, իբրև Մադրասի հայկական գաղութի կանոնադրություն⁵⁸:

ԺԸ դարի վերջից Հայոց Եկեղեցու ռուսական կողմնորոշում ունեցող սպասավորները փորձում էին կարգավորել Հայոց Եկեղեցու կարգավիճակը և ներքին կյանքը: Այդ միտումների արտահայտությունը դարձավ 1836 թ. Ռուսական կայսրության կողմից հաստատված «Պոլոժենիեն»: Հայոց սահմանադրական իրավունքի հետաքրքիր հուշարձաններ են Ղրիմի պատերազմից հետո (1856 թ.) թանգիմաթի դարաշրջանի Թուրքիայում քննարկվող հայկական ինքնավարության ծրագրային փաստաթղթերը, որոնց հիման վրա նախատեսվում էր կառուցել Օսմանյան կայսրության մեջ հայկական ազգաբնակչության ինքնավարության հիմքերը⁵⁹: Այդ փաստաթղթերի հիմքի վրա էլ սուլթանական Թուրքիան հաստատեց «Ազգային սահմանադրությունը»:

⁵⁸ Տե՛ս Տետրակ որ կոչի Նշավակ..., Մադրաս, 1783:

⁵⁹ Տե՛ս Սարուխան, Հայկական խնդիրը և Ազգային Սահմանադրությունը Թուրքիայում, հտ. Ա, Թիֆլիս, 1910:

Թ. Ս. ՇԱՀՎԵՐԴՅԱՆ

Բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ

ԴԱՍԱԿԱՆ ԳՐԱԲԱՐԻ ՇԱՐԱՀՅՈՒՍՈՒԹՅԱՆ ՈՃԱԿԱՆ-ԱՐՏԱՀԱՅՏՉԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ

Դասական գրաբարի շարահյուսության ոճավորման հիմքն են կազմում շարահյուսական ամենատարբեր դարձույթներն ու բանադարձումները¹, որոնք հուզական-պատկերային զգալի արտահայտչականություն են հաղորդել հին հայերենի լեզվական համակարգին:

Գրաբարի շարահյուսական դարձույթները շարահյուսական փոխաբերություններն են կամ վերափոխաստավորումները, որոնց հիմքում ընկած է քերականական կարգ կազմող ձևային-շարահյուսական հակադրությունների հարացուցում լեզվական միավորի՝ հակադիր հարացուցային քերականական իմաստով հանդես գալու ուշագրավ ունակությունը: Վերափոխաստավորումը երբեմն բնորոշվում է որպես «...լեզվական որևէ միավորի կիրառությունը հարացուցային շարքում նրա հակադիր անդամի գործառնությամբ»²:

Գրաբարի քերականական համակարգում շարահյուսական հարացույց են կազմում միակազմ, երկկազմ և թերի նախադասությունները: Նրանք արտահայտության պլանում միմյանցից առանձնանում են նախադասության գլխավոր անդամների դրսևորման առանձնահատկություններով: Երկկազմ նախադասությունը բնորոշվում է երկու բևեռների՝ ենթակայի և ստորոգյալի առկայությամբ: Սրան հակադրվում է միակազմ նախադասությունը, որը զուրկ է նման երկբևեռայնությունից³: Դասական գրաբարում հաճախակի են շարահյուսական միավորների վերափոխաստավորման դեպքերը, երբ արտահայտման պլանում նախադասությունների տիպային հարացույցի մի տեսակին պատկանող շարահյուսական կաղապարն օգտագործվում է նրան հակադրվող հարացուցային ձևի քերականական իմաստն արտահայտելու նպատակով: Այսպես՝ լայն տարածում են գտել շարահյուսական այն կառույցները, ուր ենթակայի հետ մեկտեղ հանդես է գալիս դիմավոր բայի գործառնությամբ իրականացնող, բայց ձևականորեն նման ունակություններից զուրկ անկախ դերբայական միավորը՝ առանց օժանդակ բայի: Կախված դերբայի արտահայտման եղանակից՝ նման կառույցները գրաբարում երկուսն են՝ «ենթակա + անցյալ դերբայ» և «ենթակա + անորոշ դերբայ»: Այսպես՝ առաջին տիպի կառույցի գրաբարյան կիրառության նմուշ-

¹ Ինչպես հայտնի է, դարձույթները և բանադարձումները ոճական պատկերավորման հիմնական միջոցներն են: Դարձույթները բառերի փոխաբերական կիրառություններն են (փոխանունություն, փոխաբերություն, այլաբանություն և այլն), իսկ բանադարձումների ոճական արտահայտչականության հիմքում ընկած է լեզվական միավորների շարքային առանձնահատուկ կապակցման միջոցով դրսևորվող լեզվաոճական առնշանակային իմաստների դրսևորումը. տե՛ս **Գ. Բ. Ջահուկյան, Ֆ. Հ. Խղաթյան**, Հայոց լեզու, Ոճաբանություն, Ե., 1998, էջ 38:

² **В. Г. Гак**, Транспозиция.- Лингвистический энциклопедический словарь, М., 1990, с. 519.

³ Տե՛ս **Ս. Գ. Աբրահամյան, Ն. Ա. Պառնասյան, Հ. Ա. Օհանյան, Խ. Գ. Բաղդկյան**, Ժամանակակից հայոց լեզու, հ. 3, Երևան, 1976, էջ 134:

ներից են. «Արդ՝ *եղեալ* դահճապետն պարծելով՝ չարամահ անել զնա, և ետ հանել զնոսա շղթայիւք ի քաղաքէն» (Ագաթ., 111), «Ապա առնոյր Վասակ զգունդն Հայոց, և զՀոնսն հանդերձ Ալանօքն *կոչել* յօգնականութիւն» (Բուզ., 125): Այս օրինակներում առանց օժանդակ բայի գործածված անցյալ և անորոշ դերբայները ձեռք են բերել ինքնուրույնաբար, իրենց անդամ ձևային կաղապարով նախադասության ստորոգյալի գործառնություն կատարելու ունակություն: Անշուշտ, քերականորեն դերբայը զուրկ է նման հնարավորությունից. նախադասության ստորոգյալ կարող է դառնալ միայն խոնարհված դիմավոր բայը, սակայն մեջբերված օրինակներում գրաբարյան դերբայները կիրառվել են փոխաբերաբար, համապատասխան դիմավոր բայաձևի փոխարեն՝ բովանդակության պլանում արտահայտելով վերջինիս ժամանակային, դիմային և թվային հատկությունները:

Արտահայտության պլանում միակազմ են ներկայանում նաև գրաբարի գեղջված գլխավոր անդամ ունեցող թերի նախադասությունները, սակայն բովանդակային պլանում նրանք նույնպես երկկազմ են. բանն այն է, որ գեղջված և ընդհանրապես թերի նախադասությունները որպես այդպիսիք, այսինքն՝ ձևականորեն որպես ոչ երկկազմ կառուցվածք ունեցող կաղապարներ կարելի է դիտել միայն ձևային, կառուցվածքային տեսակետից, քանի որ բովանդակության առումով այս տիպի նախադասությունների միտքը թերի չէ և բավարար չափով հասկացվում է⁴: Գրաբարում ենթակայի գեղջման դեպքերը սովորական ոճական երևույթ են և հանդիպում են բավական հաճախ: Այսպես՝ «Եւ եկին հասին նոքա մեծապարծ երեւելի հոգեւորագեաց փառօք ի Հայաստան երկիրն. եւ արքայն Արշակ ընդ առաջ երթայր նոցա մինչեւ ի լեառն, որ անուանեալ կոչի Առեւծ: Եւ անդ պատահեալ միմեանց մեծաւ լրջմտութեամբ, լցեալք օրհնութեամբ ողջունին, անդուստ յաշխարհն դարձան» (Բուզ., 62): Համեմատաբար ավելի սակավ են գրաբարի ստորոգյալի գեղջման արդյունքում առաջացած թերի նախադասությունները, որոնք նույնպես բովանդակային առումով երկկազմ են ներկայանում: Ամենից հաճախ թերի նախադասությունները կիրառվում են երկխոսություններում՝ զրույցն ավելի դինամիկ ու գրավիչ դարձնելու նպատակով. «Եւ ասէ Լաբան ցՅակոբ, /.../ ընդէ՛ր գողացար զաստուածսն իմ: /.../ Պատասխանի ետ Յակոբ եւ ասէ ցԼաբան, **Քանզի երկեայ. ասացի թէ գուցէ հանիցես զդստերս քո յինէն, եւ զամենայն քո ինչ զիմ**» (Ծննդ. ԼԱ 31): Չնայած ձևական միաբնույնությանը, ընդգծված նախադասության գեղջված անդամները հեշտությամբ վերականգնվում են բովանդակային պլանում:

Սկզբունքորեն այլ է իրավիճակը գրաբարի անվանական միակազմ նախադասությունների ոճական վերաիմաստավորման պարագայում. այս դեպքում և՛ արտահայտության, և՛ բովանդակության պլաններում գործ ենք ունենում կազմությամբ միակազմ նախադասությունների հետ: Դիտարկենք հետևյալ անվանական միակազմ շարահյուսական կառույցները. «Փառք եւ պատիւ առաջի երեսաց նորա» (Ա Մնաց. ԺԶ 27), «Վա՛յ այնոցիկ, ընդ ոյր ձեռն գայցէ գայթակղութիւն» (Խոր., 354): Այս նախադասությունների արտահայտման պլանը միակազմ է, որովհետև, ինչպես նշում է Ս. Աբրահամյանը, նման տիպի կառույցներում նախադասության «... գլխավոր անդամն արտահայտվում է առարկա ցույց տվող գոյականով»⁵: Իրենց բովան-

⁴ Տե՛ս նույն տեղը, էջ 446:

⁵ Նույն տեղում, էջ 496:

դակության պլանում արդեն անվանական միակազմ նախադասություններն արտահայտում են «...առարկայի եղելությունը, գոյությունը տվյալ վայրում, պայմաններում»⁶: Բանն այն է, որ վերախմաստավորման արդյունքում գրաբարյան անվանական միակազմ նախադասությունների բովանդակային պլաններում հայտնվում են «եմ», «լինիմ», «եղանիմ» բայերի համապատասխան ժամանակի միադիմի ձևերը (է, էր, իցէ, լիցի, եղեւ և այլն), որոնք արտահայտման պլանում հանդես եկած գոյականների հետ կազմում են բաղադրյալ ստորոգյալ⁷: Սակայն նույնիսկ այդպիսի բովանդակային պլանում անվանական միակազմ նախադասությունը երկկազմ չի դառնում, որովհետեւ էական բայերի միադիմի բայաձևը «...գուրկ է ստորոգող հատկանիշից»⁸ և նախադասության մեջ հանդես է գալիս միայն անվանական բաղադրյալ ստորոգյալի կազմում:

Դասական գրաբարում շարահյուսական հարացույց են կազմում նաև հաստատական և ժխտական նախադասությունները: Թեև հաստատական նախադասություններն առաջին հերթին կիրառվում են որևէ իրողություն կամ երևույթ հաստատելու, իսկ ժխտական նախադասությունները՝ իրենց կազմության մեջ առկա ժխտական խոնարհման բայով արտահայտված ստորոգյալի օգնությամբ դրանք բացասելու նպատակով, սակայն առանձին դեպքերում, մասնավորապես՝ ռճական նպատակներով, հաստատական իմաստ կարելի է արտահայտել ժխտական շարահյուսական կառույցների օգնությամբ և ընդհակառակը:

Ժխտական նախադասությունների միջոցով գրաբարում հաստատական նրբիմաստ արտահայտվում է մի քանի եղանակով: Համեմատաբար պարզ կառուցվածք ունեն այն վերախմաստավորվող նախադասությունները, որոնց կազմում ժխտական բայի կամ մասնիկի հետ համաժամանակ հանդես են գալիս քերականական այնպիսի միավորներ, որոնք հակադրվում են ժխտական բայաձևով ստորոգյալի քերականական իմաստին՝ նրան բովանդակային պլանում հաստատական երանգ վերագրելով: Այսպես, «Յիսուս՝ ասէ ցնա. զի՞ ասես զիս բարի. *չիք որ բարի՝ բայց մի Աստուած Հայր*» (Ղուկ. ԺԸ 19): Ընդգծված նախադասությունում «Չիք որ բարի» նախադասության ժխտական բովանդակությանը հակադիր իմաստ է հաղորդում «բայց» նախադասությունը, որը, ի տարբերություն համանուն և ներհակական իմաստ արտահայտող «բայց» համադասական շաղկապի՝ այս համատեքստում կիրառվել է «բացի» կապական ձևաիմաստով՝ բովանդակային պլանում հաստատական բնույթ հաղորդելով այս լեզվական կառույցին. «Յիսուս՝ ասէ ցնա. զի՞ ասես զիս բարի. միայն *մի Աստուած Հայր է բարի*» : Երբեմն «բայց» կապական բառի փոխարեն միևնույն լեզվառճական գործառնություն գործածվում է վերջինիս «բաց» շարահյուսական համանիշը. այսպես՝ «Եւ մատուցեալ բազում աղօթիւք խնդրուածոց հայցեր ի Տէր Աստուած Իսրայելի՛ եւ ասէր. Տէր իմ եւ թագաւոր մեր, դու միայն օգնեա ինձ միայնումս. որ *ոչ ունիմ ինձ օգնական բաց ի Քէն*» (Եսթեր ԺԴ 3):

Վերախմաստավորված շարահյուսական պարզ կառույցներից է նաև նվազասույթը (ռուս. *еёдо́дѣ*)՝ լեզվառճական այն արտահայտչամիջոցը, որն այս կամ այն հատ-

⁶ Նույն տեղում:

⁷ Գրաբարի անվանական ու ընդհանրապես միակազմ նախադասությունների, նրանց արտահայտման ու բովանդակության պլանների դրսևորման առանձնահատկությունների մասին ավելի մանրամասն տե՛ս **Գ. Կ. Խաչատրյան**, Գրաբարի միակազմ նախադասությունները, Երևան, 2002:

⁸ Նույն տեղում, էջ 90:

կանիշի ձևական ժխտման միջոցով հաստատագրում է հակիմաստ հատկանիշի առկայությունը («ոչ գեղեցիկ» - «տգեղ», «ոչ վատ» - «լավ»): Նվազասույթն ունի միանգամայն որոշակի շարահյուսական կառուցվածք՝ «ժխտական մասնիկ+հատկանիշ արտահայտող բառ», այդ պատճառով այն պատկանում է շարահյուսական արտահայտչամիջոցների թվին⁹: Գրաբարում այս վերաիմաստավորման եղանակը հաճախակի է կիրառվել. այսպես՝ «Ոչ է բարւոք լուրն գոր ես լսեմ» (Ա Թագ. Բ 24), «Չէ բարի բանդ գոր արարեր» (Ա Թագ. ԻԶ 16), «Ոչ է ծառայ մեծ քան գտեր իւր» (Յովհ. ԺԳ 16):

Հաստատական լեզվառճական նրբիմաստ արտահայտելու համար գրաբարում լայնորեն կիրառվել են ժխտական բաղադրիչներով բարդ ստորադասական նախադասություններ, որտեղ կրկնակի ժխտման արդյունքում ուրվագծվում է ողջ բարդ նախադասության դրական բովանդակությունը: Այսպես՝ «Բայց այս ազգ ոչ էլանէ, եթէ ոչ՝ աղօթիւք եւ պահովք» (Մատթ. ԺԷ 20): Արտահայտման պլանում գործ ունենք մի բարդ ստորադասական կառույցի հետ, որտեղ երկրորդական նախադասության մեջ նշվում է այն պայմանը, որի իրագործման դեպքում հնարավոր է դառնում գլխավոր նախադասությունում նկարագրվող գործողության իրականացումը: Դժվար չէ նկատել, որ սոսկ ձևական տեսանկյունից է այս բարդ քերականական ամբողջությունը ժխտական տեսք ստացել, իսկ բովանդակային պլանում այն միանգամայն հաստատական պարզ նախադասություն է՝ «բայց այս ազգ միայն աղօթիւք եւ պահովք ելանէ»: Թեև շարահյուսական համանիշներ հանդիսացող այս երկու նախադասությունները արտահայտում են միևնույն բովանդակությունը, սակայն լեզվառճական արտահայտչականության, հաղորդակցման գործընթացում ներագդելու ունակության դիտանկյունից նրանք զգալիորեն տարբերվում են միմյանցից. առաջին կառույցը երկրորդի համեմատությամբ ավելի արտահայտիչ ու ազդեցիկ է՝ շնորհիվ նրանում առկա ժխտական նախադասությունների կիրառության:

Գրաբարի քերականական համակարգում ուշագրավ դերակատարում ունի «մինչէ» («մինչ չէ») շաղկապական միավորը, որն ունի բարդ կառուցվածք և ձևականորեն իր մեջ ժխտական մասնիկ է պարունակում («մինչ + չէ, մինչ + ոչ»): Այս հանգամանքի շնորհիվ «մինչէ»-ը հաճախ է կիրառվում կրկնակի ժխտման արդյունքում դրական վերաիմաստավորման ոճական գործառնության իրականացման նպատակով: Այսպես՝ «Ոչ են կամք իմ ի դոսա, մինչէ խաւարեալ իցեն արեգակն՝ եւ լոյս՝ եւ լուսին՝ եւ աստեղք, եւ դարձցին ամպք զկնի անձրեւաց» (Ժող. ԺԲ 2), «Ոչ կոչեմ զՏուրիա գորդի իմ, եւ ցուցանեմ նմա զամենայն մինչէ մեռեալ իցեմ» (Տովբիթ Դ 1):

Անհամեմատ ավելի մեծ թիվ են կազմում գրաբարի շարահյուսական բանադարձումները՝ հակադրությունը, կրկնությունը, համեմատությունը, բազմաշաղկապությունը և այլն, որոնք նույնպես զգալի արտահայտչականություն են հաղորդում գրաբարի շարահյուսությանն ու ընդհանրապես ողջ լեզվական համակարգին: Ի տարբերություն շարահյուսական դարձությունների, որոնց ոճական պատկերավորման հիմքում ընկած է լեզվական միավորի փոխաբերական կիրառությունը, դարձությունները չեն փոխում նախադասության բուն անվանողական իմաստը, այլ սոսկ լրացուցիչ

⁹ Նվազասույթի մասին ավելի մանրամասն տե՛ս **М. Д. Кузнец, Ю. М. Скребнев, Стилистика английского языка, Лен., 1960:**

նրբերանգներ են հավելում նրանց:

Շարահյուսական **հակադրությունը** գրաբարում առավելապես արտահայտվում է ներհակական բաղադրիչներով բարդ համադասական նախադասությունների ու զիջման կամ հակառակ հիմունքի պարագայի քերականական գործառնությո՝ իրականացնող ստորադասական կառույցների միջոցով: Առաջին դեպքում իրականության տարբեր կողմեր ու երևույթներ նկարագրող ներհակ նախադասությունները միմյանց հետ են կապակցվում համադասական համապատասխան շաղկապների օգնությամբ, ինչպես՝ **ոչ ... այլ** «Ոչ ի մարդ ապաստան՝ եթե վերակացու ա տարածեսցի ընդ աշխարհս. **այլ** ինքն յինքեն է ունի զհաստատությին: Ոչ առ այլովք վատթարաւքն վեհ երեւի, **այլ** ի վերուստ յերկնուստ ունի զանսուտ արեւնադրութիւնն» (Եղ., 29), **ոչ ... բայց**՝ «Նա և ոչ նհանգ ինչ անձնաւոր գոյ. բայց եթէ դէ ի տեղիս բնակեալ իցէ, և մերթ կերպարանիցի, և մերթ վնաս գործիցէ» (Եզն., 103), **բայց**՝ «Միայն փառաւորեալ յամենայն արարածոց. քանզի ամենայն ինչ ի նմանէ է, **բայց** նա միայն ինքնութեամբ» (Ագաթ., 254), **իսկ**՝ «Տատասկ եւ որոգայթ ի ճանապարհս թիւրաց, **իսկ** որ զգոյշ կայ անձին իւրում՝ մերժեսցի ի նոցանէ» (Առակ. ԻԲ 5), **կամ ... կամ**՝ «Արդ՝ ես հաւատարմութեան արժանի համարիմ զայսոսիկ պատմութիւնս. եւ զայն Կրիստոս, որ առ Կիրոսիւ եւ կամ Նեքտանեբան պատմին, **կամ**՝ սուտ լեալ եւ **կամ** միով անուամբ բազում թագաւորաց վարեալ, որպէս յովից է սովորութիւն» (Խոր., 126) և այլն:

Հակադրության ոճական իմաստի արտահայտման նպատակով դասական գրաբարում ներհակական բովանդակության շաղկապների կիրառությունը հաճախ զուգակցվում է հականիշների գործածության հետ, որոնք տեղ գտնելով միմյանց հակադրվող նախադասություններում՝ ավելի են ուժգնացնում երևույթների ու գաղափարների բախման գեղարվեստական պատկերը: Այսպես. «Առն **մեղաւորի** որգայթ սաստիկ դիցի, **իսկ արդարն**՝ յուրախութեան եւ ի խնդութեան եղիցի» (Առակ. ԻԹ 6), «Ամենայն խորագէտ գործէ իմաստութեամբ, **իսկ** անմիտն տարածէ յանձն իւր զչարիս» (Առակ. ԺԳ 17):

Գրաբարի ուշագրավ առանձնահատկություններից է այն հանգամանքը, որ հակադրության համար կարող է կիրառվել նաև սովորաբար միավորական հարաբերության մեջ գտնվող նախադասությունների կապակցման համար գործածվող «և» համադասական շաղկապը: Այսպես. «Միս ուտել, ասեն, ոչ են մեղք», **և** ինքեանք ուտել ոչ կամին» (Եղ., 26), «Երկինք եւ երկիր անցցեն, **և** բանք Իմ ոչ անցանիցեն» (Մարկ. ԺԳ 32), Եւ ասեն. «Ի նախնումն զիտնաբար խօսէր Ղազար, եւ այժմ անգիտաբար» (Փարպ., 200), «Եւ իշխեսցես ազգաց բազմաց, **և** քեզ մի՛ իշխեսցեն» (Բ. Օրինաց ԻԸ 13):

Շարահյուսական մակարդակում հակադրության արտահայտման մյուս տարածված լեզվական կառույցները զիջման կամ հակառակ պայմանի պարագա կախյալ նախադասություն պարունակող բարդ ստորադասական նախադասություններն են, որոնցից առավել լայնորեն կիրառվել են հետևյալ լեզվական կաղապարները. **թէ-պէտ եւ ... սակայն**՝ «Եւ ես **թէպէտ** **և** ոչ միոյ այլ իմիք չհանդիպիմ բարւոյ՝ **սակայն** շատ իսկ է ինձ եւ բաւական լուրն եւ տես կորստեան թշնամոյ իմոյ քան զամենայն օգուտս եւ մեծութիւնս որ են յաշխարհի» (Փարպ., 41), **թէպէտ եւ ... այլ**՝ «Զի **թէպէտ** աւուրբք մանուկ էր, **այլ** զաւագութիւն ծերութեան խրատուն յինքեան ցուցանէր, զհայրենի գործ խրատուականն զառաւելութիւն քաջութեան կատարէր» (Բուզ., 27), **թէպէտ եւ ... ոչ**՝ (**Թէպէտ** **և** կամէր արդեօք Վեհդենշապուհ թաքուցանել զճշմար-

տուրթեան բանն՝ ոչ կարաց. քանզի երկոքեան մեր այդ իրք այդպէս կատարելոց են, որպէս եւ լուանն իսկ ի նմանէ ամենեքեան/ Փարպ., 89), «Թէպէտ եւ կարի յոյժ նուագունք էին քան զնոսա, ոչ ինչ զանգիտեցին առ ի յոյժ բազմութենէն, այլ առ հասարակ միաբան համբարձին յերկինս զձեռս իւրեանց, աղաղակէին» (Եղ., 76):

Գրաբարում հաճախ միևնույն բարդ նախադասության մեջ կիրառվում են ոչ թե մեկ, այլ բազմաթիվ հակադրություններ արտահայտող շարահյուսական կառույցներ: Հակադրությունների նման կուտակումները մեկ նախադասության շրջանակներում հեղինակին օգնում են ավելի արտահայտիչ ու ազդեցիկ դարձնել իր խոսքը, ավելի շեշտված ու ընդգծված ներկայացնել իր կողմից առաջ քաշված մտքերն ու գաղափարները: Այսպես. «Այլ վասն արինացս մերոց, ոչ ինչ աներեւոյթ են, եւ ոչ յանկեան ուրեք աշխարհի քարոզի, այլ համատարած ընդ ամենայն երկիր, ընդ ծով եւ ընդ ցամաք եւ ընդ կղզիս. ոչ միայն ընդ արեւմուտս, այլ եւ ընդ արեւելս, այլ եւ ընդ հիւսիս եւ ընդ հարաւ եւ ի միջոցս լի է հոծութեամբ: Ոչ առ այլովք վատթարօքն վեհ երեւի, այլ ի վերուստ յերկնուստ ունի զանսուտ արեւնսդրութիւնն. ոչ միջնորդաւ, զի մի է Աստուած, եւ չիք այլ ոք բաց ի Նմանէ» (Եղ., 29):

Համեմատությունը լեզվաբանական ոճագիտության հիմնական արտահայտչամիջոցներից մեկն է, որի միջոցով բացահայտվում են տարբեր առարկաների, երևույթների նույնական, ընդհանրական որակական-քանակական կողմերը, կամ էլ ներկայացվում է դրանցից որևէ մեկի հարաբերական կամ բացարձակ գերազանցությունը մյուսի (մյուսների) նկատմամբ: Սովորաբար համեմատությունը ներկայանում է եռանդամ տեսքով և կազմված է երեք մասից՝ առարկան, որը համեմատվում է, առարկան, որի հետ համեմատվում է առաջին առարկան, և այն հատկանիշը, որի հիման վրա հիշատակված առարկաները համադրվում են միմյանց հետ:

Ավանդաբար համեմատությունը ոճագիտության մեջ քննարկվել է իմաստաբանական, երբեմն էլ՝ բառային ոճական արտահայտչամիջոցների շարքում¹⁰: Նման մոտեցման հիմքում ընկած էր փոխաբերության ու համեմատության միջև առկա զգալի ընդհանրությունների հանգամանքը, որի պատճառով հետազոտողներն այս ոճական արտահայտչամիջոցները քննարկում էին միևնույն դասի շրջանակներում: Սակայն ոճագիտական նորագույն ըմբռնումների համաձայն սրանք միմյանցից սկզբունքորեն տարբերվող երևույթներ են. փոխաբերությունը հիմնված է լեզվական իմաստի փոփոխության վրա և անհրաժեշտաբար պետք է դիտարկվի որպես լեզվաոճական դարձույթ, այնինչ համեմատության պարագայում գործ ունենք լեզվական նշանների ուղիղ, անվանողական իմաստների դրսևորման հետ, այդ պատճառով այն համարվում է քերականական բանադարձում¹¹:

Համեմատություններն ունեն տարբեր առարկաների ու երևույթների միջև զանազան քանակական ու որակական հարաբերություններն արտահայտելու երեք հիմնական մակարդակ՝ նույնական, բաղդատական և գերադրական: Նույնական աստիճանում իր դրսևորումն է գտնում համեմատվող օբյեկտների համանմանությունը, այս կամ այն հատկանիշով նրանց նույնականությունը՝ առանց նրանցից որևէ մեկի նկատելի գերազանցության հաստատագրման: Համեմատության բաղդատական մա-

¹⁰ Տե՛ս **М. Д. Кузнец, Ю. М. Скребнев**, Указ. соч. ; **I. R. Galperin**, Stylistics, М., 1977; **И. Голуб**, Стилистика русского языка, М., 2002 " այլն :

¹¹ Այդ մասին ավելի մանրամասն տե՛ս **Ռ. Է. Անի անդյի**, *Ὁὐδὸδὲ ἢδὲαἰ ἄί ἐϋ ἂ ὁ ὅί ἐϋεἰ ἰ ἀϋῖ ἰ ἢἀδὲ ἄί ἐὲ*, *Ա.*, 2000, թ. 43.

կարդակում արդեն դիտարկվող երևույթներից, առարկաներից մեկն անվերապահորեն առանձնացվում է մյուսից (մյուսներից), ցույց է տրվում նրա մոտ այս կամ այն հատկանիշի ավելի կամ պակաս դրսևորումը՝ համեմատած մյուսների հետ: Վերջապես, համեմատության գերադրական մակարդակում արտահայտվում է դիտարկվող հատկանիշի դրսևորման բարձրագույն աստիճանը, ցույց է տրվում, որ այդ հատկանիշը այս կամ այն առարկայի, երևույթի մեջ, մյուսների հետ համեմատած, ներկայանում է առավելագույն ձևով:

Գրաբարյան լեզվառճական արտահայտչական համակարգում առավել տարածում են գտել համեմատության նույնական աստիճանին բնորոշ հարաբերությունների պատկերմանը ծառայող ձևական-քերականական միջոցները: Այս համեմատությունների կառուցման հիմքն են կազմում «նման», «որպես», «իբրև» և նման այս կարգի այլ բառերը, այսպես՝ «Ձի տրտում եմ անմխիթար մինչև ի մահ, որ *նման* գայլոց յարձակեցան յարարս իմ եւ զիշատեցին յանխնայ, տեսեալ զիս՝ եթէ մերժեցայ յաչաց քոց» (Փարպ., 197), «Եւ ի դառնալ մանկանցն Պարսից, ընդ հուպ դարձեալ մերոցն զհետ նոցա, օրինակ իմն *որպէս* փոթորիկ յանտառէ տերեւաթափ, այնպէս երագ յերիվարացն առեալ նիզակօք, զի ցուրտ յերկիր ընկենուին, ոչ կարելով նոցա յիւրեանց ձակատն մտանել» (Խոր., 303):

Նույնական համեմատությունների լեզվական արտահայտության համար գրաբարում նշանակալի կիրառություն են ստացել կրկնակի կապական բառերի օգնությամբ կառուցված բարդ համադասական նախադասությունները, որոնց կազմի մեջ մտնող պարզ նախադասություններից յուրաքանչյուրը ներկայացնում է համեմատության մի եզրը: Նման կառույցներում օգտագործվում են «իբրեւ... նոյնպէս», «իբրեւ ... այնպէս», «որպէս ... այնպէս», «որպէս նոյնպէս» գույգ կապական միավորների վրա խարսխված շարահյուսական կառույցները: Այսպէս. «*Իբրեւ* սուսեր եւ սլաք սրեալ, *նոյնպէս* եւ այր որ վկայէ զբարեկամէ իւրմէ վկայութիւն ստութեան» (Առակ. ԻԵ 18), «...*որպէս* հաստատուն եւ ճշմարիտ կացեալ են յիւրեանց դէնին, *նոյնպէս* եւ առ մեզ լաւագոյն քան զամենայն կեշտսն նոքա երեւեալ են» (Եղ., 83):

Դասական հայերենում ոճական համեմատության իրականացման համար հաճախ օգտագործվում են «ըստ նմին օրինակի», «զօր օրինակ» շարահյուսական կառույցները: Այսպէս՝ «Որպէս Սողոմն եւ Գոմոր, /.../ *ըստ նմին օրինակի* եւ սոքա ... զմարմին պղծեն, զտէրութիւնս քամահեն, զփառսն հայհոյեն» (Թուղթ Յուդայի, 8), «Եւ արասցես ընդ Գայի եւ ընդ թագաւորն նորա, *զոր օրինակ* արարեր ընդ Երիքով եւ ընդ թագաւորն նորա» (Յեսու Ը 2):

Բաղդատական համեմատությունը, որի միջոցով ցույց է տրվում համեմատության կողմերից մեկի ակնհայտ առավելությունը, գերադաս վիճակը մյուսի նկատմամբ, գրաբարում առաջին հերթին դրսևորվում է ածականի ուղիղ ձևի վրա «-գոյն» սաստկացնող քերականական նրբիմաստն ունեցող հատկանիշի հավելադրմամբ: Ի տարբերություն աշխարհաբարի, որտեղ ուղղականով ածականին սերտաձող «-գոյն» վերջածանցը բառին տալիս է գերադրական համեմատական նրբիմաստ, գրաբարում հիշյալ վերջածանցը սոսկ բաղդատական նրբիմաստ է հավելագրում ածականին, որի շնորհիվ համեմատայալը որոշակի գերազանցություն է ստանում համեմատելիի նկատմամբ: Այսպէս. «*Ծանրագոյն* քան զիս է բանդ» (Թիւք ԺԱ 14); «*Լեր իմաստնագոյն* եւս քան զնա» (Առակք Զ 7); «Քար ծանր է, եւ աւագ դժուարին ի բառնալ. բայց բարկութիւն անզգամի *ծանրագոյն* է քան զերկոսեան» (Առակք ԻԵ 3):

Չնայած «-գոյն» նախածանցի միջոցով ածականը հիմնականում ձեռք է բերում բաղդատական համեմատության լեզվական իրողությունն արտահայտելու ունակություն, սակայն, ինչպես իրավացիորեն նկատել են Հ. Ավետիսյանն ու Ռ. Ղազարյանը, «Երբեմն **գոյն** ածանցով կազմված ածականներն արտահայտում են գերադրական իմաստ»¹²: Իսկապես՝ «Յառաջագոյն գիտեն ի վաղուց հետե, եթէ կամիցին վկայել, զի ըստ *Ճշմարտագոյն* կրօնիցն օրինացն մերոց կեցեալ եմ փարիսեցի» (Գործք ԻԶ 5), «Ամենայն չարիք չար են, բայց չարութիւն կնոջ՝ *վերագոյն*» (Միքայ ԻԵ 19): Ինչպես դժվար չէ նկատել, վերջին դեպքերում ածականներն ստացել են գերադրական իմաստ, որովհետև բացակայում է համեմատության բնեռներից մեկը, և համեմատելի վերագրվող հատկանիշն ստանում է ընդհանրական հնչեղություն:

Բաղդատական նշանակությամբ գրաբարում ավելի շատ հանդիպում են «լավ է...քան». «բարի է ...քան» շարահյուսական կառույցները, որտեղ առաջին բաղադրիչը ներկայացնում է գերադասելի որակական հայտանիշ ունեցող համեմատության բնեռը, իսկ մյուս բնեռի լեզվական արտահայտությունն սկսվում է «քան» նախդիրից հետո. «*Լաւ է իմաստուն քան հօր, եւ հանճարեղ՝ քան զայն որ ունիցի դաստակերտս մեծամեծս*» (Առակք ԻԴ 5), «*Բարի է իմաստութիւն քան զգօրութիւն*» (Ժող. Թ 16):

Գերադրական համեմատությունները մատնանշում են մի այնպիսի հատկություն, որը դրսևորվում է հնարավոր բարձրագույն ձևով՝ այնպես, որ մեկ ուրիշ օբյեկտ չի կարող ունենալ տվյալ հատկանիշը գերազանցելու ունակություն: Ինչպես հայտնի է, ածականները գրաբարում գուրկ են գերադրական իմաստ արտահայտելու հատուկ քերականական կաղապարից. այդ նրբիմաստին մոտ քերականական իմաստ կարելի է արտահայտել «կարի», «յոժ», «սաստիկ», «անհնարին» մակբայների միջոցով. այսպես՝ «Ձի թեպէտ եւ *կարի յոժ* բազմացաւ աղաղակն, դատ չկայր» (Բուզանդ, 91), «գրանս իմ *յոժ* փութիւք եւ պատուականութեամբ ընդունէին, որպէս եւ զառողջ վարդապետի, եւ պատուէին որպէս եւ զհայր» (Փարպ., 195) «Իսկ Բիւրասպեայ ժողովեալ զցրուեալսն՝ յանկարծօրէն հասանէ ի վերայ, վնաս *սաստիկ* առնելով. այլ յաղթէ բազմութիւնն, եւ փախստական լինի Բիւրասպի. եւ հասեալ սպանանեն զնա մերձ ի լեառնն, եւ ընկենուն ի վիհ մեծ ծծմբոյ» (Խոր., 92):

Դրա հետ մեկտեղ գրաբարում առկա է մի ուշագրավ շարահյուսական կառույց, որը ավելի ցայտուն ու ակնհայտ կերպով է դրսևորում համեմատության տվյալ բնեռի գերադաս բնույթը. այն բնորոշվում է «հատկանիշ + քան զամենայն» կառուցվածքով: Այսպիսի շարահյուսական կաղապար ունեցող համեմատությունն աներկբայորեն արտահայտում է գերադրական իմաստ՝ «քան զամենայն» բառակապակցությունը մատնանշում է, որ տվյալ հատկությունը տվյալ օբյեկտին, առարկային բնորոշ է մյուսների համեմատությամբ առավելագույն ձևով. «Եւ էր այրն այն *ազնուական քան զամենայն*» (Յոբ Ա 3), «Որպէս վարազի՝ որ *զազանագոյնն է քան զամենայն* զազանս՝ ուտի միսն, եւ ոչ վնասէ. նոյնպէս եւ նորայն՝ եթէ ուտէր ոք՝ չվնասէր» (Եզն., 67), «Եւ որ *քան զամենայն անմտագոյն* է, զհազար ամ, ասեն, յաշտ արար. եւ յետ հազար ամին յերկուացաւ, ասէ՝ թէ լինիցի՞ ինձ որդի Որմըզդ, եւ եթէ չլինիցի, եւ ի գուր ինչ վաստակիցիմ» (Եզն., 157): Ինչպես դժվար չէ համոզվել, «քան զամենայն» բառակապակցությունը առկա հատկանիշին վերագրում է գերադաս ու գլխադասային բնույթ, որից առավել մյուս բոլոր օբյեկտներն ու երևույթները չեն կարող ունենալ այդ հատ-

¹² Հ. Մ. Ավետիսյան, Ռ. Ս. Ղազարյան, Գրաբարի ձեռնարկ, Եր., 1986, էջ 143:

կությունը:

Բացի վերոհիշյալից, գրաբարում գերադաս իմաստ կարող է արտահայտվել նաև նույնարմատ «հոգնակի սեռական+ուղղական ածական» զուգադիր կիրառությամբ: Օրինակ, աստվածաշնչյան ոսկեղենիկ դասական թարգմանության մեջ հանդիպում ենք. «...անջրպետիցէ ձեզ վարագոյրն ի մէջ սրբութեանն եւ ի մէջ *սրբութեանց սրբութեան*» (Ելք ԻԶ 33):

Լեզվական միավորների ոճական **կրկնություններն** ամենից հաճախ հանդիպող արտահայտչամիջոցներից են, որոնք իրենց ամենատարբեր դրսևորումներով լեզվական հաղորդակցման գործընթացում տարաբնույթ գործառույթներ են իրականացնում՝ խոսքին լրացուցիչ հուզական-արտահայտչական նրբերանգներ հավելելով: Դասական գրաբարում ամենից հաճախ հանդիպող կրկնության տարատեսակը **հաքակրկնությունն** է կամ **նույնասկիզբը** (անաֆոր), երբ միմյանց հաջորդող տարբեր նախադասություններ սկսվում են միևնույն լեզվական միավորներով՝ «Նա եւս քան զեւս պնդէր եւ ասէր. Քաջալերեա՛ց, պինդ կաց, եւ այժմ տեսանես զՔրիստոս, առ որ անձկացեալն ես: **Յուշ լիցի** քեզ, որդեակ, հոգեխառն սնունդն, որով զքեզ սնուցի: **Յուշ լինի** քեզ աստուածեղէն խրատն, որով զքեզ պարարեցի: **Յուշ լիցին** հալածանքն իմ եւ քո ի միասին: Յուշ լիցի քեզ եւ բաժակ մահուն, զոր ի միասին եմք ըմպելոց: Յուշ լիցի քեզ եւ յարութիւն ամենայն տիեզերաց: **Յուշ լիցի** քեզ եւ մեծատանն յանդիմանութիւն» (Ագաթ., 185):

Հարակրկնությանը հակառակ ոճական հնար է **վերջույթը**, երբ կրկնվում են շարահյուսական բարդ կառույցների վերջին լեզվական միավորները. «Բազում վնասա առնէին, եւ անդր անկանէին. բազում կանայք զարս թողուին, եւ անդր անկանէին. բազում արք զիրեանց կանայս թողուին, եւ զայլոյ կանայս առեալ՝ անդր անկանէին. բազում ծառայք զիրեանց տերանց զգանձս ըմբռնեալ, փախուցեալք անդր անկանէին. բազում աւանդառութ զաւանդս լի զպահեստս բարձեալ, անդ անկանէին. գերփէին աւերէին գերկիրն ամենայն» (Բուգ., 91):

Գրաբարի կրկնության տարատեսակների շարքում առանձնահատուկ տեղ է գրավում **զուգահեռականությունը**՝ միմյանց հաջորդող նախադասությունների շարահյուսական կառուցվածքների նույնականության լեզվական երևույթը, որի միջոցով կարելի է իրականացնել մի քանի ոճական գործառույթներ: Մասնավորապես այս արտահայտչամիջոցը հնարավորություն է տալիս ընդհանուր եզրեր գտնել առաջին հայացքից միմյանցից բոլորովին տարբեր հարթություններում գտնվող երևույթների միջև, ինչը վարպետորեն իրագործել է Եղիշեն. «Կոյր զրկի ի ճառագայթից արեգական, եւ տգիտութիւն զրկի ի կատարեալ կենաց: Որպէս մեծ է ոգի քան զմարմին՝ այսպէս մեծ է տեսաւորութիւն մտաց քան զմարմնոց» (Եղիշէ, 14):

Շարահյուսական կառույցների որոշակի նույնականությունն է ընկած նաև լեզվաոճական **խաչաձևման** հիմքում, որտեղ տարբեր նախադասությունների կառուցվածքները ոչ թե համընկնում են միմյանց (ինչպես զուգահեռականության դեպքում), այլ հակադրվում են իրար: Նման կաղապարն առավելապես նպաստում է հակադիր երևույթների, գործընթացների միջև տարբերություններն ավելի ցայտուն ու ընդգծված ներկայացնելու համար: Խաչաձևություններով հարուստ է հատկապես գրաբարի աստվածաշնչյան թարգմանությունը, դրանցից շատերը մինչև այսօր էլ չեն կորցրել իրենց հուզական-արտահայտչական հատկությունները: Այսպես՝ «Շաբաթ վասն մարդոյ եղև, և ոչ եթէ մարդ վասն շաբաթոյ» (Մարկ. Բ 27), «Որ կամիցի ապրեցուցա-

նել զանձն իւր՝ կորուսցէ զնա. եւ որ կորուսցէ զանձն իւր վասն աւետարանին՝ ապրեցուցէ զնա» (Մարկ. Ը 35-36): Դասական շրջանի հայ մատենագիրները նս օգտվել են այս լեզվաոճական հնարից. հիշենք Եղիշեին՝ «**Կեանք իւրեանց ի մահ մատուցեալ էին, եւ մահք իւրեանց անշուշտ կեանք**» (Եղիշե, 68):

Հետաքրքիր են նաև, այսպես կոչված, **հոմանշային կրկնությունների** կիրառության դեպքերը դասական գրաբարում: Այդպես են կոչվում այն կրկնությունները, երբ միևնույն միտքը, գաղափարը, հասկացությունը կրկնելու փոխարեն օգտագործում են հոմանիշ բառեր ու կապակցություններ՝ դրանով իսկ ավելի ուժգին դարձնելով նախադասության ոճական ներագդեցությունը¹³, այսպես՝ «Իսկ իբրեւ զայն ամենայն չարիս ետես թագաւորն Պարսից, որ եկին հասին ի վերայ նորա՝ **նեղեցաւ, տառապեցաւ, տագնապեցաւ, տարակուսեցաւ**» (Ագաթ., 23), «Եւ եղեւ իբրեւ լուաւ զայս ամենայն թագաւորն Պարսից՝ **զուարճանայր, զուարթանայր, տաւն մեծ ուրախութեան առնէր** զարն զայն, եւ բազում ուխտ ատրուշանացն կատարէր» (Ագաթ., 35), «յանդիմանէր զնա սուրբն վասն գաղտնի **շնութեան գիջութեան բարոյից պոռնկութեան**» (Փարպ., 7):

Ուշագրավ է, որ հայ գրաբարագիտության մեջ, հատկապես դասագրքերում և ուսումնական ձեռնարկներում ավանդաբար նման տիպի կրկնությունները դիտվում են որպես ավելադրություններ: Մասնավորապես Ա. Աբրահամյանը նշում է, որ «Գրական ոճին զարդարանք տալու, իսկ առանձին դեպքերում էլ իմաստային որոշ նրբություններ արտահայտելու համար հեղինակները, որպես ոճական միջոց, գործածում են ավելադրությունները»¹⁴:

Գրեթե համանման դիրքորոշում ունեն նաև վերջերս հրատարակված գրաբարյան մեկ այլ դասագրքի հեղինակները, որոնք նույնպես առանձնացնում են ավելադրությունների ոճական գործառնությունները¹⁵: Կարծում ենք, որ տեսական-մեթոդաբանական դիտանկյունից նպատակահարմար է միմյանցից սահմանազատել կրկնությունն ու նրա տարատեսակներից մեկը՝ ավելադրությունը: Ոճագիտության մեջ իրավացիորեն հիմնավորվել է այն տեսակետը, որ ավելադրությունները (pleonasm) խոսքային անհարկի կրկնություններ են, նույն մտքի տարբեր արտահայտությունները տարբեր կամ նույն քերականական ձևերով¹⁶: Իսկ եթե տեքստում կիրառված քերականական միավորները ոճական գործառնությո են իրականացնում, ապա մենք գործ ունենք ոչ թե ավելադրության, այլ ոճական կրկնության այս կամ այն տարատեսակի հետ:

Դասական գրաբարում հաճախակի դրսևորվող կրկնության մյուս տարատեսակը **բազմաշաղկապությունն** է (պոլիսինդետոն), երբ բազմաթիվ նախադասություններ միմյանց են հարաբերվում միևնույն շաղկապի օգնությամբ՝ «**Եւ** ետ այսորիկ մատեան եւ պատառեցին զհանդերձս նոցա յանդամոց նոցա, **եւ** պրկեցին զնոսա մի մի ի չորս չորս ցիցս: **Եւ** ծակեցին զմորթսն ի պճղունս նոցա **եւ** եղին փողս **եւ** փչելով այնպես կենդանւոյն մորթեցին զսուրբսն երեսին, ի ներքուստ ի վեր մինչեւ ի ստինսն, **եւ** ծակեալ զծործորակսն՝ **եւ** զլեզուսն ընդ այն հանէին: **Եւ** վարեցին եւս քահնս ընդ գոգս նոցա, **եւ** ցրուեալ գաղիս նոցա յորովայնիցն ընդ գոգս նոցա. **եւ** քան-

¹³ Տե՛ս Ի. Ռ. Գալպերին, նշվ. աշխ., էջ 215:

¹⁴ Ա. Ա. Աբրահամյան, Գրաբարի ձեռնարկ, Եր., 1976, էջ 391:

¹⁵ Տե՛ս Լ. Մ. Խաչատրյան, Գ. Բ. Թոսունյան, Գրաբարի դասագիրք, Եր. 2004, էջ 317:

¹⁶ Տե՛ս Մ. Դ. Кузнец, Ю. М. Скребнев, Указ. соч., с. 80.

զի դեռ եւս կային կենդանի՝ եւ ապա բարձին զգլուխս նոցա սրով (Ագաթ., 208): Տարբեր նախադասություններ կապակցելով միմյանց՝ «եւ» միավորիչ շաղկապը հնարավորություն է տալիս պատկերել միմյանց հանդեպ գործողությունների հերթագայությունը, նրանց պատճառահետևանքային կապը մեկը մյուսի հետ, թույլ է տալիս տեսարանն աստիճանաբար ծավալելով՝ հանգեցնել իր տրամաբանական ավարտին, այն է՝ Հռիփսիմեի ու մյուս կույսերի նահատակությանը: Այս գործառույթով ամենից շատ հանդես են գալիս միավորիչ շաղկապները:

Դասական գրաբարի շարահյուսական հիմնական ոճական արտահայտչամիջոցների՝ շարահյուսական դարձույթների ու բանադարձումների հաճախակի ու դիպուկ կիրառություններն առանձնակի ճոխություն ու լեզվական հարստություն են պարզնել մեր հնամենի հայերեն լեզվին, նպաստել մեր պատմիչների ու մատենագիրների խոսքի առավել պատկերային ու ներգործուն դրսևորմանը:

ԱՆՆԱ ՕՇԱՆՋԱՆՅԱՆ

ԵՊՀ Աստվածաբանության ֆակուլտետի դասախոս

ՀԱՅ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԵՎ ԱՎԵՏԱՐԱՆԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ՆՎԻՐԱՊԵՏԱԿԱՆ ԵՎ ՊԱՇՏԱՄՈՒՆՔԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ՏԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հայ Առաքելական և Ավետարանական Եկեղեցիների միջև առկա տարաձայնությունները կապված են ոչ միայն դավանաբանական, այլև նվիրապետական և պաշտամունքային տարբերությունների հետ: Իր ծագման առաջին իսկ օրից Հայ Ավետարանական Եկեղեցին, հենվելով հակակաթոլիկյան եվրոպական ռեֆորմացիոն պատկերացումների վրա, մերժել է ոչ միայն կուսակրոնությունը, այլև՝ նվիրապետական կարգն ընդհանրապես: Այդ ըմբռնման արդյունքում ի սկզբանե հայ ավետարանականներն իրենց գործունեության հիմնական նպատակն էին համարում Առաքելական Եկեղեցու բարենորոգությունը: Վերջիններիս հետ զուգահեռ ազգային բարեկարգության և Եկեղեցու բարենորոգման գաղափարներով տարված էին նաև ժամանակի հայ քաղաքական և գրական բազմաթիվ գործիչներ: Դա, սակայն, չի նշանակում, թե Մայր Եկեղեցին անտարբեր էր տվյալ հարցի նկատմամբ:

Արդեն 20-րդ դարի առաջին տասնամյակներին Եկեղեցին բազմիցս փորձեր է կատարել ներքին բարեկարգության ուղղությամբ: Մաղաքիա արքեպիսկոպոս Օրմանյանն իր դասախոսություններից մեկում հանգամանորեն անդրադարձել է այս հարցին՝ մեծ տեղ հատկացնելով հատկապես Առաքելական Եկեղեցու դեմ ուղղված քննադատություններին: Նա համարում է, որ քննարկվող համատեքստում քննադատությունները հիմնականում ծանրանում են երեք կետերի՝ Ծեսերի, Վարդապետությունների ու Կանոնների և Պաշտոնեության տարբերումների վրա: Ի տարբերություն բարենորոգության մյուս ջատագովների՝ աստվածաբան-գիտնականը գտնում է, որ Հայ Եկեղեցու բարեկարգությունը հնին վերադառնալն է և ոչ թե եղած կարգը ժամանակի ըմբռնումներին հարմարեցնելը¹:

Քննադատների համար ելակետային էր հանդիսանում այն դրույթը, որ դարերի ընթացքում Հայ Եկեղեցու կանոններն ու ծեսերը ենթարկվել են բազում ազդեցությունների, ինչպես, օրինակ՝ հույների, խաչակիրների, ունիթորների: Դրանից զատ մատնանշում էին և այն, որ Ռուբինյանները հավատարիմ էին Հայ Եկեղեցու առաքելական ավանդույթներին, այնինչ և՛ Կոռնիկյանները, և՛ Լուսինյանները ուղղակի լատինամետ քաղաքականություն էին վարում, ինչի արդյունքում Առաքելական Եկեղեցու ծիսական և կանոնական համակարգեր ներթափանցեցին օտարամետ տարրեր: Այդ իսկ պատճառով էլ, մերժելով այդ ոլորտում արմատական բարեփոխումներ կատարելու առաջարկները, Մաղաքիա արքեպս. Օրմանյանը միանգամայն հիմնավորված կերպով ցույց է տալիս, որ «ծեսերն ու կանոնները պարզեցնե-

¹ Գնել եպս. Գալեմբեքյան, Նախատետք Հայ Եկեղեցագիտության, Դասախոսություններ Օրմանյան և Դուրյան արքեպիսկոպոսների, Կ. Պոլիս, 1915, էջ 31:

լու համար բավական կլինի գտել Հայոց Կանոնագիրքը»²:

Քննարկված հարցի լուծման գործում մեթոդաբանական հսկայական նշանակություն ունի «Եկեղեցի» և «Եկեղեցական կառույց» հասկացությունների վերլուծությունը: Ժամանակակից աստվածաբանությունը համարում է, որ գոյություն ունի եկեղեցական կառույցի երեք ձև՝ **Եպիսկոպոսական, պրեսբիտերական և կոնգրեգացիոնալիստական**: Ընդ որում՝ վերջին երկու ձևերը յուրահատուկ են բացառապես Բողոքական Եկեղեցիներին: Եկեղեցական կառույցի վերոնշյալ երեք ձևերի նմանությունը արտաքին է: Եվ չնայած դրան՝ բոլորն էլ համամիտ են միայն նրանում, որ ձգտում են իրենց հեղինակությունն ապացուցել հիմնականում Ս. Գրքով: Բայց այս պարագայում ևս նրանց միջև առկա են մեկնողական ընդգծված տարբերություններ:

Այսպես, **Եպիսկոպոսական Եկեղեցին** հենվում է առաքելական ժառանգորդության և Ա Տիմ. Գ 1-13, Ե 17-25 հատվածների վրա և համարում, որ այդ թղթում Պողոս առաքյալի կողմից թվարկված նվիրապետական երեք աստիճանները՝ *եպիսկոպոս, սարկավագ, երեց*, միևնույն պաշտոնը չեն:

Պրեսբիտերական Եկեղեցին հիմնվում է Գործք Զ 1-8 հատվածների վրա, ուր խոսվում է յոթ ընտրյալ հավատացյալների մասին, և համարում է, թե Եկեղեցին պետք է ընդհանուր ղեկավարություն ունենա: Իսկ **Կոնգրեգացիոնալիստական Եկեղեցին** առաջնային է համարում ինքնավար Եկեղեցու գաղափարը՝ պնդելով, որ Պողոս առաքյալը, խոսելով տեղական Եկեղեցիների մասին, ոչ մի խոսք չի ասում դրանց ղեկավար կառույցիների մասին (Գաղ. Ա 11): Այսու յուրաքանչյուր կոնգրեգացիա ունի իր հովիվը և կապված չէ մյուսի հետ: Եկեղեցու նմանատիպ ընթրնման հիմնական ներկայացուցիչներն են լյութերական, բապտիստական, ինչպես նաև Հայ Ավետարանական Եկեղեցիները³:

Ավելացնենք նաև, որ սեփական աստվածաբանական թյուր ըմբռնումները հիմնավորելու միտումով Բողոքական-Ավետարանական Եկեղեցիները հանիրավի համարում են, թե, իբր Ս. Գրքի հեղինակության վրա հենված յուրաքանչյուր եկեղեցական կառույցի կազմակերպումը հանդիպում է որոշակի դժվարությունների, այնքանով, որքանով որ Ս. Գրքում ուղիղ և որոշակի ցուցմունքներ չկան այն մասին, թե ինչպիսին պետք է լինի եկեղեցական կառույցը: Չկան նաև ցուցմունքներ եկեղեցական որոշակի կառույցի ընդունման մասին, գուցե բացառությամբ միայն Տիտոսին ուղղված առաջին թղթում⁴:

Եկեղեցական կառույցի և եկեղեցական նվիրապետության վերաբերյալ միանգամայն այլ վերաբերմունք ունի Հայ Առաքելական Եկեղեցին, որի նվիրապետական կարգը վերջնականապես ճշգրտվել է Դիոնիսիոս Արիսպագացու երկնային քահանայապետության աստիճանակարգման օրինակով, որի հետևողությամբ երկնային ինը աստիճանների նմանողությամբ աստվածաբանորեն սահմանվեցին նվիրապետական ինը աստիճանները: Հայ Եկեղեցու նվիրապետական աստիճաններն են՝ *1. Դոնապանություն, 2. Ընթերցողություն, 3. Երդմնեցուցություն, 4. Ջահընկալություն, 5. Կիսասարկավագություն, 6. Մարկավագություն, 7. Քահանայություն, 8.*

² Նույն տեղում, էջ 32:

³ Милард Эриксон, Христианское Богословие, СПб., 1999, с. 160.

⁴ Նույն տեղում, էջ 161:

*Եպիսկոպոսություն, 9. Կաթողիկոսություն*⁵: «Արքեպիսկոպոսությունը» Հայաստանյայց Եկեղեցում շնորհվող աստիճան է: Եկեղեցական նվիրապետական աստիճանները տրվում են ձեռնադրության միջոցով, որը կատարվում է եպիսկոպոսի կողմից (եպիսկոպոսականը՝ կաթողիկոսի) և համարվում է Խորհուրդ:

Ավետարանականները մեծ տեղ են հատկացնում նաև Եկեղեցու սպասավորների վարքի և կենսաձևի հարցերին: Բողոքականները պնդում էին, որ «մեղավոր քահանան իրավունք չունի ծեսեր ու Խորհուրդներ կատարել: Հայ Եկեղեցու դիրքորոշումն այս հարցի վերաբերյալ հստակ է. **եկեղեցականի դեմ եղած մեղադրանքը բավարար պատճառ չէ Եկեղեցին մեղադրելու համար**: Խորհուրդները սահմանված են Աստծո կողմից, հետևաբար դրանց արդյունքն էլ կախված է միայն Աստծուց: Այսու, քահանայի անձը չի կարող արգելք հանդիսանալ Խորհուրդների կատարմանը, քանզի կարևոր է ոչ թե քահանայի անձը, այլ իշխանությունը, որ տրված է նրան Աստծուց (Մատթ. ԺԸ 18, Հովհ. Ի 23): Քահանաների վարքի հետ կապված հարցերը ժամանակին շոշափվել են Եղիշե արքեպս. Դուրյանի կողմից, որը քահանաներին բազմիցս կոչ է արել ապրել բարոյական կյանքով⁶:

Հայ Եկեղեցու տեսանկյունից **եկեղեցին Քրիստոսի մարմինն է**, այդ իսկ պատճառով էլ այն բաժանվում է *Հաղթական կամ Անդրանախկների (ննջեցյալներ), ինչպես նաև Զինվորյալ կամ Մարտնչող (կենդանի հավատացյալներ) Եկեղեցիների*, որոնց շաղկապող օղակը հավատն է: Այդ երկուսը չի կարելի բաժանել միմյանցից, քանզի կխախտվի միությունը: «*Ինչպես ազգը ունի իր անցյալը, ներկան և ապագան, այնպես էլ Եկեղեցին*», - այս մասին գրում է Ս. Մայիլյանը⁷: Եկեղեցին նաև ընդհանուր է, քանզի ով ընդունում է Քրիստոսի վարդապետությունը և Ս. Երրորդությունը, դառնում է նրա անդամը: Այն նաև Առաքելական է, քանզի հաստատվել է առաքյալների կողմից, և Սուրբ է, քանզի սուրբ է նրա հիմնադիր և գլուխ Քրիստոսը:

Ընդ որում, ի տարբերություն ավետարանականների, Հայ Առաքելական Եկեղեցին իր ներքին խնդիրները լուծում է տեղական ժողովներում, իսկ ընդհանուր դավանաբանական հարցերի քննարկումը վերապահում է Տիեզերական ժողովներին: Միանգամայն այլ է Ավետարանական Եկեղեցու դիրքորոշումը: Հայ ավետարանականների եկեղեցիները կազմակերպված են կոնգրեգացիոնալիստական կառույցին բնորոշ ձևով: Այդ եկեղեցիների պաշտոնյաներն են՝ 1. Հոգևոր գործիչը կամ հովիվը, 2. Օգնական հովիվը 3. Քրիստոնեական դաստիարակության տեսուչը: Բացի դրանցից գործում են նաև Սարկավագների և Խնամակալների ժողովները և այդ երկուսից կազմված Եկեղեցական Ժողովը, որոնք զբաղվում են Եկեղեցու ընթացիկ հարցերով:

Ավետարանական Եկեղեցում կենտրոնական դերը պատկանում է **հովիվին**: Հովիվը Եկեղեցու ծառայության կոչված հաղորդական անդամն է և պետք է ձեռնադրված լինի, ինչը պարտավորեցնում է քարոզ, արարողություններ և Խորհուրդներ կատարել: Հովիվի պարտականության մեջ են մտնում նաև ուսուցչությունը, եկեղեցական կենցաղի կազմակերպումը, համայնքի անդամների տներ այցելությունը,

⁵ **Ղևոնդ արքեպս. Զեպեան**, Հայ Եկեղեցույ Եօթը Խորհուրդները, Անթիլիաս, 1988, էջ 57-59:

⁶ Նույն տեղում, էջ 152:

⁷ **Ս. Մայիլյան** (այժմ՝ Ս. Ղևոնդ քին. Մայիլյան), «Ոսկեփորիկ» կրոնական գիտելիքների հանրագիտարան, Բ հատոր, Ս. Էջմիածին, 1993, էջ 22:

անձնական խորհրդատուի պաշտոնի ստանձնումը, կրթական գործերին միջամտությունը, ավետարանչությունը, էկումենիկ պատասխանատվությունը և բազում ազգերի մեջ հայության ազգությունը պահպանելու պատասխանատվությունը: Փաստորեն, եթե Առաքելական Եկեղեցում աստիճանակարգությունը կազմված է եկեղեցական-նվիրապետական ինը աստիճաններից, ապա Ավետարանական Եկեղեցում այս աստիճանները ներկայացնում է հովիվը:

Հովվի ընտրությունը սկսվում է ծառայությամբ: Նախկինում հովիվներ հիմնականում առաջադրվում էին Միջին Արևելքի Ավետարանական Միությունից, այժմ այդ գործառնությունն իրականացվում է Ֆրանսիայի և ԱՄՆ-ի ավետարանական երկրորդ սերնդի կողմից: Ավետարանական հովվի թեկնածուն պետք է համապատասխանի մի շարք պահանջների, որոնք շարադրված են ավետարանական «**Հոգևոր ծառայություն և կոչում**» գրքույկի մեջ: Երբ հաստատվում է ապագա հովվի թեկնածությունը, այն ուղարկվում է Վարչական խորհրդին: Վերջինիս կողմից հաստատվելու դեպքում առաջադրվողը համարվում է թեկնածու և հանձնում է 4 քննություն, որից հետո միայն նա դառնում է Միության սան: Որոշ ժամանակ անց տեղի է ունենում ձեռնադրությունը, որը խորհուրդ չէ, այլ՝ **պաշտամունքի բաղադրիչներից մեկը:** Ձեռնադրությունը բաղկացած է 3 մասից՝ Ընծայում, Քննություն և Ձեռնադրություն: Առաջինի ժամանակ հաստատվում է, որ Եկեղեցին ընդունում է թեկնածուին և հոժար է ձեռնադրել, երկրորդը ընդունվում է ձեռնադրված հովիվների կողմից, իսկ երրորդի ժամանակ ձեռքերը դնում են թեկնածուի գլխին, հայցում Աստծո օրհնությունը և հովվին լիազորում՝ իբրև առաջնորդ: Հովվի աջ թևն են հանդիսանում, այսպես կոչված, աշխարհիկները: Սրանք կոչվում են սարկավագներ և խնամակալներ, ունեն իրենց ժողովը և մշտապես օգնում են հովվին:

Ավետարանական Եկեղեցին կառավարվում է սեփական սահմանադրական և ժողովրդական հիմունքների համաձայն:

Ինչ վերաբերում է երկու Եկեղեցիների պաշտամունքային համակարգերի բաղադրականին, ապա հարկ է նշել, որ, ի տարբերություն Առաքելական Եկեղեցու, Հայ Ավետարանական Եկեղեցին ծիսական Եկեղեցի չէ: Չնայած դրան, այն ևս ունի իրեն հատուկ հասարակական պաշտամունքը և պաշտամունքի կարգը, որի տարրերը կարելի է բնութագրել հետևյալ հաջորդականությամբ.

- **Փառաբանություն և Երկրպագություն,**

- **Մեղքերի Խոստովանություն,** այն է՝ զղջում, սրտաբեկում և ապաշխարություն,

- **Թողություն և Ներում,** այն է՝ ներված լինելու վստահություն,

- **Աստծո Խոսքի ունկնդրություն,** այն է՝ դաստիարակություն,

- **Նվիրում և Կոչում,** այն է՝ ներշնչում, նվիրաբերություն և ծառայելու պատրաստակամություն:

Ավետարանական Եկեղեցու պաշտամունքային կարգը երբեմն տարբեր է, սակայն հիմնականում բաղկացած է հետևյալ բաղադրիչներից.

- ♦ *Նախանվագ:* Սրա օգնությամբ հավատացյալը պատրաստվում է մասնակցել պաշտամունքին: Ավետարանական յուրաքանչյուր հավատացյալի համար պաշտամունքը սկսվում է այն պահին, երբ նա մտնում է «սրբարան»: Նախանվագի երաժշտությունը ստեղծում է որոշակի մթնոլորտ և հավատացյալին մղում է կենտրոնացման: Ավետարանական բոլոր եկեղեցիները նախանվագի

ժամանակ գործածում են դաշնամուր կամ երգեհոն:

- ♦ *Պաշտամունքի Կոչ*: Սա իրենից ներկայացնում է Աստվածաշնչական որևէ հատվածի ընթերցում, որը վկայում է այն մասին, որ ընդհանուր պաշտամունքն սկսվել է:
- ♦ *Հոգևոր երգեր*: Ընդհանրապես, հայ ավետարանական գրեթե բոլոր հոգևոր երգերը հիմնականում անգլերենից թարգմանված հին և նոր բողոքական երգեր են, որոնց եղանակները պատկանում են տարբեր երկրների և մշակույթների ավանդույթների: Ավետարանական հեղինակները պնդում են, որ վերջին շրջանում ավետարանական երգարանների մեջ ներմուծվել են նաև Առաքելական Եկեղեցու որոշ շարականներ⁸:
- ♦ *Աղոթքներ*: Սրանք ունեն բարդ կառուցվածք և բաղկացած են *երկրպագությունից, շնորհակալությունից, խոստովանությունից, աղաչանքից և բարեխոսությունից*: Ավետարանական Եկեղեցուն գոյություն ունեն 4 տեսակ աղոթքներ՝ *Աղերսանք*, որը կատարվում է պաշտամունքի սկզբում և արտահայտում է երկրպագությունն առ Աստված, *Հովվական Աղոթք*, որը բովանդակում է ներկաների հույսերն ու կարիքները, ձախողություններն ու խոստովանությունները, որոնք հովվի միջոցով ուղղվում են Աստծուն, *Ընծայաբերումի Աղոթք*, որը ներկաների նվիրումն է Աստծուն, և *Օրհնություն*, որը պաշտամունքի ավարտին իրականացվող սուրբգրային մի աղոթք է կամ մի որևէ օրհնանք: Այս առումով Ավետարանական Եկեղեցու հովիվների կողմից գործածվում է Առ Կորնթացիս Բ թղթում հանդիպող Պողոսի Առաքելական Օրհնությունը (Կորնթ. ԺԳ 14) և Հին Կտակարանի օրհնությունը (Թվոց Զ 24-26):
- ♦ *Սուրբգրային ընթերցումներ*: Սրանք ընտրվում են Աստվածաշնչի տարբեր գրքերից, որոնց ընտրությունը հովվի պատասխանատվությունն է:
- ♦ *Փոխասաց կամ Միաբերան ընթերցումներ*: Սրանք աստվածաշնչական համարներ են, որոնք հովվի և ժողովրդի կողմից կարդացվում են փոխադարձաբար կամ հավաքականորեն: Սկզբում դրանք վերցվում էին միայն Սաղմոսներից, սակայն վերջին շրջանում գործածում են նաև որոշ ոչ սուրբգրային աղբյուրներ:
- ♦ *Քարոզ*: Այն պատրաստում և իրականացնում է հովիվը: Քարոզը համարվում է Աստծո գրավոր Խոսքը բացատրող կրոնական ատենախոսություն: Ըստ Ավետարանականների՝ սրանք լինում են ա) *բնագրային*, երբ որպես նյութ գործածվում է աստվածաշնչական որևէ համար, բ) *բացատրական*, երբ բացատրվում է աստվածաշնչական որևէ հատված և մեկնվում է նրա իմաստը, գ) *համանման*, որի համար նյութ է հանդիսանում այնպիսի գաղափար, որը բխում է բացառապես աստվածաշնչական որևէ դեպքից, դ) *վարդապետական*, երբ բացատրվում է վարդապետություն կամ հավատամքի մի որևէ կետ, ե) *պարգայական*, երբ նյութ է հանդիսանում առօրյա կյանքի որևէ պարագա:

Հայ Առաքելական Եկեղեցու համեմատ Ավետարանական Եկեղեցիների պաշտամունքը ավելի կարճատև է: Ընդհանուր առմամբ կարելի է ասել, որ պաշտամունքը բավականին անկանոն է: Իրենք՝ ավետարանականները, պնդում են, որ

⁸ Վ. Թութիկյան, Հայ Ավետարանական Եկեղեցի, Ամերիկայի Հայ Ավետարանական Ընկերություն, 1996, էջ 186:

պաշտամունքի ճշտված կարգի բացակայությունը պայմանավորված է եկեղեցական որևէ հեղինակության չենթարկվելու իրողությամբ և այն բնութագրում են իբրև ազատ պաշտամունք, ինչն, իհարկե, հիմնավորված պատասխան չի կարելի համարել:

Ինչ վերաբերում է Հայ Առաքելական Եկեղեցուն, ապա այն կարելի է անվանել նաև Ծիսական Եկեղեցի: Այն ունի իր ծիսական «Մաշտոց» և «Ճաշոց» ժողովածուները: Հայ Առաքելական Եկեղեցու պաշտամունքային համակարգում կենտրոնական տեղ է գրավում Սուրբ Պատարագը: Սուրբ Պատարագ է կոչվում ամբողջությամբ կատարված այն պաշտամունքը, որը նշանակում է Սուրբ Զոհաբերություն: Հայ Առաքելական Եկեղեցու ծեսերն իրենց ամբողջության մեջ հիմնականում սիմվոլիկ կերպով վերարտադրում են Քրիստոսի կյանքի որոշ դրվագներ, ինչպիսիք են Նրա ծառայությունը, Խորհրդավոր Ընթրիքը, Խաչելությունը, Համբարձումը և այլն:

Հայ Եկեղեցու Պատարագի արարողության գիրքը կոչվում է Պատարագամատույց կամ Խորհրդատետր: Հայոց առաջին Պատարագամատույցը Կեսարիայից բերել է Ս. Գրիգոր Լուսավորիչը: Դա Բարսեղյան կոչվող Պատարագամատույցն էր, որը ժամանակի ընթացքում հայացվել, ապա մշակվել է Հայ Եկեղեցու Հայրերի կողմից և գործածվում է նաև այսօր ⁹:

Նշված Պատարագամատույցի համաձայն, Պատարագի արարողությունը բաղկացած է 4 մասից՝ **Պատրաստություն, Տերունական Ընթրիք կամ Ճաշու Պաշտոն, Սուրբ Պատարագ և Արձակում**:

- ♦ **Պատրաստության ընթացքում** պատարագիչը կատարում է Զգեստավորում, որը համարվում է «Եկեղեցու թագավորի և ծառայի խորհրդանիշ», մինչև Ս. Պատարագի կատարումը՝ Ձեռքերի լվացում՝ որպես մեղքերից մաքրվելու խորհրդանիշ, և Հացի ու Գինու Օրհնությունը,
- ♦ **Ճաշու Պաշտոնը** բաղկացած է Թափոռից, որը Քրիստոսի վարդապետական ծառայության խորհրդանիշն է, Կրտսեր Մուտքից, երբ Աստվածաշունչը մատուցվում է պատարագչին, Ընթեցվածքներից՝ Հին և Նոր Կտակարաններից և Նիկիական Հանգանակի ընթերցումից՝ որպես հավատացյալների հավատքի հայտարարություն:
- ♦ **Կանոն Ս. Պատարագի**: Սա ամենից երկար մասն է, որի ընթացքում ներկայացվում և կատարվում է Հաղորդության խորհուրդը՝ Հացը վերցնելը, որը կոչվում է Մատուցում, Շնորհակալության մատուցումը, որը կոչվում է Խորհուրդ Գոհության, Հացի բեկանումը, որը կոչվում է Բեկում, և Հացի մատուցումը, որը կոչվում է Հաղորդություն:
- ♦ **Վերջին Օրհնություն և Արձակում**, որը բաղկացած է պատարագչի օրհնությունից, Ավետարանական հատվածի ընթերցումից, Հոգեհանգստի Պաշտոնից և Վերջին Աղոթքից ու Օրհնությունից:

Պատարագի արարողությանը մասնակցում են պատարագիչ քահանան, սարկավազը և դպիրները: Վերջիններս ներկայացնում են ժողովրդին, իսկ ժողովրդի և պատարագիչ քահանայի միջնորդը սարկավազն է: Պատարագի յուրաքանչյուր մաս ուղեկցվում է շարականով կամ սաղմոսերգությամբ:

Ավետարանական պաշտամունքի մեջ առկա են Առաքելական Եկեղեցու պաշ-

⁹ Ղևոնդ քահանա Մայիլյան, Խորհուրդ Սուրբ Պատարագի, Էջմիածին, 2001, էջ 3:

տամունքային կարգին բնորոշ բազմաթիվ տարրեր, սակայն դա զուտ արտաքին նմանակում է: Բովանդակային առումով Հայ Առաքելական և Ավետարանական Եկեղեցիների պաշտամունքային համակարգերն անհամատեղելի են: Ձանց առնելով մանրամասները՝ մատնանշենք միայն, որ հիմնական տարբերությունն այն է, որ Առաքելական Եկեղեցու պաշտամունքային համակարգը ժառանգորդական և անփոփոխ է, կամայական մեկնաբանությունների չի դիմում և հենվում է Ավետարանի ու Եկեղեցական Հայրերի հեղինակության վրա: Այնինչ արդիականության գաղափարներով «տոգորված» Ավետարանական Եկեղեցին նախընտրում է օգտվել նաև ոչ սուրբգրային աղբյուրներից, որով իսկ հակասում է Աստվածաշնչի հեղինակությանը վստահելու իր սկզբունքին, գերադասում է օտար լեզուներից թարգմանած աղոթքներն ու երգերը, հովվի կողմից կատարվում է Ս. Գրքի ազատ մեկնությունը, որով մերժվում է Եկեղեցական Հայրերի թողած գրական ժառանգությունը և վիրավորական է համարվում «Ծիսական Եկեղեցի» կոչվելը:

Անհրաժեշտ է սակայն նշել, որ թեև պարզ երևում է, որ բողոքական-ավետարանականները չեն ընդունում իրենց Ծիսական Եկեղեցի լինելը, սակայն նրանք ևս ստեղծել են պաշտամունքի յուրահատուկ կարգ, որն ամենևին էլ զուրկ չէ ծիսական-արարողական տարրերից: Այս առումով Ս. Մայիլյանը իրավացիորեն նկատում է, որ «մարդն առանց ծեսի չի կարող ապրել, և նրանք՝ ծեսերը մերժողները, ստիպված են լինում ստեղծել նոր ծեսեր»¹⁰: Ինչ վերաբերում է Եկեղեցու Հայրերի թողած ժառանգության նկատմամբ վերաբերմունքին, ապա Ավանդական Եկեղեցիները գտնում են, որ աստվածհայտնությունը չի կարող սահմանափակվել միայն նորկտակարանյան գրքերով: Ինչ վերաբերում է Եկեղեցական Հայրերի գործերին, ավանդական Եկեղեցիներն այն համարում են աստվածային ներշնչման արդյունք: Ավետարանականները թեև իբրև «ոչ աստվածաշունչ» մերժում են Եկեղեցական ավանդությունները, այդ թվում և հայրերին, այնուհանդերձ, նրանք ևս ոչ միայն ընդունում են Աստվածաշնչի, այլև բողոքականության հիմնադիրներ Ս. Լյութերի, Ժ. Կալվինի և այլոց հեղինակությունը, ինչը կարելի է մի յուրահատուկ «ավանդություն» համարել:

Հայ Առաքելական Եկեղեցում հավատացյալը ազատ է իր գործողությունների մեջ: Նա կարող է Եկեղեցի հաճախել, երբ ցանկանա, այնինչ Ավետարանական Եկեղեցում պարտադիր կերպով պետք է մասնակցի պաշտամունքին և աղոթատեղից հեռանալու իրավունք չունի մինչև պաշտամունքի ավարտը: Ավելին, հավատացյալը պարտադրվում է մասնակցել յուրաքանչյուր պաշտամունքի: Այս դեպքում որտեղ է մնում ավետարանականների քարոզած «ազատ քրիստոնեության» գաղափարը, և արդյո՞ք սա չի խոսում այն մասին, որ Առաքելական Եկեղեցին Ավետարանական Եկեղեցուց ավելի ազատամտություն է ցուցաբերում:

Ինչնիցե, թեև Հայ Առաքելական Եկեղեցին համարվում է ծիսական, սակայն նրա պաշտամունքը չի սահմանափակվում ծիսական արարողություններով: Այն ներառում է պաշտամունքային շատ ավելի լայն շրջանակ, ինչպես, օրինակ՝ սրբերի բարեխոսությանը ապավինելը, մասունքների պաշտամունքը, պատկերահարգությունը (որոշ Եկեղեցիներում՝ պատկերապաշտությունը) և ամենից կարևորը՝ խաչապաշտությունը: Այդ ամենի պաշտամունքը մանրամասն բացատրվում է Եկեղեցու

¹⁰ Ս. Մայիլյան, նշվ. աշխատ., էջ 45:

կողմից՝ ընդհուպ մինչև աստվածաշնչական համարները:

Հայ Առաքելական Եկեղեցին ընդունում է սրբերի բարեխոսությունը: Ըստ նրա, սրբությունը առանձնաշնորհ չէ, այլ բոլորի կոչումն է: Սուրբ է միայն Աստված, սակայն մարդիկ սրբությունը պահում են իրենց կյանքով: Նահատակություն՝ նշանակում է զոհագործում Աստծուն, սեփական արյունով լվացվել և սրբվել մեղքի աղտից՝ Քրիստոսի անունի և հավատքի համար՝ դառնալով Աստծո թագավորության քաղաքացի¹¹: Դա նշանակում է, որ սրբերն «իրենց կյանքով ու մահվամբ կատարելապես միացել են Քրիստոսին՝ փրկության հավատքով, բացարձակ վստահությամբ, աննախապայման սիրով»¹²: Փաստորեն, Հայ Եկեղեցին հավատում է, որ Սուրբ Հոգով մաքրված սրբերը արդեն իսկ արժանացել են հավիտենական կյանքի և այդ պատճառով «Եկեղեցին զանոնք իւրայատուկ յարգանքի կ'արժանացնէ՝ որպէս ներշնչման աղբիւր, որպէս բարեխօս առ Աստուած»¹³:

Ըստ Հայ Եկեղեցու, բարեխոսությունը լինում է երկու տեսակ՝ **ննջեցյալ սրբերի և կենդանի հավատացյալների բարեխոսություն:** Բողոքական-ավետարանականները մերժում են բարեխոսությունը, «ոչ Ծիսական Եկեղեցիների հավատացյալները դրանում անգամ տեսնում են որոշ «հետամնացություն»՝ կարծելով, թե հազարամյակների ընթացքում ձեռք բերածը ժխտելով, դառնում են «առաջագնաց»¹⁴:

Սրբերի բարեխոսության հետ կապված է Հայ Եկեղեցու կողմից «եկեղեցու»՝ Հաղթականի՝ ննջեցյալների, և Զինվորյալ՝ կենդանի հավատացյալների բաժանումը: Ընդ որում, համարվում է, որ այդ երկուսի միությունը իրականանում է Հիսուս Քրիստոսով, իսկ այդ կապը շարունակական է: Չպետք է կարծել, թե Քրիստոս և սրբերի միջնորդությունը նույնն է: Քրիստոս Իր միջնորդությամբ մարդկությանը փրկել է դատապարտությունից, իսկ սրբերը բարեխոսում են կենդանի հավատացյալների համար, որոնք էլ, իրենց հերթին, աղոթում են ննջեցյալների հանգստության համար: Հայ Եկեղեցին, հենվելով ՃԺԱ Սաղմոսի վեցերորդ տողի՝ «հավիտյան մնա հիշատակն արդարի», և Առակաց Ժ 7-ի՝ «արդարների հիշատակը մնալու է զոհաբանությամբ», ինչպես նաև Ս. Դիոնիսիոսի «Տոնեցեք, պատարագ մատուցեք նրանց համար, ովքեր երեկ պատարագվեցին Աստծո համար», և Ոսկեբերանի «մի հապաղեք հիշատակել ննջեցյալներին... քանի բոլորս մի մարմին ենք Քրիստոսի մեջ...» արտահայտությունների վրա, պարտադիր է համարում սրբերին աղոթքով հիշելը¹⁵: Բացի սուրբգրային վերոնշյալ համարներից, սրբերի և կենդանի հավատացյալների բարեխոսության վերաբերյալ Աստվածաշունչն ունի նաև հետևյալ համարները՝ Ծննդ. ԺԸ, Դ 10, Բ Մնաց. Լ 19, Հոբ Ա 5, Ե 1, Գործք ԺԲ 5, Ե 59, Եբր. ԺԱ 4, Եբեմ. ԺԵ 1, Ղուկ. ԺԶ 27-31, Զաք. Ա 12-13, Հայտն. Ե 8, Դան. Գ 35-36: Եվ որքան էլ տարօրինակ լինի, աստվածաշնչային այս համարները տեղ չեն գտել բողոքական կանոններում:

Ինչ վերաբերում է մասունքներին, այս պարագայում ևս պաշտամունքը Հայ Եկեղեցու վարդապետությունն ու հայրերի մեկնությունները հենված են Գործք ԺԹ 12-ում Պողոս առաքյալի թաշկինակի և Դ Թագ. ԺԳ 21-ում Եղիսեի ոսկորների մասին

¹¹ Տե՛ս Մեսրոպ արքեպս. Աշճյան, Սրբերը և մենք, Նյու Յորք, 2001, էջ 80:

¹² Նույն տեղում, էջ 80:

¹³ Նույն տեղում, էջ 78:

¹⁴ Ս. Մայիլյան, նշվ. աշխատ., էջ 18:

¹⁵ Նույն տեղում, էջ 21:

հատվածների վրա:

Հայ Առաքելական Եկեղեցու պաշտամունքի կարևոր տարրերից հաջորդը պատկերահարգությունն է: Այն հավատացյալին հորդորում է ձգտել աստվածահաճո կյանքի: Պատկերահարգությունը երկրպագություն չէ: Հայ Եկեղեցին իր գոյության առաջին տարիներից իսկ ճշտել է իր վարդապետությունը խնդրո առարկայի վերաբերյալ և երբեք չի խառնվել պատկերամարտական վեճերին: Դեռևս առաջին դարում քրիստոնյա հայերի համար մեծ հոչակ էին վայելում Ս. Դաստառակն ու Աստվածամոր պատկերը: Պատկերահարգության ուժեղ պաշտպան էր Հովհան Օձնեցի Կաթողիկոսը, որը պնդում էր, թե Հայ Եկեղեցին ապավինում է միայն այն նյութերին, որոնց վրա գտնում է Քրիստոսի պատկերն ու խաչի նմանությունը, և «միթե փայտ կամ քար տեսնելիս՝ հույսս դնում եմ դրա վրա», - գրում է Կաթողիկոսը՝ ընդդիմանալով արաբների մեջ տարածված այն գաղափարին, որ հայերը փայտապաշտ են: Օձնեցի Կաթողիկոսը գտնում էր, որ Քրիստոսի պատկերը, ինչպես նաև Ս. Սեդանը և խաչը պիտի օծվեն, քանզի օծությունն է, որ զորություն է հաղորդում դրանց¹⁶: Այսու, պատկերների օրհնության ժամանակ խնդրվում է, որ Աստված դրանք դարձնի համագո Երրորդության երկրպագության պատճառ: Առաքելական Եկեղեցին օծում է նաև եկեղեցու շենքը՝ հիմնավորելով այն Ծննդ. ԻԸ 18-ով, որտեղ պատմվում է Հակոբի կողմից Բեթելի յուզով օծման մասին:

Խոսելով խաչի պաշտամունքի մասին, հարկ է նշել, որ Առաքելական Եկեղեցու համար ոչ մի արժեք չի ներկայացնում Ժան Կալվինի «երկաթե փաստարկը»: **Խաչը մարդու փրկության և հավիտենական կյանքի խորհրդանիշն է և պաշտելի է այնքանով, որքանով որ սրբագործված է Քրիստոսի արյունով**, - այսպիսին է Հայ Առաքելական Եկեղեցու հավատամքը:

¹⁶ Գնեկ եպս. Գալեմբերյան, նշվ. աշխատ., էջ 111:

ԱՇՈՏ ՄԵԼՔՈՆՅԱՆ

Պատմական գիտությունների դոկտոր

ՆԵՐՍԵՍ Ե ԱՇՏԱՐԱԿԵՑԻ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԵՎ ԿԱՐԱՊԵՏ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԲԱԳՐԱՏՈՒՆԻ

(Կենսագրական գուգահեռներ)

19-րդ դարի առաջին կեսի հայ հոգևոր-եկեղեցական և հասարակական-քաղաքական կյանքում բացառիկ դեր ունեն Ամենայն Հայոց Կաթողիկոս Ներսես Ե Աշտարակեցին ու Կարնո (1808-1830 թթ.) և Վրացա-խմելքական (1837-1856) թեմերի առաջնորդ Կարապետ արքեպիսկոպոս Բագրատունին: Նրանցից առաջինն արևելահայ իրականության մեջ այդ ասպարեզում թերևս ամենաազդեցիկ անձնավորությունն է եղել: Ուշագրավ է, որ նման մեծության գործիչը, որքան էլ իր գործունեության մեջ ունեցել է համահայկական ընդգրկում, հիմնականում սահմանափակվել է արևելահայ հասարակական-քաղաքական շրջանակներով:

Ժամանակաշրջանի դեպքերի մանրագին հետազոտությունից հստակ երևում է, որ արևմտահայ իրականության մեջ համանման ծավալներով Ներսես Աշտարակեցու գործունեության բացակայությունը պատահական չէ: Այստեղ գրեթե նույն գործառնությունների կատարումը, անկասկած, այլ ընդգրկումով, փաստորեն իրականացրել է մեկ այլ անձնավորություն՝ Արևմտյան Հայաստանի ամենաազդեցիկ թեմերից մեկի՝ Էրզրումի հոգևոր առաջնորդ Կարապետ արքեպիսկոպոս Բագրատունին:

Առ այսօր Կարապետ Բագրատունու գործունեության մասին գրականության մեջ կան իրարամերժ կարծիքներ: Ոմանք նրան իրավամբ համարում են ժամանակի ամենանշանավոր հոգևոր-եկեղեցական ու քաղաքական գործիչներից մեկը՝ նրա անվան հետ կապելով հայոց նոր պատմության մեջ ամենադժվարին խնդիրներից մեկի՝ 1830 թ. արևմտահայության Անդրկովկաս գաղթելու վճռի ընդունման և իրականացման հանձնառության հարցը: Ոմանք էլ, Արևմտյան Հայաստանի համար աղետաբեր համարելով այդ գաղթը, ինչպես նաև գրականության մեջ հոգևոր գործչի իրավասության սահմանները Կարապետ արքեպիսկոպոսի կողմից գերազանցելու փաստերը, փորձել են նրան ներկայացնել միայն բացասական կողմերով: Այս տեսակետի կողմնակիցները նման պնդումների համար հիմք են ընդունել նաև 1840-ական թվականների կեսերից Ներսես Կաթողիկոսի և Կարապետ արքեպիսկոպոսի փոխհարաբերությունների սրումը՝ դրա մեջ միակողմանիորեն մեղադրելով վերջինիս:

Կարապետ (Հովհաննես) Գրիգորի Բագրատունին ծնվել է 1779 թ. մայիսի 18-ին (30) Էրզրումի նահանգի Սպեր գավառի Հունուտ գյուղում: Իր ծննդավայրի անունից նրան հաճախ անվանել են նաև Կարապետ Հունուտցի: Սպերը վաղ միջնադարից հայտնի է եղել որպես Մամիկոնյան և Բագրատունի նախարարական տների ժա-

ռանգական կալվածք: Վերջիններիս անունից էլ Կարապետի գերդաստանն ընդունել է Բագրատունի ազգանունը: Նախնական կրթությունը ստանալով Ակն քաղաքում իր ուսուցչի՝ Միքայել արքեպիսկոպոսի մոտ, 1788 թ. Հովհաննեսն անցնում է Կ. Պոլիս, ուր սովորում է լեզուներ և զանազան գիտություններ, 1801 թ. ձեռնադրվում է վարդապետ՝ ստանալով Կարապետ անունը: 1808-ին Պոլսի Պատրիարքը նրան վստահում է Էրզրումի հոգևոր վիճակի հովվապետությունը: 1811-ին օծվում է եպիսկոպոս:

Շուտով Կարապետ Սրբազանը հիմնում է Էրզրումի Կարապետյան վարժարանը, զբաղվում թեմի բարեկարգմամբ, շենացնում թեմի եկեղեցիները, ընդարձակում նրանց կալվածքները, զգալի օգնություն ցուցաբերում բազմահազար հայ սովյալների, հիմնում աղքատանոցներ:

Ուշագրավ է, որ 1810-ական թվականների երկրորդ կեսին ամբողջ Արևմտյան Հայաստանում Կարապետ արքեպիսկոպոսը դառնում է ամենաճանաչված եկեղեցական գործիչներից մեկը, իսկ Ներսես արքեպս. Աշտարակեցին այդ նույն անունն իր ազգանպաստ գործունեության շնորհիվ վաստակում է արևելահայ իրականության մեջ: 1814-ին նշանակվելով Թիֆլիսի (Վրաստանի) հոգևոր թեմի առաջնորդ՝ Ներսես Աշտարակեցին նույնպես զուգահեռաբար ծավալում է տնտեսական լայն գործունեություն՝ նպաստելով Ռուսական կայսրության տարածքում գործող հայկական թեմերի բարգավաճմանը: 1824 թ. բացվում է նաև Ներսիսյան դպրոցը, որի հիմնադրմանն իր դրամական մասնակցությունն է բերում Կարապետ արքեպիսկոպոսը՝ Աշտարակեցու խնդրանքով ուղարկելով 8 ախյա քիսե կամ 8000 դոլուշ, որն այն ժամանակ կազմում էր բավական մեծ գումար՝ 1000 ռուսական ռուբլի: Շուտով Ներսիսյան և Կարապետյան դպրոցների միջև հաստատվում է որոշակի կապ: Էրզրումի դպրոցի մի խումբ ուսուցիչներ Գրիգոր Շեքերճյանի գլխավորությամբ լինում են Թիֆլիսում, ընդօրինակում Ներսիսյան դպրոցի փորձը:

Ժամանակի արխիվային նյութի ուսումնասիրությունից ետևում է, որ ի սկզբանե՝ 1810 թվականից երկու գործիչների միջև հաստատվում են ջերմ հարաբերություններ և սկսվում է սերտ համագործակցություն: Նրանք երկուստեք իրենց գործունեությամբ զարմանալիորեն ավելի ու ավելի են նմանվում միմյանց, արժանանում համընդհանուր սիրո և հարգանքի:

1820-ական թվականների երկրորդ կեսին, պայմանավորված Անդրկովկասի և Արևմտյան Հայաստանի նկատմամբ ռուսական արտաքին քաղաքականության ակտիվացմամբ, իրադարձությունների զարգացումը Ներսես Աշտարակեցուն մղում է դեպի քաղաքական ասպարեզ. 1826-1828 թթ. ռուս-պարսկական պատերազմ, հայ կամավորական ջոկատների կազմավորում, Արևելյան Հայաստանի ազատագրություն, Երևանի ժամանակավոր վարչություն, Պարսկահայքից հայերի զանգվածային գաղթ դեպի Ռուսաստանին անցած տարածքներ և այլն:

1828 թ. սկսվում է ռուս-թուրքական պատերազմը: 1829-ի հունիսին ռուսական զորքերն ընդհուպ մոտենում են Էրզրումին: Հայերի նկատմամբ սկսվում են հալածանքներ: «Գազազած ռուսների զորքի սովարությունից,– գրում է Եղիշե քին. Գե-

ղամյանցը,– օսմանցիները, նրանց կրոնամոլ մոլլաները, կատաղի «ղարադելիները», լեռնեցի «լազերը», սրերը ձեռքերն առած, շրջում էին փողոցներում և սրախող-խող անում պատահած քրիստոնյայի: Դա նման էր «բարդուղեմեան գիշերին»:¹ Շնորհիվ Կարապետ արքեպիսկոպոսի եռանդուն և խոհեմ քայլերի՝ հաջողվում է Էրզրում քաղաքի և շրջակա գյուղերի հայությանը փրկել նման մոլեռանդներից սպառնացող վտանգից:

Միաժամանակ, ընդառաջ գնալով Եփրեմ Կաթողիկոսի ցուցումներին և հետևելով Աշտարակեցու անցած ուղուն, համարձակ հոգևորականը նամակագրական կապեր է հաստատում ռուսական զորքերի հրամանատար Ի. Ֆ. Պասկևիչի հետ: Սակայն կաթողիկոսի կոնդակը՝ «Առաջնորդի հայոց Կարնոյ», որի մեջ Վեհափառը պատվիրում էր ամեն կերպ նպաստել ռուսական զորքերի առաջխաղացմանը, ընկնում է թուրքերի ձեռքը: Կարապետ Սրբազանը երկրորդ անգամ կանչվում է սերասկյարի մոտ և միայն շնորհիվ հնարամտության, կարողանում է հրաշքով խուսափել հաշվեհարդարից:

Կարապետ Սրբազանը գաղտնի մի նամակ է ուղարկում կոմս Պասկևիչին, ուր ներկայացնում է հայերի համար ստեղծված ծանր վիճակը և խորհուրդներ տալիս քաղաքը դյուրությամբ գրավելու ուղիների վերաբերյալ: Բարեբախտաբար, այս վիճակը երկար չի տևում: Համոզվելով, որ դիմադրությունն անիմաստ է, սերասկյարը Պասկևիչին է ուղարկում քաղաքի բանալիները: Հունիսի 27-ին ռուսական բանակն առանց մարտի մտնում է Էրզրում:

Կարապետ արքեպս. Բագրատունին կարողանում է իր նպաստը բերել առանց կռվի Արևմտյան Հայաստանի խոշորագույն քաղաք Էրզրումը ռուսներին հանձնելու հարցում: Պատահական չէ, որ հունիսի 27-ին նա Ս. Նշան լեռան վրա օրհնում է ռուսական բանակը և գրկախառնվում Պասկևիչի հետ: Ադրիանապոլսի պայմանագրով ռուսների կողմից գրավված այլ բնակավայրերի Թուրքիային վերադարձնելու լուրը անելանելի վիճակ է ստեղծում պատերազմում ռուսներին օժանդակած հայության համար: Անկասկած ռուսների հեռացումից հետո հայ բնակչությունը հայտնվելու էր մահմեդականների վրեժխնդրության վտանգի առջև:

Ընդառաջ գնալով ռուսական իշխանությունների ցանկությանը և հայ բնակչության մի ստվար հատվածի խնդրանքներին՝ Կարապետ Բագրատունին, դարձյալ հետևելով Ներսես Աշտարակեցու օրինակին, դիմում է մի վճռական և խիստ պատասխանատու քայլի՝ հանդես գալիս դեպի ռուսական նորահաստատ տարածքներ գաղթելու կոչով: Անշուշտ, այս դժվարին քայլին գնալու մեջ Ներսես Աշտարակեցու գործելակերպը Կարապետ Հունուսցու կողմից ընդունվել է որպես միակ ճիշտ և ազգօգուտ քայլ:

Շուտով Կարապետ արքեպիսկոպոսը դառնում է Ախալցխա, Ախալքալաք և Ծալկա գաղթած իր հոտի առաջնորդը՝ նոր հայրենիքում, ուր տեղափոխվում են բազմաթիվ հոգևորականներ, հիմնվում են դպրոցներ (Ախալցխայում՝ Կարապետյան, Ախալքալաքում՝ Մեսրոպյան) ու եկեղեցիներ, ձեռք բերվում կալվածքներ: Հո-

¹ Եղիշե քին. Գեղամեանց, Կարապետ արքեպիսկոպոս, Փորձ, Թիֆլիս, 1876, թիվ 1, էջ 184:

գևոր եղբոր՝ Ներսես Աշտարակեցու հետ պահպանվում է նամակագրական կապը: 1837 թ. Կարապետ Սրբազանը ստանձնում է նորաստեղծ Վրացա-իմերեթական թեմի առաջնորդի պարտականությունները: Ժամանակին (որպես Վրաստանի թեմի) այդ ծառայությունը կատարում էր Ներսես արքեպիսկոպոսը: Երկու գործիչների հեռակա մտերմությունը շարունակվում է: Շարունակվում են նաև պատմական զարմանալի զուգահեռներն ու զուգադիպությունները. մատուցած ծառայությունների համար Ներսես Աշտարակեցին Նիկոլայ 1-ին ցարից ստանում է Ալ. Նևսկու (1828), Կարապետ Բագրատունին՝ Ս. Աննայի (1830) շքանշան: Պատահական չէ, որ Բեսարաբիայից վերադառնալուց հետո Ներսես Աշտարակեցուն կաթողիկոս օծելու պատիվը տրվում է Կարապետ արքեպիսկոպոսին: Ուշագրավ է, որ 1843 թ. մայիսի 18-ին՝ Կարապետ արքեպիսկոպոսի ծննդյան օրը, Ներսես Աշտարակեցին ընտրվում է կաթողիկոս: Կարծում ենք, որ այս զուգադիպությունը պատահական չէր (օծումը տեղի է ունենում 1846 թ. հունիսի 9-ին):

Սակայն թիֆլիսյան բարդ ու արևմտահայի համար անծանոթ միջավայրում, դեռ մինչև Աշտարակեցու վերադարձը, Կարապետ Սրբազանը լուրջ հաջողությունների կողքին ունեցել էր նաև ցավալի սայթաքումներ ու անհաջողություններ: Զանազան ճարպիկ մարդիկ փաստորեն իրենց ձեռքն էին վերցրել թեմական կյանքի տնօրինությունը, տկարացրել եկեղեցիներից մի քանիսը, խաթարել անգամ Ներսիսյան դպրոցի կյանքը: Դժբախտաբար Էջմիածնի սինոդը ոչ միայն չէր սանձել այդ անձանց, այլև իր հերթին վիժեցրել էր Կարապետ Բագրատունու առաջադրած ազգօգուտ մի քանի ծրագրեր:

Այսպես, Կարապետ Սրբազանը սինոդին ներկայացրել էր մի մեծ ծրագիր Ներսիսյան դպրոցի գործունեությունն ընդլայնելու վերաբերյալ, ուր մասնավորապես նախատեսվում էր ուսումնարանի համար ստեղծել առանձին հոգաբարձություն, նշանակել վերատեսուչ կամ ուսուցչապետ՝ տեսուչ, ավելացնել դպրոցում ուսանող աշխարհականների երեխաների թիվը, ստեղծել դպրոցին կից հիվանդանոց, բացել ցածր դասարաններ և այլն: Ցավոք, Էջմիածնից ստացվել էր հետևյալ պատասխանը. «Սեմինարիան կամ Հոգևոր դպրոցն առ այժմ մնացել ըստ առաջնյոյն..., Հիւանդանոց կամ բժիշկ չեն պէտք: Ստորին ուսումնարան առ այժմ չէ հարկաւոր: Ի հոգևոր ուսումնարան կարելի է ընդունել գորդիս աշխարհականաց յայնժամ, երբ նուիրանօք քաղաքին Տփլիսոյ աճեսցին դրամք ուսումնարանի...»²:

Զրկվելով նյութական աղբյուրից՝ նույն դպրոցը պահելու համար Կարապետ Սրբազանը կատարել էր մի անզգույշ և անհեռատես քայլ. վարժարանի վերնահարկը տվել էր վարձով: Բեսարաբիայից վերադառնալով, երբ 1845 թ. առաջին անգամ Ներսես Աշտարակեցին այցելել էր իր հիմնադրած դպրոցը, ինչպես Ավետիս Պերպերյանն է գրում՝ «տեսեալ զայն խոպանացեալ և ի վարձու տուեալ այլոց, ցաւ մեծ զգաց»³:

² Գեղամյանց Հ., Կարապետ արքեպիսկոպոս, կենսագրություն, առաջ. և ծանոթ.՝ Ա. Մելքոնյանի, Ե., 1999, էջ 70-71:

³ Պերպերյան Ա., Պատմություն Հայոց, Կ. Պոլիս, 1871, էջ 288:

Երկու գործիչների երբեմնի ջերմ փոխհարաբերությունների սառեցման ուղղությամբ երկրորդ դեպքը տեղի է ունենում 1846 թ. հունիսին: Էջմիածնում ճաշկերպության ժամանակ Կարապետ արքեպիսկոպոսը խոստանում է Դավթայի ջուրը Էջմիածնի մայրավանքին հասցնելու համար տրամադրել 30 հազ. ռուբլի: Կաթողիկոսը ողջունում է այդ քայլը և հայտնում, որ աղբյուրի մոտ կկանգնեցվի հուշարձան՝ ի նշան այդ բարեգործության: Սակայն հետագայում կաթողիկոսը վերանայում է իր որոշումը և առաջարկում այդ պատկանելի գումարը ուղղակիորեն հատկացնել Էջմիածնին՝ բազմաթիվ այլ կարիքների համար: Այդ քայլից դժգոհ մնացած Կարապետը մերժում է կաթողիկոսի պահանջը և վերադառնում Թիֆլիս:

Սկսվում է Կարապետ Բագրատունու համար մի դժվարին ժամանակաշրջան: Մեկը մյուսի հետևից ստացված կաթողիկոսական կոնդակներում սուր քննադատության էր ենթարկվում թեմի վիճակը: Առաջին կոնդակներում Վեհափառը հարգանքով էր խոսում Սրբազանի մասին՝ քննադատության թիրախ դարձնելով նրա շրջապատի մարդկանց: Սակայն հետագայում մեղադրվում է նաև ինքը՝ թեմակալ առաջնորդը: Գործը հասնում է այնտեղ, որ մի հանձնաժողով է ժամանում Թիֆլիս, որը հանգամանորեն քննում է թեմի գործերը: Խնդրին միջամտում են նաև ցարական քննչական մարմինները: Կազմվում են հաստատվոր հատորներ⁴:

Փաստորեն Կարապետ արքեպիսկոպոսը ազատվում է պաշտոնից և հարկադրված լինում վերադառնալ Ախալցխա: Թեմի բոլոր պաշտոնյաները հեռացվում են ծառայությունից: Սրբազանին հրահանգվում է «չառնել ոչինչ կարգադրություն ոչ բանի և ոչ գործով» (1847 թ. մարտի 31-ի, հուլիսի 4-ի, հոկտեմբերի 15-ի կոնդակներ):

Ինչպես վկայում են բազմաթիվ արխիվային վավերագրերը, այս ամենը հետևանք էր բազմաթիվ թյուրըմբռնումների և տարբեր հոգևորական ու աշխարհական անձնավորությունների (Մինաս արքեպիսկոպոս, Իսահակ քահ. Զիալյանց, Ալ. Վարլամյանց, Դավիթ Խերողինյանց, Նիկողայոս արքեպս. Տեր-Մարությանց և այլք) գործելակերպի:

Սակայն հատկանշական է, որ ինչպես կաթողիկոսը, այնպես էլ Վրացա-իմերեթական թեմի առաջնորդը, չնայած Էջմիածին-Թիֆլիս եկեղեցական բարդ հարաբերություններին, երկուստեք գործում էին փոխադարձ հարգանքի շրջանակներում: Ավելին, Կարապետ Սրբազանը մշտապես իր գործակիցներին շարունակում էր հորդորել լինել համբերատար և չհամարձակվել հակառակվել Ամենայն Հայոց Հայրապետի կամքին: «Կաթողիկոսը մեղավոր չէ, - ասում էր «աքսորական» Սրբազանը, - այլ մեղավոր են քսու մարդիկ: Իմ Հայրապետի կամքը ինձ համար օրենք է, թող ես հալածվիմ, բայց թող Հայոց Կաթողիկոսի խոսքը չկոտրվի»⁵:

Պատահական չէ, որ շուտով, երկարատև քննությունների արդյունքում, երբ պարզվում է Կարապետ Բագրատունու ներկայացված բոլոր մեղադրանքների անհիմն լինելը, Ներսես Կաթողիկոսը 1850 թվականից քանիցս փորձում է Կարապետ

⁴ Այդ հատորները պահպանվում են Հայաստանի Ազգային արխիվի 53-րդ ֆոնդում:

⁵ Գեղամյանց Հ., նշվ. աշխ., էջ 80:

Սրբազանին բերել էջմիածին՝ իր կոնդակներում հիշեցնելով իրենց քառասնամյա բարեկամությունը և առաջարկելով վերադառնալ ծառայության: «Խաղաղարար» առաքելությամբ Ախալցխա է ուղարկվում Միքայել եպիսկոպոսը: Ավելին, 1852 թ. Ամենայն Հայոց Կաթողիկոսն անձամբ ժամանում է Ախալցխա և իջևանում Կարապետ Բագրատունու տանը: Վերականգնվում են Կարապետ արքեպիսկոպոսի հետ կաթողիկոսի բարեկամությունը և Սրբազանի բարի անունը: «Մեծավորը», ինչպես Կարապետ Սրբազանին փաղաքշորեն կոչում էին արևմտահայ գաղթականները, սիրահոծաբ համաձայնում է այցելել էջմիածին: Սակայն 1853 թ. աշնանը Ղրիմի պատերազմի օրերին թուրքերի անակնկալ ներխուժումն Ախալցխա խանգարում է այդ այցի իրականացմամբ: Կարապետ Սրբազանը մնում է պաշարված քաղաքում՝ ոգևորելով պաշտպաններին և իր ծանրակշիռ ավանդը բերելով Ախալցխան անառիկ պահելու գործին: Կարապետ արքեպիսկոպոսը մահանում է 1856 թ. հունիսի 3-ին, իսկ Ներսես Ե Կաթողիկոսը՝ 8 ամիս անց՝ 1857 թ. փետրվարի 13-ին:

Նույն ժամանակաշրջանում գործած Ներսես Աշտարակեցու և Կարապետ Բագրատունու գործունեության մեջ զարմանալիորեն կան շատ հար և նման զուգահեռներ, որոնք որոշակի հետաքրքրություն են ներկայացնում Հայ Եկեղեցու 19-րդ դարի առաջին կեսի պատմության համար: Վերոհիշյալը մեկ անգամ ևս հուշում է, որ պատմական միևնույն ժամանակաշրջանում ապրած տարբեր գործիչներ, անկախ իրենց գործունեության զանազան շրջաններում միմյանց նկատմամբ ունեցած փոխհարաբերությունների, պետք է գնահատվեն ըստ արժանվույն և իրենց արժանի տեղն ունենան մեր պատմության մեջ:

ՀՐԱՆՏ ԲԱՐՍԵՂԻ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

Պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

ՅԱՐԻ 1903 Թ. ՀՈՒՆԻՍԻ 12-Ի ՀՐԱՄԱՆԸ ԵՎ ԱՐՑԱԽԻ ԹԵՄԸ

Ինչպես կայսրապետության մյուս շրջաններում, այնպես էլ Արցախ-Ղարաբաղում 19-րդ դարի վերջին և 20-րդ դարի սկզբին բնակչությունը տառապում էր ազգային-գաղութային ճնշումից: Ցարիզմը դաժանորեն հալածում էր ազգային մշակույթը, ազգային լեզուն, արգելակում ազգային մտավորականության կազմավորումը: Այստեղ առաջինը քաղաքական գործունեություն ծավալեց Հայ Յեղափոխական Դաշնակցությունը, որի Արցախի կենտրոնն էր Շուշի քաղաքը: Ակադեմիկոս Աշոտ Հովհաննիսյանի բնորոշմամբ՝ «տոգորված վառ ցնորքներով լի եռանդով, պատրաստ ամեն զոհաբերության», Շուշիի «հեղափոխական» երիտասարդությունը տոգորված էր «հանդուգն ծրագրերով», և «ստեղծվեց հոգևոր մի մթնոլորտ, որտեղ ծնվում էր և սնվում նաև դպրոցում սովորող մատաղ աշակերտությունը»: Աշոտ Հովհաննիսյանը վկայում է, որ «Սոցիալական ընդհանուր շաղախից ծնված, «ուխտի» ընդհանուր ավագանում մկրտված խանդավառ այդ պատանիների շրջանում էին Մենակը, Բսաջանը, Թորգոմը, Իշխանը, Արամը, Կոստյան, Շիրինյանը, Արաբին, Լետան, Սնարյանը և վերջապես՝ Ծատուրը»¹:

Հայ ժողովրդի դեմ ցարական ինքնակալության ճնշիչ և հալածող քաղաքականությունը ավելի դաժան բնույթ սկսեց կրել 20-րդ դարի սկզբին: Ամեն տեղ լցվել էին ցարական լրտեսները, որոնք տեղ էին հասցնում բոլոր այն արարքները, որոնց մեջ ցարիզմը տեսնում էր հակակառավարական միտում. նույնիսկ էջմիածնի սինոդի դատախազը հանդիսանում էր կառավարության «աչքն ու ականջը»: Նա 1910 թ. դատական քննչին տված ցուցմունքում նշել է. «Հարկ եղավ լայնորեն իրազեկ լինել ոչ միայն հայ հոգևորականությանը, այլև այն անձանց, ովքեր առնչություն ունեին եկեղեցական կառավարության և կրթաբարոյագործական հաստատությունների հետ: Իմ պաշտոնի անցնելը զուգադիպեց հայերի բացարձակ ըմբոստացման հետ, ըմբոստացում ընդդեմ կառավարական ձեռնարկած միջոցների, որոնք վերաբերում էին եկեղեցական դպրոցների և մի քանի բարեգործական ընկերությունների փակման ու եկեղեցական կալվածքների գրավման, որ արքունի կառավարությանն էին հանձնված»²:

Մինչև գործը կհասներ 1903 թվականը, այսինքն ցարի հրամանը, Արցախում տեղի էին ունենում հակաիշխանական դժգոհություններ, որի կենտրոնը հանդիսանում էր թեմական դպրոցը: Փոխանակ աշակերտների ներկայացրած օրինական

¹ Հովհաննիսյան Աշոտ, Հուշեր և բնութագրումներ, Երևան, 1969, էջ 68, 69;

² ՀԱՍ, ֆ. 4047, ց. 3, գ. 4, էջ 2659-2660:

պահանջները, որոնք վերաբերում էին ուսումնական գործընթացի բարելավմանը, լրջորեն քննարկելու, այն համարում էին «անլուր յանդգնություն, յանցանք, որ պիտի պատժուի ամենայն խստությամբ»: Այնուամենայնիվ՝ հարցը չկարգավորվեց, և բողոքները շարունակվում էին: Կամա թե ականա թեմականի աշակերտների այդ շարժումը և նրա դեմ կիրառվող քաղաքականությունը ազդում էր ոչ միայն հոգևոր դպրոցի, այլև թեմի հեղինակության վրա:

Անժխտելի է, որ հայ ժողովուրդը սիրում է իր Եկեղեցին և միշտ էլ հարգանք ու հավատարմություն է ունեցել նրա նկատմամբ: Հայոց Եկեղեցին եղել է և կա որպես հոգևոր մեծ ուժ, որն իր դիրքերն ամրապնդել է դարերի ընթացքում: Այս ամենը, անշուշտ, դուր չէր գալիս ցարական ինքնակալությանը: Ահա թե ինչու նա որոշեց «ցնցել» Հայոց «Եկեղեցու հիմքը»: Իսկ դա, գրել է Ժամանակակիցը, ավերակների տակ կթողներ և կկորչեին «ժողովրդական իրավունքների մնացորդները»³:

Այդ ահավոր վիճիչ պատրաստվել էր 1896 թվականից սկսած, երբ Անդրկովկասի կառավարչապետ էր նշանակվել իշխան Գրիգորի Գոլիցինը, որն իր հայատյաց քաղաքականությամբ ավելի բոբոքեց հեղափոխական բոցը: Այդ նշանակում է, որ ամբողջ հայ ժողովուրդը պետք է ոտքի ելներ և սատար կանգներ իր Եկեղեցուն: Հայ ժողովուրդը ավելի խորը պաշտպանեց իր իրավունքները և իրեն դրսևորեց որպես իր Եկեղեցու տերը: Պետք է ըստ պատշաճի գնահատել հայ ժողովրդի այդ մեծագույն նվիրվածությունը և պատրաստականությունը՝ իր Եկեղեցին պաշտպանելու և նրա հեղինակությունը ավելի բարձրացնելու համար: Հայ ժողովուրդը իր արյամբ սրբագործեց Հայ Եկեղեցու պատվի փրկությունը:

Եվ այսպես՝ 1903 թ. հունիսի 12-ին ցար Նիկոլայ 2-րդը ստորագրեց հրամանագիր՝ հայ Լուսավորչական Եկեղեցու կալվածքները գրավելու մասին: Այդ հրամանը պայթեց ռումբի պես: Մինչ այդ, գրում է Ակնունին, կովկասյան ցավագիր կառավարչապետը յոթ ամիս շարունակ ձգտում էր «իր փայփայված ծրագիրը յաղթանակով պսակելու համար», որին քաջալերում էր «միապետության դաստիարակ Պոբեդոնոսցևը և ներքին գործերի նախարար «Պլենեն»⁴: Պարզվում է, որ Կովկասի կառավարչապետ իշխան Գ. Գոլիցինը դեռևս 1898 թ. էր հարց դրել Հայոց Եկեղեցու բոլոր կալվածքներն ու դրամագույնները բռնագրավելու համար: Ըստ էության՝ ցար Նիկոլայ 2-րդը կողմնակից էր «հայոց հոգևորականության օրինազանց գործողությունը դադարեցնելու»:

Հարցը գնաց կայսերական պալատ, որտեղ և Պլենեն կայսրին համոզեց ստորագրել հրամանագիրը: Դրանով իսկ «բարձրագույնը հաստատեց թալանի օրենքը»⁵: Ցար Նիկոլայ 2-րդի հրամանը ստորագրելուց մի քանի օր անց Գոլիցինը, հրապարակելով պաշտոնական հաղորդագրություն, փորձեց արդարացնել արվածը: Իսկ վերադաս պաշտոնական հաղորդագրություններում և հրապարակված հոդվածներում փորձում էին ցույց տալ, թե իբրև դրանով մեծացվում են Հայոց Եկեղեցու եկա-

³ Ակնունի Է., Դեպի կոփվ, Ժնև, 1904, էջ 7:

⁴ Նույն տեղում, էջ 10:

⁵ Նույն տեղում, էջ 12-13:

մուտները, որի նպատակն է նպաստել նրա բարգավաճմանը, չափազանց ողբալի վիճակում գտնվող աղքատ ու չքավոր հոգևորականներին, Եկեղեցին ու նրա կալվածքներն ազատել հափշտակումներից:

Ցարական բարձրաստիճան պաշտոնյաների ենթադրությամբ Հայոց Եկեղեցին ուներ մեծ հարստություն, որից իբրև հոգևորական վերնախավը ստանում էր մեծամեծ եկամուտներ և դրանով իսկ ապահովում իր անկախ ու ինքնուրույն դիրքը: Այդ թույլ չտալու համար նրանք գտնում էին, որ պետք էր բռնագրավել այդ հարստությունը: Դրանով իբրև հնարավորություն կստեղծվեր Եկեղեցին կախման մեջ դնել պետությունից, որին կարելի կլիներ թելադրել այն, ինչ անհրաժեշտ էր: Կովկասի փոխարքան նույնիսկ չէր զլացել ցարին տեղյակ պահել, որ Հայ Եկեղեցու ցանկությունն է «Մեծ և միացյալ Հայաստան» ունենալ: Իբրև դա էլ հայ կղերին հնարավորություն է տվել անցնել «շարժման գլուխ»:

Կար նաև մեկ այլ մեկնաբանություն, թե իբրև Հայ Եկեղեցին ամեն տարի «անսպառելի դրամ է տալիս հայկական գործին» և հանդիսանում է ազատագրական շարժման նեցուկն ու աջակիցը: Նույնիսկ թվեր էին բերվում, թե թուրքահայերի գաղթի համար կաթողիկոսը տարեկան տրամադրում է կես միլիոն ռուբլի, սինոդականները՝ 100 հազար, թեմական առաջնորդները՝ 50 հազար, վարդապետներն ու քահանաները՝ առնվազն 1000 ռուբլի: Նաև այն կարծիքին էին, թե իբրև այդ գումարները «զենք դարձած մուտք էին գործում Արևմտյան Հայաստան»⁶: Այդ ամենը մի նպատակ էր հետապնդում. Ցարական միապետությունը փորձում էր անդամալուծել Հայոց Եկեղեցին և տիրանալ նրա ունեցվածքին⁷:

Խրիմյան Հայրիկը 1903 թ. օգոստոսին ստորագրեց 3 կոնդակ, որոնցից մեկն ուղղված էր հայոց թեմերին, որում փորձում էր դիմադրել հունիսի 12-ի օրենքին: Երկու օր անց, օգոստոսի 5-ին, ներքին գործերի նախարար Պլենե Ամենայն Հայոց Կաթողիկոսին հեռագրել է. «Տեղեկանալով, որ եկեղեցական կալվածքների վերաբերմամբ հունիսի 12-ի բարձրագույն հրամանի գործողությունը հանդիպում է հապաղումների, խնդրում եմ Ձերդ Սրբության՝ հոգալ անհապաղ կարգադրություն անել այս մասին: Ամեն մի հետաձգում, իբրև անհնազանդություն թագավորական կամքին, առաջ կբերի ծանր հետևանքներ: Ներքին գործերի մինիստր՝ Պլենե»⁸:

Հայոց Կաթողիկոսի ցանկությունը՝ գնալ Ս. Պետերբուրգ և հանդիպում ունենալ ցարի հետ, չի հաջողվում: Թե՛ Ս. Պետերբուրգում և թե՛ Թիֆլիսում հայերից ստացվում էին բազմաթիվ բողոք-նամակներ, որոնց հեղինակները խարազանում և անարդարացի էին համարում հունիսի 12-ի օրենքը: Հայ ժողովուրդը խիստ ըմբոստացել էր, բոլշևիկ Բոգդան Կոնյանցի բնորոշմամբ, ցարի այդ նոր կողոպուտի դեմ:

Հայոց եկեղեցիներից բողոքներ էին հասնում Ս. Էջմիածին, որտեղ ցարական հանձնաժողովները ուժով էին խլում եկեղեցիների ունեցվածքը, առանց որևէ մեկի

⁶ Նույն տեղում, էջ 16-24:

⁷ **Անանուն Դ.**, Ռուսահայերի հասարակական զարգացումը, հ. 3, Վենետիկ, 1926, էջ 23-24:

⁸ **Ակնունի Է.**, նշվ. աշխ., էջ 43:

կամքը հարցնելու: Ամենուր տեղի էին ունենում բողոքներ և ապստամբություններ թագավորական այդ թալանչիական օրենքի դեմ: Բազմաթիվ բողոքներ էին ուղարկվում Արցախ-Ղարաբաղից, որի բնակիչները ոտքի էին ելել Հայոց Եկեղեցին պաշտպանելու համար: 1900 թ. տվյալներով՝ Հայ Եկեղեցու կալվածքներն ու դրամագլուխը կազմում էր 175.000 դեսյատին հող և մոտ 2 միլիոն ռուբլի: Մինչդեռ այդքան ունեցվածք կարող էր ունենալ ռուսական ներքին նահանգների հողի մի մագնատ: Հայոց Եկեղեցու այդ սեփականությունը դարերի ընթացքում գոյացել էր նվիրատվություններով և տրված խնայողություններով⁹: Այդ ամենի մեջ խիստ նվազ էր Արցախի թեմի ունեցվածքը: Թեմի առաջնորդ Գրիգոր եպիսկոպոս Գառնակերյանի մի զեկուցագրից իմանում ենք, որ 1903 թ. հունիսի 12-ի օրենքի նախօրյակին Արցախի թեմն ուներ ընդամենը 45.285 ռ. դրամագլուխ¹⁰: Լինում էին տարիներ, որ առանց Էջմիածնի օգնության հնարավոր չէր փակել թեմի տարեկան ծախսերը:

Արցախահայությունը չէր կարող անտարբեր գտնվել ցարի վերոհիշյալ հրամանի նկատմամբ: Առաջինը ապստամբեց Գանձակի հայությունը, որը կոչ էր անում բոլոր հայերին չհրաժարվել բողոքելուց և ցարի օրենքի դեմ պայքարելուց: Մոտ 10 հազար մարդ¹¹, հավաքվելով Գանձակի վերի եկեղեցու մոտ, ապա շարժվելով դեպի վարի եկեղեցի, որտեղ գտնվում էր առաջնորդարանը, հակացարական կոչերով պահանջում էին վերացնել հունիսի 12-ի հրամանագիրը: Ոստիկանությունը կես ճանապարհին արգելում է նրանց առաջ շարժվել և պահանջում ցրվել: Սակայն ըմբոստ ամբոխը, չենթարկվելով ոստիկանության պահանջին, շարունակում է ճանապարհը դեպի առաջնորդարան: Հոգևորականության պաշտոնական ներկայացուցիչը փորձում էր հանգստացնել նրանց՝ վստահեցնելով, որ հոժարակամ ոչինչ չի հանձնվի, ինչպես հրահանգել է Վեհափառ Կաթողիկոսը:

Ամբոխը պատրաստ էր ցրվելու, երբ հասավ ոստիկանությունը և անամոթաբար հայտարարեց, թե այդ ամենը հոգևորականության ծրագրած գործն է: Այդ ժամանակ լուր է հասնում, թե ցարական զորքը արդեն անցել է կամուրջը և բարձրանում է դեպի հայոց թաղը: Հավաքված ամբոխը խիստ անհանգստանում է: Ոստիկանությունը ստիպված էր ետ ուղարկել զինվորների վաշտը: Եվ ահա վրա է հասնում փոխգնդապետ Անդրենը և հրամայում ետ վերադարձնել զինվորականներին: Այդ կարգադրությունը ավելի է վրդովեցնում ժողովրդին, որը և որոշում է դիմադրել: Փոխգնդապետ Անդրենը հավաքված ամբոխից պահանջում է ցրվել: Սակայն ոչ մեկը տեղից չի շարժվում: Անդրենի պահանջին և սպառնալիքներին բնակչությունը պատասխանում է քարի կարկուտով: Ազգությամբ հրեա, ուղղափառություն ընդունած փոխգնդապետ Անդրենը զինվորներին հրամայում է կրակել անզեն ամբոխի վրա: Նա առաջինն է հանում ատրճանակը և գնդակահարում մի երիտասարդի: Ապա հաջորդում է հրացանների որոտը: Աղաղակ, լաց ու կոծ: Գետին են ընկնում 13

⁹ Անանուն Դ., նշվ. աշխ., էջ 43:

¹⁰ Վավերագրեր Հայ Եկեղեցու պատմության, գիրք Թ: Հայ Առաքելական Եկեղեցու Արցախի թեմը (1813-1933 թթ.), Երևան, 2001, էջ 403-418:

¹¹ «Դրոշակ». 1903, N 7:

տարեկան մի աղջիկ և փոքրիկ մի երեխա: Տասը սպանված, ավելի քան 70 վիրավոր, որոնց թվում էր մի զինվոր և մի քանի ոստիկաններ: Կարգադրվեց նույնիսկ երկաթուղու կայարանում Թիֆլիս մեկնող հայերին տոմսակ չտալ: Ոստիկանությունը դարձել էր անսանձ¹²:

Գանձակի ողբերգության լուրը հասնում է Շուշի: Այստեղ արդեն սկսվել էին քաղաքական խմորումները: Բաքվում, Գանձակում, Թիֆլիսում, Երևանում, Ալեքսանդրապոլում և այլ տեղերում բռնկված հակացարական ելույթները ոտքի հանեցին շուշեցիներին: Այդ ժամանակ ցարական գործակալները Շուշիի և Նուխիի գավառներում փորձում էին թուրքերին գրգռել հայերի դեմ: Օրինակ՝ Շուշիի գավառապետը հավաքել էր թուրքերին և ակնարկել. «Լսել եմ, որ դուք զինվել եք և պատրաստվել եք մեզ պաշտպանելու ու հայերին կոտորելու: Անչափ շնորհակալ ենք, բայց առայժմ մենք գորքի ուժով էլ կարող ենք պաշտպանվել»¹³:

Արցախում եկեղեցական կալվածքների գրավումը նշանակված էր սեպտեմբերի 10-ին, երբ պիտի Գանձակից գար նահանգապետը և անձամբ ղեկավարեր հափշտակող հանձնաժողովի անելիքները: Ժողովրդին ահ ու սարսափ ներշնչող նահանգապետը Շուշի եկավ սեպտեմբերի 8-ին, որի գլխավորությամբ հաջորդ օրը հանձնաժողովը սկսեց իր գործունեությունը:

Անկասկած՝ ոստիկանությունը նախապատրաստվել էր այդ ամենին: Գանձակից Շուշի էր տեղափոխվել Ասլանդուզսկի վաշտի կեսը և մոտ 500 կազակ, որոնք տեղավորվեցին քաղաքի հայկական թաղամասում: Մինչ այդ Շուշիում կազմակերպվել էր հեղափոխական կոմիտե, որի, ինչպես և Արցախի թեմի կոչով քաղաքի հայերը չէին գնացել գորքին դիմավորելու: Ասենք նաև, որ կառավարական շրջանները բանակի մեջ սարսափ էին տարածել, թե Շուշին «հեղափոխական արծիվների բուն է» և որ Շուշիի ճանապարհին բազմիցս կալանավորվել են հրացաններով և ռազմամթերքներով լի բեռներ: Դրանով ուզում էին զգուշացնել, որ քաղաքում շատ զենք կա կուտակված:

Քաղաքի հայության մեջ խլրտումները ուժեղանում էին: Նահանգապետ Լուցաուն իր մոտ է հրավիրում Շուշիի քաղաքագլխին, մի շարք հայ պաշտոնյաների, համայնքների ներկայացուցիչներին, որոշ հոգևորականների և նրանց տեղյակ պահում, որ ինքը հրահանգ է ստացել «անողորմ լինել և կոտորել բոլոր դիմադրողներին»¹⁴: Ներկաներից մեկը բողոքում է նահանգապետին և նրան հիշեցնում, որ մինչև հիմա Շուշին կառավարության աչքում անվստահելի չի եղել և հիմա զարմանալի է, որ քաղաքը լցվել է գորքով ու ժողովրդին ստիպում են նրանց կերակրել:

Նահանգապետի հետ հանդիպումից մեկ ժամ անց քաղաքում սկսվեցին դժգոհությունները. փակվեցին խանութները՝ որոշելով չբացել մի ամբողջ շաբաթ: Շուկան փակվեց: Գրադարան, դումա, ակումբ գնացող չկար: Քաղաքի կյանքը կանգ առավ, ժողովուրդը փակվեց տներում: Կատաղած նահանգապետը կարգադրեց ցու-

¹² Նույն տեղում, նաև՝ **Ակնունի Է.**, նշվ. աշխ., էջ 218-221:

¹³ «Դրոշակ», 1903, N 8, էջ 119:

¹⁴ Նույն տեղում, 1903, N 9, էջ 135:

ցակագրել եկեղեցիների գույքը: Այն սկսվեց Ագուլեցոց եկեղեցուց: Այդ մասին իմանալով՝ ժողովուրդը թափվեց փողոց: Թեմակալի հրահանգով եկեղեցիները փակվել էին: Ամբոխը հանձնախմբին հեզնում էր ծաղրական բացականչություններով: Հանձնաժողովը հեռացավ դեպի կենտրոնական շուկա: Ժողովուրդը հետևեց նրան:

Հանձնաժողովը հասնելով Փոստի փողոց՝ թեքվեց ռեալական դպրոցի կողմը: Մոլեգնած ամբոխը գրոհեց այն հյուրանոցը, որտեղ իջել էր նահանգապետը: Քառեր էին նետում, ջարդում հյուրանոցի ապակիները: Սարսափահար նահանգապետի պահանջով կազակները հասան, և պայթեցին հրացանները: Ժողովուրդը պատասխանեց ատրճանակների կրակոցներով: Կռիվը հետզհետե սաստկացավ և լայնածավալ բնույթ ընդունեց: Կրակոցները շարունակվեցին մի քանի ժամ: Գիշերային ընդհարման ժամանակ սպանվեց մեկ արհեստավոր և վիրավորվեց ռեալականից մեկ աշակերտ: Կազակներից վիրավորվել էին 3 հոգի:

Սեպտեմբերի 10-ի առավոտյան թեմի առաջնորդարանը շրջապատվեց 200 կազակներով: Ոչ ոքի չէին թողնում մոտենալ, նույնիսկ դատարկել էին հարևան փողոցները: Նահանգապետը անստորագիր նամակ էր ստացել, որը զգուշացնում էր, թե խուզարկության ժամանակ ուժանակով օդ կհանվի եկեղեցին: Սակայն եկեղեցում ոչ ոք չկար, դռները փակ էին: Հանձնաժողովը կոնսիստորիայի անդամներից պահանջեց եկեղեցու բանալին, սակայն ստացան մերժում՝ պատասխանելով, որ կաթողիկոսական կոնդակի համաձայն իրավունք չունեն բանալի տալ: Կազմված հանձնախումբը սկսեց ջարդել եկեղեցու, դրամարկղի և դիվանատան դռները: Կազմեցին արձանագրություն, սակայն բնակչությունից ոչ մեկը չստորագրեց:

Երկու օր անց ժողովրդական հուզումները նվազել էին: Ոստիկանությունը փորձեց մի անգամ ևս ժողովրդին ցույց տալ իր «ուժը»: Կազակները խմբերի բաժանված՝ պտտվում էին հայկական թաղամասում: Նրանք խփում և ծեծում էին պատահած հայի: Զինված բռնության հանդեպ ազգաբնակչությունը ստիպված էր նահանջել, կրկին փակվել տներում, և մի քանի օր շարունակ քաղաքը գտնվում էր մեռյալ վիճակում: Ձերբակալվեցին ավելի քան 120 մարդ: Քաղաքական հանցավորներ ճանաչվեցին քաղաքի ռեալականը ու թեմականը, և անչափահաս բազմաթիվ աշակերտներ նետվեցին բանտ: Ձերբակալվեցին նաև տասնյակ մտավորականներ: Խուզարկություններին և ձերբակալություններին հաջորդեց աքսորը: Առաջին զոհը հանդիսացավ քաղաքագլուխ Բախշի Իշխանյանը: Քաղաքում մտցվեց գրաքննություն: Ամենուր վիստում էին ցարական լրտեսները: Թեմական դպրոցը փակվեց, քաղաքում մտցվեց ռազմական դրություն¹⁵: Երեկոյան ժամը 18-ից հետո քաղաք դուրս եկողները ձերբակալվում էին: Փակ էին բոլոր խանութները, դատարանը, քաղաքային ինքնավարությունը: Շատ ծանր և լարված դրություն էր: Լուր էր տարածվել, թե նահանգապետ Լուցաուի կարգադրությամբ գավառի թուրքերին զենք է բաժանվում և նրանց գրգռում հայերի դեմ¹⁶:

Արցախում ծայր առավ վրեժխնդրությունն ու ահաբեկչությունը: 1904 թ. սեպ-

¹⁵ Նույն տեղում, նաև՝ **Ակնունի Է.**, նշվ. աշխ., էջ 235-241:

¹⁶ «Դրոշակ», 1903, N 9, էջ 135-136:

տեմբերի 3-ին Շուշիում սպանվեց ցարական լրտես «Չուխուր» Արշակը, նույն թվականի դեկտեմբերի 15-ին դարձյալ Շուշիում՝ ռուսականապետ Սախարովը, 1905 թ. սկզբին՝ հարկային տեսուչ Շչերբակովը, նույն թվականի ապրիլի 28-ին՝ գավառապետի օգնական Ֆեոդորովը, հետո ժանդարմ Պողշիվալովը, գաղտնի ռուսական Խասինը, գանձարանի պաշտոնյաներ Բադինը և Կուպրունովը: Սպանվում են նաև Մատնիչ Իսրայելը և Շուշիի գավառում 6 վաշխառուներ¹⁷:

Արցախի թեմի առաջնորդ Գրիգորիս եպիսկոպոս Գառնակերյանը 1903 թ. հունիսի 12-ի ցարի հրամանագրից հետո Արցախի թեմի գլխավոր ուշադրությունը կենտրոնացնում էր խնդրի շուրջ և ջանքեր էր գործադրում խոհեմորեն կատարելու Խրիմյան Հայրիկի պահանջը՝ ինքնակամ ոչինչ չհանձնել հանձնաժողովին: Նա նույնը պահանջում էր թեմի եկեղեցիների հոգևորականներից: Նրա պահանջը կատարվում էր ամենայն ճշտությամբ: Գանձակից և Շուշիից բացի ընդհարումներ տեղի ունեցան նաև Նուխիում, Արեշում, Արցախի մի շարք բնակավայրերում, երբ հանձնաժողովը գնացել էր այդ բնակավայրերի՝ եկեղեցիների ունեցվածքը հաշվառելու:

Շուշիում տեղի ունեցած ընդհարումների համար նահանգապետը, գավառի պաշտոնյաները և ցարական ռուսականությունը մեղադրում էին թեմակալ առաջնորդին և կոնսիստորիայի անդամներին, Եկեղեցու սպասավորներին և մի շարք հասարակական-քաղաքական գործիչների: Թեմակալը և մյուս հոգևորականները մի կողմից պաշտպանում էին երկրամասի բնակչությանը, մյուս կողմից էլ նրանց հորդորում էին չօգտագործել զենք, լինել զուսպ և ձգտել հեռու մնալ ռուսականության ու զինվորականների հետ ընդհարումներից:

Առաջնորդ Գրիգորիս Սրբազանը բազմիցս բողոք էր ներկայացրել գավառապետին և ռուսականությանը ու պահանջել հրաժարվել բնակչության նկատմամբ իրագործվող բռնարարքներից: Սակայն ցարական պաշտոնյաները և ժանդարմերիան նահանջելու միտում չունեին: Քանի գնում, հակասությունները ավելի էին սրվում: Եկեղեցին և հասարակությունը դարձել էին մեկ միասնություն: Թեմակալ առաջնորդը այդ անօրինությունների դեմ պայքարելուց չէր կարող հրաժարվել: Թերևս դա էր այն հիմնական պատճառը, որը նրան ստիպեց հրաժարվել առաջնորդի պարտականություններից:

¹⁷ Նույն տեղում, 1902, N 2, էջ 31:

ԼԻԼԻԹ ՀԱԿՈՒՄՅԱՆ

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆԸ ԵՎ ԼԵԶՎԻ ԺՈՂՈՎՐԴԱՅՆԱՑՄԱՆ ՀԱՐՑԸ

*«Դեպի ժողովուրդը, դեպի բնությունը,
հայր՝ ց գրողներ...»¹:*

Այսպես հնչեց Թումանյանի թևավոր կոչը 1890-ական թվականներին հայ իրականության մեջ: Եվ այդ կոչն էլ դարձավ նրա ամբողջ ճանապարհի ուղեցույցն ու նշանաբանը: Այս մասին տարիներ անց Դ. Դեմիրճյանը պիտի գրեր. «Ժողովրդայնությունը դարձավ Թումանյանի թեորիան և պրակտիկան»²:

Թումանյանի ժողովրդայնությունը շատ լայն ու բազմակողմանի խնդիր է, որի հետ ուղղակի կամ անուղղակի կապվում է նրա ողջ ժառանգությունը:

Գուրգեն Սևակը, հայ գրական լեզվի պատմության մեջ մեծ տեղ հատկացնելով Հովհաննես Թումանյանի լեզվին, գրում է. «Հանրաձանոթ է, որ Հովհ. Թումանյանի լեզուն ժողովրդային է, բայց այդ ճշմարտությունը միայն տպավորության հետևանք է, և քանի որ դեռ գիտականորեն չի պարզված այդ տպավորության աղբյուրը, նա չի կարող սխալ հասկացվել ու մեկնվել»³: Եվ իրոք, 19-րդ դարի վերջում և 20-րդ դարի սկզբում քննադատների մեծ մասը Թումանյանի լեզվի ժողովրդայնությունը հակամետ էր բացատրելով «էս» ու «էն»-ով և բարբառային բառերով: Սա մի մեծ սխալ էր սակայն, որ, Սևակի խոսքերով ասած, «ճակատագրական նշանակություն ունեցավ մեր գրականության լեզվի համար, քանի որ բազմաթիվ հեղինակներ, ցանկանալով օգտագործել Թումանյանի հնարները՝ իրենց լեզվին ժողովրդայնության ոգի տալու նպատակով, աշխատեցին որքան կարելի է շատ գործածել բարբառային բառեր և ձևեր, գործածել նաև էս ու էն-ը: Բայց չհասան ցանկացած արդյունքին»⁴:

Լեզվի այն որակը, որ կոչվում է Թումանյանի կամ Թումանյանական լեզու, ձեռք է բերվել տարիների համառ ստեղծագործական աշխատանքի շնորհիվ: Թումանյանի լեզվի պատմության մեջ Գ. Սևակը առանձնացնում է երեք փուլ.

1. 1881-1887 թթ.
2. 1887-1900 թթ.
3. 1900-1923 թթ.

Ռաֆայել Իշխանյանը Թումանյանի լեզվի զարգացման հետևյալ շրջաններն է առանձնացնում.

1. 1880-ական թվականների առաջին կես՝ պատկանյանական-շահագիզյան լեզվի իշխանություն:
2. 1886-1889 թվականներ՝ ժողովրդաբարբառային խոսքի առատ օգտագործում՝

¹ Թումանյան Հ., Երկերի ժողովածու, Երևան, 1969, հ. 6, էջ 108:

² Դեմիրճյան Դ., Երկերի ժողովածու, Երևան, 1987, հ. 12, էջ 139:

³ Սևակ Գ., Ժամանակակից հայերենի համառոտ պատմություն, Երևան, 1948, էջ 82:

⁴ Նույն տեղում:

նախորդ լեզվառճին զուգահեռ:

3. 1890-ական թվականներ՝ վերադարձ դեպի պատկանյանական-շահագիզյան լեզուն, սակայն ժողովրդային խոսքի առանձին օգտագործումներով:

4. 1900-ական թվականների սկզբից մինչև կյանքի վերջը՝ բուն թումանյանական, ժողովրդայնացված գրական լեզվի շրջան:

Փաստորեն, Թումանյանի գրական գործունեության սկիզբը 1881 թ. է համարվում: Արամ Ինճիկյանը Թումանյանի ստեղծագործական կյանքի սկիզբը համարում է 1879 թ.՝ հիմք ընդունելով Բանաստեղծի վկայությունը՝ գրված 1905 թ. «Ինքնակենսագրության» մեջ. «Շատ վաղ եմ սկսել ոտանավոր գրել, - գրում է Թումանյանը: - 10-11 տարեկան ժամանակս Լոռիս-Մելիքովի վրա երգեր էին երգում ժողովրդի մեջ: Այդ երգերին տներ էի ավելացնում և գրում էի զանազան ոտանավորներ - երգիծական, հայրենասիրական և սիրային»⁵:

Սակայն այս տարիներում գրված ոչ մի հավաստի տող մեզ հայտնի չէ: Ամենահին Բանաստեղծությունը, որ հասել է մեզ, «Հոգուս հատորն» է (1881), ապա «Օրորքը» (1882), «Հայ վաճառականը», «Երբ որ կանցնի ձմեռն սաստիկ» (1883), «Ինչո՞ւ ես տխուր» (1884):

Այս Բանաստեղծությունները գրվել են Ջալալօղլիում աշակերտ եղած ժամանակ, իսկ այդ ժամանակ Թումանյանի համար Բանաստեղծություն գրել՝ նշանակում էր գրել դասագրքի լեզվով, կամ որ նույնն է, Պատկանյանի, Շահագիզի լեզվով: Այս մասին գրում է նաև ինքը՝ Թումանյանը. «Ութսունական թվականներն էին: Մեր կյանքում ռազմական փողի նման թնդում էին Գամառ-Քաթիպայի ազատ երգերը, վարար գետի նման հոսում էին Բաֆֆու վեպերը անընդհատ ու խորհրդավոր, մամուլի մեջ աջ ու ձախ շառաչալից մտրակում էր Գրիգոր Արծրունին, իսկ Թիֆլիսի թատրոնում զինվորական երաժշտությունը հնչեցնում էր «Ջեյթունցիների մարշը», և որոտում էր Ադամյանը»⁶:

Փաստորեն, «Հոգուս հատորը» տասներկուամյա աշակերտի առաջին չափածո թոթովանքն է, որի լեզուն թեև դասագրքինն է, ընդունված գրականը, Բայց միաժամանակ թումանյանական խոսքի գաղտնիքն է պարունակում, հստակն ու ժողովրդայինը գլխավոր են դարձել այս մի քանի տողի մեջ.

*Հոգուս հատոր
Մըրտիս կըտոր,
Դասիս համար
Դու մի՛ հոգար,
Թե կան դասեր
Կա նաև սեր,
Եվ ի՞նչ զարմանք
Իմ աղավնյակ,
Որ կենդանի
Մի պատանի
Մերը սրտում*

⁵ Թումանյան Հ., Երկերի ժողովածու, հ. 4, էջ 53:

⁶ Նույն տեղում, էջ 353:

Դաս է սերտում:

(Հովհաննես Թումանյան, հ. 1, էջ 427)

Մյուս բանաստեղծությունները հայրենասիրական են՝ գրված Պատկանյանի ազդեցությամբ, իսկ լեզուն էլ գրական՝ շահագիզյան-պատկանյանական է, օրինակ.

*Տարիք ու դարեր անցան,
Այլոց է լուռ ծառայող,
Այդ առթիվ դառնաճաճան
Վիճակն էլ կա անփոփոխ:*

(Հ. 1, էջ 431)

Այս բանաստեղծության շարունակվող տողերում ունենք նաև **գրկվեցավ, տեսանես, եղբարցդ, քաջաց դամբարան, խոցալից** և այլ բառաձևեր: Կան բռնի հոդագեղչումներ և շրջադասություններ, 60-ական թվականներին բնորոշ հանգեր՝ գլխավորապես պատկանյանական ձևի.

*Քեզ ինչ՝ անուսում մնան հայ որդիքը,
Թող նրանց դարդը քաշեն հայ մարդիկը...*

(Հ. 1, էջ 430)

1887 թվականին «Նոր դարում» հրատարակվում է Թումանյանի «Մի ավանդություն» վերնագրով հոդվածը և 12 մանրապատումներ: Հոդվածը գրված է ժամանակի ընդունված գրական լեզվով, իսկ մանրապատումների մեջ լռեցի հերոսների խոսքը բարբառն է, երբեմն աննշան գրականացված. հեղինակային խոսքը գրական լեզուն է: «Շունն ու կատուն» նույն շրջանի գործ է, բայց հեղինակային խոսքը շատ մոտեցված է բարբառին և քիչ բանով է տարբերվում «հերոսների» լեզվից: Այսպիսով, «Թումանյանը հայտնագործում է, որ ոտանավորներ կարելի է գրել ոչ միայն դպրոցի, դասագրքի՝ պատկանյանական-շահագիզյան լեզվով, այլ նաև Լոռվա բարբառով կամ նրան մոտ լեզվով»⁷:

1887 թ. գրված բանաստեղծությունների նախնական տարբերակներին ծանոթ չենք, այդ ոտանավորները պահպանվել են 1890-91 թթ. հրապարակված տարբերակներով: Դրանց լեզուն գրական է, բայց ժողովրդայնության զգալի տարբերով: «Գութանի երգը» բանաստեղծությունում իշխում է գյուղացու կենդանի լեզվի ոգին՝ ժողովրդաբարբառային առանձին լեզվատարբերով (խոփիդ դուրբան, քաշի եզր, ուսիդ մատաղ): Բայց ընդհանուր առմամբ սա «Շունն ու կատուն» լեզուն չէ, այլ շատ ավելի մոտ ընդունված գրականին: Գ. Սևակը Թումանյանի լեզվի զարգացման այս շրջանի մասին գրում է. «Բարբառով է, բայց ոչ բարբառային: Այստեղ չնչին է գրական տարբեր»⁸:

1890-ական թվականների շեմին Թումանյանը «վայրենի» լեզվից հրաժարվեց ու

⁷ Իշխանյան Ռ., Արևելահայ բանաստեղծության լեզվի պատմություն, Երևան, 1978, էջ 224:

⁸ Սևակ Գ., Ժամանակակից հայերենի համառոտ պատմություն, էջ 85:

անցավ «քաղաքակիրթ» լեզվի գործածությանը՝ զոհելով այն թարմը, աշխույժը, որ գրական ասպարեզ էր հանում: Ահա այդ շրջանի սիրային բանաստեղծությունից մի հատված.

*Ների՛ր, ո՛վ կույս, որ հուզեցի
Խաղաղ կուրծքդ կուսական,
Մեղստո սրտով ես չուզեցի
Կործանել քո ասպզան:*

(Հ. 1, էջ 19)

Բանաստեղծի վկայությամբ, իր վրա ազդել է 1887 թ. «Հյուսիսափայլի» հավաքածուի ընթերցումը: Այս մասին նա գրում է. «Սրանով էլ պետք է բացատրել այն երևույթը, որ իմ էն ժամանակներում գրած ու 1890-92 թթ. Մոսկվայում տպած ոտանավորների մեջ պատահում են «Հյուսիսափայլի» ոչ միայն ոճերն ու դարձվածքները, այլ մինչև անգամ բառերն ու բառերի ձևերը»⁹:

Այսպիսով, Թումանյանը նախապես գրել է ժամանակի գրական չափածոյին հատուկ լեզվով, ապա 1886-87 թթ. զուգահեռաբար ստեղծագործել նաև բարբառով, կիսաբարբառով կամ ժողովրդայնացված գրականով, բայց շուտով նորից սկսել է գրել գերազանցապես գրական-լրագրային ընդունված լեզվով: Նույն շրջանում գրած պոեմները, այդ թվում «Լոռեցի Սաքոյի», «Անուշի» և «Մարոյի» նախնական տաբերակները նույնպես այդ լեզվատոճական որակն ունեն: Ահա հատվածներ այդ պոեմների առաջին տաբերակներից.

«Լոռեցի Սաքո»

*Այն Լոռու ձորն է, ուր հանդիպակաց
Ժայռերն ամեհի նոթերը կիտած,
Դեմ ու դեմ կանգնած համառ ու անթարթ
Հայացքով իրար նայում են հանդարտ:
Սև ծովի նման մլարը կանգնած
Գրկում է նրանց կուրծքը կախ ընկած,
Որ կարծես ահա հենց այս վայրկյանին
Վայր կընկնեն անահ անցվորի գլխին:*

(Հ. 2, էջ 302-303)

«Անուշ»

*Այն մի հայացքով պատանի Սարոն
Գրկեց Անուշի պատկերը հոգով,
Այնինչ գեղեցիկ Անուշը նրան
Սիրեց կուսական առաջին կրքով:
Բայց հազար ափսոս, առաջին անգամ
Երբ մարդու սրտում զարթնում է սերը,
Նրա հետ իսկույն սատանայական
Հայտնվում են և կյանքի հոգսերը:*

⁹ Թումանյան Հ., հ. 4, էջ 336-337:

(Հ. 2, էջ 325)

«Մարո»

*Մեր գյուղն այն է, ուր հպարտ
Լեռների մեջ միգապատ,
Խոր ձորերի քարափին
Ձեռքը դրած ճակատին
Մտածում է տխրադեմ,
Ի՛նչ է ուզում՝ չգիտեմ...*

(Հ. 2, էջ 291)

Ուշագրավ է այն փաստը, որ այս երեք պոեմներից ավելի պատկերավոր-գրքային լեզու ունեցել է «Անուշը» և հետագայում էլ ամենաարմատական մշակման ենթարկվել է այն:

1900-1903 թվականների ընթացքում Թումանյանը լիովին ազատվեց իր ներշնչանքին անհարազատ լեզվի և ոճի կաշկանդումներից և ընթերցողի հետ խոսեց իր ստեղծագործական խառնվածքին բնորոշ լեզվով: «Մայաթ-Նովայից հետո այդպիսի մեծ լուսաստու չէր ծագել հայ գրականության երկնակամարում»¹⁰, - այսպես է գնահատում Թումանյանի լեզվի այս որակը Ռ. Իշխանյանը:

Դեռևս 1890-ական թվականների երկրորդ կեսին, հատկապես վերջերին բանաստեղծի հակումը դեպի ժողովրդային խոսքը մեծանում էր: Նա այդ ժամանակ գրել է ժողովրդային գրական լեզվով որոշ գործեր, բայց լիակատար հեղաշրջումը կատարվել է 1900 թվականից հետո: Նույն ժամանակագրությամբ էլ ձևավորվել է Թումանյանի տեսությունը գրականության լեզվի ժողովրդայնության վերաբերյալ. «Լեզուն է ամեն մի ժողովրդի ազգային գոյության ու էության ամենախոշոր փաստը, ինքնությունության ու հանճարի ամենախոշոր դրոշմը, պատմության ու հեռավոր անցյալի կախարդական բանալին, հոգեկան կարողությունների ամենաճոխ գանձարանը, հոգին ու հոգեբանությունը»¹¹, - գրել է Թումանյանը:

Խորապես մտահոգված ժամանակի գրական լեզվում տիրող հակասական ու շփոթ դրությունից՝ Թումանյանը նշում է ժամանակի գրական լեզվում գերակշռող միտումը՝ ժողովրդի խոսակցական լեզվի «ընտիր բառերի, սեղմ ու սերտ պատկերավոր ոճերի, պարզ ու շքեղ ձևերի» օրինականության ընդունում և դրանց թափանցում գրականության մեջ: Եվ միանգամայն համոզված իր իրավացիության մեջ՝ նա հանգում է խոշոր ընդհանրացումների՝ գրելով. «Եվ էսպես, հայոց գրական լեզվի խնդիրը զանազան շրջաններ անցնելուց հետո, վերջնականապես պիտի վճռվի ժողովրդական լեզվի կատարյալ հաղթանակով, ժողովրդական լեզվի հաղթանակը պիտի պսակվի ազգային ուժեղ գրականությամբ, իսկ ազգային ուժեղ գրականություն կնշանակի՝ ինքնություն ու հզոր ժողովուրդ»¹²:

Գրական լեզվի կազմավորման հարցում Թումանյանն ընդգծում է նաև հայ բարբառների որոշիչ նշանակությունը. «... հավաքել հայոց բարբառների, բովանդակ հայության լեզվական գանձերը, բառերն ու ոճերը, ամբարել, ուսումնասիրել ու օգ-

¹⁰ Իշխանյան Ռ., Արևելահայ բանաստեղծական լեզվի պատմություն, էջ 232:

¹¹ Թումանյան Հ., հ. 4, էջ 370:

¹² Նույն տեղում, էջ 380:

տագործել, կազմել հայոց կենդանի լեզվի բառարանը, ստեղծել հայոց ազգային գրական լեզուն»¹³։ Թումանյանը չի թերագնահատում նաև գրաբարի դերն ու նշանակությունը հայ ժողովրդի հոգևոր մշակույթի, հատկապես նրա լեզվի զարգացման խնդրում և համոզված է՝ կատարյալ գրական լեզուն կլինի ժամանակի գրականության լեզվի, ժողովրդական բարբառի և գրաբարի ներդաշնակ զուգակցումը, սակայն լեզվի զարգացման ու թարմացման հարցում առաջնային է համարում ժողովրդական գունեղ ու հարուստ բարբառները, քանի որ, ըստ Թումանյանի՝ հայ ժողովրդի լեզուն խարսխված է մեկ ընդհանրության՝ բարբառի վրա. «...հայ ժողովրդական բարբառները մի լեզու են և հայտնաբերում են մի ամբողջական հայություն»¹⁴։

Գուրգեն Սևակը Թումանյանի լեզվի պատմության այս նոր փուլը անվանում է բեկման շրջան։ Լեզվական այս նոր որակը, որ կոչում ենք թումանյանական, էապես տարբերվում է 1890-ական թթ. հրապարակած երկերի լեզվից։ Ակնհայտորեն տարբեր են նաև 1890-ական և 1900-ական թվականների «Մարոյի», «Անուշի» և «Լոռեցի Սաքոյի» տարբերակների լեզվական առանձնահատկությունները։

Այս շրջանում թումանյանական լեզվի ամենից ավելի ակնհայտ երևացող առանձնահատկությունը **էս, էդ, էն**-ի ու նրանցով կազմված բառերի գործածումն է **այս, այդ, այն**-ի փոխարեն։ Թումանյանը փորձել է տեսականորեն հիմնավորել այդպիսի բառերի գործածությունը, և նրա գլխավոր փաստարկն այն է, որ **այս, այդ, այն**-ը չկան ժողովրդական կենդանի հայերենի (բարբառ, միջբարբառային խոսակցական և այլն) որևէ տարբերակում, մինչդեռ **էս, էդ, էն**-ը գործածական են հայ ժողովրդի մի մեծ հատվածի խոսվածքներում։ Բավական էր, որ բանաստեղծը 1890-ական թվականներին գրած «Այն Լոռու ձորն է» դարձներ «էն Լոռու ձորն է», կամ «Մեր գյուղն այն է» դարձներ «Մեր գյուղն էն է», որպեսզի նոր երանգ զգացվեր նրա լեզվի մեջ՝ ժողովրդայնության երանգը։ Սենեքերիմ Մելքոնյանը «Թումանյանի պոեզիայի լեզուն և ոճը» գրքում «Անուշ», «Մարո» և «Լոռեցի Սաքո» պոեմներում նմանատիպ բառերի 250 անգամից ավելի գործածության դեպքեր է նշում։ Իրականում բարբառային բառերը և **էս** ու **էն**-ը ժողովրդայնության ոչ թե իսկական հատկանիշներն են, այլ խաբուսիկ ցուցանիշները, քանի որ Թումանյանի երկերը առանց **էս** ու **էն**-ի և բարբառային բառերի էլ ունեն չգերազանցված ժողովրդայնություն՝ մնալով գրական լեզվի մակարդակին։ Ահա մի հատված «Անուշից».

*Օխտն աղբյուրից ջուր է առել
Կույս սափորով, լուռ ու մունջ,
Օխտը ծաղկից ծաղիկ քաղել
Կապել սիրո ծաղկեփունջ։*

Արդյո՞ք այս հատվածին ժողովրդայնություն է տալիս «օխտը» բառը. չէ՞ որ այստեղ կան բառեր, որոնք ոչ մի բարբառում էլ չեն կարող լինել՝ կույս, սափոր, ծաղկեփունջ, աղբյուր։ Ժողովրդայնություն տվող բառերը չեն, այլ հարազատ, ժողովրդային լեզվամտածողությունը, պարզ, ոչ շինծու լեզուն, որ տրվում է հարազատ ժողովրդի կենդանի խոսքի ուշադիր զննումով և հմուտ օգտագործմամբ. «Յոթն աղբ-

¹³ Նույն տեղում, էջ 397։

¹⁴ Նույն տեղում, էջ 419։

յուրից ջուր է առել», «յոթը ծաղկից ծաղիկ է քաղել» և այլն, ահա սրանց նման արտահայտությունները, բուն ժողովրդական պատկերավորումներն ու դարձվածներն են ապահովում լեզվի ժողովրդայնությունը, բայց ոչ երբեք բարբառային բառերը», - գրում է Գուրգեն Սևակը:

Այսպիսով, թեև **էս** ու **էն**-ը թումանյանական լեզվի ամենից ավելի հեշտ նկատվող տարրերն են, բայց ամենակարևորը չեն. բանաստեղծի լեզվի ժողովրդայնության մի շարք գործոններ ևս շատ կարևոր են: Այդպիսի գործոններից է Թումանյանի լեզվում ժողովրդի կենդանի լեզվից եկող բառապաշարային ամբողջ զանգվածը, որը կարելի է մի քանի շերտերի բաժանել.

1. Ժողովրդաբարբառային այն ձևերը, որոնք ունեն գրական ձևավորմամբ գուգահեռներ՝ **հեք, մեք, ձեռ, լեն, ախալեք, օխտն, աշխարհք, նոթեր, դժար, արնոտ** և այլն:

2. Բառապաշարի այս շերտում կենդանի խոսքից առնված այն բառերն են, որոնք գրական լեզվի հասարակական զգացողությանը մասամբ կամ լիովին ներհակ են, բայց որոնք անհրաժեշտ են եղել բանաստեղծին լեզվի ժողովրդայնացման ամբողջ համակարգում: Այս բառաշերտը Թումանյանի գործածած ժողովրդաբարբառային բառերի մեծագույն մասն է ընդգրկում և իր մեջ բաժանվում է ենթաշերտերի.

ա) Միաշեշտ բառեր. **նան, ամպշող, պուճախ, չոբան, դոնադ:**

բ) Կրկնավորներ. **ձեն-ձուն, վաշ-վուշ, թելիկ-մելիկ, ահել-ջահել:**

գ) Հարադրություններ, դարձվածքներ, ժողովրդային ասույթներ:

Թումանյանի լեզվի ժողովրդայնության շատ կարևոր բաղադրիչներ են հարադրությունները, դարձվածքները, ասույթներն ու ասացվածքները: Ահա դրանցից մի քանի նմուշներ. ականջ արա, մեյդան բաց արեք, ծաղրատեղ դառար, աչքս խավարի, ձեն եմ տալի, մագդ կտրած, տարած ետ բերած և այլն: Բացի սրանցից, Թումանյանի խոսքի շատ հատվածներ կապված են ազգային ավանդույթների հետ: Օգտվելով տարբեր բարբառներով գրի առնված ժողովրդական նյութերից ու լեզվական ատաղձից՝ գրողն ընթացել է ո՛չ թե մեկ, ասենք՝ Լոռու, ո՛չ էլ տարբեր բարբառների պարզ համադրման սկզբունքով, այլ ժողովրդական մտածողության ձևերին խարսխված գրական լեզվով: Այս մասին հենց ինքը՝ Թումանյանը գրում է. «Ոմանք կարծում են, թե եթե երբեմն Լոռուցն եմ առնում գրվածքիս նյութը կամ էս, էն ձեն եմ գործածում, ուրեմն Լոռու բարբառով եմ գրում: Չարաչար սխալվում են: Ինչպես նյութի, էնպես էլ լեզվի վերաբերությամբ ես ինձ միանգամայն ազատ եմ համարում և օգտվում եմ ամեն տեղից»¹⁵:

Թումանյանի լեզվի ժողովրդայնության ամենակարևոր գործոններից մեկն էլ ժողովրդական ստեղծագործությունների՝ հեքիաթների մշակումն է: Անահիտ Վարդանյանը իր «Հովհաննես Թումանյանի հեքիաթները» գրքում փաստարկներ է բերում այն մասին, որ Թումանյանը բանահյուսական զանազան ժողովածուներից նախապես հավաքում էր ժողովրդական լեզվին բնորոշ բառեր ու արտահայտություններ՝ հետագայում իր հեքիաթներում օգտագործելու նպատակով: Այդ է պատճառը, որ «Հովհաննես Թումանյանի հեքիաթներում ժողովրդախոսակցական կենդանի խոսքը շողշողում է իր անխարդախ երանգներով, իբրև խոսուն վկա նրա բա-

¹⁵ Նույն տեղում, էջ 402:

նաստեղծական անհատնում հնարավորությունների»¹⁶։ Թումանյանի հեքիաթները լի են նաև ժողովրդական առածներով, ասացվածքներով ու թևավոր արտահայտություններով, ինչպես, օրինակ, «Մարդ ինչ անի, իրեն կանի», «Լավություն արա ու թեկուզ ջուրը գցի, չի կորչի», «Ով ուզում է հաց ուտի, պետք է աշխատի» և այլն։ Սրանցից բացի Թումանյանի հեքիաթները համեմված են նաև ժողովրդախոսակցական լեզվի «աղը» հանդիսացող յուրահատուկ պատկերներով՝ օրինանք, բարեմաղթություն, հորդոր, հանդիմանություն, սպառնալիք, անեծք, ինչպես «Ապրած կենաս», «Աստված օրհնի», «Մուրազդ Աստված կատարի», «Այ Աստծու բարին քեզ, բարով, հազար բարով եկար», «Վա յ, քու դեսը դրկողի վիզը կոտրի», «Քու տունը քանդվի» և այլն։

Ժողովրդայնության ոչ պակաս կարևոր գործոն է խոսքի սեղմությունը։ Թումանյանի ստեղծագործություններին հատուկ չեն բազմաբարդ նախադասությունները, ճոխ մակդիրները, մանրակրկիտ նկարագրություններն ու մանվածապատ-վերամբարձ ռճր։ Այս մասին նա գրում է. «Մարդ ինչքան թեթևություն է զգում, երբ ահագին կտորները ջնջում է և դուրս բերում մի սեղմ, կոկիկ երկտող»¹⁷։ Որպես ասվածի վկայություն՝ բերենք «Գառնիկ ախպեր» հեքիաթի բնագրի վրա կատարած Թումանյանի մշակումներից մեկը։ 1905 թ. տպագրվում է այսպես.

*-Ա՛խ իմ մանուկ, որք ու անտեր,
Իմ անլեզու Գառնիկ ախպեր,
Էլ ո՞նց անեմ, ի՞նչ անեմ ես...-
Կանչում է խեղճ Մանուշն էսպես,
Վա յ է տալիս,
Լալի՛ս, լալի՛ս...*

1909 թ. հրատարակության մեջ այս հատվածից մնացել է միայն այս երկտողը.

*Խեղճ Մանուշը վայ է տալիս,
Վայ է տալիս, լալի՛ս, լալի՛ս:*

Փաստորեն՝ Թումանյանը անընդհատ աշխատել է իր հեքիաթների վրա, մշակել ու վերամշակել դրանք, տքնել յուրաքանչյուր դրվագի ու հատվածի վրա՝ հավատարիմ իր սկզբունքին. «Ես ջնջելական եմ, սեղմություն եմ սիրում»¹⁸։ Իսկ լեզվի նկատմամբ գրողի այս խստապահանջությունը գալիս էր այն համոզումից, որ «...ամեն մի հնչյուն, ամեն մի բառ, ամեն մի ձև կամ ոճ մի մեծ ստեղծագործություն է ու մի ամբողջ աշխարհ»¹⁹։

Այսպիսով, Թումանյանը իր երկերում, ժողովրդային խոսքը մեծ չափով գործածության մեջ դնելով, հաղթահարել է գրական լեզվի մեջ եղած արհեստականությունը, լրագրայնության հատկանիշները, բայց ոչ գրական լեզուն, որը իր կառուցված-

¹⁶ Վարդանյան Ա., Թումանյանի հեքիաթները, Երևան, 1971, էջ 166:

¹⁷ Նույն տեղում, էջ 45:

¹⁸ Նույն տեղում, էջ 79:

¹⁹ Թումանյան Հ., Երկերի ժողովածու, հ. 4, էջ 375:

քով և շատ ուրիշ հատկանիշներով ապրում է Թումանյանի խոսքում, միայն դա այլևս շահագիզյան-պատկանյանական լեզուն չէ, այլ լեզվական մայր հողից ուժ ու հյութեր առածը: Օրինակ՝ «Անուշում» քիչ չեն այնպիսի հատվածներ, որոնց լեզուն ամեն ինչով խստորեն գրական է, բայց ժողովրդաբարբառային այս կամ այն բառի, արտահայտության գործածությամբ խոսքը ստացել է թումանյանական իր երանգը.

*Կանչում է կրկին, կանչում անդադար
Էն չքնաղ երկրի կարոտը անքուն,
Ու թներն ահա փռած տիրաբար
Թռչում է հոգիս, թռչում դեպի տուն:*

(Հ. 2, էջ 46)

Այս հատվածում միայն մեկ բառ կա ժողովրդախոսակցական երանգով՝ «էն», սակայն այստեղ առկա է, այսպես կոչված, «ներքին ժողովրդայնությունը»: Երբեմն այդպիսի մեկ բառ էլ չի լինում և հատվածը կառուցվում է զուտ գրական բառօգտագործմամբ: Ահա մի օրինակ.

*Ողջո՛ւյն ձեզ, կյանքիս անդրանիկ հուշեր,
Որբացած հոգիս ողջունում է ձեզ,
Թռչում կարոտով, փնտրում ձոր ու լեռ,
Դյուրական ձայնով կանչում է հանդես:*

(Հ. 2, էջ 49)

Ամփոփելով այս բոլորը՝ կարող ենք ասել, որ Թումանյանի ստեղծագործությունների լեզուն շատ կողմերով գրական հայերենն է, և այդ լեզվի հագեցումը ժողովրդային խոսքով որակապես մեծացրել է նրա գեղարվեստական ընդգրկումը: Գրականի և ժողովրդաբարբառայինի միաձուլումը կատարված է ստեղծագործորեն, արվեստի տաղանդի զորությամբ և ստացված ամբողջությունը թումանյանական լեզվի գեղագիտական որակն է: Այդ լեզվով էլ ստեղծվեց հայ նոր գրականության քնարական և քնարափիլիսոփայական ամենաուշագրավ հատվածներից մեկը՝ Թումանյանի քնարերգությունը և նրա կազմում հատկապես Թումանյանի քառյակները: Այս մասին Ռ. Իշխանյանը գրում է. «Թումանյանի քառյակներն իրենց արտահայտած խոհերով զարմանալիորեն միասնական են, նրանց բոլորի բովանդակության հսկայական բազմազանությունը միաժամանակ չափազանց միասնական է իբրև մի մեծ, ամբողջական մտածողության տարբեր դրսևորումներ»²⁰:

Թումանյանի քառյակների լեզուն ժողովրդայնության տեսակետից նույն մակարդակի վրա է, ինչ որ նրա մյուս լավագույն երկերին: Քառյակներում չկա **այս, այդ, այն**-ի և նրանցով կազմվածների գործածության և ոչ մի դեպք: Հաճախ այստեղ ժողովրդային խոսքի տարրերը վճռական դեր են կատարում քառյակը կառուցելու գործում, օրինակ.

-Էս է, որ կա... Ճիշտ ես ասում, թասդ բեր:

²⁰ Իշխանյան Ռ., Արևելահայ բանաստեղծական լեզվի պատմություն, էջ 252-253:

Էս էլ կանցնի՝ հանց երազում, թասդ բեր:

Կյանքն հոսում է տիեզերքում զնգալեն,

Մեկն ապրում է, մյուսն ըսպասում, թասդ բեր:

Այստեղ «թասդ բեր» արտահայտությունը գլխավոր դեր ունի. այն տողերի գլխավոր հանգակագմիչն է և միաժամանակ պահպանում է ամբողջ քառյակի յուրովի կենսության ու բարձր, նաև իմաստասիրական տրամադրությունը:

Թումանյանի ստեղծագործություններից բազմաթիվ արտահայտություններ, բառեր, անուններ, վերնագրեր մտան հայերեն խոսակցական, նաև գրավոր լեզվի մեջ: Բանահյուսական մի շարք անուններ ու ասույթներ էլ Թումանյանի երկերի շնորհիվ հաստատվեցին ամենօրյա հայերենի մեջ և կազմվեցին արտահայտություններ թումանյանական խոսքերի ազդեցությամբ, հիշենք դրանցից մի քանիսը. «Բանը հասավ դիվան բաշուն», «Գող փիսո», «Քաչալ շուն», «Մի զրո չոբան», «Մահը մերն է, մենք մահինը», «Գործն է անմահ», «Մի լինի ուրագի պես», «Մի տուն լիքը մանուկներ» և այսպես շարունակ:

Թումանյանական հերոսների ու երկերի անուններն էլ գործածվում են որևէ մեկին բնորոշելու համար, ինչպես՝ Չախորդ Փանոս, Քաջ Նազար, Ձենով Օհան, Բազազ Արտեմ կամ նաև «Իրար հետ շուն ու կատու են», «Եղավ Կիկոսի մահը», «Իսկական Բազազ Արտեմ», «Չարի վերջն էդ է», «Դառավ մի կաթիլ մեղրը» և այլն:

ՏԵՍԱԿԵՏ

ՄԱՐԻԱՄ ՌԱՖԻԿԻ ՇՈՒԻՆՅԱՆ

Բանասիրական գիտությունների թեկնածու

ԱՔԵՂԱՆ ԵՎ ԿՈՒՅՐ ՎԱՆԱԿԱՆԸ ԼԵՎՈՆ ՇԱՆԹԻ «ՀԻՆ ԱՍՏՎԱԾՆԵՐ»-ՈՒՄ

Լևոն Շանթի «Հին աստվածները» դրամայում Աբեղան կուսակրոն հոգևորական է: Վանահայրը նրան նախապատրաստում է ամենախոր հոգևոր ծառայության: Աբեղան դեռ ելու է, քանի որ հոգու խորքում ալեբախումներ չունի: Ծովի և Սեդայի սիմվոլով Շանթն իր հերոսին ենթարկում է փորձության. առաջին իսկ շփումը կյանքի և կնոջ հետ ավարտվում է Աբեղայի պարտությամբ: Զարթնում է մարդու երկակի բնույթի մութ կողմը, զարթնում է կյանքը վայելելու անհագ տենչը, ասել, թե պարտվում է մարդու երկակիության մյուս երեսը՝ բանականն ու լուսավորը, ճիշտ չէ, քանի որ Աբեղան դեռ շատ է երիտասարդ՝ սեփական արարքներն ու մտքերը կառավարել կարողանալու համար: Նա փորձում է վերաիմաստավորել մինչ այդ իր ապրածը՝ նոր-նոր ոտք դնելով գիտակցական կյանքի շեմին, բայց կենսափորձը շատ փոքր լինելով՝ նա խճճվում է որոնումների լաբիրինթոսում: Իսկ հոգում խուլ գվվում է մի տարերք՝ նման հսկայական լեռները փլուզման սպառնացող ընդերքում գալարվող ջրի, հոգու փլուզում, որի տակ կմնա հենց տերը: Նրա հոգում արթնացել է կյանքը ճանաչելու և վայելելու հսկա մի տենչ: Եվ որ ամենաահավորն է, նա հստակ չի գիտակցում, բայց ներքին ձայնով զգում է, որ ինքը կյանքի կրկեսում պարտվողներից չի լինելու, նա զգում է իր ներքին ուժն ու կարողությունը՝ դիմակայելու գոյության կռիվում և **հաղթելու**: Մական երիտասարդ հասակը նրան հնարավորություն չի տալիս սթափ ընտրություն կատարելու. նա շարունակ կասկածում է, քանի որ Վանահորն աշակերտելով՝ նրա քարոզներն ընդունել է որպես ճշմարտություն: Աբեղայի հոգու տառապանքը Շանթը վեր է հանում հրաշալի գուգորդումներով՝ հոգեվերլուծության ամենագործածական եղանակներից մեկով, երբ ինչ-որ իրավիճակում գուգորդումներ են ծնվում անձի մեջ, որոնք աստիճանաբար «դուրս են նետում» հոգու ամենագաղտնի անկյունում թաքնվածը: «**Աբեղան - (Խաչին առջև ծունր իջնելով) Ես կորսված մեղավոր մըն եմ, փրկե՛ ինձի, Տե՛ր. ես ինկած հանցավոր մըն եմ, օգնե՛ ինձի, Տե՛ր. մեղքի մեջ խեղդվող մըն եմ, բռնե՛ ձեռքես, Տե՛ր: Տե՛ս, մեղքի ծովուն մեջ, մեղքի ծովուն մեջ, ծովուն, ծովուն...**»¹:

Աղոթքի իրար հաջորդող բառերի միջև մեղքի ծովը ծնում է մեկ այլ գուգորդում՝ կյանքի ծովը: Աբեղային հոգու խորքում ձգում է **կյանքի ծովը**. Շանթը հոգեվերլուծությամբ դուրս է հրում այս թաքնված մոտիվը: Սեդային հանդիպելով՝ Աբեղան **հասկանում է**, որ իր կյանքը դարձել է մի մեծ կշեռքի երկու նժար, որոնցից մեկին դրված է կյանքն իր փոթորիկներով ու Սեդայով, իսկ մյուսին՝ այն ուղին, որով իրեն

¹ Լևոն Շանթ, Երկեր, Երևան., 1989 թ., էջ 369 (հաջորդ մեջբերումների էջերը կտրվեն տեղում):

ուզում է առաջնորդել Վանահայրը: Թե ինչ կա Վանահոր ցույց տված ուղու վերջում, դա հասու չէ Աբեղային, դրան նա հասնելու է տարիների՝ ձնագնդի պես գլորվելով և փորձի ահագնանալով: Իսկ ներկա պահին մարդու հոգում զարթնել են պղտոր բնագոյները:

«Աբեղան - Ահա՛ եկեր եմ քեզի ըսելու, որ սխալ ես:

Վանահայրը - (Ահաբեկ ու ապշած) Իսկ դո՞ւն, իսկ դու՞ն ատիկա ուրկե գիտես:

Աբեղան - (Յած ու խորհրդավոր) Ես, ես տեսա՛:

Վանահայրը - Տեսա՞ր, դո՞ւն, իմ մե՞ջս. ինչպե՞ս տեսար:

Աբեղան - Քո՛ւ մե՛ջդ, ինչպես թե՛ քու մեջդ: Ոչ՛. ես տեսա հո՛ն՝ դուրսը» (էջ 402):

Հոգեբանորեն լիովին համոզիչ է այս գուսպ երկխոսությունը. Աբեղան ի վիճակի չէ հասկանալու Վանահորը, իսկ Վանահայրն էլ ահաբեկված է, թե իր ներսում են տեսնում պղտոր բնագոյները: Մինչ կյանքի ծովը մագնիսի պես դեպի իրեն կձգեր Աբեղային, նա դեռ հոգեկան տուրքառումների մեջ է: Նրան տանջում է ներքին Կասկածը՝ հոգում զարթնած հարցադրումներին և զգացմունքներին հստակ պատասխանելու դատապարտված եսենինյան «սև մարդը», կարամագովյան սատանան, շեքսպիրյան ուրվականը, ներքին հավատաքննիչը, երկրորդ, երկփեղկված ես-ը՝ Ճերմակավորը: Մեծ անհատականություններին բնորոշ է երկփեղկված էությունականությունը, որն արվեստում հիմք է ծառայում կերպարի ողբերգականության համար: Աբեղայի ողբերգությունն ի՞ր մեջ է, իր հոգեկան կերտվածքի, ներքին անհաշտ որոնումների, հակասական բախումների՝ Աբեղա - Կասկած = Ճերմակավոր, հոգեկան պառակտման մեջ: Հոգևոր ծառայության համար ընտրվածները բացառիկներ են լինելու: Հ. Թումանյանի «Մերժած օրերի» գլխավոր կերպարը շատ բանով հիշեցնում է շանթյան Աբեղային: Երկուսն էլ ձևավորվում են նույն միջավայրում, ունեն հոգեկան նույն ալեկոծումները, նույն տառապանքը. պատճառը պետք է փնտրել անձի հոգեկան խառնվածքում. չէ՞ որ նրանց շուրջ անթիվ-անհամար «Աստծո սպասավորներ» կան, որոնց հոգիներն անխռով են, առանց այս աստիճանի ալեկոծումների: **Ողբերգականությունը անձի ներանձնային հոգեկան որակ է,** որով պայմանավորվում է տվյալ անհատի վարքը, **նման անձը սեփական կամքով ինքն է ընտրում իր ճակատագիրը,** որն այլ կերպ լինել չի կարող, քան **ողբերգական:**

Շանթի կերտած Աբեղան ճշմարիտ գեղարվեստական կերպար է, որի խորքում ողբերգականի գեղագիտական կատեգորիան է իշխում: Աբեղայի երկփեղկված երկրորդ ես-ը նրանից պահանջում է մեկ հարցի պատասխան. ո՞րն է կյանքի իմաստը: Ի վերջո, ի՞նչ է փնտրում ինքը, ինչո՞ւ պետք է հետևի Վանահորը կամ ինչո՞ւ չպետք է հետևի: Հոգեվերլուծական գուգորդումներով Շանթը կերպարին կանգնեցնում է նոր փաստի առջև. նա ճգնավորի փորած փոսի մոտ է, փոս, որը աշխատանքի հետևանք է, տքնաջան, տևական, անընդհատ, անդուլ աշխատանքի հետևանք: Ողջ կյանքի սիմվոլիկ պատկերն է սա՝ տքնաջան աշխատանք, որի նպատակն ու իմաստը կարելի է ամփոփել Գառնու տաճարի բաղնիքի խճանկարի հունարեն լակոնիկ արձանագրությամբ. «Աշխատեցինք՝ ոչինչ չստանալով»²: Ճգնավորը բացատրում է Աբեղային կյանքի իմաստը... Բայց այդ ո՞ր փիլիսոփան է կարո-

² Հ. Ժամկոչյան, Ա. Աբրահամյան, Ս. Մելիք-Բախշյան, Ս. Պողոսյան, Հայ ժողովրդի պատմություն, Երևան., 1975 թ., էջ 209:

ղացել մարդկության պատմության դարավոր քառուղիներում միանշանակ և անսխալ պատասխանել այդ հարցին: Իսկ ո՞վ է ճգնավորը, որ կարողանա պատասխանել այդ հարցին: Եթե Աբեղա (Ճերմակավոր)-ից մինչև Կույր վանական (Ճերմակավոր) միևնույն կերպարի հասունացման շղթան փակվում է սկզբնական և վերջնական ծայրերը միացնելով և ստանալով մի փակ բեկյալ, ապա այդ բեկյալն սկսողն ու փակողը հենց ճգնավորն է. երևոյթն արտահայտվում է այսպես. Աբեղա (Ճերմակավոր) (Վանահայր (Ճերմակավոր)) (Կույր (Ճերմակավոր)) □ ճգնավոր:

Ճգնավորի սիմվոլ-նշանային պատկերի տակ թաքնված է կենսափորձով իմաստնացած մեկը, որն իր լեռան բարձունքից նայում է վար նայողի հոգեբանությամբ: Ճգնավորն իր փորձը պարզում է երիտասարդի առաջ. *«...փորեք եմ ու որոնեք տակեն բան մը գտնելու համար, կարևոր բան մը. այդ մի՛շտ դատարկ փոսը, որ ինչքան փորես, այնքան ավելի դատարկ կդառնա»* (էջ 384-385): Կյանքի իմաստի հերթական աֆորիստիկ ամփոփում՝ ունայնություն ունայնությանց: Սողոմոն Իմաստունի աշակերտն է ճգնավորը, որը հանգել է կյանքի «փոսը» շարունակ փորելու ճշմարտությանը: Կյանքի իմաստն է փնտրում նաև երիտասարդ Աբեղան, որի ներքին ողբերգական պառակտվածությունը, որը բնորոշ է մեծ, բացառիկ անհատականություններին, նրան մղելու է դեպի Վանահայրը, հոգու էվոյուցիան բերելու է նրան Կույրի բարձունք, որտեղից էլ՝ ամենաբարձր կատարը՝ ճգնավոր: Իսկ առայժմ նա առաջին աստիճանի վրա է:

Ներքին պայծառատեսությամբ, որպես բացառիկ անհատականություն, Աբեղան իր ապրելիք կյանքի թունելի վերջում մտովի տեսնում է ճգնավորին՝ հավերժորեն «փոս» փորող: Նա գիտե, որ ներքին որոնումներն իրեն բերելու են դեպի ճգնավորի լեռան բարձունքը (ավելի ճիշտ՝ դա գիտե Շանթը, որն էլ բաց գրքի պես Աբեղայի հոգին փռում է մեր առաջ): Կյանքի ունայնությունը լցնող ինչ-որ բան է պետք. ճգնավորը փոսը լցնում է երազներով: Աբեղան կանգնում է երազներով լցված փոսի վրա և ոտքերի տակ զգում **կայուն հող**: Ուշադրություն դարձնենք կարևոր մի հանգամանքի. փոսը պատրանքներով լցնելու գեղարվեստական պատկերը, որպես արվեստի կերպավորման հնարանք, միջոց, բխում է ոչ թե Շանթի ռոմանտիկ մտածողությունից, այլ ամենախոր, ամենացավոտ ու ահագորու ռեալիզմ է՝ կյանքի բնականոն պարտադրանք: Աբեղայի հոգում ոչ թե քնած կրքի ձայնը հաղթեց, այլ **բանականորեն** նա հետ մղվեց դեպի Արևի տաճար. կյանքի տառապագին ցավն ընկալելով՝ նա հետ մղվեց դեպի հաճույք և ծիծաղ, որն էլ «հավերժական վերադարձի» գեղարվեստական դրսևորում է:

Վանահոր միաբանությունը ոչ թե Աբեղայի տեղը չէր, այլ նա այստեղ հայտնվել էր ոչ ճիշտ ժամանակին, նա վերադառնալու է դեպի Վանահայրը և հասնելու է ճգնավորին: Վերլուծելով Աբեղայի ներաշխարհը՝ Շանթը «հրում» է նրան դեպի կյանքի ծովը, ուր Աբեղան իրեն տեր է զգում՝ պատրաստ ընկճելու գոռ ալիքներին, իշխող կամքով հարթելու իր ճանապարհի խոչընդոտները: Աբեղայի կամքն առ իշխանություն Արևի տաճարում օգնում է նրան տեղ գտնել հզորների կողքին:

Եռադեմ կերպարի առաջին աստիճանը՝ Աբեղան (Ճերմակավորը), լիովին ձևավորվում է, երբ ազատվելով Կասկած-Ճերմակավորից՝ վճռում է մխրճվել «ծովը»՝ այն վայելելու, սեփական փորձով իմաստնանալու, տառապելու, գերհասունանալու և հոգևոր զարգացման երկրորդ՝ Վանահոր աստիճանին բարձրանալու: **Պատրաստի, ապրված գաղափարները նրան պետք չեն:** Հիշենք Ժողովողի իմաստուն

խոսքերը. «Որովհետև մարդու գործը իմաստուն էր, հաջող, գիտությամբ լիքը, և այդ բոլորը նա թողնում է մեկին, որը չի աշխատել այդ ամենի վրա, - սա էլ է ունայն և մի մեծ չարիք» (Ժող. Բ 21): Կյանքում ինչի էլ որ հասնի Աբեղան, որպես բացառիկ անհատ, հասնելու է ներքին մաքառումով և խոր տառապանքով: ***Հզոր կամքով առ իշխանություն՝ Աբեղան ինքն է ընտրում իր ողբերգական ճակատագիրը:*** Վանահոր «թեթևացրած» ուղին նրա համար չէ:

Քանի որ մարդը մահկանացու է, դարեր շարունակ նրան հուզել է կյանքի, մահվան, անմահության հարցը: Արվեստում ևս մարդը իր փիլիսոփայական խորհրդածություններում փնտրում է ողբերգականը, հանգում ողբերգականին: Ողբերգականի գաղտնիքը կարելի է ձևակերպել որպես անցում վշտից ուրախություն: Լինելով Աբեղայի ողբերգական կերպարի մյուս բևեռը՝ Կույրը ևս իր մեջ ամփոփում է ողբերգականը: Կույրի կերպարը՝ վշտի և ուրախության, թախծի և հրճվանքի, մահվան և հարության շերտերի միագումարը, ամբողջանում է Աբեղայից Կույրն ընկած հոգեբանական անցումներով՝ ձևավորվելով որպես կերպարի հասունացման վերջնական արդյունք: Գերհզոր կամքով երկփեղկված հոգու տառապանքից ազատվելով՝ Կույրը հոգու խաղաղությանն է հասել: Նրան բնորոշ առաջին հատկանիշը գերմարդկային կամքն է, որով «հանել է» աչքերը՝ ավելի պայծառատես դառնալու: Նրա գերիմաստնացած հոգին տեսնում է ամեն, ամեն բան, ինչ անհաս է միաբանության մնացյալ անդամներին: Կարծես երկփեղկված հոգու տանջանքը մարած է նրա մեջ:

Կույրը Վանահոր փնտրած գերմարդն է՝ կատարելության տիպար, գերհզոր, գերմաքրագործված էության: Նա ցավի և տառապանքի ուղիներով ելել է վեր՝ նախնական ստոր բնագոյները «կտրել, դեն նետելով» իր հոգուց: Եվ այժմ կյանքի և մահվան հակադրության ցավից իմաստնացած՝ ասես «խաղաղությանն է հասել նա հոգու»: Հոգևոր արթնացման նրա լեռն ավելի բարձր է, քան Վանահոր հասած կատարը, որտեղից Վանահայրը փնտրում է հենց Կույրի լեռը: Կույրն իր նվաճած կատարից տեսնում է և՛ շուրջը, և՛ հեռուն, և՛ շատ ավելի մեծ շառավղով, քան որևէ այլ ոք: Կույրի կերպարը, որքան էլ խորհրդանշական, ռեալիստական է՝ հոգեբանորեն խոր: Նրա արտաքին նկարագիրը՝ *«Անոր քովը փայտե ցած արթոռակի մը վրա նստած է Կույր վանականը. շիտակ, անշարժ. երկու ձեռքը գավազանին ու գլուխը բարձր պահած»* (էջ 368), բոլոր կույրերի կեցվածքի նկարագիրն է:

Արտաքին աշխարհը տեսողությամբ չընկալելով՝ նրանք կտրված են ամեն ինչից, բայց չգործող մի զգայարանի փոխարեն սրվող մեկ այլ զգայարանի կենսաբանական հավասարակշռմամբ նրանք ձեռք են բերում խոր ներհայեցողություն, որը բնորոշ է նաև Կույրի գեղարվեստական կերպարին: Շանթի կողմից Կույրի կերպարի ընտրությունը, որպես Աբեղա-Վանահայր-Կույր եռապատկերի վերջին ակորդ, պատահական չէ. Աբեղայից սկսվող երկփեղկված հոգու լարված դրամատիզմը պետք է զարգանալով բարձրանար Վանահոր աստիճանին և այնտեղից էլ՝ ավելի բարձր մի բանի, որն էլ Կույրի ներքին պայծառատեսությունն է, քանի որ գերմարդը հոգևոր երևույթ է: Կույրն ինքը գերմարդ է: Թվում է՝ նաև անվրդով: Թվում է... Որպես Աբեղա-Վանահայր-Կույր միասնական կերպարի երրորդ՝ վերջին աստիճան, որով ձևավորվում, ամբողջական է դառնում կերպարը, վերջին աստիճան, որը հոգևոր հասունության կատարելատիպ է:

Կույրն անգամ՝ գերմարդը, դրամայի վերջում չդիմանալով մահվան փաստին՝ որպես կյանքի վերջի գիտակցման, հետ է մղվում դեպի Աբեղան, դեպի ամեն ինչի սկիզբ: Վերջին պահին երկփեղկվող նրա ես-ը կյանքի հավերժական գոյության հիմն է փառաբանում: Մահվան մոտիկությունը նրան հետ է մղում դեպի կյանք, ծերությունը նրան հետ է մղում դեպի պատանություն, անեզր ցավը հետ է մղում նրան դեպի անգուսպ հրճվանք՝ ձևավորելով ամենախոր ողբերգականությունն իր մեջ ունեցող գեղարվեստական պատկեր-կերպար:

Հոգու երկփեղկումը, որը բնորոշ է բացառիկ անհատականություններին, իր արմատներով սնվում է կյանքի և մահվան շուրջ խորհրդածություններից: Անմահության որոնման ճանապարհին այն մարդուն կանգնեցնում է մի հանգուցակետում, որտեղից բացվում է երկու ուղի՝ կա՛մ դեպի Աստված, կա՛մ դեպի գերմարդ: Կույրը, որն անասան էր թվում, լսեց ներքին ձայնին՝ իզո՞ւր... Ձայնը հուշում է Վանահոր խոսքերը, թե մաքառման ճանապարհն անվախճան է. *«ներքին անվերջ նվաճումները բարձունքե-բարձունք, պարիսպե-պարիսպ, տարակույսներու անդունդներու վրայեն, ելքերով ու անկումներով. անդադար խոյանք մը դեպի ճշմարտությունը»* (էջ 429), բայց Կույրն այս ամենը վաղո՞ւց էր ապրել. «Դուք վերս եք նայում, երբ ձգտում եք բարձրանալ: Իսկ ես նայում եմ ներքև, **քանզի բարձրացել եմ**»³:

Կույրի հոգում ողբերգական երկփեղկումը, որը վերաթնանում է ներքին ճերմակավորի «Իզո՞ւր» հարցով, և՛ ամփոփում, ամբողջացնում է կերպարը, և՛ նրա «անավարտվածությամբ» ետ է մղում դեպի սկիզբների սկիզբ՝ որպես հավերժական վերադարձ, կենսահաստատում, կենսասիրություն և խոր հումանիզմի դրսևորում: Փաստորեն՝ ցավ և հրճվանք, տառապանք և հաճույք երկփեղկվածությունը, որը նույնն է, թե մահվան ու կյանքի հակադրություն, Կույրը լուծում է հետդարձով դեպի կյանք՝ որպես հավերժական գոյապտույտի հաստատում: Կույրի կերպարը, որպես դրամատիկական երկի հերոս, ներքին ողբերգական դրամատիզմով գործողությունները մղում է և՛ ետ՝ դեպի ամեն ինչի հավերժական վերադարձ, և՛ առաջ՝ է՛լ ավելի բարձր մի լեռ՝ ճգնավորի բարձունքը:

Կույրի կերպարը Աբեղայի հոգեբանական հասունացման մյուս բևեռն է՝ կրկին ողբերգականի գեղագիտության մարմնավորում:

³ Ֆ. Նիցշե, Այսպես խոսեց Զրադաշտը, Երևան, 2002 թ., էջ 65:



ԳԻՐՔ՝ ՆՎԻՐՎԱԾ ՀԱՅ ԱՐԾԱԹԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅԱՆԸ

Լուս Անջելեսում 2005 թ. առանձին գրքով անգլերեն և հայերեն լեզուներով լույս է տեսել արվեստի գործերի սիրահար և հավաքող Հովսեփ Թոքատի «Հայ արձաթագործ վարպետները» աշխատությունը: Այն նվիրված է Վանի արձաթագործությանը և այդ իմաստով բացառիկ երևույթ է հայ արվեստագիտության պատմության մեջ: Հայ արվեստագիտության մեջ վաղուց զգացվում է պակասը հայ արձաթագործության զանազան կենտրոններին վերաբերող առանձին աշխատությունների, և այդ իմաստով խնդրո առարկա գիրքը գալիս է մասամբ լրացնելու Վանի արձաթագործությանը վերաբերող բացը:

Լուսանջելեսաբնակ Հովսեփ Թոքատը ծնվել է Թուրքիայում՝ Արևմտյան Հայաստանի Քղիի Ճերմակ (Ջերմեք, Ջերմաք) գյուղում: Նա մասնագիտությամբ տնտեսագետ է, և արձաթագործության հանդեպ նրա սերը գալիս է մանկուց և կապված է ընտանեկան առօրյա գործածության արձաթե իրերի հետ: Հնագույն անցյալ ունեցող Վանի արձաթագործության ուսումնասիրությունը երկար տարիների ջանքեր պահանջող աշխատանք է:

Դեռևս երիտասարդ տարիքից հեղինակը սկսել է փնտրել, ուսումնասիրել Վանի արձաթագործությունը, որի օրինակները վաճառքի և Մեծ Եղեռնի պատճառով ցրվել են աշխարհով մեկ: Նա նկարել և ուսումնասիրել է իր և բազմաթիվ այլ մարդկանց մասնավոր սեփականությունը հանդիսացող առարկաները, փնտրել է Թուրքիայի, Պարսկաստանի, Ռուսաստանի թանգարանային և արխիվային հաստատություններում պահվող Վանի և առհասարակ հայ արձաթագործության կարևոր գործերն ու վավերագրերը և այդ ամենը զետեղել է այս հիանալի գրքում:

Այս շքեղ հատորի առաջին բաժնում ներկայացված է հայ ժողովրդի համառոտ պատմությունը (սկսած Հայկի և Բելի առասպելից մինչև մեր օրերը), և այն բաղկացած է հետևյալ ենթաբաժիններից՝ «Նախապատմական շրջան և Ուրարտու», «Երվանդունիներն ու Արտաշեսյան հարստությունը», «Արշակունիները», «Քրիստոնեության ընդունումը», «Գրերի գյուտը», «Ավարայր և արաբական տիրապետութ-

յուն», «Բագրատունյանց թագավորությունը», «Մելջունյան տիրապետություն», «Կիլիկիա», «15-18-րդ դարեր», «Հայ մշակութային կյանքը Օսմանյան տիրապետության տակ», «Հայաստանը Ռուսաստանի և Թուրքիայի միջև», «Մփյուռք և Խորհրդային Հայաստան», «Վերաանկախացում»:

Գրքի հաջորդ բաժինը ընդգրկում է Վան քաղաքի համառոտ պատմությունը: Հեղինակը ցույց է տալիս, որ Վանը հայկական մշակույթի առավել հին և կարևոր օրրաններից է եղել: Այստեղի բնակչությունը հիմնականում զբաղվում էր արհեստագործությամբ և առևտրով: Վանում են ծնվել բազմաթիվ մեծանուն գրողներ և արվեստագետներ: «Վանի ժողովրդագրական վիճակը» նկարագրող ենթաբաժնում ներկայացված են Վանեցի մշակների և կանանց լուսանկարները: Վերջիններս հետաքրքիր են իրենց ազգագրական հագուստների բնույթով, դրանում կարելի է համոզվել՝ դիտելով Վանի տիկնանց տարազների և զարդեղենի օրինակները: Առաջին անգամ մի գրքի մեջ են ամփոփված տասնյակ տարբեր տեսակի արծաթե ջրի ըմպանակները, ծխախոտի տուփերը և հատկապես Վանում հատված դրամների օրինակները՝ սուլթան Ահմետ Գ-ի դրամը, 1761 թ. հատված սուլթան Մուսթաֆայի դրամը և այլն:

Այս հատորի ընթերցումից հայտնի է դառնում, որ 19-րդ դարի վերջում Վանում կային հարյուր քսան ոսկերչական խանութներ և արհեստանոցներ, որտեղ նուրբ ճաշակով ու բժախնդրությամբ պատրաստում էին զարդեր, բաժակներ, ծամակալներ, մատնոցներ, գոտիներ, սանրեր, սափորներ, ծխախոտի տուփեր և այլն:

Ամեն տարի Վանում ստեղծվում էին հազարավոր արծաթյա իրեր, հատկապես ծխախոտի տուփեր, որոնք վաճառքի համար արտահանվում էին Պոլիս, Եվրոպա, Միացյալ Նահանգներ և այլուր: Վանի արծաթագործները գործածում էին զանազան արհեստագիտական եղանակներ, որոնցից էին արծնապատումը, սևատը (սևատապատումը) և այլն: Միջին Արևելյան մի շարք երկրներում, ինչպես Եգիպտոս, Սիրիա և Լիբանան, սևատապատումը հայտնի է որպես Վասպուրականից բերված արվեստ: Մակայն այդ տարածքներում աղավաղելով, «սևատ» բառը վերածել են «սավաթ»-ի:

Ուշագրավ են հատորում տեղ գտած հայ ժողովրդի տարբեր սովորույթների հետ առնչություն ունեցող այնպիսի իրերը, ինչպիսիք են նշանդրերի մատանիների տուփերը:

Գրքի մեջ զետեղված ընտիր օրինակների շարքին կարելի է դասել նաև սևատապատ, ձուլված և փորագրված արծաթե մտրակը, որը զարդարված է ոսկե նախշերով, ձեռնափայտի գլուխը, հայկական միջնադարյան ձեռագրերի կազմերը, զանազան ծխական իրերը, հովանոցների բռնակները, սրերի, դաշույնների, գրիչների, թանաքամանների, ձիերի քերիչների նմուշները:

Այս շքեղ գրքում բերված են Վանի գրեթե մոռացված կամ քչերին հայտնի արծաթագործ վարպետների անկրկնելի գործերը, օրինակ՝ Դավիթ Փափագյանի պատրաստած սևատապատ արծաթե ծխախոտի տուփերը, որոնցից մեկի վրա փորագրված է Մշո նահանգի քարտեզը և Առաքելոց ու Ս. Աստվածածին վանքերը, իսկ մյուս-


սի վրա՝ Հ. Յ. Դաշնակցության թերթերը:

Զարմանալի հայտնագործություն է Եթովպիայի Մենելիք Բ թագավորի ոսկերչապետ Տիգրան Հեպյանի պատրաստած թագը, որը մեկն է արքայի համար նրա պատրաստած թագերից:

Անշուշտ այս հատորում Վանի հայ արծաթագործության բոլոր իրերը ներկայացված չեն և դեռևս տարբեր երկրներում և բազմաթիվ անհատների մոտ կան հայ և մասնավորապես Վանի արծաթագործության հազարավոր նմուշներ, որոնք սպասում են իրենց ուսումնասիրողներին:

Այս գիրքը մի ամբողջ կյանքի գործ է և այդ առումով՝ բացառիկ նվիրումի դրսևորում: Հեղինակը ցրիվ եկած, փոշիացած Վանի արվեստը մի գրքի մեջ ամփոփելով՝ անհետացումից, մոռացությունից փրկել և հավաքել է արծաթագործների անունները և դրանով իսկ ներկայացրել է չերևացող ահռելի մշակութային ժառանգության պատկերը: Եվ անշուշտ չի կարելի չհամաձայնել Հովսեփ Թոքատի գիրքը եզրափակող խոսքերի հետ. «Եթե տեր չկանգնենք մեր արժեքներին, ապագայում ոչինչ չենք ունենա»:

ՍԱԹԵՆԻԿ ՉՈՒԳԱՍՉՅԱՆ



ՄԻԱԲԱՆԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՒՄԱՐ ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷԶՄԻԱԾՆՈՒՄ

Օգոստոսի 16-ին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսի բարձր նախագահությամբ Մայր Աթոռ Ս. Էջմիածնում սկսվեց ընդհանուր միաբանական չորրորդ եռօրյա համագումարը:

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի, ինչպես նաև Հայաստանի և Սփյուռքի թեմերից ժամանած 65 միաբան Հայրեր՝ ծայրագույն վարդապետներ, վարդապետներ ու աբեղաներ, հերթական այս համագումարին քննության առան միաբանի՝ որպես ժողովրդի հովվի, հավատքի ուսուցչի, քարոզչի, խորհրդատուի, վարիչի առաքելությանը առնչվող խնդիրներ:

Միաբանական համագումարն սկսվեց Տերունական աղոթքով, որից հետո միաբաններին բացման խոսքով դիմեց Գուգարաց թեմի Տավուշի մարզում փոխառաջնորդ, համագումարի կազմակերպիչ հանձնախմբի անդամ Տ. Մասուն ծայրագույն վարդապետ Զմրուխտյանը: Հոգեշնորհ Հայր Սուրբը, անդրադառնալով ժողովրդի կյանքում առկա հոգևոր խնդիրներին և Եկեղեցու առջև ծառացած մարտահրավերներին, հրամայական նկատեց միաբանների առաքելության պայմանների վերանորոգումը: Այդ առումով Հայր Մասունը կարևորեց միաբանական հավաքների գումարումը, որոնք հնարավորություն են ընձեռում միասնաբար խորհրդածելու հոգևոր կյանքի խնդիրների շուրջ, վերհաստատելու անվերապահ սերը հանդեպ Մայր Աթոռի, հավատարմությունը հանդեպ Ամենայն Հայոց Հայրապետի, անսակարկ նվիրումը Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու և Հայրենիքի նկատմամբ: Հանուն միաբանության վերստին հաստատելով հոգևոր բանակի զինվորներ լինելու ուխտը՝ Հայր Սուրբը հրավիրեց Նորին Սրբություն Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսին՝ Հայրապետական իր պատգամն ու օրհնությունը փոխանցելու ներկա միաբաններին:

«Հայրապետիս համար մեծ ուրախություն է տեսնել խմբված Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում մեր սիրելի միաբաններին: Գեղեցիկ ավանդույթ է ձևավորվում Մայր Աթոռում, որ ամեն երրորդ տարին մեր միաբանները հավաքվեն Սուրբ Էջմիածնում՝ իրենց ուխտը վերանորոգելու հանդեպ մեր նվիրական սուրբ կենտրոնը, նաև իրար հետ մեկտեղ մի քանի գեղեցիկ օրեր ապրեն, իրենց փորձառությունը հոգևոր և հովվական կյանքի մեջ փոխանակեն, իրենց մտահոգությունները կիսեն միմյանց

հետ, ինչպես նաև իրենց երազներն ու տեսիլքները՝ մեր Եկեղեցու և ժողովրդի ապագայի վերաբերյալ...»,- ասաց Վեհափառ Հայրապետը:

Նորին Սրբությունը հանգամանորեն անդրադարձավ Եկեղեցու առջև ծառացած խնդիրներին՝ ժողովրդի քրիստոնեական դաստիարակությանը, ամենօրյա քարոզչական, հովվական գործունեության առավել աշխուժացման անհրաժեշտությանը, հասարակական կյանքից ներս բարոյական առողջ մթնոլորտ ձևավորելու առաքելությանը: *«...Այնքան ժամանակ, որքան մենք չհաջողենք այս առաքելության լիարժեք իրագործման մեջ, այնքան ժամանակ արատավոր երևույթները ուղեկիցը կլինեն մեր կյանքի, այնքան ժամանակ Աստծուց հեռացված կլինի հայորդին և Աստծո պատգամներն ու պատվիրանները չէ, որ առաջնորդող կլինեն իր կյանքում»,-* նշեց Ամենայն Հայոց Կաթողիկոսը:

Խոսելով միաբանի կոչման, պարտականությունների և առաքելության մասին՝ Նորին Սրբությունը քաջալերեց միաբաններին լավագույնս օգտագործել այս առիթը՝ գորացնելու իրենց եղբայրությունը, ամրապնդելու հավատն ու ոգին, անդրադարձումի պահեր ապրելու, վերատեսության ենթարկելու կյանքն ու տեսիլքները, որպեսզի նոր ուժով ու եռանդով վերադառնան իրենց ծառայությանը:

«...Մենք հավատում ենք, որ եթե մենք մեր ժամանակը լիարժեք, ամբողջական կերպով նվիրենք մեր ծառայությանը, կարող ենք ներկա ժամանակի և պայմանների մեջ իրապես հրաշագործել, մեր Եկեղեցու հեղինակությունը բարձրացնել հաչա մեր ժողովրդի, կանխել բոլոր այն քննադատությունները, որ արդար և անարդար ձևով հնչում են մեր Եկեղեցու նկատմամբ, և Աստծո առջև արժանավոր մշակներ լինել, ազգի առջև արժանավոր զավակներ լինել, մեր նախնյաց առջև նրանց արժանավոր հաջորդները լինել»,- ասաց Վեհափառ Հայրապետը՝ հաջողություն մաղթելով համագումարի աշխատանքներին:

Ժողովի առաջին օրը մասնակիցներն ունկնդրեցին Տ. Հայկագուն ծայրագույն վարդապետ Նաջարյանի բանախոսությունը՝ «Միաբանը՝ որպես ժողովրդի հովիվ» թեմայով, որին հաջորդող հարց ու պատասխանից հետո առաջադրված հարցերի շուրջ տեղի ունեցավ քննարկում:

Նույն օրը, բացման արարողության ավարտին, միաբանները Վեհափառ Հայրապետի գլխավորությամբ աղոթք բարձրացրեցին հանգուցյալ միաբան եղբայրների հոգիների հանգստության համար:

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում գումարված միաբանական հավաքը օգոստոսի 17-ին շարունակեց իր աշխատանքները: Հերթական երկու նիստերն անցկացվեցին Սևանի Վազգենյան Հոգևոր Դպրանոցում:

Նիստերի ընթացքում լավեցին Սևանի Վազգենյան Հոգևոր Դպրանոցի տեսուչ Տ. Մկրտիչ վարդապետ Պողոսյանի «Միաբանը՝ որպես հավատքի ուսուցիչ» և Տ. Կոմիտաս վարդապետ Հովնանյանի (Մարսել, Ֆրանսիա) «Միաբանը՝ որպես քարոզիչ» բանախոսությունները (տե՛ս էջ 50): Յուրաքանչյուր բանախոսությանը հաջորդեց հարց ու պատասխան, ապա բանախոսությունների առաջադրած խնդիրների շուրջ տեղի ունեցան քննարկումներ:

Նիստերի ավարտին Սևանի Ս. Առաքելոց վանքում միաբանները մասնակցեցին երեկոյան ժամերգության:

Օգոստոսի 18-ին Սևանի Վազգենյան Հոգևոր Դպրանոցում տեղի ունեցավ միաբանական չորրորդ համագումարի վերջին նիստը, որը նախագահեց Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսը: Համագումարի վերջին օրվա աշխատանքներին իրենց մասնակցությունը բերեցին նաև Արցախի և հայաստանյան թեմերի առաջնորդները և վանաբնակ եպիսկոպոսները:

Նիստի ընթացքում Տ. Զատիկ վարդապետ Ավետիքյանը (Ֆրանսիա) հանդես եկավ «Միաբանը՝ որպես կառավարիչ» բանախոսությամբ, որին հաջորդեց ներկայացված նյութի քննարկումը:

Եզրափակիչ նիստում Հայրապետական պատգամով համագումարի վերաբերյալ իր դիտարկումները միաբաններին փոխանցեց Ամենայն Հայոց Հովվապետը՝ կարևորելով միաբանական հավաքների կազմակերպումը՝ միասնական միաբանական կյանքի զորացման, խնդիրների համատեղ քննարկման և համապատասխան առաջարկների ներկայացման համար: «Մենք ցանկացանք, որ այս հավաքները տեղի ունենան, որպեսզի զաք, վանքի մթնոլորտի մեջ ապրեք, ձեր ներկայությամբ առավել շենանա և շնչի վանքը, մեկս մյուսով զորեղ զգանք մեզ և համընդհանուր մեր տեսիլքները հստակեցնենք մեր առաքելության մեջ», - նշեց Վեհափառ Հայրապետն իր խոսքում:

Նորին Սրբությունն իր գնահատանքն ու օրհնությունը բերեց կազմակերպիչ հանձնախմբին, բանախոսներին, ինչպես նաև բոլոր միաբաններին՝ համագումարի աշխատանքներին նախանձախնդիր մասնակցության համար:

Այնուհետև միաբանները մեկնեցին Գեղարքունյաց թեմի Գավառի առաջնորդանիստ Ս. Աստվածածին եկեղեցի, ուր հավարտ երեկոյան ժամերգության կատարվեց եկեղեցու հարևանությամբ ի հիշատակ թեմի հանգուցյալ առաջնորդական տեղապահ հոգեւորյւս Տ. Դերենիկ վարդապետ Դավթյանի կանգնեցված խաչքարի բացման և օծման արարողությունը:

Օգոստոսի 18-ին՝ վերջին նիստի ընթացքին, կատարվեց նաև միաբանական համագումարի կազմակերպիչ նոր հանձնախմբի ընտրություն, որը և վավերացվեց Ամենայն Հայոց Կաթողիկոսի կողմից:

Նոր դիվանի ատենապետ ընտրվեց Տ. Կոմիտաս վարդապետ Հովնանյանը (Արևմտյան Եվրոպայի Հայրապետական պատվիրակություն, Ֆրանսիա), ատենադպիր՝ Տ. Տաճատ աբեղա Ծատուրյանը (ԱՄՆ հայոց Արևելյան թեմ), Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հետ հարաբերությունների համակարգող՝ Տ. Վազգեն աբեղա Նանյանը (Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին), խորհրդականներ ընտրվեցին Տ. Օշական վարդապետ Գյուլգյուլյանը (Հնդկաստանի հայոց հովվություն) և Տ. Բարսեղ աբեղա Փիլավյանը (Հունգարիայի, Չեխիայի և Սլովակիայի հայոց հովվություն): Հանձնախմբի անդամները նաև պարտականություններ ստանձնեցին տարբեր երկրամասերում պաշտոնավարող միաբանների հետ կապ պահելու համար: Ըստ այդմ կատարվեց հետևյալ բաշխումը. Հայր Կոմիտասը պատասխանատու է Արևմտյան

Եվրոպայի երկրների, Հայր Օշականը՝ Միջին և Հեռավոր Արևելքի երկրների, Հայր Բարսեղը՝ Կենտրոնական Եվրոպայի երկրների, Հայր Վազգենը՝ Հայաստանի, Արցախի և ԱՊՀ մնացյալ երկրների, իսկ Հայր Տաճատը՝ Հյուսիսային և Հարավային Ամերիկայի երկրների միաբանների համար:

Հաջորդ օրը, օգոստոս 19-ին, նորընտիր դիվանը գումարեց իր առաջին ժողովը, որտեղ ընդունվեցին մի քանի որոշումներ: Առաջիկայում հանձնախումբը առանձին գրքույկով կհրատարակի 2006 թ. միաբանական համագումարի բոլոր զեկույցները և քննարկված նյութերը: Կտպագրվի նաև բոլոր միաբանների հասցեագիրքը:

Նաև որոշվեց միաբանական հաջորդ համագումարը անցկացնել 2009 թ. հուլիսի առաջին կեսին:

*ՄԱՅԸ ԱԹՈՌ Ս. ԷԶՄԻԱԾԻՆ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ*

ՍՓՅՈՒՌՔԱՀԱՅ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՅՆԵՐ ՄԱՅՐ ԱԹՈՒ ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱԾՆՈՒՄ

Հունիսի 17-ից օգոստոսի 14-ը Մայր Աթոռ Ս. Էջմիածնում կազմակերպվեցին սփյուռքահայ ուսուցիչների վերապատրաստման դասընթացներ:

Ամենամյա այս դասընթացներն արդեն երկրորդ տարին է, ինչ անց են կացվում Մայր Աթոռ Ս. Էջմիածնում: ՀՀ Կրթության և գիտության նախարարության հետ համատեղ կազմակերպվող մեկամյա դասընթացների ընթացքում սփյուռքահայ ուսուցիչները հարստացնում են իրենց գիտելիքները հայագիտության, հոգեբանության և մանկավարժության բնագավառներում:

Այս տարի Մայր Աթոռում հյուրընկալվել են 70 ուսուցիչներ, որոնք ժամանել են ԱՄՆ-ից, Ռուսաստանից, Բրազիլիայից, Ռումինիայից, Իրանից, Սիրիայից, Լիբանանից, Ուկրաինայից, Լիտվայից և Վրաստանից:

Հուլիսի 17-ին Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Գևորգյան Հոգևոր Ճեմարանում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գաբեգին Բ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսի բարձր հովանավորությամբ տեղի ունեցավ սփյուռքահայ ուսուցիչների վերապատրաստման դասընթացների հանդիսավոր բացումը:

Դասընթացի բացման հանդիսության ժամանակ ներկաներին Վեհափառ Հայրապետի օրհնությունը փոխանցեց Մայր Աթոռի միաբան Տ. Ներսես արքեպս. Պողոսյանը: Ելույթներ ունեցան Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Քրիստոնեական դաստիարակության կենտրոնի տնօրեն Տ. Ղուկաս արքեպ. Զաքարյանը, ՀՀ ԿԳ նախարար Լևոն Մկրտչյանը, ՀՀ ԱԺ Կրթության, մշակույթի և երիտասարդության հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ Հրանտ Զակոբյանը, բարձր գնահատելով Մայր Աթոռ Ս. Էջմիածնի ավանդը ազգանվեր այս ծրագրի իրագործման մեջ: Վերապատրաստման եկած ուսուցիչների կողմից հանդես եկավ հալեպցի Երան Զեյթունցյանը:

Բացմանը ներկա էին Մայր Աթոռի միաբանության անդամներ, ուսուցիչներ, ՀՀ բուհերի դասախոսներ:

Մեկամյա այս դասընթացների ընթացքում ուսուցիչների համար դասախոսություններով հանդես եկան Մայր Աթոռի հոգևորականները, հանրապետության ուսումնական և գիտական հաստատությունների ճանաչված դասախոսները և գիտնականները:

Այս ընթացքում ուսուցիչները եղան նաև տարբեր եկեղեցիներում և վանքերում, այցելեցին գիտա-մշակութային կենտրոններ, շնորհիվ որի ոչ միայն հավելեցին իրենց գիտելիքներն ու ամրապնդեցին մայրենիի իմացությունը, այլև անմոռանալի տպավորություններ ստացան: Նրանցից շատերը առաջին անգամ տեսան նվիրական այն վայրերն ու արժեքները, որոնց մասին այնքան լսել էին և կարդացել:

Օգոստոսի 14-ին Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Գևորգյան Հոգևոր Ճեմարանի հանդիսությունների դահլիճում տեղի ունեցավ Մայր Աթոռում անցկացվող սփյուռքահայ

ուսուցիչների վերապատրաստման մեկամսյա դասընթացների փակման արարողությունը:

Տերունական աղոթքից հետո հավաքվածներին դիմեց Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Քրիստոնեական դաստիարակության կենտրոնի տնօրեն Տ. Ղուկաս աբեղա Զաքարյանը, որն ամփոփ կերպով ներկայացրեց վերապատրաստման մեկամսյակի ձեռքբերումները: Հայր Սուրբը նաև իր գնահատանքն ու շնորհավորանքն ուղղեց սփյուռքահայ ուսուցիչներին:

ՀՀ ԿԳՆ Սփյուռքի հետ կապերի բաժնի աշխատակից Թ. Զալինյանն իր զեկույցում ներկայացրեց ուսուցիչների որակավորման և վկայականների հանձնման ծրագիրը:

Ուսուցիչների անունից շնորհակալական խոսք ասաց տիկին Սեդա Ունջյանը (Լիբանան)՝ անդրադառնալով Սփյուռքում հայապահպանության խնդրին:

Այնուհետև Խ. Աբովյանի անվան պետական մանկավարժական համալսարանի ռեկտոր Ա. Ղուկասյանն ուսուցիչներին հանձնեց ավարտական վկայականները: Ուսուցիչներին նաև գրքեր շնորհվեցին Մայր Աթոռ Ս. Էջմիածնի և Կրթության ու գիտության նախարարության կողմից:

Հավարտ արարողության Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնությունն ու բարեմաղթանքները ներկաներին փոխանցեց Մայր Աթոռի միաբան Տ. Փառեն եպիսկոպոս Ավետիքյանը: Սրբազան Հայրն իր խոսքում կարևորեց սփյուռքահայ ուսուցիչների դերն ու առաքելությունը Սփյուռքի երիտասարդ սերնդի հայեցի դաստիարակության գործում: Հանդիսությունը փակվեց «Պահպանիչ» աղոթքով:

Փակման հանդիսությանը ասմունքով և երաժշտական կատարումներով հանդես եկան դասընթացների մասնակից ուսուցիչները:

*ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷԶՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ*

ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՆ ԸՆԴՈՒՆԵՑ ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ՀԱՄԱԺՈՂՈՎԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻՆ

Օգոստոսի 21-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Համահայկական կրթական երկրորդ համաժողովի մասնակիցներին:

«Այսօր կրկին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում ենք՝ հաղորդ դառնալու և ապրելու այն հոգեղեն զգացումները, որ ապրում է Մայր Աթոռը: Համաժողովի մասնակիցները եկել են Մայր Աթոռ՝ ստանալու Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնությունը, ապրելու Սուրբ Էջմիածնի խորհուրդը և իրենց հետ իրենց համայնքները տանելու Մաշտոցի ձեռքով օրհնված մայրենի լեզվի, հայագիտության խորհուրդը...», - ասաց Մայր Աթոռի Քրիստոնեական դաստիարակության կենտրոնի տնօրեն Տ. Ղուկաս աբեղա Զաքարյանը՝ հրավիրելով ՀՀ Կրթության և գիտության փոխնախարար Բազրատ Եսայանին՝ ներկայացնելու համաժողովի աշխատանքները:

Տիար Եսայանը հանգամանորեն անդրադարձավ համաժողովի աշխատանքներին, առաջադրված նպատակներին՝ մեծապես կարևորելով սփյուռքահայ ուսուցիչների դերը հայապահպանության գործում: Փոխնախարարը մասնակիցների անունից նաև շնորհավորեց Ամենայն Հայոց Կաթողիկոսին ծննդյան 55-ամյա տարեդարձի կապակցությամբ և փոխանցեց ամենքի ջերմ բարեմաղթանքները:

Ապա օրհնության խոսքով ներկա ուսուցիչներին դիմեց Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսը՝ փոխանցելով ամենքին իր գնահատանքը՝ ազգին, Հայրենիքին և Հայաստանյայց Առաքելական Եկեղեցուն մատուցած իրենց կարևոր ծառայության համար: Նորին Սրբությունն ուրախություն հայտնեց, որ Հայաստանի և Սփյուռքի ուսուցիչները, մեկտեղվելով Հայաստանի երկնքի ներքո, քննարկում են Սփյուռքում կրթության ոլորտում առկա հիմնախնդիրները և լուծումներ փնտրում դրանց հաղթահարման, հայեցի դաստիարակության առավել արդյունավետ կազմակերպման համար:

Վեհափառ Հայրապետը կարևոր նկատեց նաև Եկեղեցու դերը հայեցի դաստիարակության և հայապահպանության ոլորտում՝ անդրադառնալով վերջին տարիներին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի և ՀՀ Կրթության և գիտության նախարարության միջև առկա սերտ համագործակցությանը, հատկապես Սփյուռքի ուսուցիչների վերապատրաստման ծրագրին: «Կարևոր ենք նկատում, որ մեր դպրոցները միշտ մեր Եկեղեցու օրհնության ներքո են գործում, աշակերտները սերտ մասնակցություն ունեն եկեղեցական կյանքին, ներկա են եկեղեցում: Այս կապը պետք է ամրապնդել, զորացնել, որովհետև այս երկուսի համադրմամբ պիտի կարողանանք արժանավոր, հավատարմոր ու բարի զավակներ կրթել մեր ժողովրդի համար: ...Բարի զավակ կրթել՝ նշանակում է ապահովել հավերժությունը, հարատև ընթացքը մեր ժողովրդի և բարօրությունը Հայրենիքի», - ասաց Նորին Սրբությունը՝ բարի արգասավորում մաղթելով համաժողովի կատարած աշխատանքներին:

ՄԱՅՐ ԱԹՐՈՒ Մ. ԷԶՄԻԱԾԻՆ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

**ԳԱՐԵԳԻՆ Բ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՀԱՆՐԻՍԱՊԵՏՈՒԹՅԱՄԲ
ԿԱՏԱՐՎԵՅ ԵՐԵՎԱՆԻ ԷՐԵԲՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ
ԵԿԵՂԵՑՈՒ ՀԻՄՆԱՐԿԵՔԸ**

Հուլիսի 21-ին Արարատյան Հայրապետական թեմում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գաբեգին Բ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսի ձեռամբ կատարվեց Երևանի Էրեբունի համայնքի Ս. Մեսրոպ եկեղեցու հիմնարկեքը: Եկեղեցին կառուցվում է ամերիկահայ բարերարներ տեր և տիկին Սարգիս և Բոբի Հակոբյանների հովանավորությամբ: Նրանց բարերարությամբ Հայաստանում կառուցվել է ևս մեկ Գյումրիի Անի թաղամասի Ս. Հակոբ եկեղեցին:

Ձեռամբ Վեհափառ Հայրապետի և արարողությանը մասնակից Սրբազան Հայրերի՝ Ս. Ներսես արքեպս. Պողոսյանի, Արարատյան Հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ Ս. Նավասարդ արքեպս. Կճոյանի, Ս. Փառեն եպս. Ավետիքյանի և Արմավիրի թեմի առաջնորդ Ս. Սիոն եպս. Ադամյանի, օծվեցին եկեղեցու 16 վեմ քարերը: Կառուցվող եկեղեցու կնքահայրերն էին՝ ՀՀ պաշտպանության նախարար Մերժ Սարգսյանը, Երևանի քաղաքապետ Երվանդ Զախարյանը, ԿԲ նախագահ, թեմական խորհրդի ատենապետ Տիգրան Սարգսյանը, ԳԱԱ նախագահ Ռադիկ Մարտիրոսյանը, Էրեբունի և Աջափնյակ համայնքների թաղապետեր Սիեր Մեղրակյանը և Արծրուն Խաչատրյանը, Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամներ Վլադիմիր Բարխուդարյանն ու Ռաֆայել Պապայանը, ինչպես նաև տիարք Ֆադեյ Սարգսյանը, Ռազմիկ Մարկոսյանը, Վրեժ Մարկոսյանը, Վիլեն Հակոբյանը, Գրիգոր Մելքումյանը, Լ. Զանոյանը, Գ. Ճանճապանյանը և Ա. Ղուլյանը:

«Մեր հոգին բերկրանք և ցնծություն է ապրում: Էրեբունի համայնքը կունենա իր եկեղեցին, ուր հավատավոր Մեր զավակները կգան իրենց ուխտը վերանորոգելու, Աստծո հետ հաղորդակցվելու: Պիտի գան հայց առ Աստված բարձրացնելու մեր հայրենի երկրի շինության և նրա հարատև գորացման համար: ...Մենք հավատում ենք, որ հիմնարկեքի սրբազան այս արարողությամբ հաստատուն պիտի լինեն հիմերը այս եկեղեցու, և այն օրավուր առավել պիտի ամրանա ու գորանա Մեր զավակների հոգեբույս աղոթքներով», - ասաց Վեհափառ Հայրապետը: Նա իր գնահատանքը հայտնեց եկեղեցու բարերարներին իրենց ազնիվ հանձնառության համար՝ մաղթելով նրանց քաջառողջություն և արևշատություն: Նորին Սրբությունը իր գնահատանքը հայտնեց Ս. Նավասարդ արքեպս. Կճոյանին՝ նվիրյալ ծառայության համար ի պայծառություն Սուրբ Եկեղեցու, ինչպես նաև հայրենի իշխանություններին, որոնք մշտապես աջակցություն են ցուցաբերում Հայ Եկեղեցուն եկեղեցաշինության գործում: Վեհափառ Հայրապետի գնահատանքին արժանացան նաև եկեղեցու ճարտարապետներ Արտակ Ղուլյանը և Գրիգոր Նալբանդյանը, շինարարությունը իրականացնող «Բազմաշին» կազմակերպությունը:

Եկեղեցու կառուցումը նախատեսվում է ավարտել երկուսուկես տարում:

*ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷԶՄԻԱԾԻՆ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ*

Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՀԱՆԴԻՍԱՊԵՏՈՒԹՅԱՄԲ ԿԱՏԱՐՎԵՑ ԱԲՈՎՅԱՆ ՔԱՂԱՔԻ ԵԿԵՂԵՑՈՒ ՀԻՄՆԱՐԿԵՔԸ

Օգոստոսի 24-ին Կոտայքի թեմի Աբովյան քաղաքում արտասովոր խանդավառություն էր տիրում: Հանդիսապետությամբ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսի կատարվեց քաղաքի Սուրբ Հովհաննես եկեղեցու հիմնարկեքը, որի կառուցումը նախատեսվում է ավարտել երկու տարուց: Եկեղեցին կառուցվում է հովանավորությամբ Ազգային Ժողովի պատգամավոր Գագիկ Ծառուկյանի, որի ազնիվ բարերարությամբ նաև կառուցվել է Առինջի Ս. Աստվածածին և վերանորոգվել Ս. Հովհաննես եկեղեցիները:

Կառուցվող եկեղեցու մուտքին Նորին Սրբությանը դիմավորեցին Կոտայքի թեմի առաջնորդ Տ. Առաքել եպիսկոպոս Քարամյանը, եկեղեցու բարերար Գագիկ Ծառուկյանը, Կոտայքի մարզպետ Կովալենկո Շահգալդյանը, Աբովյանի քաղաքապետ Կարապետ Իսրայելյանը: Աղ ու հացի օրհնությունից հետո «Հրաշափառ»-ի երգեցողության ներքո, թեմի եկեղեցականներից ու Մայր Աթոռի միաբաններից կազմված հանդիսավոր թափորի ուղեկցությամբ, Ամենայն Հայոց Հայրապետը, իր օրհնությունը բաշխելով հավատավոր ժողովրդին, առաջնորդվեց դեպի կառուցվող եկեղեցու հիմքերը:

Ձեռամբ Նորին Սուրբ Օծության և արարողությանը մասնակից Սրբազան Հայրերի՝ Տ. Ներսես արքեպս. Պողոսյանի և Տ. Առաքել եպս. Քարամյանի, օծվեցին եկեղեցու 16 վեմ քարերը՝ կոչելով մեր Տեր Հիսուս Քրիստոսի 12 սուրբ առաքյալների, ավետարանիչների, ինչպես նաև Ս. Պողոսի և Ս. Գրիգոր Լուսավորչի անուններով, ապա Ս. Հովհաննես եկեղեցու կնքահայրերը դրանք զետեղեցին եկեղեցու 16 սյուների հիմքերում:

Եկեղեցու հիմքերում ամփոփվեց նաև եկեղեցու հիմնադրության արձանագրությունը:

Եկեղեցու հիմնարկեքի բերկրաշատ առիթով իր մտորումները հայտնեց նաև եկեղեցանվեր բարերարը. «...Մարդիկ հավատք պիտի ունենան, հավատքով պիտի ապրեն: Առաջին քայլն արդեն արվել է. Աբովյանում առաջ չկար եկեղեցի, և այն կառուցելու պատվին Վեհափառն ինձ արժանացրեց: Եվ այսքան ձգձգումներից հետո այս հույսն էլ ես եմ ուզում իրականացնել», - ասաց տիար Ծառուկյանը՝ մաղթելով, որ այն ծառայի մեր երկրի ամրապնդմանը, զարգացմանն ու բարգավաճմանը:

Արարողության ավարտին հավաքված հավատավոր ժողովրդին Հայրապետական իր խոսքն ուղղեց Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսը. «...Շուրջ 1700 տարիներ առաջ մեր առաջին Կաթողիկոս Ս. Գրիգոր Լուսավորիչը եկեղեցի կառուցելու հորդոր և պատգամ ուղղեց հայ ժողովրդին՝ ասելով. «Եկայք շինեսցուք սուրբ զխորանն լուսոյ»: 1700 տարիներ շարունակ

մեր ժողովուրդը, իր Հայրապետի այս նվիրական պատգամն իր հոգում, կառուցեց և շենացրեց հայոց հողը, հայրենի սրբազան մեր հողը նվիրական տաճարներով ու վանքերով, եկեղեցիներով ու մատուռներով: Այդ պատգամն առավել չափերով հնչեց նաև մեր ժամանակներում, և ազնիվ բարերար հայորդիք ձեռնամուխ եղան եկեղեցաշինության աստվածահաճո նվիրական գործին: ...Այսօր Աստուծո ողորմած կամքով կատարում ենք հիմնարկեքը Աբովյանի Ս. Հովհաննես եկեղեցու, որ իր դռները պիտի բացի մեր հավատավոր զավակների առջև մեկ և կես - երկու տարուց, ուր բարեպաշտ և աղոթասեր հայորդիք պիտի գան իրենց աղոթքը երկինք բարձրացնելու, իրենց հոգու խաղաղությունը գտնելու, Տիրոջը փառք և օրհնություն վերառաքելու այն շնորհների համար, որ Աստված արժանացնում է մեր ժողովրդին», - ասաց Վեհափառ Հայրապետը:

Հայոց Հովվապետը իր գնահատանքը հայտնեց եկեղեցու բարերարին ազնիվ նախաձեռնության համար՝ մաղթելով նրան քաջառողջություն և Տիրոջ հովանավոր Աջի գորակցությունը իր բարի իրագործումներում: Նորին Սրբությունը նաև բարձր գնահատեց Տ. Առաքել եպս. Քարամյանի նվիրյալ ծառայությունը, ինչպես նաև իր գնահատանքը հայտնեց եկեղեցու ճարտարապետ Արտակ Ղուլյանին և շինարարներին:

Վերջում կատարվեց նաև մատաղի օրհնություն:

ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷԶՄԻԱԾԻՆ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ՕԾՎԵՑ ԱՐԵՎՇԱՏ ԳՅՈՒՂԻ Ս. ՄԱՐԻԱՄ ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑԻՆ

Հուլիսի 23-ին՝ Հիսուս Քրիստոսի Պայծառակերպության՝ Վարդավառի տոնի օրը, Արարատյան Հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ Գերաշնորհ Ս. Նավասարդ արքեպիսկոպոս Կճոյանի ձեռամբ օծվեց Արտաշատի շրջանի Արևշատ գյուղի Ս. Մարիամ Աստվածածին եկեղեցին և եկեղեցու բակում տեղադրված խաչքարը: Եկեղեցու բարերարն է ռոստովահայ՝ նախկինում արևշատցի Սամվել Դավթյանը, ճարտարապետն է՝ Դավիթ Քերթմենջյանը:

Ս. Մարիամ Աստվածածին եկեղեցին կառուցվել է նախկին համանուն եկեղեցու ավերակների վրա: Գյուղի հին բազիլիկ եկեղեցին կառուցվել է դեռևս 1890-ական թվականներին և վերակառուցվել ու օծվել՝ 1903-ին: 1937 թ. եկեղեցին փակվել է, որից հետո տարիների ընթացքում աստիճանաբար խոնարհվել: Արևշատ գյուղն ունի մոտ 2700 բնակիչ: Արևշատցիները եկեղեցի չունենալու պատճառով եկեղեցական արարողություններին մասնակցել են հարևան գյուղերում: 2005 թվականից սակայն սկսվում է եկեղեցու պատմության այս նոր շրջանը: Չորս ամսվա ընթացքում կառուցվեց գյուղի նոր եկեղեցին:

Ս. Մարիամ Աստվածածին եկեղեցու օծման արարողությանը ներկա էին Արարատի մարզպետ Ալիկ Սարգսյանը, ԱԺ պատգամավորներ, Հարավային Ռուսաստանում ՀՀ հյուպատոս Արարատ Գումգյանը, ռոստովահայեր: Հավարտ Ս. Պատարագի կատարվեց նաև մկրտության արարողություն: Մկրտվեց գյուղի ամենափոքրիկ բնակիչը: Կատարվեց մատաղի օրհնություն:

ԱՐԱՐԱՏՅԱՆ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԹԵՄԻ
ՄԱՍԼՈ ՊԻՎԱՆ

ԼՈՒՐԵՐ ԳԵՐՄԱՆԻՈՅ ՀԱՅՈՑ ԹԵՄԷՆ

8 Յուլիսին Հեսընի Հայ Համայնքը իր մասնակցությունը բերաւ Հանաու քաղաքի Օտարախօս Համաքաղաքացիներու Բարեկամական ասանդական տօնախմբութեան: Տօնախմբութեան ընթացքին Հանաու քաղաքին մէջ գտնուող զանազան ազգերու եւ կրօնքներու ներկայացուցիչներ իրենց ազգային-ժողովրդական երգերն ու պարերը ներկայացուցին, ինչպէս նաեւ հրամցուցին ազգային կերակրատեսակներ: Հայ Համայնքը ներկայացուած էր առանձին մեծ տաղաւարով մը, ուր հրամցուեցան այլազան կերակրատեսակներ: Պատրաստուած էր նաեւ տեղեկատուական տաղաւար մը, ուր այցելունները այլազան տեղեկութիւններ ստացան հայութեան, անոր պատմութեան, Հայոց Ցեղասպանութեան, Հայ Եկեղեցւոյ, Գերմանիոյ Հայոց Առաջնորդութեան եւ Հեսընի Հայ Համայնքի մասին: Հայկական տաղաւար այցելեց նաեւ Հանաու քաղաքին առաջին քաղաքապետ պրն Քամինսքին:

Առաւօտեան տեղի ունեցած բացման արարողութեան ընթացքին Սերովբէ վարդապետ Իսախանեան գերմաներէն լեզուով տեղեկութիւններ տուաւ Հեսընի Հայ Համայնքի մասին, որմէ ետք օրիորդ Լուսինէ Ղազարեան հանդէս եկաւ քանի մը հայկական եկեղեցական եւ ժողովրդական երգերու կատարմամբ:

29 Յուլիս – 6 Օգոստոսի Գերմանիոյ Քօպլէնց քաղաքին մօտ կազմակերպուեցաւ Գերմանիոյ հայ համայնքին երեխաներու հերթական ճամբարը, որուն այս տարի մասնակցեցան 8-16 տարեկան շուրջ 40 երեխաներ ու պատանիներ: Ճամբարը կազմակերպուած էր Գերմանահայ Կեդրոնական Խորհուրդի կողմէ: Վերջին տարիներուն ճամբարի կազմակերպման իր աջակցությունը կը բերէ նաեւ Գերմանիոյ Հայոց Առաջնորդութիւնը:

Ճամբարի 9-օրեայ տևողութեան շրջանին Գերմանիոյ տարբեր մասերէն եկող երեխաներուն առիթ կը տրուի իրենց դպրոցական արձակուրդէն բաժին մը միասին անցնելու, միասին խաղալու, իրարու հետ ծանօթանալու եւ ընկերային կապեր հաստատելու:

Ճամբարի Յայտագիրը կը ներառէր հայերէն լեզուի, պատմութեան, կրօնքի, երգի եւ պարի դասընթացքներ, ինչպէս նաեւ մարզական այլեւայլ մրցոյթներ եւ խաղեր:

Ճամբարի կազմակերպման եւ Յայտագրի իրականացման աշխատանքներուն յանուն Առաջնորդարանի իր ամենօրեայ մասնակցությունը բերաւ Սերովբէ վրդ. Իսախանեան:

Ճամբարի փակման հանդիսութեանը ներկայ գտնուեցաւ եւ կազմակերպիչներուն, մասնակից երեխաներուն եւ անոնց ծնողներուն իր օրհնութիւնը փոխանցեց առաջնորդ Սրբազանը՝ Գարեգին արքեպս. Պեքճեան:

Փակման հանդիսութեան ընթացքին եկեղեցական կարճ արարողութենէ մը ետք, երեխաները յաջող բեմականացմամբ ներկայացուցին «Սուրբ Էջմիածնի Հիմնադրութիւնը» թատերախաղը:

ՂԻԻԱՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԻ

Լուրեր Կալկաթայի հայ համայնքից

ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ՃԵՄԱՐԱՆԻ ՂԵԿԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՆ- ԴԻՊՈՒՍԸ ԱՐԵՎՍՏՅԱՆ ԲԵՆԳԱԼԻԱՅԻ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ ՀԵՏ

Օգոստոսի 4-ին Կալկաթայի հայոց Մարդասիրական ճեմարանի կառավարիչ Տ. Օշական վրդ. Գյուլգյուլյանը և ադմինիստրատոր Տիգրան սրկ. Բաղումյանը հանդիպեցին Արևմտյան Բենգալիայի Բարձրագույն կրթության նախարար Վսեմաշուք Մուղարշահ Ռոյ Չոդիուրիի հետ:

Շնորհակալություն հայտնելով ջերմ ընդունելության համար՝ ճեմարանի կառավարիչ Հայր Սուրբը մեծարգո նախարարին փոխանցեց Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի ողջույնն ու բարեմաղթանքը՝ անդրադառնալով հայ-ինդկական դարավոր բարեկամական կապերին՝ մասնահատուկ ընդգծելով Արևմտյան Բենգալիայի պատմության մեջ հայերի ունեցած մեծ դերակատարությունը: Նա Բարձրագույն կրթության նախարարին ծանոթացրեց Մարդասիրական ճեմարանի պատմությանը, արդի վիճակին և ապագա ծրագրերին, որոնց նպատակն է Մարդասիրական ճեմարանում ունենալ ժամանակին համահունչ բարձր կրթական մակարդակ և դրան նպաստող բնականոն կենսապայմաններ: Նախարարի հետ քննարկվեց նաև ճեմարանում 11-12 դասարաններ ունենալու խնդիրը:

Իր հերթին Արևմտյան Բենգալիայի Բարձրագույն կրթության նախարարն իր ուրախությունը հայտնեց հանդիպման և ծանոթության համար՝ խոստանալով ամեն ինչում օգտակար լինել Մարդասիրական ճեմարանին:

Ս. ԱՍՏՎԱԾԱԾՆԻ ՎԵՐԱՓՈԽՄԱՆ ՏՈՆԸ ԿԱԼԿԱԹԱՀԱՅ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ

Օգոստոսի 13-ին Կալկաթայի Ս. Նազարեթ հայկական եկեղեցում Տիրամոր Վերափոխման տոնի առիթով մատուցվեց Ս. Պատարագ: Պատարագիչն էր հնդկահայոց հոգևոր հովիվ և հայոց Մարդասիրական ճեմարանի կառավարիչ Հոգեշնորհ Տ. Օշական վրդ. Գյուլգյուլյանը:

Ս. Պատարագի ընթացքում Հայր Սուրբը հավուր պատշաճի քարոզ խոսեց՝ անդրադառնալով Ս. Աստվածածնի լուսավոր կերպարին, որ դարեր շարունակ տիպար օրինակ է եղել հայ մայրերի և կանանց համար: Նա նաև հայցեց Ս. Կույսի բարեխոսությունը Տիրոջ մոտ հնդկահայ փոքրաթիվ գաղութի համար, որ իրենց նախնիների օրինակով նախանձախնդիր լինեն Հնդկաստանի հյուրընկալ հողում հայ մարդու ստեղծած մշտամնա արժեքների պահպանության սրբազան գործին:

«Ինչպես Տիրամայրն առանց վարանելու և ավելորդ հարցեր տալու անսաց Աստծո ձայնին, այնպես էլ մենք ենք պարտավոր ունկնդիր լինելու դրան, որի շնորհիվ ապրել և գործել են մեր նախնիները՝ որպես Հայր՝ ընդունելով Ս. Ավետարանը, և որպես Մայր՝ Հայ Առաքելական Եկեղեցին: Ուստի, սիրելի՛ ճեմարանականներ և կալկաթահայեր, եկե՛ք ուխտենք, որ պիտի անսանք Տիրոջ ձայնին, մեր կյանքն իմաստավորենք անանց արժեքներով՝ հայցելով Ս. Կույսի բարեխոսությունն իր Միածին Որդու առջև», - նշեց Օշական վարդապետն իր քարոզում:

Սրբազան արարողության ավարտին, Հայոց Եկեղեցու ընկալյալ ավանդության համաձայն, կատարվեց խաղողօրհնեք: Օրհնված խաղողը բաժանվեց ներկաներին:

Ս. Պատարագին ներկա էին Կալկաթայի եկեղեցական խորհրդի անդամներ, հնդկահայեր և Մարդասիրական ճեմարանի սաները:

*ԿԱԼ ԿԱԹԱՅԻ ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ
ՃԵՄԱՐԱՆԻ ՏԵՍՉՈՒԹՅՈՒՆ*

ԱՄՆ ԱՐԵՎԵԼՅԱՆ ԹԵՄՈՒՄ

ՀԱՅ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐՈՒ ԳԻՏԱԺՈՂՈՎ

Հայաստանեայց Եկեղեցւոյ Հիւսիսային Ամերիկայի Արեւելեան թեմի Հայ Ուսուցիչներու տարեկան գիտաժողովը տեղի ունեցաւ Նիւ Եորքի Առաջնորդարանի կեդրոնին մէջ՝ Յուլիս 16-23 օրերուն:

Այս տարի թեմի ծուխերէն 14 ուսուցիչներ կը մասնակցէին տարեկան այս գիտաժողովին, որ տեղի ունեցաւ Առաջնորդարանի համալիրին մէջ: Մասնակցող ուսուցիչներուն ներկայացուեցան Հայերէն լեզուի եւ մշակոյթի ուսուցման սկզբունքները, ինչպէս նաեւ դասապատրաստութեան ծրագրում, դասարանի մէջ կարգապահութիւն, ուսուցչին վարուելակերպը, ուսուցման նոր մեթոտներ եւ Հայերէնի ուսուցումը՝ որպէս երկրորդ լեզու: Այս հաւաքին նպատակն էր ուսուցիչներուն տրամադրելի դարձնել այն միջոցները, որոնցմով անոնք նոր սերունդը պիտի դաստիարակէին:

Առաջնորդարանի անձնակազմէն՝ խմբավար Խորեն Մէլիսանճեանի եւ Կիլտա Պէքաճեանի կողքին՝ հետեւեալ դասախօսները իրենց մասնակցութիւնը բերին. Պրոֆ. Սեդա Տատոյեան, Դոկտ. Սոկրատ Պօյաճեան, Դոկտ. Մէրի Շամշոյեան-Օլսըն, Հոգշ. Տ. Վահան Ժ. Վրդ. Յովհաննէսեան, Արժշ. Տ. Ընծակ ա. քինյ. Նալպանտեան, Պրոֆ. Ճէյմս Քութերլաքոս, Դոկտ. Ճէյմս Ճէյքըպսըն, Տաթի Պենկոյեան, Յարութ Մըսըրլեան, Յովսէփ Մելքոնեան, Լուսին Գասպարեան, Ֆլորանս Աւագեան, Սուզըն Խրիմեան-Քըրպի, Վիքի Խըրլոբեան, Ջարմինէ Պօղոսեան, Յովհաննէս Խոստեղեան, Սեդա Ճէպճեան, Սարո Փարթամեան եւ Արթուր Համալեան: «»

Գիտաժողովի եւ մասնակցող ուսուցիչներուն մասին ակնարկելով Առաջնորդարանի Հայկական Ուսման Բաժանմունքի համակարգող Կիլտա Պէքաճեան ըսաւ. «Մեր ծուխերու դպրոցները ոչ միայն ունին լաւ ուսուցիչներ, որոնք նուիրուած են իրենց աշխատանքին, այլ նաեւ անոնք պատրաստ են զարգացնելու իրենց կարողութիւնները: Այս յայտագիրով կը ջանանք դասախօսներ հրաւիրել՝ որոնք ծուխերու տեղական դաստիարակները յուզող հարցերու մասին լուսաբանութիւններ եւ խորհուրդներ կու տան: Եթէ մենք կարենանք անոնց տրամադրելի դարձնել իրենց աշխատանքը բարելաւելու միջոցները, անոնք աւելի արդիւնաւէտ կերպով պիտի փոխանցեն մեր հայկական մշակոյթը յաջորդ սերունդներուն»:

Ութըրթաունի (Մասսաչուսէց) Ս. Յակոբ Եկեղեցւոյ ուսուցչուհի Այտա Աստղիկ Սարգիսեան այս հաւաքին մասին հետեւեալ արտայայտութիւնը ունեցաւ. «Շնորհակալութիւն կը յայտնեմ դասախօսներուն, որոնք մեզի ծանօթացուցին ուսուցման նոր մեթոտները եւ մեր գիտութիւնն ու կրթական իմացութիւնը ճոխացուցին: Մեզ ներշնչեցին, եւ մենք նոր եռանդով ու խանդով պիտի շարունակենք մեր գործը»:

Պրքա Ռաթոնի (Ֆլորիտա) Ս. Դաւիթ Եկեղեցւոյ ուսուցչուհի Շաքէ Փոթութեանը ըսաւ. «Ներշնչող շաբաթ մը եղաւ ինծի համար: Նորութիւններու տեղեկացայ իմ ազ-

զային ժառանգութեան մասին, եւ որոնցմով զօրացած պիտի վերադառնամ եւ զանոնք պիտի փոխանցեմ իմ աշակերտներու»:

Գիտաժողովին մասնակիցները հանդիպում մը ունեցան Արեւելեան թեմի առաջնորդ Գերշ. Տ. Խաժակ արքեպս. Պարսամեանի հետ, որ իր խօսքին մէջ ըսաւ. «Կը գնահատեմ Հայկական մշակոյթի մասին ձեր գիտութիւնն ու ծանօթութիւնը աւելի զարգացնելու ձեր փափաքն ու ցանկութիւնը: Ուրախ եմ, որ ձեր ժամանակն ու կարողութիւնները ի սպաս կը դնէք Հայ մանուկներու դաստիարակութեան ի նպաստ: Մեր հոգեւոր, ազգային եւ մշակութային ժառանգութիւնը մեքենաբար չի փոխանցուիր. որպէս ուսուցիչներ՝ դուք էք, որ այս ոգին պիտի ներարկէք մոր սերունդին միտքին, սիրտին մէջ: Դուք կեանք պիտի տաք մեր լեզուին, հաւատքին, պատմութեան եւ աւանդութիւններուն»:

Գիտաժողովի աւարտին՝ մասնակցող ուսուցիչները շաբթուան ընթացքին իրենց ներկայացուած նիւթերէն մէկուն մասին, բոլորին ներկայութեան, դասաւանդութիւն մը կատարեցին: Իսկ Կիրակի, Յուլիս 23, յաւարտ Ս. Պատարագի, տեղի ունեցաւ վկայականաց բաշխումը՝ Ս. Վարդան Մայր Տաճարի լուսարարապետ Արժշ. Տ. Մարտիրոս քինյ. Չեւեանի մասնակցութեամբ:

ԴԻԻԱՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԻ

ՄԻՋԵԿԵՂԵՑԱԿԱՆ



«ԿՐՈՆՆԵՐԸ ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ» 8-ՐԴ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԸ ԿԻՏՈՅՈՒՄ

(26-29 օգոստոս 2006 թ.)

Սույն թվականի օգոստոսի 26-29-ը Ճապոնիայի Կիոտո քաղաքում տեղի ունեցավ «Կրոնները խաղաղության համար» կազմակերպության 8-րդ համագումարը, որին Հայ Առաքելական Եկեղեցին մասնակցում էր առաջին անգամ:

«Կրոնները խաղաղության համար» կազմակերպությունը միջկրոնական խորհուրդների և խմբերի համագործակցություն է, որի նպատակն է խթանել համագործակցություն ողջ աշխարհի կրոնական համայնքների միջև, ինչպես նաև նպաստել առկա հակամարտությունների վերացմանը՝ աշխարհում խաղաղությունն ամրապնդելու և կայուն զարգացում ապահովելու համար:

«Կրոնները խաղաղության համար» կազմակերպության պատմական առաջին համագումարը կայացել է Ճապոնիայի Կիոտո քաղաքում 35 տարի առաջ:

Յուրաքանչյուր 5 տարին մեկ անգամ «Կրոնները խաղաղության համար» կազմակերպությունը համախմբում է աշխարհի խոշոր կրոնները ներկայացնող հարյուրավոր առաջնորդների՝ զորացնելու բազմակրոն համագործակցությունը կոնֆլիկտների լուծման, խաղաղության հաստատման և կայուն զարգացման ոլորտում: 1970 թ. հոկտեմբերին կայացած առաջին համաժողովից հետո այն համաժողովներ է գումարել աշխարհի 5 մայրցամաքներում, իսկ վերջինը՝ Ամմանում (Հորդանան) 1999 թ. նոյեմբերին: Յուրաքանչյուր հավաքից հետո մասնակիցները հեռանում են գործունեության ծրագրով, որը պետք է իրականացնեն հաջորդ 5 տարիների ընթացքում:

Ութերորդ համաշխարհային համագումարի թեման էր «Կրոններն աշխարհում խաղաղության համար. դիմագրավել բռնությանը և ձեռք բերել համընդհանուր անվտանգություն»:

Ութերորդ համագումարի նպատակներն էին.

- **Համագործակցություն զարգացնել կրոնական համայնքների միջև՝** հակամարտությունները հաղթահարելու, խաղաղություն հաստատելու և կայուն զարգացում ապահովելու համար.
- **Հասնել ավելի խորը գլոբալ բարոյական համաձայնության** կրոնական առաջնորդների միջև միջազգային մակարդակով, եթե անհրաժեշտ լինի, որ

կրոնական համայնքները միասին գործեն հրատապ սոցիալական հարցերում.

- ♦ **Հաստատել գործնական համագործակցություն** կրոնական համայնքների և միջկառավարական կազմակերպությունների, կառավարությունների ու քաղաքացիական հասարակության միջև.
- ♦ **Աշխատանքային նիստեր գումարել**՝ կիսելու փորձառությունը կազմակերպչական հարցերում և հեշտացնելու ազգային, տարածաշրջանային և գլոբալ մակարդակներում ցանցի ստեղծումը.
- ♦ **Համախմբել հակամարտության շրջանների կրոնական առաջնորդներին** ամբողջ աշխարհից՝ ներգրավվելու նրանց բազմակրոն դիվանագիտական նիստերի աշխատանքներում և անդրադառնալու խաղաղության և հաշտության հիմնախնդիրներին.
- ♦ **Ընտրել խորհուրդ**, որը կլինի աշխարհի ամենաներկայացուցչական միջկրոնական խորհուրդը և որը պատասխանատու պետք է լինի 8-րդ համագումարի արդյունքների գործադրման համար:

Ժողովականներն անդրադարձան այդ կազմակերպության պատմությանն ու վերջին շրջանի զարգացումներին, քննեցին այնպիսի թեմաներ, որոնք կարող են նպաստել ընդհանուր անվտանգությանը՝ կոնֆլիկտների հաղթահարման, խաղաղության հաստատման և կայուն զարգացման միջոցով:

Նախնական հանձնախմբերում բարձրաստիճան կրոնական առաջնորդները, տարածաշրջանային և ազգային միջկրոնական խորհուրդներից, կիսեցին իրենց փորձառությունը և մշակեցին գործունեության ծրագիր հաջորդ 5 տարիների համար: Համագումարը նախատեսում էր նաև գլոբալ համագործակցություն կրոնական համայնքների և միջկառավարական կազմակերպությունների, կառավարությունների ու քաղաքացիական հասարակության միջև:

Ութերորդ համաշխարհային համաժողովը եզակի առիթ է ընձեռում հակամարտության երկրների կրոնական առաջնորդներին՝ հաստատելու խաղաղություն և հաշտություն, ինչպես նաև հազվագյուտ հնարավորություն՝ զորացնելու համագործակցությունը կրոնների, կառավարությունների, շահույթ չհետապնդող կազմակերպությունների և քաղաքացիական հասարակության միջև:

Համագումարին մասնակցում էին ավելի քան 500 ներկայացուցիչներ՝ կրոնական առաջնորդներ, հասարակական և քաղաքական գործիչներ:

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնությամբ համագումարին մասնակցում էր Ավստրալիայի և Նոր Զելանդիայի հայոց թեմի առաջնորդ Գերաշնորհ Տ. Ադան արքեպս. Պալիոզյանը, ով ներկաներին հղեց Վեհափառ Հայրապետի ուղերձը:

Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ**Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնության գիրը
«Կրոնները խաղաղության համար» 8-րդ համագումարի
մասնակիցներին**

(Կիոտո (Ճապոնիա), 26-29 օգոստոս 2006 թ.)

Հոգևոր այրեր և հարգարժան մասնակիցներ,

Հայ ժողովրդի հոգևոր կենտրոն Մայր Աթոռ Ս. Էջմիածնից ողջունում և Հայրապետական Մեր օրհնությունն ենք բերում խաղաղության համար 8-րդ համագումարի կազմակերպիչներին և մասնակիցներին, որ ձեր գովարժան աշխատանքների համար համախմբվել եք Ճապոնիայի Կիոտո քաղաքում:

«Կրոնները խաղաղության համար» կազմակերպության հովանավորությամբ տարբեր ազգերի ու ժողովուրդների հոգևոր առաջնորդները, քաղաքական և հասարակական գործիչները ձեր օգտակարությունն ու նպաստն ենք բերում՝ աշխարհում խաղաղության և անվտանգության, ազգերի ու ժողովուրդների միջև վստահությունն ու համագործակցությունը խրախուսելու, տարբեր կրոնների ներկայացուցիչների միջև հարգանքն ու փոխհամաձայնությունը ամրապնդելու նպատակով:

«Երանի խաղաղարներին, որովհետև նրանք պիտի Աստծո որդիները կոչվեն» (Մտթ. Ե 9): Արդարև, կարևոր են բարի կամքի տեր անձանց նվիրումն ու ջանքերը ինչպես քաղաքական և տնտեսական, այնպես էլ հոգևոր ու մշակութային մարտահրավերներով խաղաղության հաստատման ճանապարհին:

Հայ ժողովրդի և Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու անունից ներկաներիդ ենք հղում արդյունավետ աշխատանքի Մեր բարեմաղթանքները: Հայ Ժողովուրդը, ով դարերի վեր ձգտել է խաղաղության ու ստեղծագործ կյանքի, իր հավատքի և իր հայրենի երկրում արժանապատիվ կյանքով ապրելու իրավունքի համար ենթարկվել է հալածանքի ու ցեղասպանության, գիտի խաղաղության գինը և այսօր աղոթական իր ջանքերն է ներդնում աշխարհի ժողովուրդների բարօր և բարգավաճ ու պայծառ ապագայի համար:

Մեր աղոթքն է առ Ամենախնամ Տերը, որպեսզի Իր հովանի Աջով պահպանի ու զորացնի այն բոլոր մարդկանց, որվքեր իրենց կյանքով ու գործով նպաստում են խաղաղության աստվածահաճո գործին:

Այլև հայցում ենք Աստծուց, որ Իր սիրով լուսավորի ձեր մտքերը՝ առաջնորդելու ժողովուրդներին ստեղծագործ կյանքի բարի ուղիով: Թող Ամենակալն Աստված անսասան պահի այս հյուրընկալ երկիրը, այստեղ ապրող ժողովրդին և ձեզ բոլորիդ: Բարի ընթացք Ձեր աշխատանքներին:

Օրհնությամբ՝

ԳԱՐԵԳԻՆ Բ


Կաթողիկոս Ամենայն Հայոց

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընտրվեց «Կրոնները խաղաղության համար» կազմակերպության համանախագահ: Համանախագահներ են ընտրվել նաև Հռոմեակաթոլիկ Եկեղեցու Բալթիմորի (ԱՄՆ) Արքեպիսկոպոս Վիլյամ Կարդինալ Քելերը, Ռուս Ուղղափառ Եկեղեցու Սմոլենսկի և Կալինինգրադի Մետրոպոլիտ Կիրիլը, Եկեղեցիների Համաշխարհային Խորհրդի գլխավոր քարտուղար դոկ. Սամուել Կոբիան, Կանադայի Եկեղեցիների Խորհրդի գլխավոր քարտուղար դոկ. Կարեն Համիլթոնը և ուրիշներ:

Նախագահությունը այդ կազմակերպության գլխավոր ղեկավար մարմինն է: Համանախագահներն իրենց աշխարհագրական տարածքներում պատասխանատու են այդ կազմակերպության կողմից իրականացվող ծրագրերի և այլ կազմակերպությունների հետ հարաբերությունները զարգացնելու համար:

ԳԱՅԱՆԵ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

Միջեկեղեցական հարաբերությունների բաժին



ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՆ ԸՆԴՈՒՆԵՑ ԼԻԲԱՆԱՆԻ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ԵՎ ՍՓՅՈՒՌԻ ՆԱ- ԽԱՐԱՐ ՖԱՌԻԶԻ ՍԱԼԼՈՒԽԻՆ

Հուլիսի 12-ին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Լիբանանի արտաքին գործերի և Սփյուռքի նախարար Ֆաուզի Սալլուխին՝ երկու երկրների դեսպանների ուղեկցությամբ:

Վեհափառ Հայրապետը ողջունեց հյուրերին և ի դեմս պրն Սալլուխի՝ իր երախտագիտությունը հայտնեց Լիբանանի իշխանություններին՝ հայ համայնքի նկատմամբ ունեցած բարյացակամ վերաբերմունքի համար: Նորին Սրբությունը նշեց, որ այդ վերաբերմունքի շնորհիվ է, որ Ցեղասպանությունից վերապրած բազմաթիվ հայեր, ապաստան գտնելով Լիբանանում, որպես այս երկրի արժանավոր քաղաքացիներ, կարողացան վերսկսել ու զարգացնել նաև իրենց ազգային, հոգևոր ու կրոնական կյանքը:

«Ուրախ ենք և հպարտ որպես Ամենայն Հայոց Հայրապետ, որ մեր ժողովրդի զավակները, որպես արժանավոր քաղաքացիներ Լիբանանի, իրենց կարևոր ներդրումն ունեն Լիբանանի քաղաքական, հասարակական ու մշակութային կյանքում: Նաև ուրախ ենք և Մեզ համար հաճելի է, որ Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսությունը նույնպես իշխանությունների մշտական ուշադրության ներքո է, և լավ հարաբերություններ են ձևավորված երկուստեք», - ասաց Վեհափառ Հայրապետը:

Իր հերթին Ֆ. Սալլուխը բարձր գնահատեց լիբանանահայ համայնքի ներդրումը երկրի զարգացման գործում: Նախարարը հատկապես ընդգծեց հայ համայնքի ավանդը կրթական, առողջապահության և այլ ոլորտներում:

Հանդիպմանը ներկա էր նաև Տ. Արարատ ծ. վրդ. Գալթագճյանը:

**Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՆ
ԸՆԴՈՒՆԵՑ ԱՄՆ ՀԱՅՈՑ ԱՐԵՎԵԼՅԱՆ ԹԵՄԻ
ՈՒԽՏԱՎՈՐՆԵՐԻՆ**

Օգոստոսի 17-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում, Վեհաբանի հարկի ներքո, Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց ԱՄՆ հայոց Արևելյան թեմի Բոստոնի Վոթերթաունի Ս. Հակոբ եկեղեցու հիմնադրման 75-ամյակի առիթով Հայաստան կազմակերպված ուխտագնացության մասնակից 54 հայորդիների՝ ուղեկցությամբ եկեղեցու հոգևոր հովիվ Տ. Առաքել քահանա Ալջայանի:

Արժանապատիվ Տեղ Հայրը ներկայացրեց Հայրենիքում անցկացրած օրերն ու Ս. Հակոբ եկեղեցու ծխականների տավորությունները և հանուն ամենքի իր սերն ու հարգանքը հայտնելով հանդեպ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը և Ամենայն Հայոց Կաթողիկոսը՝ հայցեց Վեհափառ Հայրապետի օրհնությունն ու պատգամը ուխտավորներին:

«...Թող Աստված ներշնչի ձեզ նոր իրականությամբ մեր երկրի՝ անկախ մեր Հայրենիքի, հոգևոր վերագարթոնքով մեր Եկեղեցու և առաջընթաց կյանքով մեր Ժողովրդի, որպեսզի խանդավառ ու մխիթարված սրտով շարունակեք Հայրենիքից հեռու, բայց Հայրենիքի սերը ձեր հոգում կրելով աշխատել, տքնել ինչպես ձեր համայնքի, այնպես և Հայրենիքի ու հայրենաբնակ մեր Ժողովրդի համար»,- մաղթեց Ամենայն Հայոց Հայրապետն իր խոսքում՝ գոհունակություն հայտնելով կատարված ուխտագնացության առիթով:

Նորին Սրբությունը նաև գնահատանքով անդրադարձավ Տ. Առաքել քահանայի նախանձախնդիր և նվիրյալ ծառայությանը:

*ՄԱՅՐ ԱԹՐՈՒ Ս. ԷԶՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ*

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԲԵՄ. ԼՈՒՐԵՐ

Հուլիսի 2-ին, կիրակի. - Դ. կիր. զկնի Հոգեգալստեան:

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեդանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Իսահակ արքեպիսկոպոսը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Հայր Սուրբը «Այն ժամանակ օրենսգետներից և փարիսեցիներից ոմանք Նրան պատասխան տվեցին ուսասցին. «Վարդապետ, Քեզնից մի նշան ենք կամենում տեսնել» (Մատթ. ԺԲ 38) բնաբանով քարոզ խոսեց (տե՛ս էջ 17):

Հուլիսի 9-ին, կիրակի. - Ե. կիր. զկնի Հոգեգալստեան: Գիտ տփոյ Սրբուհոյ Աստուածածնի:

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեդանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Արշակ եպիսկոպոս Խաչատրյանը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Սրբազան Հայրը հավուր պատշաճի քարոզ խոսեց (տե՛ս էջ 20):

Հուլիսի 16-ին, կիրակի. - Զ. կիր. զկնի Հոգեգալստեան:

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեդանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Լևոն արքեպիսկոպոսը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Հայր Սուրբը հավուր պատշաճի քարոզ խոսեց:

Հուլիսի 23-ին, կիրակի. - ՎԱՐԴԱՎԱՌ: Պայծառակերպութիւն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի:

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեդանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Ներսէս արքեպիսկոպոսը: Պոգապալյանը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Սրբազան Հայրը «Քրիստոս Աստուած մեր, շնորհեա մեզ ընդ Պետրոսի եւ որդւոցն Զերեդեայ արժանաւորի Քում արքայութեան երկնից» (Շարական) բնաբանով քարոզ խոսեց (տե՛ս էջ 22):

Հուլիսի 24-ին, երկուշաբթի. - Բ. օր Վարդավառի:

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեդանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Լևոն արքեպիսկոպոսը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Հայր Սուրբը հավուր պատշաճի քարոզ խոսեց:

Հուլիսի 30-ին, կիրակի. - Բ. կիր. զկնի Վարդավառի:

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեդանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Ղուկաս արքեպիսկոպոսը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Հայր Սուրբը հավուր պատշաճի քարոզ խոսեց:

Օգոստոսի 6-ին, կիրակի. - Գ. կիր. զկնի Վարդավառի:

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեդանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Ս. Նաբեկ աբեղա Ավագյանը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Հայր Սուրբը «Եւ տեսեալ Յիսուս զհաւատս նոցա, ասէ ցանդամալոյծն, Որդեակ. թողեալ լիցին մեղք քո» (Մարկոս Բ 5) քարոզ խոսեց (տես էջ 25):

Օգոստոսի 12-ին, շաբաթ. – Տօն Շողակաթի Ս. Էջմիածնի ըստ տեսլեան Սրբոյն Գրիգորի Լուսաւորչին:

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեդանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Ս. Հովհաննէս աբեղա Մայիլյանը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Հայր Սուրբը հավուր պատշաճի քարոզ խոսեց:

Օգոստոսի 13-ին, կիրակի. – ՎԵՐԱՓՈԽՈՒՄՆ Ս. ԱՍՏՈՒԱԾԱԾՆԻ:

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեդանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Ս. Եզնիկ արքեպիսկոպոս Պետրոսյանը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Սրբազան Հայրը հավուր պատշաճի քարոզ խոսեց (տես էջ 28):

Օգոստոսի 14-ին, երկուշաբթի. – Բ. օր Վերափոխման:

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեդանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Ս. Պարոյր քահանա Ավետիսյանը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Տէր Հայրը «Որ զմահ ոչ գիտէ, երկնչի ի մահուանէ, իսկ որ գիտէ զմահ, ոչ երկնչի ի նմանէ» (Եղիշէ) բնաբանով քարոզ խոսեց (տես էջ 30):

Օգոստոսի 20-ին, կիրակի. – Բ. կիր. զկնի Վերափոխման:

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեդանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Ս. Մյուռոն Ծ. վրդ. Գըվըղյանը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Հայր Սուրբը հավուր պատշաճի քարոզ խոսեց:

Օգոստոսի 27-ին, կիրակի. – Գ. կիր. զկնի Վերափոխման: Տօն գիւտի գօտւոյ Սրբուհւոյ Աստուածածնի:

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեդանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Ս. Վարդան աբեղա Նավասարդյանը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Հայր Սուրբը հավուր պատշաճի քարոզ խոսեց:

**“ЭЧМИАДЗИН”
ОФИЦИАЛЬНЫЙ ЖУРНАЛ
ЭЧМИАДЗИНСКОГО КАТОЛИКОСАТА
(Июль-Август 2006)**

1. Благодарственный молебен по случаю дня рождения Его Святейшества Гарегина II, Католикоса всех армян, 21 августа 2006 г. (с. 3-4).
2. Вручение Его Святейшеству Гарегину II, Католикосу всех армян, высшего общественного ордена Российской Федерации, 21 августа 2006 г. (с. 5).
3. **ДЪЯКОН ЭДУАРД ХАЧАТРЯН** – Саммит религиозных лидеров в Москве, 3-5 июля 2006 г. (помещен также текст выступления Его Святейшества Гарегина II на саммите и принятая декларация) – (с. 6-10).
4. Патриаршие награды (пожалование в течение июля-августа 2006 г. энциклик, орденов «Святой Саак – Святой Месроп», «Святой Нерсес Шнорали» и благословений ряду духовных и светских лиц, оказавших большие услуги Армянской Церкви) – (с. 11).
5. Молебен о мире в присутствии Его Святейшества Гарегина II, Католикоса всех армян, 23 июля 2006 г. (с. 12).
6. Слово Его Святейшества Гарегина II, Католикоса всех армян, на похоронах Сильвы Капутикян, 29 августа 2006 г. (с. 13-14).
7. Вручение ордена «Святой Саак – Святой Месроп» г-ну Тому Самуэляну, 30 августа 2006 г. (с. 15-16).

ПРОПОВЕДИ

8. Проповедь иеромонаха Исаака Погосяна в Кафедральном соборе Первопрестольного Святого Эчмиадзина, 2 июля 2006 г. (с. 17-19).
9. Проповедь Его Преосвященства епископа Аршака Хачатряна в Кафедральном соборе Первопрестольного Святого Эчмиадзина, 9 июля 2006 г. (с. 20-21).
10. Проповедь Его Высокопреосвященства архиепископа Нерсеса Позопаляна в Кафедральном соборе Первопрестольного св. Эчмиадзина в праздник Преображения, 23 июля 2006 г. (с. 22-24).
11. Проповедь иеромонаха Нарека Авакяна в Кафедральном соборе Первопрестольного св. Эчмиадзина, 6 августа 2006 г. (с. 25-27).
12. Проповедь Его Высокопреосвященства архиепископа Езника Петросяна в Кафедральном соборе Первопрестольного св. Эчмиадзина в праздник Успения Св. Богородицы, 13 августа 2006 г. (с. 28-29).
13. Проповедь преподобного иерея Паруйра Аветисяна в Кафедральном соборе Первопрестольного св. Эчмиадзина, 14 августа 2006 г. (с. 30-32).

РЕЛИГИОЗНЫЕ И ЦЕРКОВНЫЕ ИССЛЕДОВАНИЯ

14. **ЖИЛЬ ДОРИВАЛ** – Перевод Библии на греческий язык, как и почему? (перевод с английского Ольги Вардазарян) – (с. 33-49).
15. **АРХИМАНДРИТ КОМИТАС ОВНАНЯН** – Священник, как проповедчик (исследование искусства проповеди) – (с. 50-63).
16. **АКОП КЁСЕЯН** – Неизвестная в сирийском оригинале текст речи Св. Ефрема (исследование) – (с. 64-67).
17. **СВ. ЕФРЕМ СИРИН** – О посте в среду и в пятницу, а также о сквернословии (текст подготовлен к печати Акопом Кёсеяном) – (с. 68-89).

ИСТОРИКО-ФИЛОЛОГИЧЕСКИЕ ИССЛЕДОВАНИЯ

18. **АЗАТ БОЗОЯН** – Памятники истории средневекового армянского права (правоведческое исследование) – (с. 90-108).
19. **Т. С. ШАХВЕРДЯН** – Стилистические средства выражения синтаксиса классического древнеармянского языка (лингвистическое исследование) – (с. 109-119).
20. **АННА ОГАНДЖАНЫН** – Разницы между иерархическими и культовыми системами Армянской Апостольской Церкви и Евангелической Церкви (эклизиологическое исследование) – (с. 120-128).
21. **АШОТ МЕЛКОНЯН** – Нерсес V Аштаракец и архиепископ Карапет Багратуни (историковедческое исследование) – (с. 129-134).
22. **ГРАНТ БАРСЕГОВИЧ АБРАМЯН** – Царский указ 12 июня 1903 г. и Арцахская Епархия (историковедческое исследование) – (с. 135-141).
23. **ЛИЛИТ АКОПЯН** – Ованес Туманян и вопрос популяризации языка (филологическое исследование) – (с. 142-151).
24. **МАРИАМ РАФИКОВНА ШОЛИНЯН** – Иеромонах и слепой монах в драме «Древние Боги» Левона Шанта (литературоведческое исследование) – (с. 152-156).

РЕЦЕНЗИЯ

25. **САТЕНИК ЧУКАСЗЯН** – Книга, посвященная истории искусства изготовления серебряных изделий в Армении (о книге «Армянские мастера серебряных дел» Овсепя Токата, изданной в Лос Анджелесе на армянском и английском языках) – (с. 157-159).

В СВЯТОМ ПЕРВОПРЕСТОЛЕ И В ЕПАРХИЯХ

26. Съезд Конгрегации в Первопрестольном Святом Эчмиадзине, 18-19 августа 2006 г. (с. 160-163).
27. Курсы усовершенствования армянских учителей диаспоры в Первопрестольном Святом Эчмиадзине, 17 июня – 14 августа 2006 г. (с. 164-165).

28. Аудиенция у Его Святейшества Гарегина II, Католикоса всех армян, участников Всеармянского съезда по образованию, 21 августа 2006 г. (с. 166).
29. Закладка основ церкви общины Эребуни г. Еревана в присутствии Его Святейшества Гарегина II, Католикоса всех армян, 21 июля 2006 г. (с. 167).
30. Закладка основ церкви г. Абовяна в присутствии Его Святейшества Гарегина II, Католикоса всех армян, 24 августа 2006 г. (с. 168-169).
31. Освящение церкви Святой Марии Богородицы в селе Аревшат, 23 июля 2006 г. (с. 170).
32. Новости из Армянской Епархии Германии (с. 171).

Новости из армянской общины Калькутты

33. Встреча руководителей Филантропической Духовной семинарии с министром Высшего образования Западной Бенгалии Сударшахом Рой Чодхурри, 4 августа 2006 г. (с. 172).
34. Праздник Успения Богородицы в армянской общине Калькутты, 13 августа 2006 г. (с. 172-173).

В Восточной Епархии Армянской Церкви Северной Америки

35. Симпозиум армянских учителей в Епархиальном центре Нью Йорка, 18-23 июля 2006 г. (с. 174-175).

МЕЖЦЕРКОВНЫЕ СВЯЗИ

36. **ГАЯНЭ АЛЕКСАНЯН** – VIII Съезд «Религии за мир» в Киото, 26-29 августа 2006 г. (помещено также Благословительное послание Его Святейшества Гарегина II, Католикоса всех армян, участникам съезда) – (с. 176-179).

АУДИЕНЦИИ В ПЕРВОПРЕСТОЛЬНОМ СВЯТОМ ЭЧМИАДЗИНЕ

37. Аудиенция у Его Святейшества Гарегина II, Католикоса всех армян, министра Иностранных дел и диаспоры Ливана г-на Фуада Маллухи, 12 июля 2006 г. (с. 180).
38. Аудиенция у Его Святейшества Гарегина II, Католикоса всех армян, паломников из Восточной Епархии Армянской Церкви Северной Америки, 17 августа 2006 г. (с. 181).
39. Краткие церковные новости. Информация о Святых Литургиях, проповедях и других церемониях в Кафедральном соборе и Первопрестольном Святом Эчмиадзине в течение июля-августа 2006 г. (с.182-183).

**“ETCHMIADZIN”
OFFICIAL MONTHLY REVIEW OF
HOLY ETCHMIADZIN
(July-August 2006)**

1. Congratulations on the Birthday of His Holiness Karekin II, Catholicos of All Armenians August 21, 2006 (p. 3-4).
2. The highest Order of the Russian Federation granted to His Holiness Karekin II, Catholicos of All Armenians, August 21, 2006 (p. 5).
3. **DEACON EDUARD KHACHATRIAN** – Summit of Religious Leaders in Moscow, July 3-5, 2006 (Speech of His Holiness and Declaration adopted by the Summit) – (p. 6-10).
4. Pontifical Awards (Encyclicals, Orders of “Saint Nerses Shnorhali”, “Saint Sahak – Saint Mesrop” and Letters of Blessing granted by His Holiness Karekin II, Catholicos of All Armenians, during July-August 2006, to clergymen and laymen having been of great service to the Armenian Church) – (p. 11).
5. Service of Peace presided by His Holiness Karekin II, Catholicos of All Armenians, July 23, 2006 (p. 12).
6. Remarks of His Holiness Karekin II, Supreme Patriarch and Catholicos of All Armenians, at the funeral of Silva Kaputikian, August 20, 2006 (p. 13-14).
7. Granting of the Order of “Saint Sahak – Saint Mesrop” to Mr. Thomas Samuelian, August 30, 2006 (p. 15-16).

SERMONS

8. Sermon delivered by Rev. Fr. Isaak Poghossian in the Cathedral of Holy Etchmiadzin during the celebration of Divine Liturgy, July 2, 2006 (p. 17-19).
9. Sermon delivered by His Grace Bishop Arshak Khachatrian in the Cathedral of Holy Etchmiadzin during the celebration of Divine Liturgy, July 9, 2006 (p. 20-21).
10. Sermon delivered by His Eminence Archbishop Nerses Bozabalian in the Cathedral of Holy Etchmiadzin during the celebration of Divine Liturgy on the Feast of the Transfiguration, July 23, 2006 (p. 22-24).
11. Sermon delivered by Rev. Fr. Narek Avakian in the Cathedral of Holy Etchmiadzin, August 6, 2006 (p. 25-27).
12. Sermon delivered by His Eminence Archbishop Yeznik Petrossian in the Cathedral of Holy Etchmiadzin during the celebration of Divine Liturgy on the Feast of the Assumption of the Virgin, August 13, 2006 (p. 28-29).
13. Sermon delivered by Rev. Fr. Paruyr Avetissian in the Cathedral of Holy Etchmiadzin during the celebration of Divine Liturgy, August 14, 2006 (p. 30-32).

RELIGIOUS AND ECCLESIOLOGICAL STUDIES

14. **GILES DORIVAL** – The Translation of the Bible in Greek, How and Why? (translated from English by Olga Vardazarian) – (p. 33-49).
15. **ARCHIMANDRITE KOMITAS HOVNANIAN** – The Monk as Predicator (study of the art of predication) – (p. 50-63).
16. **HAKOB KEOSSEYAN** – The Assyrian Text of an Unknown Speech by St. Ephrem (investigation) – (p. 64-67).
17. **EPHREM THE SYRIAN** – The Saturdays of Lent in the Lectionary (Text prepared for publication by Hakob Keosseyan) – (p. 68-89).

HISTORICAL AND PHILOLOGICAL STUDIES

18. **AZAT BOZOYAN** – Documents of the History of Armenian Medieval Rights (research in jurisprudence) – (p. 90-108).
19. **T. S. SHAHVERDIAN** – Stylistic Means of Expression of the Classical “Grabar” Syntax (linguistic research) – (p. 109-119).
20. **ANNA OHANJANIAN** – Differences in the Hierarchal Structure and Worship Methods of the Armenian Apostolic and Evangelical Churches (ecclesiological research) – (p. 120-128).
21. **ASHOT MELKONIAN** – Nerses V Ashtaraketsi and Archbishop Karapet Bagratuni (historical research) – (p. 129-134).
22. **HRANT B. ABRAHAMIAN** – The Order of the Tsar from June 12, 1903, and the Diocese of Artsakh (historical research) – (p. 135-141).
23. **LILIT HACOPIAN** – Hovhannes Tumanian and the Issue of the Popularization of the Language (philological research) – (p. 142-151).
24. **MARIAM R. SHOLINIAN** – The Monk and the Blind Monastic in Levon Shant’s “Ancient Gods” by (literary research) – (p. 152-156).

LITERARY REVIEW

25. **SATENIK CHOUGASZIAN** – A Book Devoted to the History of Armenian Silverware Production (about the book “Armenian Master Silversmiths” by Hovsep Tokat, published in English and Armenian in Los Angeles in 2005) – (p. 157-159).

IN THE MOTHER SEE AND THE DIOCESES

26. Conference of the Brotherhood in the Mother See of Holy Etchmiadzin, August 16-19, 2006 (p. 160-163).
27. Training Courses for Diasporan Armenian Teachers in the Mother See of Holy Etchmiadzin, June 17-August 14, 2006 (p. 164-165).

28. Audience granted by His Holiness Karekin II, Catholicos of All Armenians, to the participants of the Pan-Armenian Conference for Education, August 21, 2006 (p. 166).
29. Blessing the Foundation of the new church in the Erebuni district of Yerevan, presided by His Holiness Karekin II, Catholicos of All Armenians, July 21, 2006 (p. 167).
30. Blessing the Foundation of the new church in the city of Abovian, presided by His Holiness Karekin II, Catholicos of All Armenians, August 24, 2006 (p. 168-169).
31. Consecration of the Saint Mary the Mother of God (Astvatsatsin) Church in the village of Arevshat, July 23, 2006 (p. 170).
32. News from the Armenian Diocese of Germany (p. 171).

News from the Armenian Community of Calcutta

33. Meeting of the Administration of the Armenian College and Philanthropic Academy with Mr. Sudarshah Roy Chodhuri, Minister of Higher Education of West Bengal, August 4, 2006 (p. 172).
34. The Feast of the Assumption of the Virgin in the Armenian Community of Calcutta, August 13, 2006 (p. 172-173).

In the Eastern Diocese of the Armenian Church of America

35. Symposium of Armenian Teachers in the Diocesan Center of New York, July 16-23, 2006 (p. 174-175).

INTERCHURCH RELATIONS

36. **GAYANE ALEXANIAN** – Eighth Congress of “Religions for Peace” in Kyoto, Japan, August 26-29, 2006 (Message of Blessing of His Holiness Karekin II, Catholicos of All Armenians, to the participants of the Congress) – (p. 176-179).

AUDIENCES IN THE MOTHER SEE

37. Audience granted by His Holiness Karekin II, Catholicos of All Armenians, to Mr. Fouad Malloukhi, Minister of Foreign Affairs of Lebanon, July 12, 2006 (p. 180).
38. Audience granted by His Holiness Karekin II, Catholicos of All Armenians, to pilgrims from the Eastern Diocese of the Armenian Church of America, August 17, 2006 (p. 181).
39. Brief Church News. Information about the Divine Liturgies, sermons and other services held at the Mother See and the Cathedral of Holy Etchmiadzin during July and August 2006 (p. 182-183).

“ETCHMIADZINE”
ORGANE OFFICIEL DU SAINT-SIEGE
D’ETCHMIADZINE
(Juillet-Août 2006)

1. Action de grâces à l’occasion de l’anniversaire de Sa Sainteté Garéguin II, 21 août 2006 (p. 3-4).
2. Sa Sainteté Garéguin II, Catholikos de tous les Arméniens, est décoré de la plus haute distinction publique de la Fédération de Russie, 21 août 2006 (p. 5).
3. **DIACRE EDOUARD KHATCHATRIAN** – Sommet des primats religieux à Moscou, 3-5 juillet 2006 (L’intervention de Sa Sainteté Garéguin II et la déclaration adoptée au Sommet) – (p. 6-10).
4. 4. Distinctions pontificales (Encycliques pontificales, Ordres «Saint Sahak–Saint Mesrop», Ordres «Saint Nerses Chnorhali» et messages de bénédiction accordés par Sa Sainteté Garéguin II, Catholikos de tous les Arméniens, à des personnalités religieuses et laïques ayant rendu d’éminents services à l’Eglise arménienne aux mois de juillet et d’août 2006) – (p. 11).
5. 5. Hymne de paix chanté en présence de Sa Sainteté Garéguin II, Catholikos de tous les Arméniens, 23 juillet 2006 (p. 12).
6. Intervention Sa Sainteté Garéguin II, Patriarche Suprême et Catholikos de tous les Arméniens, aux obsèques de Silva Kapoutikian, 29 août 2006 (p. 13-14).
7. Remise de l’Ordre «Saint Sahak–Saint Mesrop» à M. Tom Samuélian, 30 août 2006 (p. 15-16).

SERMONS

8. Sermon prononcé par le Révérend Père Isaak Poghossian à la Cathédrale de Saint-Etchmiadzine à la Sainte Messe, 2 juillet 2006 (p. 17-19).
9. Sermon prononcé par Son Eminence l’évêque Archak Khatchatrian à la Cathédrale de Saint-Etchmiadzine à la Sainte Messe, 9 juillet 2006 (p. 20-21).
10. Sermon prononcé par Son Eminence l’archevêque Nerses Pozapalian à la Cathédrale de Saint-Etchmiadzine à la Fête de la Transfiguration, 23 juillet 2006 (p. 22-24).
11. Sermon prononcé par le Révérend Père Narek Avakian à la Cathédrale de Saint-Etchmiadzine, 6 août 2006 (p.25-27).
12. Sermon prononcé par Son Eminence l’évêque Eznik Pétrossian à la Cathédrale de Saint-Etchmiadzine à la Fête de la Dormition de la Sainte-Vierge, 13 août 2006 (p.28-29).
13. Sermon prononcé par le Révérend Parouyr Avétissian à la Cathédrale de Saint-Etchmiadzine à la Sainte Messe, 14 août 2006 (p.30-32).

ETUDES RELIGIEUSES

14. **GILES DORIVAL** – La traduction de la Bible en grec, comment et pourquoi? (traduit

de l'anglais par Olga Vardazarian) – (p. 33-49).

15. **ARCHIMANDRITE KOMITAS HOVNANIAN** – Le prêtre comme prédicateur (étude de l'art de la prédication) – (p. 50-63).
16. **HACOP KEUSSEYAN** – Texte d'un sermon inconnu en syriaque, attribué à St. Ephrem (recherche scientifique) – (p. 64-67).
17. **ST. EPHREM LE SYRIEN** – Sur le jeûne du mercredi et du vendredi, ainsi que sur les obscénités, sermon du Bienheureux Ephrem (texte préparé à la publication par Hacop Keusseyan) – (p. 68-89).

ETUDES HISTORIQUES ET PHILOLOGIQUES

18. **AZAT BOZOYAN** – Les œuvres de l'histoire du droit médiéval arménien (recherche en jurisprudence) – (p. 90-108).
19. **T. S. CHAHVERDIAN** – Les moyens d'expression stylistiques de la syntaxe de l'arménien classique (recherche linguistique) – (p. 109-119).
20. **ANNA OHANDJANIAN** – Les différences des systèmes hiérarchiques et cultuels entre l'Eglise Apostolique Arménienne et l'Eglise Evangélique (recherche ecclésiologique) – (p. 120-128).
21. **ACHOT MELKONIAN** – Nerses V Acharakétsi et l'archevêque Karapet Bagratouni (recherche historique) – (p. 129-134).
22. **HRANT B. ABRAHAMIAN** – L'ukase du 12 juin 1903 du tzar et le diocèse de l'Artsakh (recherche historique) – (p. 135-141).
23. **LILIT HACOPIAN** – Hovhannes Toumanian et la question de la popularisation de la langue (recherche philologique) – (p. 142-151).
24. **MARIAM R. CHOLINIAN** – L'abbé et le moine aveugle dans le drame « Les dieux anciens » de Lévon Chant (recherche littéraire) – (p. 152-156).

CRITIQUE LITTERAIRE

25. **SATENIK TCHOOGASZIAN** – Livre consacré à l'histoire de l'argenterie arménienne (sur le livre «Les maîtres argentiers arméniens» de Hovsep Tokat, publié en anglais et en arménien à Los Angeles) – (p. 157-159).

AU SAINT-SIEGE ET DANS LES DIOCESES

26. Congrès de la Congrégation au Saint-Siège d'Etchmiadzine, 18-19 août 2006 (p. 160-163).
27. Cours de perfectionnement pour les enseignants arméniens de la diaspora au Saint-Siège d'Etchmiadzine, 17 juin -14 août 2006 (p. 164-165).
28. Audience accordée par Sa Sainteté Garéguin II, Catholikos de tous les Arméniens, aux participants de la conférence pan-arménienne pour l'instruction, 21 août 2006 (p. 166).
29. Fondation de l'église de la commune Erébouni d'Erevan en présence de Sa Sainteté Garéguin II, Catholikos de tous les Arméniens, 21 juillet 2006 (p. 167).
30. Fondation de l'église de la ville d'Abovian en présence de Sa Sainteté Garéguin II,

Catholicos de tous les Arméniens, 24 août 2006 (p. 168-169).

31. Bénédiction de l'église de la Sainte Vierge Marie du village d'Arevchat, 23 juillet 2006 (p. 170).
32. Nouvelles du Diocèse arménien d'Allemagne (p. 171).

Nouvelles de la communauté arménienne de Calcutta

33. Rencontre de la Direction du Séminaire Philanthropique de Calcutta avec Sudarshah Roy Chodhuri, Ministre de l'Instruction supérieure de la Bengalie de l'Ouest, 4 août 2006 (p. 172).
34. La fête de la Dormition de la Sainte Vierge à la communauté arménienne de Calcutta, 13 août 2006 (p. 172-173).

Au Diocèse oriental de l'Eglise Arménienne d'Amérique du Nord

35. Symposium d'enseignants arméniens au Centre diocésain de New York, 16-23 juillet 2006 (p. 174-175).

RELATIONS INTERECCLESIASTIQUES

36. **GAYANE ALEXANIAN** – VIIIe Congrès «Les religions pour la paix» à Kyoto, 26-29 août 2006 (Message de bénédiction de Sa Sainteté Garéguin II aux participants du Congrès) – (p. 176-179).

AUDIENCES AU SAINT-SIEGE

37. Audience accordée par Sa Sainteté Garéguin II, Catholicos de tous les Arméniens, à M. Fouad Mallukhi, Ministre des Affaires étrangères et de la diaspora du Liban, 12 juillet 2006 (p. 180).
38. Audience accordée par Sa Sainteté Garéguin II, Catholicos de tous les Arméniens, aux pèlerins du Diocèse oriental de l'Eglise Arménienne d'Amérique du Nord, 17 août 2006 (p. 181).
39. Brèves nouvelles ecclésiastiques. Information sur les Saintes Messes, les sermons et les autres services accomplis au Saint-Siège et à la Cathédrale de Saint-Etchmiadzine aux mois de juillet et d'août 2006 (p. 182-183).

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Հայրապետական մաղթանք՝ Վեհափառ Հայրապետի ծննդյան տարեդարձի առիթով	3
Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսին հանձնվեց ՌԴ հասարակական բարձրագույն շքանշան	5
ԷԴՈՒԱՐԴ ՍՐԿ. ԽԱՉԱՏՐՅԱՆ - Կրոնական առաջնորդների գագաթաժողով Մոսկվայում	6
Հայրապետական գնահատություն	11
Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի հանդիսապետությամբ կատարվեց խաղաղության մաղթանք	12
Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսի խոսքը Սիլվա Կապուտիկյանի հուղարկավորության ժամանակ	13
«Ս. Սահակ - Ս. Մեսրոպ» շքանշան թում Սամուելյանին	15

ՔԱՐՈՋԽՈՍԱԿԱՆ

S. Իսահակ աբեղա Պողոսյանի քարոզը՝ խոսված Ս. Էջմիածնի Մայր Տաճարում մատուցված Ս. Պատարագին	17
S. Արշակ եպիսկոպոս Խաչատրյանի քարոզը՝ խոսված Ս. Էջմիածնի Մայր Տաճարում մատուցված Ս. Պատարագին	20
S. Ներսես արքեպիսկոպոս Պոզապալյանի քարոզը՝ խոսված Ս. Էջմիածնի Մայր Տաճարում Պայծառակերպության տոնին մատուցված Ս. Պատարագին	22
S. Նարեկ աբեղա Ավագյանի քարոզը՝ խոսված Ս. Էջմիածնի Մայր Տաճարում մատուցված Ս. Պատարագին	25
S. Եզնիկ արքեպիսկոպոս Պետրոսյանի քարոզը՝ խոսված Ս. Էջմիածնի Մայր Տաճարում Ս. Աստվածածնի Վերափոխման տոնին մատուցված Ս. Պատարագին	28
S. Պարույր քահանա Ավետիսյանի քարոզը՝ խոսված Ս. Էջմիածնի Մայր Տաճարում մատուցված Ս. Պատարագին	30

ԿՐՈՆԱ-ԵԿԵՂԵՑԱԿԱՆ

ԺԻԼ ԴՈՐԻՎԱԼ - Աստվածաշնչի թարգմանությունը հունարենի. ինչպե՞ս և ինչո՞ւ	33
--	----

Տ. ԿՈՄԻՏԱՍ ՎԱՐԴԱՊԵՏ ՀՈՎՆԱՆՅԱՆ - Միաբանը որպես քարոզիչ	50
ՀԱԿՈԲ ՔՅՈՍԵՅԱՆ - Ասորերեն բնագրով անհայտ ճան Ս. Եփրեմի անունով	64
ԵՓՐԵՄ ԱՍՈՐԻ - Շաբաթ արքա Քառասնից Ճաշոցն	68

ՊԱՏՄԱ-ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԱԶԱՏ ԲՈԶՈՅԱՆ - Հայ միջնադարյան իրավունքի պատմության հուշարձանները	90
Թ. Ս. ՇԱՀՎԵՐԴՅԱՆ - Դասական գրաբարի շարահյուսության ոճական-արտահայտչական միջոցները	109
ԱՆՆԱ ՕՀԱՆՋԱՆՅԱՆ - Հայ Առաքելական և Ավետարանական Եկեղեցիների նվիրապետական և պաշտամունքային համակարգերի տարբերությունները	120
ԱՇՈՏ ՄԵԼՔՈՆՅԱՆ - Ներսես Ե Աշտարակեցի Կաթողիկոս և Կարապետ արքեպիսկոպոս Բագրատունի	129
ՀՐԱՆՏ ԲԱՐՍԵՂԻ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ - Ցարի 1903 թ. հունիսի 12-ի հրամանը և Արցախի թեմը	135
ԼԻԼԻԹ ՀԱԿՈԲՅԱՆ - Հովհաննես Թումանյանը և լեզվի ժողովրդայնացման հարցը	142

Տեսակետ

ՄԱՐԻԱՄ ՌԱՖԻԿԻ ՇՈԼԻՆՅԱՆ - Արեղան և կույր վանականը Լևոն Շանթի «Հին Աստվածներ»-ում	152
---	-----

ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ

ՍԱԹԵՆԻԿ ՉՈՒԳԱՍՋՅԱՆ - Գիրք՝ նվիրված հայ արձագանքության պատմությանը	157
---	-----

ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ ԵՎ ԹԵՄԵՐՈՒՄ

Միաբանական համագումար Մայր Աթոռ Ս. Էջմիածնում	160
Սփյուռքահայ ուսուցիչների վերապատրաստման դասընթացներ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում	164
Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Համահայկական կրթական համաժողովի մասնակիցներին	166
Գարեգին Բ Կաթողիկոսի հանդիսապետությամբ կատարվեց Երևանի Էրեբունի համայնքի եկեղեցու հիմնարկերը	167

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի հանդիսապետությամբ կատարվեց Աբովյան քաղաքի եկեղեցու հիմնարկերը	168
Օծվեց Արևշատ գյուղի Ս. Մարիամ Աստվածածին եկեղեցին	170
Լուրեր Գերմանիոյ հայոց թեմին	171

Լուրեր Կալկաթայի հայ համայնքից

Մարդասիրական ճեմարանի ղեկավարության հանդիպումը Արևմտյան Բենգալիայի Բարձրագույն կրթության նախարարի հետ	172
Ս. Աստվածածնի Վերափոխման տոնը կալկաթահայ համայնքում	172

ԱՄՆ հայոց Արևելյան թեմում

Հայ ուսուցիչներու համաժողով	174
-----------------------------------	-----

ՄԻՋԵԿԵՂԵՑԱԿԱՆ

ԳԱՅԱՆԵ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ - «Կրոնները խաղաղության համար» 8-րդ համագումարը Կիոտոյում	176
---	-----

ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Լիբանանի Արտաքին գործերի և Միջուղի նախարար Ֆաուզի Սալլուխին	180
Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց ԱՄՆ հայոց Արևելյան թեմի ուխտավորներին	181
Եկեղեցական բեմ. լուրեր	182
“Эчмиадзин” официальный журнал Эчмиадзинского Католикосата	184
“Etchmiadzin” official monthly of Holy Etchmiadzin	187
“Etchmiadzine” organe officiel du Saint-singe d’Etchmiadzine	190